




845

L. III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1898

ՅՈՒՆԻԱՐ

1898 № 1

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

|                                |     |                                                              |
|--------------------------------|-----|--------------------------------------------------------------|
| 1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ. . .     | 5   | Քաղաքացիութեան զգացմունքը:                                   |
| 2 ՇԱՆԹ. . .                    | 9   | Վերսին (վերջ):                                               |
| 3 ՎԻԿՏՈՐ ՀԻԻԳՕ ԻՅ՝ ԾԱՏՈՐԵԱՆ    | 51  | Գետի ափին (բանաստեղծութիւն):                                 |
| 4 ՀԱՅՆԷԻՅ՝ ԱՏՈՄ ՇԱՀԷՆ. . .     | 53  | Բանաստեղծութիւններ:                                          |
| 5 ԱՐԱՄ-ՉԱՐԸԴ. . . . .          | 66  | Պատկերի առաջ (բանաստ.):                                      |
| 6 ԱԳԵԼԵԱՆ, Ա. . . . .          | 67  | Նրկու կրակի մէջ (պատմածք):                                   |
| 7 ԴԵՄԻՐՃԵԱՆ, Դ. . . . .        | 83  | Օտար դարուն— Նա էլ...— Անա-<br>ռիկ սրտերի պատմութիւն (բան.): |
| 8 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ. . .   | 87  | Էստրիպայի գաղափարը (չարուն):                                 |
| 9 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ. . . . .     | 97  | Ռուբենիկիւ (բանաստեղծ.):                                     |
| 10 ԽՈՋԱ-ԷՅՆԱՐԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ. . . | 99  | Գիւղական ցաւեր. (չար.):                                      |
| 11 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ, ՎԱՍԻԼ. . . . .  | 107 | Տրամադրութ. ստորուկ (Ո. Տոլստոյ.):                           |
| 12 ԱՂԲԱԼԵԱՆՑ, Ն. . . . .       | 124 | Յ. Տէր-Միրաքեանցի «Ժողովրդի ըն-<br>թերցանութիւնը»:           |
| 13 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Յ. . . . .    | 129 | «Շառառ», «Նապատտակ», «Անտա-<br>ռապաճը»:                      |
| 14 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն. . . . .        | 131 | Վեռլովսկու՝ „Стихотворные пе-<br>реводы“:                    |
| 15 ՍԵՊՈՒՀ. . . . .             | 135 | Բալասանի՝ «Արտստմ և Սալման»:                                 |
| 16 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Ն. . . . .    | 141 | Ալբրեհարանիս քննադատներին:                                   |
| 17 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա. . . . .     | 148 | ժամանակակ. Տեսութիւն— Չորայի<br>դատի առիթով:                 |
| 18 ՕՆԵԵԱՆ, Հ. . . . .          | 153 | Պատրոնի շուրջը, XVI:                                         |
| 19 ՄՈՏԱ. . . . .               | 158 | Աջ ու ձախ, Դ.                                                |
| 20 ԽՐԲ. . . . .                | 164 | Ձանաղան լուրեր:                                              |


Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Է Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ

Типография М. Д. Ротинянова, Гол. пр., д. № 41.

1898



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1898

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1898 № 1

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротинянца, Гол. пр. д. № 41.

1898

# УЧЕБНИКЪ

АРИТМЕТИКИ

ДЛЯ ДѢТЕЙ

1898

Ч. 1

1898

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го января 1898 г.

ИЗДАТЕЛЬСТВО

1898

ИЗДАТЕЛЬСТВО

1898

# „ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

մտնում է 1898 թվականին իւր **ՏԱՍՆԵՐՈՐԴ** տարե)

շրջանը և հրատարակելու է նախկին ծրագրով

(**ԾՐԱԳԻՐ ՄԱՅՐԱՔԱՂԱԿՆԵՐԻ ՌՈՒՍԱՅ ՄԵՐ ԱՄՍԱԳՐԵՐԻ**

Մշտական աշխատակիցներից անցած տարում մասնակցեցին հետեւեալները.

ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ ԱԼ. (հրապարակախօսութիւն), ՄԱՆՈՒԷ-  
ԼԵԱՆՑ Լ. (բանաստ., վէպ, քննադատ), ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ  
(տնտեսական-սոցիալական յօդւածներ), ՇԱՆԹՔ. (վէպ, բանաստեղ-  
ծութիւն), ԲԱՅԵՆՑ (վէպ), ԺԱՏՈՒՐԵԱՆ ԱԼ. (բանաստեղծ.),  
ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ ՅՈՎՆ. (ժողովրդական կրթութեան հարցեր և  
գրախօսութիւն), ՓԱՓԱՋԵԱՆ Վ. (պատմաճշման), ԱԴԻԼԵԱՆ (վէպ),  
ԱՂԱՆԼԵԱՆ ՆԻԿ. (գրախօսութիւն, քննադատութիւն), ԶԱՔԱ-  
ՐԵԱՆ ԹԱՂ. բժշկ. (հասարակական-բժշկական յօդւածներ), ՏԷՐ-  
ԴԷՈՐԳԵԱՆ ՅԱԿ. (Թարգմանական պոէմաներ), ՎԱՆՑԵԱՆ ԳՐԻ-  
ԳՈՐ (հայկական ազգագրութիւն և այլք), ԻԶԽ. ԵՐԿԱՅԵԱՐԱՋՈՒԿ-  
ԱՐԴՈՒԹԵԱՆ ՍՈՖԻԱ (կրթական խնդիրներ), ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
ՄԻԻ. (գիտական-սոցիալական խնդիրներ), ՍԱՐԳՍԵԱՆ ԳԱՐԵԳ.  
բժ. (բժշկական քրոնիկ), ԹԱՌԱՅԵԱՆ ՍԵՂՈՒԿ (գրախօսութիւն),  
ԱՐԱՄ. ԶԱՐԸԳ., ՅԱԿՈՅԵԱՆ Յ., ԴԵՄԻՐՃԵԱՆ Դ. և ԱԹԱ-  
ՅԵԱՆ Ա. (բանաստեղծ.), ՍԵՒՆԱՆ (Թատրոնական քրոնիկ), ՏԷՐ-  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄԻԻ. (Թարգմ. վէպեր), ՄԱՐԴԱՆԵԱՆ ՓՐԻՊ.

(նաւթային գործ), ՄՈՒՐԱԴԵԱՆ Թակ. (նամակներ Սև ծովի  
ափերից), ՂԱՐԱՋԵԱՆ Դ. (նամակներ Երևանից), ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ Ատ.  
(տաճկա-հայկական խնդիրներ), ՄԻՐԻՄԱՆԵԱՆ Թար. (վրաց գրա-  
կանութիւն), Ն. (քաղաքական տեսութիւն) և ուրիշներ:

Մասնակցել են անցած տարում, բացի յիշեալ մշտական աշ-  
խատակիցներից նաև պ.պ. ՇԻՐՎԱՆՋԱԴԷ (գեղարւեստական քննա-  
դատութիւն), ԿՈՒՍԻԿԵԱՆ Կ. (Ռ. Պատկանեանի մասին), ՀՈՊԱ-  
ՆԵԱՆ Արշակ (Իբսէնի մասին), ԽՈՋԱ-ԷՅՆԱԹԵԱՆ Թ. («Գիւղա-  
կան ցաւեր»), ՎԱՐԴԱՆԵԱՆՅ Վասիլ (Կոմս Լ. Տոլստոյի մասին):

ՐԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է տարեկան 10 ռ.: Վճարել կարելի է  
նաև մաս-մաս, սկզբում 5 ռ., մնացած 5 ռ. մինչև յունիսի վերջը:  
Հասցէ. Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Խմբագրատունը գտնուում է Սերգիեւսկայա փ. № 6:

## ՔԱՂԱՔԱՑՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՄՈՒՆՔԸ

Զափազանց տարբեր քաղաքական հանգամանքները, որոնց միջոցով վիճակել է Հային անցնել այս վերջին հազար տարիներում, Հին կարող առանց հետևանքի մնալ հայի սոցիալական դիրքի, նորա պարապմունքների, նորա բնաւորութեան, ձգտումների և նոյն իսկ հայի Ֆիզիկական յատկութիւնների վրայ: Այս վերջին հազար տարիներում հայը չի ունեցել քաղաքական անկախ կեանք և չի ունեցել հետեւապէս նաեւ քաղաքական ինքնազարգացում: Բայց, դորա փոխարէն, նա կրել է այլ և այլ ազգերի տիրապետութիւնները, ստիպւած լինելով յարմարել տիրապետող ազգերի ընտր ու վարքին ու նոցա պահանջներին. և եթէ այստեղ ու այնտեղ կարողացել էին հայկական կիսաանկախ իշխանութիւններ գոյանալ կամ իրենց գոյութիւնը քարշ տալ մինչև 18-րդ դարը, դժբա այնուամենայնիւ չեն խուսափել դերիշխող մահմեդական պետութիւնների ճնշումներից և երբէք չեն ունեցել այն ոյժը, որի հովանու տակ կարողանար հայ ժողովուրդը ինքնուրոյն և կանոնաւոր զարգացման հոսանքի մէջ մտնել:

Մահմեդական ազգերի տիրապետութիւնը չի թողել հայերի մէջ ազատ զարգացման ասպարէզ շնորհիւ մանաւանդ այն հանգամանքի, որ այդ ազգերը ոչ միայն իշխել են ժողովրդի վրայ, այլ և տիրապետել են հայի հողին և երկիրը դարձրել նաեւ իրենց հայրենիք: Մեր երկրում մահմեդական նախկին իշխանութիւնների հետ հաստատուեց նաեւ մահմեդական ազգաընտանեացիներ, որի հետ ուղէր չուղէր՝ հայը պէտք է համերկրացի դառնար, զիջելով աշխարհակալ ազգի գաղթական հոսանքին: Եւ թուրքի հետ կողք-կողքի ապրելով գոյութիւնը հնարաւոր էր միայն անշուք և ստորացած մնալու պայմանով, ակնածելով ոչ միայն իշխանութիւնից այլ և նւաճող ազգի տարրից:

Հայ ժողովուրդը ստիպւած է եղել յարմարել մահմեդական ազգերին, և այնքան երկարաժամ է եղել այդ տիրապետութիւնը, որ այն, ինչ հայը յարմարման ձևով փոխ էր առել, վերջապէս դառաւ կատարելապէս իւրացրած սեփականութիւն: Այդ երկարատև պերիոդում հայի կեանքը, կենցաղավարութիւնը, պարամունքները, վարչութեան ձևերը, մի խօսքով ամեն բան այնպէս պիտի լինէր, որ մահմեդական իշխող տարրին որ և է ինքնուրոյն բանով աչքի չընկնէր, մանաւանդ այնպիսի բանով, որը կարող էր քաղաքական որ և է դիտաւորութեան նշոյլ թւալ իշխող տարրի տէքուս: Արեւելեան ազգերի մէջ օտարը հպատակ է ոչ միայն իշխանութեանը, այլ և իշխող տարրին. արեւելեան ազգերի մէջ օտար հպատակը ոչ միայն չպէտք է հակաճառի ու փնտսի իշխանաւորին, այլ և տիրապետող ազգութեան պատկանողին, թէկուզ վերջինս, իբր անհատ, ներկայացնում լինի ոչ միայն քաղաքական կատարեալ ոչնչութիւն, այլ և սոցիալական սանդուխքի ամենասուրին աստիճանը: Եւ դեռ այժմ էլ սակաւ չեն դէպքերը, օրինակ Պարսկաստանում, երբ մի ամբողջ գիւղի կամ քաղաքի հայերի վիճակը վտանգւում է մի չնչին վէճի պատճառով մի հայի ու մի պարսկի միջև, թէկուզ այդ վէճը ծագած լինի մի ֆուսուս մսի համար!

Հայերի համար այդ կրկնակի հալատակութիւնն է, որով հին, ասիական կառավարութիւնը տարբերում է այն կառավարութիւնից, որ Կովկասում հաստատւել է ռուսաց տիրապետութեան ձեռքով, շնորհիւ այն բանի, որ Ռուսիան իւրացրել է երոպական քաղաքացիութեան գաղափարը: Քաղաքացիութիւնն է, որ բացասում է կրկնակի հպատակութիւնը. և ուր կոչ այն կրկնակի հպատակութիւնը—այնտեղ չի կարող լինել քաղաքացիութիւն: Քաղաքացիութեան իշխանութեան ներքոյ՝ հպատակները հաւասար են օրէնքի առաջ, և քաղաքացին ճանաչում է միայն օրէնքը, որին և հպատակւում է, բայց ոչ նաև օրէնքի կողքին՝ որ և է ազգայնօտարր, որի անդամների առաջ նա ստիպւած լինի գլուխ խոնարհել:

Զնայած, սակայն, որ քաղաքացիութեան գաղափարը նւաճումներ է արել մեր երկրում, այնուամենայնիւ ժողովուրդները չեն կարողացել թոթափել իրենց վրայից այն կնիքը, որ դրել են նոցա վրայ երկար դարերով տեւած ասիական իշխանութիւնները: Իսկ

Կովկասեան գլխաւոր ազգերից միմիայն հայ ազգն է, որ նախկին տիրապետութիւնների ժամանակ կրել է իւր վրայ կրկնակի հպատակութեան դառնութիւնները, որովհետեւ միայն հայերն էին Կովկասում, որոնք չունէին ազգային իշխանութիւն, հետեւապէս ժամանակակից իշխանութիւնների առաջ հաւասար չէին իշխող ազգի անդամների հետ: Այդ խտրութիւնը դեռ Վրաստանում նկատելի չպիտի լինէր, որովհետեւ նոքա մեծ մասամբ քաղաքներում էին, ուր գերիշխող դիրք ունէին, իսկ գիւղերում նոցա հաւասարեցնողը այլ հպատակների հետ՝ ճորտութիւնն էր. բայց հայ ազգի գլխաւոր մասը, այն որ իւր պատմական հայրենիքում էր, թրքական իշխանութիւնների ներքոյ՝ պիտի կրէր իւր վրայ կրկնակի հպատակութեան բոլոր հետեւանքները:

Այդ հետեւանքները մի առ մի թւել անհնարին է. որպէս վերը ասացինք, նա արտայայտուել է հայի թէ արտաքինի, թէ բնաւորութեան և թէ կենցաղի վրայ: Ընդհանուր կեանքում զեղեցկութեան ու ընտիր ճաշակի հասկացողութիւնը կորաւ և տեղի տւեց դուրսկութեան: Հայը կորցրեց տան ճարտարապետութեան պահանջը, և տունը շատ տեղերում դարձրեց հիւղ. նա կորցրեց ազգային հագուստը որ այժմ էլ յայտնի չէ թէ ինչպէս էր, և հայ կինը սկսեց շատ տեղ մի հագուստ չարմարցնել իրեն, որը ժամանակիս կրթւած ճաշակին միայն զարմանք է պատճառում. նա չկարողացաւ զարգացնել և ընդհանուր քաղաքացութիւն տալ իւր զբաղմունքի լին—և բարբառները կատարելապէս խեղդւած պահեցին զբաղմունքի հայերէնի գործածութիւնը, իսկ բարբառները իրենք կորցրին շատ շատերը հայերէն բառերից՝ թուրքական բառերին տեղ տալու համար. ժողովրդական հայկական երգը ամենամեծ մասամբ տեղ տւեց թրքականին ու պարսկականին, որոնք մանաւանդ մատաղ հայ սերնդի վրայ չէր կարող որ և է կրթիչ ազդեցութիւն ունենալ. և հէնց այդ պատճառով կարելի է ասել թէ հայը զրկւեց երգից, սիրտ, զգմունք ու ճաշակ զարգացնող այդ զօրեղ գործիքից: Ճաշակի ընդհանուր անկումը և փեղեցկի մասին ունեցած գաղափարի աղօտումնալը արտայայտեց թէ տեղական ժողովրդական երաժշտութեան և թէ նոյն իսկ եկեղեցական երգեցողութեան մէջ, որի դրութիւն յայտնի է դեռ ևս մեր ժամանակակից սերունդներին: Եւ այն և այն:

Խորութիւնը իշխող տարրի և հպատակ հայի մէջ հետեցրեց շատ և շատ բան, բայց այն, որ մանաւանդ սպանիչ պիտի լինէր քաղաքացիական զգացմունքի համար, այն էր որ հայը զրկւած էր զինւորական ծառայութեան պատւից, հայրենիքը պաշտպանելու կրթիչ պարտականութեան զգացմունքից. և այդ պատուից զրկւելը պիտի ստորացնէր հայ հպատակի սոցիալական դիրքը, որով հայը դառնում էր ոչ միայն աշխատող, այլ և միւլենոյն ժամանակ գրաստի դեր կատարող իշխող տարրի համար, որը դորանով իրաւունք էր ձեռք բերում հային իւր կթան կովը համարել: Այսպէս քաղաքացիութեան զգացմունքը ամեն կերպ դուրս էր վաճուում հայի քրտից ու մոքից:

Մեր ժողովրդի վերածնութիւնը սկսւում է քաղաքացիապէս այդքան աննպաստ ու սպանիչ պայմանների մէջ դոյացած գաղափարների, հայեացքների ու սովորութիւնների փոփոխութիւնով: Քաղաքացիական զգացմունքի պատուաստումը մեր ժողովրդին կոչւած է կերպարանափոխ անելու հայի ներքին և արտաքին կեանքը ամբողջապէս, և լուսամիտ անձերի ջանքը պիտի լինի՝ քաղաքացիութեան զգացմունքը աւելի ու աւելի խորը մտցնել ժողովրդական ամենահեռաւոր ու մութը խաւերի մէջ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅԻ

# Վ Ե Ր Փ Ի Ն

Շ Ա Ն Թ՝ Ի

(Շարունակութիւն և վերջ ¹)

## ԺԶ.

Արթըննալուն պէս առաջին միտքը Վերժինի երթալը եղաւ. և ալ ամբողջ օրը այդ գաղափարը իր գլխէն դուրս չէր ելներ:

Նորէն մէկ-երկու ժամ աղջկան հետ միասին:

Բայց չէ՞ որ վճռած էր ըստ կարելւոյն հեռու պահելու ինքը-զինքը. անց էր իր վճիռը. և արդէն խօսք էր տւած. ու ինչպէս ալ ուրախ էր խօսք տւած լինելուն: Բայց ի՞նչ ըներ. համալսարանին խնդիրը կար մէջտեղը. միթէ կարող էր մերժեր. միթէ իր պարտքը չէր իրեն դիմող աղջկան մը յառաջացման ձեռք տալու՝ ո՛վ ալ որ այդ լինէր:

Եւ հեզնօրէն ժպտեցաւ: Շատ լաւ կ'ըզգար, որ համալսարանը իրեն սիրուն պատըրւակ մըն էր հիմա իր զգացումներուն ազատ ընթացք տալու. տեսակ մը խղճի հանգստութիւն:

Է՛, ի՞նչ պոռոտախօս էակներ ենք մենք. մե՛նք՝ մարդիկս, մեր որոշումներու, դիտաւորութիւններու ու վճիռներու խոշոր բառերովը նիզակաւորւած. իսկ էապէ՛ս. անհւժ խրուիլակներ:

Այսպէս մտածեց. և կարծես մարդու անուժ խրուիլակ լինելը աւելի լաւ ապացուցանելու համար ան ժամը ընտրեց այցելելու,

¹) Տես Մուրճ 1897 թ. № 9 և 10, 11—12:

ուր աղջիկը ամենէն աւելի առանձին գտնելու յոյսը ունէր: Ձէ որ մասնաւոր խնդրի մասին էին խօսելու:

Եւ յաջողեցաւ:

Մօրը երեսը հազիւ տեսաւ. իսկ դուստրը ուրախութեամբ դէմ եկաւ սպառաւած հիւրին, և առաջարկեց պարտեզ իջնել.

— Հոն աւելի ազատ կը խօսինք. փաստաբանելով:

Աւագոտ արահետներուն մէջէն արագ առաջնորդեց իր հիւրը ծառերու ստերին տակ պահելու ամ փոքրիկ աւազանի մը քով, ուր ոստերէ հիւսւած նստարան մը կար և մօտն ալ նոյնպէս անտաշ բուններէ շինւած սեղան մը:

Մեղմ գովութիւն մը զարկաւ. Արշակի դէմքին:

Ծառերը նազանքով իրենց ճիւղերը վար կը կոխէին աւազանի հայելիին վրայ և քոքէթութեամբ մը կը սառսռային՝ իրենց ձևերուն ծալծլած անդրադարձումը տեսնելով ջրին մէջ. ջրին, որուն փոքրիկ կոհակները ժպտող և ժպիտը զսպել ուզող շրթունքներու կծկումներով կը դողդոջային:

Ձիու դարձուցած անիւաւոր հորէն ջուրը անուշ խոխոջով կը թափուէր աւազանը, և միւս կողմէն խողովակներով կը վազէր պարտեզին հեռաւոր անկիւնները ջրելու:

Հեռուն տանձենիներուն ետեւէն յոյն պարտիզպանին տխուր երգին միօրինակ ելեւջը կը լսէր:

— Սակայն ի՞նչ սիրուն է հոս. բացականչեց տղան հիացած շուրջը դիտելով:

— Եթէ այդ աստիճանի մեր տունէն չի խրթնէիք՝ կարելի է դեռ շատ ուրիշ սիրուն բաներ ալ կը գտնէիք հոս. պատասխանեց Վերթին կատակի տոնով:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք. հարցուց Արշակ ակամայ լուրջ զարկ մը տալով խօսւածքին:

— Ինչո՞ւ մեզմէ կը փախչիք. եկէք խոստովանեցէք անկեղծօրէն. ըսաւ աղջիկը կէս կատակ, կէս լուրջ:

Այդ ձեր երևակայութիւնն է միայն. ես ի՞նչ պատճառ կրնամ ունենար ձեզմէ փախչելու:

— Ա՛յ, եթէ ես այդ դիտնայի: Աղէկ. ինչո՞ւ այդ քանի օրը մեզի չեկաք:

—Հաւատացէք, որ մենք ալ անշուշտ գալ կ'ուզէինք, այդ մեր պարտքն էր արդէն. բայց մանր-մանր զործեր, զբաղումներ, որոնք...

—Ախ, թողէք խնդրեմ այդ չոր քաղաքավարութիւնը մէկդի. ընդհատեց աղջիկը պահանջոտ շեշտով մը:

Արշակ հաճոյքի, ամօթի ու զարմանքի խառն զգացումով մը անոր աչքերուն կը նայէր:

Մինչ Վերժին շարունակեց.

—Եւ վերջապէս շիտակը ինծի հասկընալի չէ. միթէ այդ աստիճանի հետաքրքիր էր ձեզի համար Հալքին ու ձեր մօրաքրոջ ընտանիքը. չգիտեմ, բայց զոնէ ինծի այնպէս կը թւի, թէ հոս... ձերիններուն քով ձեզի համար աւելի գրաւիչ պիտի լինէր:

—Ձեռքս տպագրութեան խոստացած աշխատութիւն ունէի, օրինորդ. և պահ մը առանձնանալը ինծի անհրաժեշտ էր:

—Ախ, այդ ուրիշ խնդիր. բացականչեց աղջիկը բոլորովին փոխւած ձայնով: Սակայն ինչո՞ւ մինչև հիմա ինծի ոչինչ չէիք ըսեր. և ի՞նչ է գրածնիդ: Միայն յամենայն դէպս չափէն աւելի կ'աշխատիք. արդէն ամբողջ ձմեռը համալսարանն էք, ամառւան այս մէկ-երկու ամիսները կրնաք աւելի ազատ անցըներ. գիտէք, գուցէ կը սխալիմ, բայց մի'շտ ուրիշի ու ընդհանրութեան մասին մտածելն ալ չափազանց կը թւի ինծի:

Արշակ յանկարծ բռնու ամօթ մը զգաց: Ի՞նչպէս ինքը բոլոր ժամանակը պարսպ միայն իր ես-ովն էր զբաղւած, և ի՞նչպէս հիմա ինքըզինքը աղջկան կը ներկայացընէր, զործին նւիրւած մարդու ձևեր, անձնագոհութեան հովեր կ'առնէր վրան:

Եւ կեղծող, շարունակ մը լինելու գաղափարը այնպէս զարկաւ սրտին, որ այլ ևս ամէն հաշիւ մէկդի դնելով՝

—Օրինորդ, կը սխալիք. ըսաւ յանկարծ: Եւ երբէք ոչ այդչափ աշխատասէր եղած եմ, ոչ ալ ձեր ըսածին պէս ինքըզինքս մոռցող. և հիմա ալ աշխատելու համար չէր, որ կղզի գացի. սո՛ւտ եմ, պատճառը բոլորովին տարբեր բան էր:

—Որը երեւի ինծի չէք կրնար ըսեր:

—Այո. ներեցէք. չեմ կրնար:

Վերժին շեշտ տողու աչքերուն կը նայէր: Անոր կիզող հայեաց.

քին կերպ մը խոյս տալու համար՝ տղուն ծռեցաւ գետնէն տերև մը վերցընելու:

Վայրկեան մը լռութենէ վերջը՝ աղջիկը հարցուց.

— Բայց գուցէ կրնաք յայտներ, թէ ինչո՞ւ այդպէս ցրւած էք, մտածկոտ ու անբնական: Միւսինոյն բանը եղբայրս ալ է նկատած. երէկ իրիկուն ձեր քոյրն ալ նոյնը ըսաւ:

— Է՛, օրիորդ, ինչո՞ւ կը հետաքրքրէ այդ բոլոր աւելորդ բաները ձեզի. պատասխանեց տղան յանկարծ յուսահատ ու նեղորդած շեշտով մը: Ձերինին պէս ուրախ ու փափուկ հոգիներուն համար շատ աւելի զւարթ հարցեր կան հետաքրքրական:

Վերժին գլուխը ետ նետեց, շունչը բռնեց, ու հպարտ նայլածքով նորէն տղուն յառեցաւ:

— Այսպէս ուրեմն հետաքրքրելիս՝ աւելորդ է.

Մըմնջեց մտածկոտ ու հանգիստ. և շարունակեց քիչ-քիչ տաք-նալով—

— Գուցէ իրաւունք ունիք՝ այդ բոլորը հարցընել իմ կողմէս անհամեստութիւն էր. գուցէ, միայն այս մէկը գոնէ գիտնալը իմ իրաւունքս է, թէ ինչո՞ւ համար դէպի ինծի այդպէս յանկարծ փոխւեցիք: Ես գիտեմ առաջ որչափ յօժար ինծի կու գայիք, և ինչպէս սիրող հետս խօսակցիլ կ'ուզէիք. ոչ թէ այդպէս թթւած ու խուսափելով: Ըսէք, խնդրեմ, ի՞նչ ըրի ես ձեզի. ամբողջ երէկ զիշեր մտածեր եմ, և խելքս ոչինչ կտրել չի կրցաւ. ի՞նչով կրնամ ես ձեզի վիրաւորած լինել: Ձգիտեմ ի՞նչ հիման վրայ, բայց ինծի այնպէս կը թւի, որ ձեր կղզի երթալուն հետ անսովոր բան մը կապւած է:

— Ա՛խ, օրիորդ Վերժին. ինչեր կը մտածէք:

— Ո՛չ, լսեցէք. բացականչեց յանկարծ կտրուկ ու զրգուած: Ներեցէք ինծի, ես կողմնակի ճամբաներու վարժըւած չեմ. ես չեմ կրնար զսպեր ինչ որ սրտիս վրայ ծանրացած է: Ձեր վերադարձէն իվեր, գիտէք, որ ես ամէն վայրկեան ձեզի եմ սպասած, ամէն դուռը զարնըւելուն ցատկեր եմ տեղէս կարծելով որ դուք էք լինելու: Երբ շատ ուշացաք՝ վշտացայ, բայց նորէն չհամբերեցի. երէկ իրիկուն եղբայրս զրոյողը ես էի, գոնէ անգամ մը հետերնիդ խօսիլ կարողանալու համար. նոխ մտադիր էի ինքըզինքս քիչ մը սուղ

Ճախեմ, բայց դուք այնպիսի ցրւած դէմք մը շինե՛ր էիք եղբօրս դիմացը, որ չդիմացայ ու ետեւնուդ ներս սենեակ եկայ. իսկ դ՞ուք, պարապ քաղաքավարական երկու նախադասութիւն միայն նետեցիք երեսիս: Եւ հիմա ալ, երբ ես եմ նորէն ձեզի գրեթէ բռնի մօտս բերեր ու այդ այլակերպութեան պատճառը իմանալ կ'ուզեմ, դուք պարզապէս դէմքիս կ'ըսէք, որ աւելորդ է ձեր գործերով հետաքրքրուիլս: Ա՛, շնորհակալ եմ, շատ շնորհակալ. որչափ ազնիւ էք, որ ինծի «աւելորդ» մտածումներ տալ չէք ուզեր:

—Օրիորդ, օրիորդ... կամ մաց Արշակ յուզումէն դողդացող ձայնով մը:

—Աւելորդ, հա՛, աւելորդ... բայց զիտէ՛ք, որ ձեր կղզի եղած ժամանակը իմ բոլոր ուշքս պատուհանէս նշմարւող այդ սև հողի կտորին վրայ է եղած. և այդ բոլոր ժամանակը ես միայն ձեզի եմ մտածած ու ձեզի հետ անցուցած օրերս. և որ միայն...

—Վերժին, Վերժին... բացականչեց Արշակ՝ ինքնիրմէն դուրս ու շնչատած՝ աղջկայ ձեռքերը խլելով:

Աղջիկը լռեց, առանց ձեռքերը քաշելու՝ աչքերը պահ մը ձգեց գետին. վերջը քնքշութեամբ բարձրացուց, զամեց տղու վառւող հայեացքին մէջ, ու ջիղերու սարսուռ տւող անհուն անուշ շեշտով մը շրթունքներուն մէջէն շրջնջեց.

—Ի՞նչ ըրի ես ձեզի:

Տղու գլուխը պտոյտ եկաւ. թւերը կծկեցան, ու բոլոր ուժովը աղջիկը քաշեց կրծքին.

—Դո՛ւն... դո՛ւն... անգլինս, կեանքս:

Աղջիկը ոչ մի շարժում. գլուխը ինկաւ տղու ուսին. ու աչքերը գոց: Միայն իր կուրծքն էր, որ տղու գրկին մէջ, ու իր այտին, ճակտին, մաղբերուն հեղեղւող համբոյրներուն տակ դողդոջուն ու բարձր կ'ելէէջէր:

—Ուրեմն, Աստած իմ, ես սխալած չէի, ուրեմն զգացումներս ինծի չէին խաբած, կը կրկնէր Արշակ աւելի ու աւելի պինդ աղջկան փարելով:

Վերժին վերջապէս ազատեց ինքզինքը տղու գրկէն ու անոր ձեռքերը բռնեց.

—Վերժին, ներք ինծի. մոռցիր յիմարութիւններս. շէնջեց տղան աղաչելով:

Աղջիկը երկու ձեռքով բռնեց տղու գլուխը, յոգնած հայեացքը ձգեց անոր աչքերուն, կամաց մը մօտեցուց իր դէմքին, ու շըրթունքներովը յարեցաւ անոր զոյգ շրթունքին:

Դեռ առաջին յուզումէն չի կազդուրւած, դեռ շնորհքով մտածելու, կապով խօսելու անկարող՝ նստած էին լուռ, ձեռք-ձեռքի աւազանին դէմ, երբ հեռուէն—

—Վերժին, լսեցաւ:

—Եղբայրս, բացականչեց աղջիկը, ցատկեց ոտքի, բնազդաբար սկսաւ մազերը շտկել. ու դէպի ձայնի կողմը դառնալով՝ պոռաց.

—Հոս ենք, հոս:

Եւ բոլոր ուժովը վազեց եղբօրը դէմ՝ հնար եղածին չափ իր յուզումը սքօղելու համար:

—Հանգիստ, հանգիստ. պոռաց բժիշկը քոյրը տեսնելով: Այդպէս խենթ-խենթ չեն վազեր. տես, շնչատեր ես բոլորովին. պարոն Արշակը ինչու մինակ ձգեցիր:

—Կարծեցի թէ ձայնս չլսեցիր. պատճառաբանեց քոյրը, երկու ձեռքը կրծքին սեղմած շնչառութիւնը կանոնաւորել ջանալով:

## ԺԷ

Բժիշկը եկաւ ուրախ-ուրախ Արշակը բարևեց.

—Մայրս ըսաւ, որ պարտէզն էք: Վերջապէս. այս ինչ հով փչեց:

—Սակայն ինչպէս սիրուն է եղած ձեր պարտէզին այս անկիւնը. նկատեց Արշակ բան մը ըսած լինելու համար:

—Այս վայրկեաննիս աւելի սիրուն կը դառնայ, վայրկեան մը միայն. այ, արդէն եկաւ:

Ու մատովը մօտեցող սպասուհին ցոյց տուաւ, որ ձեռքը արտէ մը դէպի աւազանը կու գար:

Ափսէին մէջ շիշ մը օղի ու աղանդեր էր դրւած:

Սպասուհին ձեռքիները շարեց սեղանին վրայ ու հեռացաւ: Երեքը նստեցան. և բժիշկը երկու փոքրիկ գաւաթիկ լեցընելով՝ դարձաւ հիւրին.

—Է՛, բարով եկա՞ք. ձեր կենսացը:

—Շատ շնորհակալ եմ. բայց ես օղի չեմ խմեր:

—Ա՛խ, անմիտ խօսք, գաւաթ մը խմեցէ՛ք:

—Լա՛ւ, մի՛ ստիպիր, Յակոբ, եթէ սովոր չէ, մէջ նետւեցաւ աղջիկը ձայնով մը, ուր խանդադատանքը կը դողար: Պարոն Արշակ, մի խմէ՛ք. կեցէ՛ք, ես ձեզի հիմա քոնեակ կը բերեմ. թեթե՛ւ, հիանալի քոնեակ:

Եւ առանց տղու մերժումներուն ականջ դնելու՝ սկսաւ դէպի տուն վազել:

Արշակ յափշտակւած կը նայէր անոր փոքրիկ սիրուն ոտքերուն, որոնք հագուստին ծալքերուն տակէն արագ մէկ կ'երևէին, մէկ կը թաքնուէին՝ թեթեւ հետք մը թողնելով աւազին վրայ. մինչև որ շրջազգեստին ալիքներուն հետ միասին կանաչներու խտուրթեան մը ետև աներևոյթ եղաւ:

Արշակ վայրկեան մը մտածկոտ մնաց. ու ապա յանկարծ դարձաւ սեղանակցին.

—Պարոն բժիշկ, ձեր քոյրը խելացի աղջիկ է և միջնակարգ կրթութիւնը աւարտած. ինչո՞ւ չէք ուղարկեր Եւրոպա բարձր կրթութիւն ստանալու: Գիտէ՞ք մեր հասարակութեան մէջ ի՞նչ դեր կարող է խաղալ վերջը. եթէ դուք ինքներդ ոչինչ չէք ըներ, գէթ թողէ՛ք ձեր քոյրը ձեր փոխարէն դործէ:

Բժիշկը նայեցաւ խօսողի դէմքին, և օղիին գաւաթիկը բերանը տանելով՝ պատասխանեց քմծիծաղ.

—Է՛, այդչափ հեռուները երթալու բարեբաղդաբար պէտք չի կայ. քոյրս արդէն մտադիր է անմիջապէս գործի սկսելու:

—Այսօրէն:

—Շուտով վարժուհի պիտի դառնայ:

—Ա՛խ, վարժուհի մի՛շտ կրնայ դառնար. նախապէս պատրաստւելիք անհրաժեշտ է օրիորդին: Գոնէ ինծի յայտնած է ձեր քոյրը, որ մեծ ցանկութիւն ունի Եւրոպա երթալու և ուսումը լրացնելու:

Բժիշկը, որ վերջին ժամանակները վարժուհիի պատմութիւնը տան մէջ կտրւած լինելուն մէկ կողմէն ուրախ էր, միւս կողմէն զարմացած, յանկարծ լոյս առաւ. և ժպիտը շրթունքին դարձաւ խօսակցին.

—Ուրիշ խօսքով՝ ձեր մէջ հին ծրագիրը փոխւած է արդէն։  
Արշակ այդ անակընկալ նկատողութենէն ամբողջ դժմքով շա-  
ռագունեցաւ։

—Ի՞նչ ըսել կ'ուզէք. փսփսաց։

—Ա՛խ, դժւք, տաք-գլուխ բարեկամս, ըսաւ բժիշկը ցուցա-  
մատը տղուն վրայ թափ տալով։

—Բայց, պարոն բժիշկ...։

—Գիտէք, սիրելիս, քոյրս վերին աստիճանի միամիտ ու առ-  
փորձ աղջիկ է. և...

—Եւ խելացի ու կամքի տէր. ընդհատեց տղան կտրուկ։

—Կամք. մարդու փայփայած շիմերներէն մէկն ալ իր կամքի  
ազատութեան և ուժգին հաստալն է։ Եւ, ի հարկէ, մասնաւորա-  
պէս կանանց կա՛մքը, ինչ ըսել կ'ուզէ, շատ զօրեղ է. այնպէս որ  
այսօր կարելի է վարժուհի դարձնել, և վաղը համալսարան ու  
ղարկել։

Արշակ զայրացաւ։

—Բայց կը ներէք, պարոն բժիշկ, ոչ ձեր քոյրը այդ խաղա-  
լիքն է և ոչ ես...

Ու կանգ առաւ։

—Իզո՛ւր, բարեկամս. ես ձեզի վիրաւորելու համար չըսի։ Եւ  
վերջապէս, որ քոյրս սիրուն ու գրաւիչ աղջիկ է, ասոր կասկած  
չի կայ. արդէն մեր ցեղը գեղեցիկ է. Պարիզ ես յաճախ առիթ  
եմ ունեցեր այդ ճշմարտութեանը համոզելու։ Եւ միթէ կը կար-  
ծէք պիտի զարմանամ հիմա քրոջս այդ ձգողական ուժին վրայ.  
Բնա՛ւ։ Առաջ պարոն Տիրանն էր, որ դէպի քրոջս սիրտը ճամբայ  
բանալ կ'ուզէր, միայն երեւի բաղդ չունէր, կամ հաւանօրէն դուք  
աւելի վարպետ էք այդ տեսակ գործերու մէջ։

—Բայց, պարոն բժիշկ... պոռաց Արշակ՝ սրտին ցաւէն ուրիշ  
բառ չի գտնելով։

—Աղէկ. ինչ վիրաւորելու բան է այդ. կանանց սրտին տի-  
րեղն ալ արեւստ մըն է վերջապէս. Եւրոպա գացող երիտասարդը  
ի հարկէ այդ ալ ուսումնասիրելու է. միթէ մեր Արեւմուտք երթա-  
լու նպատակը եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելը չէ։

Եւ սկսաւ ծիծաղիլ՝ օղիին գաւաթը ձեռքը։

Արշակ սոսկալի ճնշում կ'ըզգար բժիշկի աչդ իբրև թէ կատակներէն. մանաւանդ աչդ բոլորի յատակը կարծես քիչ մը ճշմարտութիւն ալ կար, չիշեց քառորդ մը առաջ իրենց դիրքը Վերժինի հետ աչդ նոցն հատարանին վրայ. իսկ Տիրանի անունը մէջ գալը և անցն գողափարը, թէ նոցն իսկ ուրիշները կը նկատէին իր ընկերոջը ձեռքէն Վերժինը խլելը՝ այնպէս զարկաւ խղճին, որ Արշակ բոլորովին հաւասարակշռութիւնը կորսնցուց:

Բժիշկը նշմարեց տղու շփոթութիւնն ու յուզումը:

— Ինչո՞ւ կը յուզւիք. սիրելիս. դուք ալ երևի դեռ բաւական միամիտ էք: Միայն իբրև փորձըւած մարդ խորհուրդ կու տայի, որ ձեր համալսարանովն ու վարժուհիներովը քոյրս խելքէ չի հանէլիք:

Վերժին վազէվազ եկաւ. ձեռքը շիշ մը քոնեակ ու խցհան մը, իսկ մէջքը նոր կապած ճերմակ գոգնոցին մէջ քանի մը տանձ ու սերկեւիլ:

Ու աչդ բոլորը սեղանին վրայ թափելով՝ զւարթ դէմքով դարձաւ երիտասարդին.

— Նայ, պարոն Արշակ, շիշի խիցը հանեցէք, և ձեզի հետ միասին՝ ես ալ գաւաթ մը կը խմեմ այսօր:

Բժիշկը զուլը ծռած կը նայէր անոնց:

Արշակ մեքենաբար պատուեց շիշի բերնի կապար-թերթը, քաշեց խիցը և լեցուց օրիորդին ու իրեն:

Բժիշկն ալ իր օղին վերցուց. ու գաւաթները իրարու զարկին:

— Դէ, բարի ճանապարհ, Վերժին. լսեցի, որ շուտով Եւրոպա երթալու միտք ունիս եղբ. ինչո՞ւ մինչև հիմա ինձի ոչինչ չէիր ըսեր:

Աղջիկը ցընցըւեցաւ, զարմացաւ ու նայեցաւ Արշակի երեսը:

Ուրեմն արդէն խօսքի էք աչդ մասին. հարցուց յուզւած.

Դաւաթը ձեռքէն վար դրաւ, ու եղբօրը վրայ նետեցաւ ռախ-ուրախ բացականչելով.

— Աղւոր եղբայրս, մէ'կ հատիկ եղբայրս, ես զիտէի, որ պիտի համաձայնիս, ինձի պիտի օգնես. ես զիտէի, որ դուն բարի, շատ բարի ես. իմ մէ'կ հատիկ եղբայրս:

Ու եղբօրը ձեռքերէն բռնած կը քաշքշէր, կը սեղմէր:

— Ա՛, իհարկէ, իհարկէ, կ'երթաս Եւրոպա կը տեսնես նոր քա-

ղաքակրթութիւն, նոր կեանք. կը յաճախես նշանաւոր համալսարանները ամենանշանաւոր գիտնականներին. և այդ ամէնը գլուխդ լեցուցած կը վերադառնաս հայրենիքդ, հոս, մեր հասարակութեան յառաջդիմութեանը աշխատելու, նոր սերունդին նոր ուժ և ազատ գաղափարներ տալու: Այս բոլորի մասին անշուշտ արդէն քեզի խօսած է պարոն Արշակը:

Եւ այս այնպիսի լուրջ տոնով մը ըսւած էր, որ Վերժինը զարմացած եղբօրը կը նայէր՝ առանց ինչ մտածելը գիտնալու:

— Եւ վերջապէս, շարունակեց եղբայրը հիւրին գաւաթը քոնեակ լեցնելով: Եւ վերջապէս պարոն Արշակը այս քանի տարի է Եւրոպա է. իհարկէ կը ճանչնայ կեանքը, պայմաններուն ծանօթ, կրնայ քեզի ամէն կերպ օգնել, հա, հա, հա, հա. այնպէս չէ. վերցուցէք քոնեակնիդ:

Աղջիկը ոչինչ չէր հասկընար այդ ծիծաղէն, այդ լրջութենէն, այդ անաղատելի խօսքերէն: Անգամ մը աղան կը նայէր, անգամ մը եղբօրը. կէս մը ցրւած, կէս մը ուրախ:

Իսկ Արշակ այդ կատակերգութիւնը շարունակելու այլ ևս անկարող՝ ցատկեց ոտքի և խօսակցութեան հնար եղածին չափ զրուկան դոյն մը տալու ջանքով՝ ըսաւ.

— Հերիք է, պարոն բժիշկ: Մի մոռնաք, որ ձեր քրոջը տեսակ մը խօսք տւած էք արդէն. և այդ իսկապէս ձեր պարտականութիւնն էր: Փոխանակ կնոջ կամքի ու կարողութիւններուն վրայ փիլիսոփայութիւններ ընելու՝ միջոց տւէք ձեզի մօտիկ եղող կիներուն հոսանքի մէջ մտնելու. ինչ և է. այդ խնդրի մասին նորէն առիթ կ'ունենանք խօսելու, իսկ հիմա արդէն ուշ է. ներեցէք, որ մեկնիմ:

— Բայց իզուր կ'ըշտապէք. նկատեց Վերժին:

— Ոտքի վրայ գաւաթ մըն ալ չէք խմեր. առաջարկեց բժիշկը ժպտուն:

— Շնորհակալ եմ. ոչ:

— Խմեցէք. այսօր թող բացառութիւն լինի. ըսաւ աղջիկը, ինքը գաւաթը աղու ձեռքը դնելով:

— Նա, քանի որ քոյրս կ'առաջարկէ, այլ ևս, իհարկէ, չէք կրնար մերժեր. չէ, խմեցէք, տաք-գլուխ բարեկամս:

Արշակ վայրկեան մը առաջ ինքըզինքը դուրս նետել կ'ուզէր։ Բժիշկի հեգնութիւնը, ակնասրկները, իր յիմար դրութիւնը, Տիրանի դէմ իր բռնած զիրքը, իր որոշումը ոտքի տակ տւած լինելու խաջթը, աղջկան յափրեցընող ներկայութիւնը, անաղնիւ ստոր վարւած լինելու մոռածութենքը խուսն յորձանքով իր հոգիին մէջ պոռոյտ կու տային։ Կը դիտակցէր, որ ապուշ ու անբնական հանդուցի մը մէջն էր, որը, կատուի թաթիկներուն տակ ինկած թեւի կծիկի մը պէս, աւելի ու աւելի կը խճըճէր։

Դէմքը կարծես կ'այրէր։

Կ'այրէր և կոկորդը քոնեակէն։

Մնաս-բարովի աւանդական նախադասութիւններուն բոլորովին անդրադարձօրէն պատասխանեց, առաւ գլխարկը ծառին վրայէն, ու պարտէզի դուռնէն ելաւ փողոց։

Լսեց իր ետեւէն աղջկան ձայնը, որ բան մը կ'ըսէր։ Ձայնը ճանչցաւ ու ցընցըւեցաւ, բայց բառերը իր գիտակցութեանը չի հասան։

Ամպոտ իրիկուն մըն էր. ու դեռ ժամանակէն առաջ մութը ինկեր էր գետին։

Արշակ արագ կը քաշէր պատին տակէն։

Անհուն պէտք մը կ'ըզզար ինքըզինքը ժողելու, մտքերը սովորական շաւիղը հանելու և իր ընելիքը որոշելու։

Բայց ճւրկէ սխէր։

Եւ ես իսելքէ կը հանեմ եղեր այդ անփորձ աղջիկը, մոտեցեց։ Ե՞ս. իհարկէ. հապա շարունակ հետը առանձին, գրեթէ զադտուկ, տեսակցիլս, ամէն կերպ իրեն ցոյց տւած հաճոյակատարութիւնս, հետը այնպէս բաց խօսիլս, ոգևորելս. միամիտ աղջիկը կը հրապուրէի. իհարկէ, չէ՞ որ ես աւելի վարժ եմ կանանց սրտերը գրաւելու, ինչպէս բժիշկը կ'ըսէ։

Ու դառն ժպտեցաւ։

«Սակայն ճիշտ է, երեւի, դեռ ժամ մը չի կաց, որ համբոյրներուս սակն էր ան, և Տիրանը բոլորովին մոռցըւած։ Տիրանը, խեղճ Տիրան. հիմա նստեր է անշուշտ ու աղջկան վրայ ոտանաւոր մը կը թխէ. խեղճ աղնիւ տղայ։ Ձէ, պարսպ բան է, աշխարհքը անաղնիւներուն է։ Անցած օր դացի կեղծեցի, վտահացուցի, թէ։

ես ոչ աղջիկը սիրած եմ, ոչ ալ սիրելու ժամանակ կամ տրամադրութիւն ունիմ. թէ ուրիշները և թէ ինձի կառարկապէս կուրացընելու համար քանի մը օր հեռացայ, որպէս զի վերադառնալուս պէս աղջկան զիրկը նետւիմ Խաբեցի. և վարպետ կերպով թէ ինքըզինքս, թէ ընկերս. է՛, ըստ որևոյթին արդէն իմ ամբողջ կեանքս խաբել ու կեղծել է եղած. մի՛շտ Սիրուն-սիրուն բառերով խաղալ, ամենախոշոր սկզբունքներու անունով խօսիլ, անպայման ազնւութիւն պոռնկել. և ահա փոքրիկ փորձ մը, կեանքի պզտիկ շփում մը, և արդէն դուրս է ցայտած ներքին ես-ի իսկական տմարդի պատկերը»:

Պահ մը մտածումները կարծես ընդհատեցան, նայեցաւ շուրջը մեքենաբար ու նորէն զըլսը կախեց: Կը քալէր:

«Սակայն իրմա, միթէ իրմա այս աստիճանի ինկած եմ ես. միթէ չեմ կրնար նորէն ամէն ինչ իր բնական ճամբան հաներ. ճամբանս ճամբան մէ՛կ է, ես այդ գիտեմ, մէկ անդամէն ընդմիշտ վերջ դնել իմ ու աղջկան մէջ եղած կապին. բայց... բայց առոր համար կամքի ուժ կ'ուզէ. և ես, որ այնքան հպարտ էի կամքիս ուժին վրայ...»

Կանգ առաւ մտածկոտ փողոցին անկիւնը. տեսակ մը թուլցած ու վարանոտ. վայրկեան մը միայն. ապա արագ մտաւ ձախ թևի փողոցը և սկսաւ շտապել ուժեղ քայլաձգով մը ու լարած դիմադներով:

Ո՛չ, ան կամք ունի, պէտք է ապացուցանէ, որ կամք ունի. այլ ես ի՞նչ կը մնայ իրեն, եթէ իր մէջէն կորչի այդ վստահութիւնը. չէ՞ որ իր ապագան, յոյսերը, երազները բոլորը հիմնւած են իր կամքի ուժին ու անցողիկ ազնւութեանը վրան. ոչ, այդ հիմքը չի խախտի պիտի: Եւ վերջապէս ի՞նչ կապ պիտի ծագի այդ սէրէն. միթէ կրնամք երջանիկ լինել, երբ ամէն վայրկեան Տիրանի դէմքը պիտի դայ աչքերուն դիմացը, երբ շարունակ պիտի յիշէ, թէ ի՞նչ դնով է ձեռք բերած այդ երջանկութիւնը. երջանկութիւն... և ի՞նչ պիտի տեսէ այդ. եղբայրը արդէն կ'ըսէ պարզապէս, որ քոյրը արեւստով խլած է ընկերոջը ձեռքէն. ի՞նչ պիտի զգայ աղջիկը, երբ այդ լսէ. այդ մտածումներուն տակ կարճ է սէր ու համակրանք ածիլ: Ձէ, այս կապը ոչինչ բազդաւորութիւն բերել չի կրնար ոչ իրեն, ոչ աղջկան:

Մտքերու այս ուղղութեամբ աւելի ու աւելի իր եզրակացու-  
թեան վրայ համոզելով՝ հասաւ տուն:

Վճռական քայլերով ելաւ սանդուղներէն վեր, մտաւ սենեակ,  
ինքը վառեց լամպը. ու նամակի մը թուղթ քաշեց:

Քովի սրահը քոյրը կը նւագէր:

Վայրկեան մը ձեռքը ճակտին ու աչքերը ճերմակ թուղթին  
յառած՝ մտածեց. յանկարծ վերցուց գրիչը, ու արագ սկսաւ գրել.

«Օրինորդ, այս տողերը գրելը ինծի համար տանջանք է, բայց  
պարտական եմ գրելու:

«Մեր փոխադարձ յարաբերութիւնը բոլորովին անբնական բար-  
դութիւններ առաւ առանց մեր նկատելուն:

«Ձեր կողմէն սխալմունք մը կայ, երեւի, իմ դէպի ձեզի ունե-  
ցած զգացումներուն վերաբերմամբ. իսկ իմ կողմէս ալ անսահման  
թուլութիւն մը ձեր ձայնի ու հայեացքի հրապույրին զիմաց: Ես  
այսօր վերջնականապէս համոզւեցայ, որ ձեր ներկայութեանը իմ  
կամքիս ուժը ինծի հերիք չէ, և որ իմ այս թոյլ վարմունքը ձեր  
սխալ ենթադրութիւնները միայն աւելի պիտի ուժովցնէ. պէտք  
էր ամէն բան մէկ անգամայն պարզել, որքան ալ որ այդ քայլը ընելը  
ինծի համար ծանր լինի:

«Ես իմ կողմէս ջանալու եմ ասկէ վերջը աւելի ևս ձեզմէ խոյս  
տալու, ինչպէս ինքներդ արդէն շատ ճիշտ նկատեր էիք այդ. իսկ  
դուք, ազնիւ օրինորդ, մոռցէք մեր մէջ եղած պզտիկ անցեալը, և  
ներեցէ՛ք իմ ակամայ գրած այս նամակս:

«Բոլոր սրտէ ձեզի յարգող: Սրշակ:

Վարդաց անգամ մը. քիչ մը մտածեց. և նամակին ճակատը  
հատիկ-հատիկ գրերով աւելցուց.

«Նամակիս հետ ուղարկած զիրքս պատըրւակ է, թէ ձեր և  
թէ մեր տունը ուշադրութիւն չի գրաւելու համար: Շարունակու-  
թիւնը կարդացէ՛ք առանձինն:

Մալլեց, դրաւ ծրարին մէջ, գրեց Վերժինի հասցէն, դրքերուն  
մէջէն քաշեց Իբսէնի մէկ հատորը, նամակը կիսով մը մէջը դրաւ,  
ու իջաւ վար:

— Մայրիկ, մանչը հըր է. այս զիրքն ու նամակը անմիջապէս

Պատկերաններուն տունը խրկէ. խոստացայ տուն գալուս պէս այս գիրքը իրենց հասցընեմ:

— Բայց, տղմս, հիմա շուտով ընթերելու ենք, մանչը դործ ունի:

— Չէ, մայրիկ, ինդրեմ, անմիջապէս:

Մայրը վարանելով մանչը կանչեց ու յայտնեց տղուն պատուէրը:

— Մէջի նամակը չի ձգես, Վարդան, ըսաւ Արշակ գիրքը սպասաւորին ձեռքը դնելով:

— Շուտով դարձիր. պատուիրեց մայրը:

Եւ երբ սպասաւորը իր ճերմակ զոգնոցը ժողկելով ու մէջքը փաթթելով դուռնէն դուրս ելաւ՝ Արշակ ծանր-ծանր բարձրացաւ իր սենեակը:

Ներսը քոյրը ոստոստուն վայլս մը կը նւագէր:

Այդ զւարթ աքորդները իր սիրտը աւելի սեղմեցին:

«Վերջացաւ», մրմնջեց ակռաներուն մէջէն, և զգաց, որ իր մէջը եղող այն ամուր վճռականութիւնը սկսաւ արագ թուլնալ ու հալիլ:

Իրեն այնպէս թւեցաւ, թէ այս բոլորը արդէն չափազանց էր, թէ այդ աստիճանի ինքն իր դէմ զայրանալու ու կռուելու պէտք չունէր. միթէ ինքը ուղեւոր էր խաբած. և միթէ ինքը ընկերոջը մասին ոչինչ գիտէր, երբ սկսաւ աղջիկէն հրապուրել. հրապուրելի, ոչ թէ հրապուրել. և վերջապէս ինչ անազնուութիւն, երբ ինք իր զգացումները կեղծել չի կրնար, չի կրնար իր սիրտը զըսպել, երբ աղջիկը այնքան պարզ, ջերմ ու սրտազին դէպի իրեն կը ձգտէր:

Ու աչքերուն դէմ պատկերացաւ Վերժինը. անոր տաք ու միամիտ յանդիմանութիւնը, ամօթէն ու հաճոյքէն դետին ձգւած հայեացքը. վերջը իր թևերուն մէջ. այն թեթև և անորոշ ծաղկի մը հոտը, որ չիփակին ծոցէն կու գար. անոր այտերուն հուրը, որ իր դէմքը կայրէր. և շրթունքներուն քնքաւ կծկումը իրենիններուն վրայ...

Աուրժըրը ղողաց և ուռեցաւ. նետեցաւ մահճակալին ոտքը գորգին վրայ, դէմքը թաղեց անկողնին մէջ, ու անշարժ մնաց. ոչ մի ծպտուն:

Իսկ վաչլսին տաքտերը քովի սրահէն գետ կը թնդացին զւարթ ու կայտուուն:

## ԺԸ

Սեղանատան դուռը կռնակի վրայ բաց էր, և դռան զոյգ վարագոյրներուն մէջէն լամպի լոյսի գեղին խոշոր հաւասարասրուգ եռանկիւնի մը ինկեր էր կից սենեակի յատուկին վրայ:

Սենեակի մնացած մասը մութ էր, և այդ մութին մէջ քանապէսին վրայ ամբողջ հասակովը փուեր էր Վերժին, երկու թեւերը գլխուն տակը կապած, աչքերը կէս մը դոց, կէս մը դիմացի պատէն կախւած նկարի մը փայլող մէկ կէտին յառած, թաղւած իր թարմ ու անուշ զգացումներուն, իր նոր անրջանքին մէջ:

Յանկարծ շտապ ներս վազեց սպասուհին սեղանատուն, և հոն մարդ չգտնելով մտաւ կից սենեակը, մութին մէջ կծկած աչքերով նշմարեց իր տիրուհին, մօտեցաւ ու ձեռքի գիրքը անոր մեկնեց.

— Սմբատեաններու մանչը բերաւ. ըսելով.

Եւ արագ վազեց իր դործին:

Վերժին զսպանակէ նետւածի մը պէս վեր թռաւ. և գիրքը խլելով ու զարմացած շարժումով մը սեղանատան լամպին տակը շտապեց:

Իբսէն:

Ոչինչ չհասկանալով՝ արագ բացաւ նամակը:

Առաջին արտայայտութիւնը ժպիտ մը եղաւ ձախ աչտին, որը շուտով սկսաւ աւրելիլ տեսակ մը լրջութեան տեղի տալով, որ հետզհետէ բոլորովին կորսնցուց իր արտայայտութիւնը:

Նամակը ըստ երևոյթին ծանր կը կարդացէր: Վերին աստիճանի հանդարտ, տեսակ մը կապւած շարժումով դարձուց միւս երեսը. յաջորդ երեսի ընթերցումն ալ երկար տեւեց, թէև գրւածքը հազիւ երեսի կէսը կ'անցնէր:

Վերջացուց. աջ ձեռքը նամակին հետ սահեցաւ վար. ձախը մնաց սեղանին վրայ պատառաքաղի մը կոխին յենած:

Մոլոր աչքերով նայեցաւ անգամ մը շուրջը. վերցուց Իբսէնը, նայեցաւ կազմին, դրաւ նորէն սեղանին վրայ, զննեց անգամ մը

ծրարի հասցէն. և նորէն աջ ձեռքը բարձրացընելով սկսաւ նամակը կարդալ:

Բայց հազիւ քանի մը տող, որ նամակը ձեռքէն սահեցաւ, շրթունքներուն երկու ծայրերը դողացին, կուրծքը ուռեցաւ և վայրենի հեծկտուքով մը ինկաւ քովի աթոռին վրայ. միևնոյն ժամանակ՝ ձայնը խեղդելու համար՝ սեղանէն վերցուցած անձեռնոցը դէմքին սեղմած:

Դուրսը ոտքի ձայներ լսեցան:

Խենթի մը պէս վեր ցատկեց. դողդոջուն ձեռքով վերցուց զիրքն ու նամակը. և բոլոր ուժովը վազեց դէպի մութ սանդուղները, հանկէ վերի յարկը ու շիտակ իր սենեակը:

Նամակի ու զիրքին հետ միասին քիթ ու բերնի վրայ նետւեցաւ մահճակալին վրայ ու դէմքը բարձին մէջ թաղեց. և վազքի ատեն զսպւրած լացը նորէն բոլոր ուժով դուրս պոռթկաց:

Գլխուն մէջ մէկ միտք մը կը դառնար միայն. որ Արշակէն մերժւած էր. բզրկոտոյ մտածում մը, սուր: Որը սակայն կարծես քիչ-քիչ սկսաւ բթանալ: Ելաւ նստեցաւ անկողնին մէջ. կուրծքը ներքին թափէն մէջէմէջ կը ցլնցւէր դեռ, ուսերը վեր կը նետւէին, բայց ալ չէր լար: Թոյլ մը արմուկը բարձին յենած, թաց թաշկինակին ծայրը պինդ մը խածած, մեռած հայեացքով կը նայէր մութին մէջ:

Ելաւ վառեց մոմը. առաւ նամակը ու նորէն կարդաց. ուշադիր ու մտածկոտ, վերջը դանդաղ շարժումով մը թուղթը դրաւ քովի սեղանին, ու ձեռքը մնաց թուղթին վրայ: Գլուխը ձգեց աթոռի թիկունքին, ու հայեացքը առաստաղը, ու մոմի դողդոջուն լոյսէն անորոշ ստւերներ կ'երերտըկային:

Ուժասպառ տխրութիւն մը տիրեւ էր վրան. և ուղեղին մէջ լայն ու անշարժ նստած գիտակցութիւն մը, թէ սխալած էր. բոլորը, բոլորը «սխալմունք» մըն էր, իր ոգևորութիւնը, յոյշերը, սէրը. թէ Արշակը ալ իրը չէր, և որ երբէք իրը եղած չէր... «սխալմունք» մը՝ կ'ըսէր նամակը:

Եւ արցունքները նորէն սկսան խոշոր կաթիլներով հոսել իր աչքերէն. բայց առանց յուզման, առանց աղմուկի:

Վարէն մօրը ձայնը լսեցաւ, որ հացի կը կանչէր:

Խսկոյն վեր թուաւ, մարեց մոմը, սրբեց դէմքը, և սանդուղի գլխէն հնար եղածին չափ հաստատ ձաջնով մը յայտնեց, որ քիչ մը ղլուխը կը ցաւի և բան ուտելու բնաւ ախորժակ չունի. և նորէն նետուեցաւ անկողնին վրայ:

Փոխանակ պատասխանի մայրը եկաւ վեր: Նախ նկատողութիւն ըրաւ, թէ ինչու լոյս չէ վառեր. և ինքը վառել ուզեց, բայց աղջիկը չի թողուց. վերջը մօտեցաւ ուզեցաւ ճակատը բռնէ, աղջիկը մերժեց. առաջարկեց օ-դը-քոլոն քսել, Վերժին նորէն մերժեց. վերջապէս յորդորեց չիմարութիւն չընել, գալ ընթրիքի, ելնել մաքուր օդը. աղջիկը այդ ալ ժխտեց ու խնդրեց, որ առանձին ձգէ ինքը: Մայրը տեսնելով, որ աղջկան քմահաճ ու կամակոր վարկեաններէն է՝ դժգոհ իջաւ վար՝ քիթին տակէն բան մը մօրլուտալով:

Վերժին ելաւ դուռը կղպեց. ու նորէն պառկեցաւ կռնակին վրայ. ու մնաց այդպէս անշարժ. երկար. իր մտածումներուն մէջ: Վերջը սկսաւ դառնալ. մէկ կողքէն միւսի վրայ, դէմքին վրայ. հորչափ ժամանակ, ինքն ալ չգիտէր: Տունը, դուրսը ամէն շարժում դադրած էր արդէն: Շատ-շատոնց էր, երբ ան լսեց զգուշ քայլերու իր սենեակին մօտենալը, ու դռան կանդին թեթեւ մը շոշափուիլը. դուռը բանալու իզուր ճիգ մըն էր այդ. ետքը քայլերը նորէն կամաց մը հեռացեր էին դէպի դիմացի սենեակը, ուր մօրը ննջարանն էր: Սէ անկէ վերջը ալ ոչինչ չէր լսած:

Յանկարծ պառկելէն յոգնութիւն զգաց. գլուխն ալ կ'այրէր լարած մտածումներէն, ցատկեց անկողնէն վար. սենեակին օդը նեղ էր. բացաւ լուսամուտներէն մէկը, ուրկէ գիշերւան զով օդը թարմ հոսանքով շոյեց իր դէմքը:

Դճուս, բացը ելնել ուզեց. և ալ առանց երկար մտածելու վառեց մոմը. կսկծացող աչքերով նայեցաւ ժամը, կէս գիշերը վաղուց անց էր: Վամաց մը բացաւ սենեակին դուռը, առանց աղմուկի ոտքի մատներուն վրայ իջաւ սանդուղներէն, զգուշութեամբ ետ հրեց պարտեզի դռան ահադին նիզը, մոմը մարեց, դրաւ գետին. ու նետուեցաւ դուրս:

Մառերուն տակ անթափանց մութ էր. թեթեւ հովիկը կը խօսեցընէր ոստերուն իւրաքանչիւր տերւէր:

Այդ մութին մէջ, ծառերու այդ փայփայող շրշիւնին տակ աղջիկը արագ կը քալէր արահետէ արահետ:

Մինչև հիմա իր ամբողջ խորհրդածութիւնները զոյգ մը գաղափարի շուրջը կը դառնար, որոնց առանցքը տղու նամակն էր. նոյն մտածումներու միտք հիանդացնող անվերջ նոյն կրկնութիւնը, թէ տղան երբէք գէպի ինքը զգացում մը ունեցած չէ, ինչպէս ինքը թեթևամտօրէն երևակայած էր, թէ ինքը պարզապէս խաբւած, յիմարացած է եղեր. և այդ մերժւած ու անպատասխան մնացած սրտի կծու ցաւին կը միանար միւս կողմէն ամօթի խայթը. կանացի վիրաւորւած ամօթխածութիւն մը, որ այդպէս անտեղի իր զգացումները մերկացուցեր էր տղու մը դիմաց, ու գրեթէ անոր վիզն էր նետուեր բռնի:

Եւ հիմա դուրսի զովութիւնը, մարմնական աշխուժ շարժումը նոր ընթացք մը տւին անոր մտածումներուն. և ուղիղը դուրս եկաւ վերջապէս այն կախարդւած շրջանակէն որուն մէջ ամբողջ գիշերը դարձեր էր: Ուղեցաւ ալ շմտածէ այդ բոլորի վրայ, ուղեցաւ պահ մը ազատ շնչէ:

Ծառերու զոյգ շարքի մը մէջէն հոսող նեղ աւազուղին, որուն վրայէն կը քալէր, աւազանին քով անկիւն կու տար. աղջիկը հազիւ հասեր էր այդ անկիւնը, որ կանգ առաւ յանկարծ. և ապա գրէթէ ակամայ վարանոտ քայլերով մտաւ ծառերու խմբին տակ, ուր աւազանի հալած ձիւթէ մակերեսը տեղ-տեղ թեթև մը կը ցոլար: Մութին գիրկէն նստարանը հազիւ կը նշմարէր. քայլ մը հեռու կեցաւ. արձանի մը պէս անշարժ, ձեռքերը ծալած կրճքին, ու հայեացքը յամառ կէտի մը յառած. մինչ նոր պատկերներ յիշողութեան ծոցէն դուրս կը լողային. կենդանի ու գունաւոր. զգաց, որ կուրծքը նորէն դողալ սկսաւ, հեշտանքի ու ցաւի գիրկընդխառն դողովը. մէկ ալ յանկարծ ցընցըւեցաւ, երազէ արթնածի մը պէս, յուսահատ ու վաչրի շարժումով մը իր վրան խուժող թարմ ու վառ յուշերը ձեռքովը մէկգի հրել ուզեց, և տեսակ մը վախով դուրս փախաւ աւազանին մօտէն:

Կը քալէր նորէն արագ ու լարւած.

«Ո՛չ, ո՛չ, անկարելի է. հոս սխալմունք չի կայ. սխալը, սոստը իր գրածն է, ոչ թէ մինչև հիմա մեր մէջ եղածը, ո՛չ թէ այդ...»

Ու չգիտէր ինչպէս անւանէ այն տեսարանը, որուն վրայէն գիշեր մը դեռ չէր անցեր, բայց որը արդէն այնպէս հեռու էր, հեռու:

Այդ նոր միայքը, թէ տղան կը ստէր, թէ դէպի ինքը անտարբեր եղած լինել չէր կրնար, տեսակ մը բարձրացում, հալարտութիւն հոսեցուց աղջկայ զգացումներուն մէջ:

Անտարբեր. ի՞նչ դէմ. չէ՞ որ ամենքը շարունակ կը կրկնեն իր գեղեցկութիւնը, իր հրապոյրը. և վերջապէս մի՞թէ անտարբերը այնպէս դողալ, գրկել ու գգնել գիտէ. և այդպէս երկիւղ ու փախուստ իրմէն, ինչպէս նամակէն կ'երևի. բայց ինչո՞ւ, ինչո՞ւ ուրեմն այդ փախուստը, այդ նամակը:

Յանկարծ կանգ առաւ. դէմքին լարումը լուծւեցաւ, երկու ձեռքերը վար սահեցան թոյլ, ու հայեացքը սալթաքեցաւ ինկաւ ծառի մը բունին այն մասին վրայ, որ մութին ու գետնին հետ միանգամէն կը համբուրէր:

Գտած էր գաղտնիքի բանալին...

Ա՛յ, որ տղան իր արտաքինէն հրապուրւած էր ու կապւած՝ ալ ատոր կասկած չի կար. բայց այդ, միայն այդ հերթք էր Արշակի համար: Յիշեց տղու այնքան անգամ գծած գործունէութեան, հասարակական աշխատանքի ծրագիրները, անոր պահանջները կնոջ զարգացման, դերի ու գործունէութեան մասին. եթէ ուրիշ կանանց վերաբերմամբ այդչափ պահանջոտ էր, որչափ աւելի լինելու էր իր զգացումներու ու գործունէութեան ընկերուհիին համար:

Ա՛յ, ան կ'ըմբռնէր հիմա տղու այն ինքնիրեն հետ մղած մաքառումը, իրմէն խոյս տալը և այդ նամակի շարժառիթը: Տղան սիրահարւած էր իր վրայ իբրև աղջկան մը վրայ, ու կը խուսափէր այդ աղջկէն, որ իր գաղափարներու ու կեանքի ընկերուհին լինելու չարմարութիւնը չունէր. այո՛, այդ պարզ էր, արևի պէս: Եւ, իրան, իր ինչէն պիտի գոհ մնար տղան. միթէ ինքն ալ այն սովորական լանկիւնը բաղմած՝ պոլսուհիներէն մէկը չէր, որ Արշակ այնքան հեզնած էր իր ներկայութեան. էապէս ի՞նչ տարբերութիւն:

Եւ անպէտք, ոչինչ, անօգուտ, և իբրև ապարդիւն բան մը արհամարուած լինելու զիտակցութիւնը այնպէս խածաւ աղջկայ

սիրտը, որ դէմքի բոլոր մկանները զողողացին, և ականներն սեղմած՝ հաղիւ կրցաւ զսպել վայրենի ճիչ մը, որ կրճքէն զուրս ցատկել ու օդը պատռել կ'ուզէր:

Յաջորդեց լքումը. բայց վայրկեան մը միայն. և հակազդեցութիւնը արդէն:

Սակայն ճիշդ ըսաւ, որ այդ աստիճանի անպէտք էր: Հիմն, գուցէ, բայց չէ որ կրնար ինչ մը դառնար. չէ որ ինքը կը ձգտէր. և միթէ նոյն տղան չէր, որ իրեն ցոյց էր տւած բռնելիք ճամբան. թէ ան ալ կը տարակուսէր իր վրայ, ու յոյսը կտրեր էր իրմէն:

Եւ յիշեց Արշակի մեկնելու պահուն եղբօրը ըսած խօսքերը, և եղբօրը խօսւածքը ընդհանրապէս իր համալսարան երթալու մասին, լուրջ ու ծաղրի այն խառնուրդը, ուրկէ աղջիկը ոչինչ չէր հասկըցած և իսկոյն ալ մոռցեր էր իր յափրեցուցիչ զգացումներու յորդումին տակ: Բայց հիմա կը հասկընար. անոնք խօսած էին իր մասին, և երկուքն ալ մեծ վստահութիւն մը չունէին իր վրայ. որ եղբայրը այդ կարծիքին էր լինելու՝ զարմանալու ոչ ինչ. բայց Արշակը. ուրեմն ան ալ: Եւ ան, և եղբայրը, և բոլոր շրջապատողները. ամէնքը, ամէնքը կարեւորութիւն չէին ուզեր տալ իրեն: Փահ, հասարակ աղջիկ մը. իրմէն ինչ կրնայ զուրս գար. աղջիկ մը...

Եւ մէկէն իղձ մը, պահանջ մը, վճիռ մը գամեցաւ գըլխուն մէջ.

«Մեծ, մեծ կին մը դառնալ»:

Բոլորի կարծիքին հակառակ:

Եւ այդ մտքէն աչքերը վառեցան, դէմքը բոց առաւ, ձեռքերը զոյգ ստինքին խոր մը ներշնչեց, ձախ աչտը խոխոնեցընող զանգուր մը մեքենաբար ականջին ետեւը անցուց, և սկսաւ նորէն արագ քալել:

Ծառերը ետ-ետ կը փախչէին երկու կողմէն. ան ոչինչ չէր տեսներ:

«Մեծ, մեծ կին մը դառնալ. աշխատիլ ու գործել հասարակութեան համար. բոլոր ուժերը նւիրել ու գործ մը, լուրջ գործ մը առաջացընել. ամենքը ճանչնան ինքը, մատով ցոյց տան. ծանօթ, յայտնի կին մը. դէր խաղացող, հրապարակի վրայ ձայն ունեցող. ազատ, զարգացած, բարձր կրթութեան աղջիկ մը. այն,

անկասկած: Եւ «ան», ան ամէն կողմ իր անունին հանդիպի, իր զործունէութեան. և տեսնէ, թէ որքան սխալ ու ստոր է դատած իր մասին. թէ սրբան անկարող է եղեր զնահատելու իր զգացումները, իր սէրը, իր ուժը. և սուերի մը պէս հեռուէն հետեի իրեն, սքանչանայ, յափշտակի իրմով. իսկ ինքը անտարբեր. ոչինչ, ոչինչ ցոյց չի տայ. իբրեւ թէ մոռցեր է բոլորը. ամբողջովին. և թող ան զղջայ, չարաչար զղջայ...:

Վրէժի, սիրոյ ու փառասիրութեան այս թափին տակ ամբողջ մարմնով կը դողար. պառկելէն, արագ շարժումէն ու հովի չարածի շունչէն մազերը բոլորովին քրքրէր ու խառնակ թափւեր էին ուսերուն. շնչառութիւնը քիչ մը դիւրացընելու համար քակեց չիտկին մէկ-երկու կոծակները, ուրկէ ճերմակութիւն մը դուրս ցատկեց. ան աւելի կը վազէր, քան թէ կը քալէր ծառերուն տակ. անտառի յաւերժահարս մը կարծես մութին մէջ:

«Մէծ, մե՛ծ կին մը»:

Լոյսի առաջին շողերուն հետ կամաց մը սպրտեցաւ իր սենեակը:

Եւ ալ այդ էր միայն իր ամբողջ մտածումը, նոյնը և յաջորդ օրերը: Միւս բոլոր յիշողութիւնները, անցեալը, ներկան, սէրը, վրէժը, Արշակի պատկերը բոլորը, բոլորը, այդ դաղափարի շուրջը կը դառնային ու իր որոշումը աւելի կը սրէին:

Ժամերով կը քաշէր իր սենեակը, կամ կը թափառէր պարտէզը ածուներուն մէջ առանձին. միշտ ցրւած դէպի ուրիշները, ամենքի դէմ տեսակ մը զրգուած:

Մայրը հիմա բացարձակապէս ոչինչ չէր հասկընար աղջկայ վարմունքէն. մէջէմէջ զգուշութեամբ տւած հարցերուն անմիտ ու նեղսիրտ պատասխան մը կ'ըստանար. ու կը լռէր աւելի չի զրգուելու համար:

Այդ բոլորը կը տեսնէր խնարկէ և բժիշկը, թէև մօտը ոչինչ չէր ակնարկէր:

«Այդ աղջիկը սիրահարւած է. ու ծանր տեսակէն» կը մտածէր ինքնին:

Իրիկուն մը, երբ առանձին էին՝ դարձաւ քրոջը.

— Վերժի՛ն, ի՛նչ է պատահեր քեզի:

— Ինձի՞ր ոչինչ։ Բայց, իրան, հարցի մը վրայ քեզի հետ խօսիլ կ'ուզէի, Յակոբ։

— Ամբողջովին տրամադրութեանդ տակն եմ։ Վրայ բերաւ եղբայրը պաշտօնական տոնով մը։

— Սակայն ամենէն առաջ այդ արհամարհական ձեերդ մէկ կոզմէ, որ բոլորովին անտեղի են։

Բժիշկը ոչինչ չառարկեց։

— Լսէ ինձի, ես վերջնականապէս որոշած եմ, ինչ զնով ալ որ այդ լինի, քանի մը տարի երթամ՝ պիտի Յւրոպա։ Ես ամէն բան հաշուեր եմ՝ արդէն, մի՛ զարմանար, և ամենեւին քու վրայ ծանրութիւն չիներու միտք չունիմ։ Բայց վերջապէս ես ալ ունիմ՝ ժառանգական իրաւունքներ, զոնէ ապագային, ես պատրաստ եմ այդ բոլորէն միանգամ ընդ միշտ հրաժարելու, միայն թէ հիմա ինձի ամսական շնորհքով գումար մը ուղարկես հինգ տարւան չափ։ Կատակ չեմ ըներ, Յակոբ, այս դործը զլուխ պիտի դաջ, անպատճառ։

Այնպիսի վճռական ու ամուր շեշտ մը կար այդ խօսքերուն տակ, որ բժիշկը զարմանքէն պահ մը լուռ քրոջը երեսը նայեցաւ միայն, և վերջը մտածկոտ աւելցուց։

— Ինձի նայէ, հոս զրամականը չէ, որ միայն պէտք է մտածել, գուցէ այդ դեռ ամենէն յետինն է։

— Ուրիշ մտածելիքները դուն ինձի թող, ընդհատեց աղջիկը։ Բժիշկի դէմքէն ցընցում մը անցաւ։

— Վերժին, խենթութիւնները զլխէդ դուրս հանէ, համոզւած եղիր, որ մայրդ կը մեռնի ու չի թողներ, և ճշմարիտ ես ալ չեմ ուզեր, որ օտար տղու մը օտար երկիրներ քաշ դաս։

— Ի՞նչ օտար տղայ, հարցուց Վերժին ամբողջովին շառադունած։

Եղբայրը նոյն իսկ պատասխանել աւելորդ համարեց, ու իր հեղնական ժպիտը շրթունքներուն ձախ անկիւնէն նորէն դուրս ծլեցաւ։

— Քու բոլոր հասկըցածդ ահա այդչափ է, պատասխանեց աղջիկը ինքնազիտակից ու գուռոզ շարժումով մը։ Դուն սկզբէն մինչև հիմա զլուխդ խոթեր ես, որ ես Արշակի վրան խենթի պէս սիրա-

հարած եմ, և բոլորը ինչ որ կ'ընեմ միակ շարժառիթը այդ է: Դէ, գիտցիր, որ իմ ու այդ տղու մէջ եղած կապը նոյնչափ է, որչափ և քու ու անոր բարեկամութիւնը: Կասկած չի կայ, որ այդ տղան ինծի բաւական զրգում տւաւ ու աչքերս բացաւ. զարմանալու ինչ կայ, միթէ ամենքը քեզի աէս անտարրեր պիտի լինէին: Իսկ ինչ կը վերաբերի անոր հետ Եւրոպա երթալուս՝ այդ շիմերները ուղեղէդ դուրս հանէ. ես առանձին երթամ պիտի. բոլորովին առանձին, բոլորովին անկախ:

Բժիշկի դէմքէն ժպիտը արդէն սրբւեւ էր:

Միթէ այդ հաստատ ու խրոխտ շեշտերը իր ամբշկոտ քրոջ խօսքերն էին, որ սիրոյ մասին եղած ամենաթեթեւ ակնարկութեանէն կը շառագունէր:

Եւ փորձեց քրոջը այդ թոյլ ջիղէն բռնելու:

—Անկախ, առանձին. սիրուն բառեր են. բայց գիտէս ինչըսել է Եւրոպական քաղաքակրթութիւն ու բաց կեանքին մէջ աղջիկ մը առանձին ինկած. ամէն հրապոյրներու ու զայլթակղութեան ենթակայ. մանաւանդ քեզի աէս զեղեցիկ ու դիւրին յափըշտակող աղջիկ մը:

—Ե՛, վախդ աւելորդ է: Ինծի նայէ, եթէ ես սիրահարուել կամ հրապուրուել ուզէի՝ կը կարծես հոս յարմարութիւն ու առիթ է պակաս. թէ՛ կ'երեւակայես գուցէ, որ քու ներկայութիւնդ ինծի արդելք պիտի լինի, կամ՝ եղեր է. դուն իզուր տեղը ինքըզինքդ ամենադէտ և ամէն բան տեսնող ու հասկըցող կը կարծես, սիրելիս:

Եւ այս այնպիսի կանացի երկմիտ, հեջնոտ, ժպտող տոնով մը ըսւած էր, որ բժիշկը ճշմարիտ որ խճըճեցաւ. իրենց տան մէջ բաներ մը դարձած լինելու էին, որուն ինքը տեղեակ անգամ չէր: Բայց իհարկէ ոչինչ չի հարցուց. միայն հարցական նայեցաւ քրոջը աչքերուն:

—Յակոբ, հասկըցիր, որ ես այլ ևս երեխայ չեմ. իզուր դեռ այդ աչքով կը նայիս վրաս. աւելցուց Վերժին:

Բժիշկի գլխէն արդէն քանի մը անգամ վազեր էր մի'ւննոյն միտքը այս խօսակցութեան միջոցին:

Ոչինչ չի պատասխանեց. համաձայն էր քրոջը:

## ԺԹ.

Արշակ շաբաթ մըն է բոլորովին հաշիւը կորսնցուցեր էր: Իր նամակը գրած օրէն իվեր աղջիկը չէր տեսած, և իր մասին ոչ մի լուր չունէր:

Նամակի յաջորդ առտուն Պզտիկեաններու սպասուհին ետ էր բերեր Իբսէնը, որուն մէջ ծալլըւած բաց թուղթի կտորի մը վրայ մատիտով գրւած էր.

«Բոլորի փոխարէն ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւնս. Վերժին»:

Եւ ուրիշ ոչինչ: Այս տողը աղուն համար հանելուկ մը դարձած էր, միտք չարչրող ու չի լուծւող հանելուկ մը: Հեղինութիւն էր այդ, ծանր, թէ՛ կսկիծի արդիւնք: Ամենէն հաւանականը կը թւէր իրեն՝ սրտի ծածկւած ցաւի հեգնոտ արտայայտութիւն. և այն զաղափարը, որ հիմա աղջիկը հոգեկան անտանելի տանջանքի մէջ է լինելու՝ աղուն սոսկալի խճի խայթ կու տար:

Արդեօք իր վարմունքը կուլիտ չէր, գուցէ նոյն խի անարդար: Միթէ յիմարութիւն չէր ընկերոջ մը համար իրենց մէջ եղած սրտազին կապը բզրկտել, երբ երկուքն ալ փոխադարձաբար իրարու կը ձգտէին, և մի՞թէ հաւանական է, որ աղջիկը ասկէ վերջը կ'որոշանայ Տիրանին պատասխանել:

Մտածման այս եղանակը իր անիմաստ վարւած լինելու մասին՝ ուղղակի տեսակ մը տանջող կասկածի վերածնցաւ Տիրանի հետ ունեցած մէկ-երկու տեսակցութենէն վերջը, երբ խօսքը զգուշութեամբ միշտ Վերժինի վրայ կը ծռէր: Տիրանի պատասխաններուն տակ անփութութիւն մը, օրեկափութիւն մը կար կարծես դէպի աղջիկը, անոր մասին կը խօսէր ինչպէս նկարիչ մը իր մօդէլի մասին: Արշակ այդ կը բացատրէր ընկերոջը իր վէպովը կ'անւած լինելէն. բաց այդ հերիք չէր. միթէ այդպէս կրնայ խօսիլ խորապէս սիրող սիրտ մը: Եւ կասկածին բոցը ալ ծաւալ առաւ. արդեօք իր ընկերը արժէր իր այդ ահագին զոհաբերութեանը, գուցէ ընկերոջը զգացումը լոկ խաղ մը, քոքէթութիւն մըն էր միայն աղջկան հետ. բանաստեղծի մը քապրիզը:

Մէկ ալ կը մտածէր, որ այդ հին սատանան էր իր մէջը

խլրատղը. որ ինքը իր յուզումներէն կուրացած՝ ընկերոջը խօսքերուն ու վարմունքին մէջ անպատճառ անտարբերութիւն տեսնել կ'ուզէր՝ իր ըրածին վրայ զղջալու ու այս դեռ միշտ վառւող զգացումները արդարացնելու համար:

Բայց վերջապէս ալ եղածը եղած էր: Հիմա գլխաւորապէս ինքըզինքը ցրւելու կը ջանար. ամբողջ օրը հոս էր ու հոն. արդէն վերադարձին հինգ-վեց օր էր միայն մնացեր, ու կարգադրելու բաւական գործ ունէր:

Սակայն մէջէմէջ դժոխային պահանջ մը կ'ըզգար Վերժինը զոնէ տեսնելու, զոնէ հեռուէն իր դէմքին դժերը նշմարելու: Գիշեր մը ուշ ատեն նոյն իսկ, իր կամքի բողոքներուն հակառակ, չի կրցաւ ինքըզինքը զսպել և անգամ մը զգուշ անոնց տան առջևէն անցաւ. ներսը լուռ էր. թէև լոյս կար, ոչինչ չի տեսաւ:

Այս անյաջող փորձի հետևեալ իրիկունն էր, որ բաղդը ինքը օգնութեան եկաւ:

Արշակ երեկոյեան Պոլսէն վերադարձին՝ տեսաւ, որ դեռ բաւական ժամանակ կար ընթրիքին, տուն ալ երթալու տրամադիր չէր. մտաւ ծովափեայ սրճարանի մը պարտէզը սուրճ մը խմելու:

Ժայռերու հսկայ կուտակում մըն էր, որոնք շխտակ ծովուն գիրկը կ'իջնէին սեպ. և այդ ժայռերու գլխին սրճարանի փոքրիկ շէնքը ու քովն ալ սիրուն ու պզտիկ պարտէզը. ծովուն կողմէն ժայռի ճիշտ եզերքին վանդակով պատած, որուն հինցած փայտերուն հետ իր հազարաւոր ոստիկներովը պինդ մը կը զրկւէր պատուակը, ու կը բարձրանար վեր պարտէզի վրայ ձգւած փայտէ ցանցին քառակուսիներուն մէջը կ'ոչորէր:

Արշակ քաշւեցաւ վանդակին մօտիկ ամենէն ծայրի սեղանին քովը. ձեռնափայտն ու վերարկուն նետեց կից աթոռին. ոտքը դրաւ նոյն աթոռի նեցուկ ձողերուն, և թեւը սեղանի եզրին կըրթընցուցած սկսաւ նայել ծովին:

Ու վարը քծնող ճողբիւնով մը կը նետէր ժայռի կուրծքն ի վեր, նորէն կը սահէր վար, քիչ մը ետ-ետ կ'երթար, և ուժ առած փաշոտ կառւի մը ճարպիկութեամբ իր յարձակման ոստումը կը կրկնէր:

Տղան խորունկ սուգաւած էր իր մտածումներուն մէջ, երբ ետեւէն բամբ ձայն մը իր անունը տուաւ.

—Ա՛խ, պարոն Արշակ. դուք դեռ Պոլիս էք:

Արշակ ցընցումով գլուխը դարձուց, ու պինդ մը սրտին կըծկհիւր զգաց. իր սեղանի առջևը կեցած էր բժիշկը. մինչ քիչ մը հեռուէն իր վրայ էին յառած միանգամէն երեք կանանց աչքերը. անոնք նոյնպէս իր սեղանին կը մտտնային. տիկին Պաթիկեանն էր Վերժինի ու անծանօթ աղջկան մը հետ:

Տղան իր դողը զսպել ջանալով՝ դուրս եկաւ աթոռներուն մէջէն, և եկողները հրամցուց:

Ինչ անցաւ իր մէջէն ինքն ալ որոշ չգիտէր, երբ ամենքը բարեկիւր ժաւննակ Վերժինը ձեռքն ալ իրենին շոշափւիւր զգաց: Եւ իր յուզման ու յուզումը ծածկելու ճիգերուն մէջ ի հարկէ չէր կրնար նկատեր, թէ աղջկայ դէմքը ինչեր կը դառնային:

Միւս աղջիկը ազգականուհի մըն էր. ներկայացուցին:

Երկու օրիորդները նստեցան իրարու քով վանդակին առջև. բժիշկն ու Արշակը սեղանի միւս ծայրը. իսկ տիկինը երկու զոյգին մէջտեղը:

—Ուրեմն դուք դեռ Պոլիս էք. կրկնեց բժիշկը, երբ տեղաւորեցան: Այ՛քան երկար ժամանակ է չէք երևար, որ ես կարծեցի՝ արդէն մեկնած լինելու էք:

—Կը մեկնիմ առաջիկայ հինգշաբթի իրիկուն. և իբրև ճամբորդի անշուշտ կը ներէք ինձի, կարծեմ, եթէ այս շաբթու գէթ անգամ մը ձեզի այցելել չի կրցայ. այնչափ մանր-մունր զործեր կան. գլուխս պտոյտ կու գայ:

—Ա՛, ի հարկէ, ի հարկէ, ինչ ըսել կ'ուզէ, հնչեց բժիշկի ահաւոր ձայնը իր հեգնոտ ժպիտին ծալքերուն մէջէն:

Բժիշկը ազուն չերեւիւր իրենց վերջին տեսակցութեանը կը վերադէր. կը կարծէր, որ տղան վշտացած է, և միտքը դրած էր իրենց առաջին հանդիպման կերպ մը այդ տալաւորութիւնը մեղմելու: Այնպէս որ շատ մտերիմ ու զւարթ զարկով մը սկսաւ խօսիլ աջէն-ձախէն:

Արշակ ալ հետզհետէ սկսաւ ինքըզինքը գտնել. քաղաքավարական պարզ հարցերով մէկ-երկու անգամ աղջիկան խօսք ուղղեց՝

աշխատելով իր ձայնին սովորական բարեկամական շեշտը տալու, որը սակայն կեղծ կը հնչէր և տեսակ մը անտեղի քաղցրախօսութեան գոյնը կ'առնէր:

«Երևի, սիրտս առնել կ'ուզէ». մտածեց աղջիկը:

Լրջութիւն մը կար աղջկայ դէմքին և անոր ձեռքի շարժումներուն ու ձայնին մէջ. տեսակ մը զսպւըւած հանդիսաւորութիւն. ու հայեացքին մէջ հպարտ անտարբերութիւն մը, որ ծովուն հետ զհետէ գորշացող ալիքներուն վրայ կը թափէր:

«Վիրաւորած է, սաստիկ վիրաւորած է». կը կրկնէր Արշակ ինքնին ամէն անգամ, երբ աղջիկը իր հարցերուն միշտ պարզ ու կարճ պատասխան մը տալով՝ անմիջապէս ընկերուհիին հետ իր խօսակցութիւնը կը շարունակէր կէս-ձայն:

Եւ ինչ գնով ալ որ ինի՜ աղջկան հաճելի բան մը ըսելը շուտով անհրաժեշտութիւն դարձաւ իր մէջը:

Մինչ բժիշկը կը խօսէր, կը հարցնէր. և Արշակ բոլոր ուժերը ժողւած հանդիսո մնալու ու պատասխանելու կը ջանար. և խօսակցին յարմարելու համար մէջէմէջ ծիծաղի դէմք մը կը շինէր. բաւական ապուշ դէմք մը:

Բարեբախտաբար այդ շարժարանքը կարճ տևեց. քանի մը վայրկեան վերջը տիկինը զով զգաց. ու ելաւ մեկնելու:

Արդէն սկսած էր մթնել:

Վերժին իր ձեռնոցները շտկելով՝ հովանոցը թւին տակ արդէն դէպի պարտէզին դուռը ուղղւեցաւ, մինչդեռ միւսները իրենց ժողվըտութեամբ կը տընտընային:

Արշակ այդ նշմարելուն պէս՝ իսկոյն առաջ նետւեցաւ:

— Օրիորդ, ձեզի ըսելիք երկու խօսք ունիմ. քիչ մը արագ քալեցէք. կմկմաց իր յուզումին մէջէն:

Աղջիկը քովընտի նայւածք մը սահեցուց տղու դէմքէն ու քայլերը արագացուց առանց ոչինչ առարկելու:

— Օրիորդ, ըսաւ տղան վճռաբար, ես պարտք կ'ըզգամ ձեզմէ ներում խնդրելու իմ անշնորհք վարմունքիս փոխարէն. հաւտացած եղէք, որ ուրիշ կերպ վարւիլ չէի կրնար. սրտանց կը ցաւիմ մեր յարաբերութեան այս կերպ յանգելուն. և կրկին ու կրկին ներում կը խնդրեմ կամքիս հակառակ ձեզի վիշտ պատճառած լինելուս....

«Ինծի կը խղճայ, հիմա ալ ինծի կը խղճայ»։ Կայծակեց աղջկայ զլիսուն մէջ. բռունցքներուն մատերը ջղաձգօրէն կծկըւեցան. ակռաները սեղմեց. ու յանկարծ կտրուկ ու հպարտ շեշտով մը տղուն խօսքը ընդհատեց։

— Սակայն ներում խնդրելու ոչինչ չի կայ, պարոն։ Ընդհակառակը, դեռ շատ շնորհակալ եմ ես ձեզմէ, գործի հետ զգացումները խառնելը խելացի բան չէ. կատարելապէս իրաւունք ունիք. մանաւանդ այդտեսակ վայրկեանի զգացումներ։ Բայց այդ մեռած հարցերու մասին խօսիլը այլ ևս ինչ արժէ, ես ձեզի մէկ ուրիշ բան կ'ուզէի ըսեմ. ինչ էր, հա. խնդրեմ, հարցուցէք ձեր քրոջը ինչո՞ւ համար չի խրկեր իր խոստացած բանաւճաքին նմուշը. ըսէք, որ կ'ըստեսեմ. այդ պատճառով զործս կէս է մնացած. խնդրեմ չմոռնա՞ք, հա։

Ու ետ նայելով՝ կանգ առաւ, մինչև երկու քայլով միւսները հասան իրենց. և իսկոյն մօրն ու ընկերուհիին խօսքին մէջ խառնըւելով՝ մտաւ միւս աղջկան թեւը։

Արշակ մեքենաբար կը քաշէր անոնց քովէն խառնակւած շարած մտածումներուն մէջէն։

«Վայրկեանի զգացումներ»... արձագանք տաւ յանկարծ իր գանգին տակ։

Ուրեմն աղջիկը այնքան ալ դժգոհ չէր եղածէն. բայց չէ՞ որ մինչև հիմա Արշակի ուզածն ալ այդ էր միայն. կտրել իր ջարաբերութիւնը առանց աղջկան վիշտ պատճառելու։

Ո՛չ։ Հիմա ան կ'ըզգար, որ իրեն համար մխիթարանք, քաղցրութիւն եղած էր այն մտածումը, որ աղջիկը վշտանար, ցաւեր պիտի. հիմա ան կը գիտակցէր, որ իր վարմունքին մէջ տեսակ մը անախառնութիւն ալ կար. կ'ուզէր, որ աղջիկը նկատէ, հասկընայ իր ըրած հսկայ զոհաբերութիւնը. և երկուքի համար ալ աւելի թանգ լինի այդ զգացումը։ Եւ ահա յանկարծ ինչ արդիւնք էր ստացւած. աղջիկը նոյն իսկ ուրախ էր իրենց ջարաբերութեան բեկումէն. և, այդ միտքը անտանելի էր տղուն համար։

Եւ միւս կողմէն Վերժինի այն գոռոզ, ինքնագիտակից, հասուն խօսւածքը, ուր ներքին առաւելութեան վստահութիւնը կար. անոր դէմքին հպարտ ու իշխանական արտայայտութիւնը, որ կարծես իր

ուժը հասկըցընել կ'ուղէր. իր ձայնին տեսակ մը արհամարոտ ու անտարբեր քոլորիտը, որ կարծես բարձրէն կու գար. այս բոլորը նոր էր Արշակի համար. պատկառանքի պէս բան մը կ'ըզգար, ու յափշտակութիւն մը. լեռան թարմ ու ամուր հովերու հոսանք մըն էր, որ իր դէմքին կը փչէր:

Աղջիկը կը բարձրանար, կը բարձրանար իր աչքին. մինչ ինքը կը պզտիկնար, կ'իջնար. իր բոլոր հպարտութեամբը, իր բոլոր զոհաբերութեամբը, իր բոլոր ազնիւ վարելու բժախնդրութիւններովը. կ'իջնար: Ե՛հ, ի՞նչ զոհ էր աչք, ի՞նչ ազնուութիւն, ընկերը չաքացելու համար, աքացեր էր ընկերուհին:

Եւ այս խառնակ զգացումներու, հատ ու բեկոր մտածումներուն մէջ կէտ մը միայն իրեն պարզ էր, որ ալ վերջնականապէս իր ու աղջկան մէջէն խզւած էր ամէն կապ: Մինչև հիմա ինքն ալ չգիտէր ի՞նչպէս և ուրկէ. դեռ յոյս մը ունէր կարծես, որ բոլորը նորէն ետ կու գայ:

Ե՞տ կու գայ, ի՞նչը:

«Վաչրկեանի զգացումներ». որոնք արդէն իսպառ մարեր էին: Իսկ բժիշկը կը պատմէր իր վերջին Մարսիլիայէն դարձին Մալթա կղզու առջև ապրած սոսկալի փոթորիկին մանրամասնութիւնները:

Արշակ կեցաւ հրաժեշտ առնելու. իր ճամբան կը ծուէր:

—Ձեր մեկնումէն առաջ անտարակոյս մեզի նորէն անդամ մը այցելելու պատիւը պիտի ընէք, նկատեց տիկինը ինքը իր արտասանած քաղաքավար խօսքերուն քաղցրահնչութենէն հրճւելով:

—Դէ, աչք ի՞նչ ըսելու բան է. կցեց բժիշկը:

Վերժին պարզ վարժումով մը աջը տղուն մեկնեց:

Բայց հազիւ քանի մը քայլ հեռացեր էր տղան խումբէն, որ հնչեց Վերժինի մաքուր ձայնը.

—Իսկ բանաւճաքի մասին օրիորդ Մաննիկին ըսելու չէք մոռնար, չէ՞, պարոն Արշակ:

Ե՛հ, ան ի՞նչով էր զբաղւած:

—Ապահով եղէք, օրիորդ. պատասխանեց տղան չոր. ու ծիծաղով մը, որուն մէջէն հեգնութիւնն ու զայրոյթը իրարու գունչ կը կրծէին:

## Ի

Դեռ ընթրիքի վրայ էին, որ ներս մտաւ Տիրան:

Բարեւեց ու սեղանին մօտիկ աթոռի մը վրայ ձիւ պէս հեծաւ. սկսաւ խօսիլ ու ձեռքի փայտին հետ խաղալ:

— Ի՞նչ նորէն քիթդ կախեր ես. նկատեց ընկերոջը:

— Սաստիկ յոգնած եմ:

— Գործերդ կարգադրեցիր:

— Դեռ ոչ բոլորովին:

Մաննիկ հաւող հրամցուց. Տիրան ողկոյզ մը վերցուց ու աղջըկան հետ շաղակշատելու սկսաւ, մինչև որ սեղանէն ելան:

Հազիւ էին ելեր, որ Արշակ քրոջը առաջարկեց դաշնակ նւագել, ինչպէս միշտ կ'ընէր, երբ տրամադրուածիւնը տեղը չլինէր:

Երեքով ելան վերի յարկը. առանց լոյս վառելու՝ աղջիկը անցաւ նւագարանին առջևը. իսկ տղաքը մօտան քովի հիւրասենեակը ու փռեցան մէկ-մէկ բաղկաթոռի մէջ իրարու քով:

Նւագը սկսաւ:

Նախ լուռ էին ու կը լսէին. բայց այդ երկար չի տևեց, Տիրան յանկարծ դարձաւ ընկերոջը.

— Ուրեմն հինգշաբթի իրիկուն մեկնիլդ վերջնականապէս հաստատ է:

— Այո:

— Այսօր ի՞նչ է:

— Երկուշաբթի:

— Ե՛, երանի քեզի. շան բաղդ ունիս: Բայց կեցիր դուն. կը տեսնես. քանի մը ամիսէն ես ալ որ քու ետեւդ չի դամ՝ ըսէ ինծի ինչ որ կ'ուզես: Հնա, իրաւ. գիտես, քեզի նախանձողը միայն ես չեմ. Վերջինի գլուխն ալ պտոյտ ես տւեր. ան ալ հիմա իրար է անցեր համալսարան երթալու համար:

— Գիտեմ. քեզի ո՞վ ըսաւ:

— Անցած իրիկուն անոնց էի. շատոնց էր՝ չէի դացած. պէտք էր անգամ մը երևալ: Բժիշկը յայտնեց ինծի կատակով. բայց աղջկան խօսւածքը այնքան ալ կատակի նմանութիւն չունի: Նւ ընդհանրապէս, չեմ նկատած, այդ աղջիկը վերջին ժամանակները

շատ է փոխւեր. տեսակ մը վեհափառութեան, փեմութեան հովեր կը փչեն վրայէն, պաղ հովեր. տեսակ մը աջնպէս բարձրէն նայել, մտազբաղ լրջութիւն մը. չէ, շիտակը չեմ ակործիր:

—Նա, նա. իբրեւ' թէ:

—Ի՞նչպէս թէ իբրեւ' թէ:

Արշակ աթոռին վրայ յանկարծ շտկեցաւ. և մութին մէջէն ընկերոջը գէմքին նայելով՝ կտրուկ շեշտով մը ըսաւ.

—Դէ, սիրելիս, վերջապէս այս կատակերգութեան պէտք է վերջ տալ, թէ չէ. չէ որ երկուքս ալ իրար շատ լաւ կը հասկընանք:

—Ի՞նչ կատակերգութիւն. հարցուց Տիրան յանկարծ բոլորովին լրջանալով:

—Հիմա դուն ինծի հաւտացընել կ'ուզես, որ այդ աղջիկէն ոչ հիացած ես եղեր, ոչ ալ կը հիանաս. հա՞:

—Հիացած: Նա, որ ժամանակ մը իրմէն քիչ մը յափշտակւած էի՝ այդ շիտակ է. երևի նկատեր ես. բայց ատկէ ի՞նչ կ'ընէ. չէ որ ատեն մը դուն ինքզի ալ յափշտակւած էիր. կը յիշե՞ս ան իրիկունը. ինչե՞ր ըսես չէիր ըսեր. որ Վերժինը մէկ հատիկ է, որ նմանը չի կայ, որ ահագին ուժ ունի. և ալ ի՞նչ գիտնամ: Ե՛, սիրելիս, Վերժինի կրթութեան ու բնաւորութեան աղջիկները այդպէս են արդէն. ամէն հանդիպողի վրայ տպաւորութիւն կ'ընեն. և երևի ատոր համար ալ քիթերնին կը մեծնայ. միայն չեն գիտեր, որ այդ տպաւորութիւնը քանի մը շաբաթէն աւելի տևել չի կրնար:

—Այդ դեռ չես կրնար պնդեր. նկատեց ընկերը սանձըւած ձայնով մը:

—Ախ, ինչո՞ւ չէ. ահա քեզի հետ նոյնը եղաւ. ինծի ալ:

Արշակ շարժում մը ըրաւ. և անսովոր խորունկ ձայնով մը, որ կը դողար, կցեց.

—Տիրան, հերիք իրար խաբեցինք. ես ալ չեմ կրնար շարունակեր. և իբրեւ ընկերդ կը պահանջեմ քեզմէ. այս բոլոր ըսածդ քու անկեղծ մտածմունքդ է:

—Այո, ի հարկէ. բայց այդ հանդիսաւոր խօսւածքդ ինչացո՞ւ է:

—Դէ, ան ատեն գիտցիր, որ կը սխալուիս. ես ինքս սիրած

եմ աչդ աղջիկը, խենթի պէս, և մինչև՝ հիմա ալ կը սիրեմ. ես, ես, ինքս. կը հասկընամ. բացականչեց ամուր ալ ևս ինքըզինքը զսպելու անկարող, կէս մը ոտքի ելած, կէս մը բազկաթուռի բազկին։

—Ա՛խ... դուրս թռաւ Տիրանի կրծքէն։

Եւ մուծին մէջ ընկերոջը դարձած՝ աւելցուց վարանոտ.

—Բայց չէ որ կ'ըսէիր...

—Է՛, թող, եղբայր. թողնենք աչդ Վ'ըսէի-կ'ըսէիր-ները։ Ա՛... կարծես... կարծես ժալո մը գլորւած է կրծքէս։

Եւ յանկարծ երկու ձեռքով ընկերոջը թաթը յափշտակելով.

—Տիրան, Տիրան. պոռաց բերկրանքով։

Եւ Տիրան վայրկենաբար հասկըցաւ ամէն բան. ընկերոջը մաքառումները, ինքըզինքը զսպելը, տանջւիլը. չէ որ ինքն ալ դեռ նոր էր անցեր աչդ դպրոցէն։ Եւ բառ մը, մէկ բառ մը միայն դուրս սայթքեցաւ իր ականներուն մէջէն։

—Խե-կնթ.

Եւ աչդ մէկ րառին մէջ որչափ կարեկցութիւն, համակրասիք աւ դառնութիւն կար միեւնոյն ժամանակ։

Դուրսը նւազը կը շարունակէր։

Պահ մը լուռ էին։ Վերջը Սրշակ պատմեց համառօտ աչդքան ժամանակ իր սրտին վրայ դիզւածը. միայն լռեց կղզիէն դարձէն ի վեր պատահած դէպքերու մասին։

Է՛, ինչ կարիք կար աչդ բոլոր չիմարութիւնները ուրիշին հասկըցընելու. աշխատելու էր միայն շուտով սրբազրելու, շուտով, յաջորդ օրը կանոնի։

«Բայց արդե՞ք... ու կասկածի սարսուռը վազեց տղու ուրախութեան վրայէն։

Յիշած էր քանի մը ժամ առաջ Վերթինի հետ ունեցած խօսակցութիւնը, անոր սառ խօսքերն ու վարմունքը։

«Վայրկեանի զգացումներ»։ Կնչեց նորէն ականջին, և ճմլւած սրտով ինկաւ բազկաթուռի թիկունքին երաժշտութեան ալիքներուն տակ։

Տիրան ալ թաղւեր էր իր բազկաթուռին ու մտածումներուն մէջ։ Նոր լուրի առաջին ազդեցութենէն կազդուրւած՝ հիմա իր վրայ տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէր ընկերոջը խոստովա-

նութիւնը: Եւ ինքը, որ այդ աղջկան մասին մտածելէ հետզհետէ բոլորովին դադրած էր արդէն, չանկարժ նախանձի պէս բան մը զգաց:

Ու այդ ուշ մնացած զգացումը կատակի մը մէջ խեղդել ուղեւորով՝ դարձաւ ընկերոջը.

— Դէ, սիրելիս, բարի յաջողում: Իսկ եթէ պատահէ, որ գործին թունդ պաշտօնական ձևեր տալու միտք ունենաս՝ չի մոռննա որ կնքահայրդ ես եմ:

— Յիմմար, ժպտեցաւ Արշակ, ինքն ալ չգիտէր հաճոյքէն թէ տհաճութենէն:

Նւագը կտրեցաւ:

Մաննիկ ներս վազեց երկու ձեռքը վեր՝ մազերուն կեռիկները ամրացընելով.

— Նա, կշտացաք թէ չէ: Անքաղաքավարի մարդիկ, գոնէ սուտէն-իրաւէն գովասանք մը կ'ըսեն, մատերուս բոլոր ուժը մէջ էի դրեր, որ ձեզի գոհ ընեմ: Ե՛, ի՞նչ այդպէս անծպտուն անկիւնը վար էք ինկեր:

— Իհարկ է, հիանալի էր, ինչպէս և միշտ. կերպ մը կարկտել ուղեց Տիրան:

— Ա՛խ, դժբ. ձեր հաճոյախօսութիւնները արդէն միշտ կամ շատ առաջ կը վազեն, կամ շատ ուշ կը մնան:

Եւ իր ուրախ տրամադրութեան տակ՝ տղոց գէմը կեցած՝ սկսաւ բացատրել, որ նւագած ռոմանսը իր ուսուցչի շարադրութիւնն էր և որ ինքը սաստիկ կը հաւնէր. այլ և չկրցաւ իր միամիտ ուրախութեան մէջ չի պարծենալ, որ այդ կտորը շուտով տըպւելու էր, և իր տնւան էր ձօնւած:

Արշակ ամբողջ գիշերը նոյն մտքերուն վրայ թուխս էր նստած: Կը մտածէր, որ ինքը վերին աստիճանի շտապ ու կոպիտ էր վարւած, և մէկ անգամէն իսպառ փեթըռտած էր աղջկան նուրբ զգացումները. ալ կորած էր ամէն բան, անդմաճ, և որ սարսափելին էր առանց պատճառի, բոլորովին ապարդիւն: Տղան այդ ըմբռնել չէր կրնար: Ո՛հ, ո՛հ, այդ անկարելի է. բաւական է երթայ աղջկան հետ ամէն բան պարզ ու անկեղծ խօսի, որ ամպերը նորէն ցրին ու պարզելի մթնոլորդը անցեալի ջերմ ճառագայթներուն տակ:

Այդ յոյսով ալ քնացաւ: Եւ միայն արթըննալուն նկատեց, որ այդ անկեղծ խոստովանութիւնը աղջկան վրայ այնչափ ալ ակնորժելի տպաւորութիւն պիտի չընէր. չէ որ վերջապէս այդ նոյն սէրն էր, որ ընկերոջը համար ոտքի տակ էր տւած. և հիմա ինքն ալ կը դժւարանար հասկընալու, թէ իրաւ ինչպէս կրցեր էր այդ անմիտ քայլը ընելու համար և ինչպէս այսքան ժամանակ համբերեր էր:

Սակայն ինչ ալ որ լինէր՝ այսօր այդ հանգուցը լուծէր պիտի: Եւ նախաճաշէն քիչ մը վերջը վճռական քալածքով ուղղուեցաւ դէպի Պղտիկեաններուն տունը. ու իր վճռականութիւնը տեսակ մը վստահութիւն ներշնչեց տղուն:

Ներքին զսպւած լարումով մը քաշեց դռան զանգը:

Դուռը բացուեցաւ. և բացողը ինքը Վերժինն էր, որ զարմացած ու հարցական դէմքով մը տղուն կը նայէր, ձեռքը բնազդօրէն կրծքին դրած սրտին վայրենի զարկերը հանդարտեցընելու համար: Պարզ տանու շրջադէստ մը հագած էր, սև գոգնոց մը. մէջքը լայն կաշի գօտի. և մազերը թոյլ հիւսք մը ըրած նետած էր թիկունքին. կարծես զպրոցէն կու գար:

Տղուն շունչը սեղմուեցաւ. ու ակընթարթ մը սեմին վրայ քարացած մնաց:

— Ա՛, հրամեցէք, խնդրեմ. բարի եկաք. ըսաւ վերջապէս աղջիկը լուրջ ու քաղաքավարի բարեւով մը: Դժբախտաբար մայրս այսօր կանուխ Պոլիս իջաւ սպասուհիին հետ. իսկ եղբայրս կարծեմ դեռ նոր է ելեր անկողնէն. և, երեակայեցէք, բժիշկ պիտի լինի:

Ու դառնալով դէպի սանդուղին ելքը.

— Յակոբ, վա՛ր եկուր. շուտ. պարոն Արշակն է եկած. պոռաց: Եւ դիմելով տղուն.

— Հրամեցէք այս սենեակը, խնդրեմ, մինչև եղբայրս գայ:

Մտան սենեակ:

Հագիւ էին երկուքն ալ մէյ-մէկ աթոռի վրայ նստեր, որ աղջիկը նոյն պաշտօնական ու քաղաքավարի տոնովը սկսաւ տնեցոց, օրիորդի, բանաճքի մասին հարց ու փորձ ընել. արօաքուստ անօրինակ հանդարտութեամբ մը, կարծես սորված դեր մը կը կրկնէր:

Այդ սառնութեան դէմ Արշակ զզաց, որ իր վստահութիւնը

սկսաւ կծկըւիլ. բայց պէտք էր խօսիլ, անպատճառ. եղբայրը շուտով վար էր իջնելու:

— Օրիորդ, ինչպէս դիտէք՝ երկու օրէն մեկնելու եմ ես. ըստ անկարծ անհաստատ ձայնով մը: Բայց չեմ կրնար մեր յարաբերութիւնը այսպէս բզրկտած ձգել ու երթալ. պէտք է բացատրել այս բոլոր անիմաստ անտեղութիւններուն պատճառը, և պէտք է պարզել...

Վերժին յանկարծ բոլորովին գունատ ցատկեց ոտքի. ձախ ձեռքով քովի սեղանին յենած, աջի կտրուկ մէկ շարժումովը ընդհատեց տղուն խօսքը:

— Պարոն Արշակ, խնդրեմ: Ո՛չ մէկ բացատրութիւն չեմ ուզեր ես ձեզմէ: Ձեզմէ ես միայն կը խնդրեմ միանգամ ընդմիշտ, որ այլ ևս ո՛չ մէկ խօսք այդ արդէն շատոնց արխիւը նետուած անցեալի մասին:

Արշակ քարացած նայեցաւ աղջկայ դիրքին ու դիմագծերուն. և անփոխարինելի կորուստի մը ճանկըռտուքը զգաց սրտին:

— Ուրեմն... բայց...

— Խնդրեմ, ո՛չ մէկ խօսք, կրկնեց աղջիկը հատու:

Այս անգամ արդէն տղու ինքնասիրութեանը դիպաւ:

Վերջացած էր. իր կողմէն ըրած իւրաքանչիւր նոր քայլ նւաստացում՝ պիտի լինէր միայն:

Շրթունքը խածած պահ մը անշարժ մնաց, կիզող հայեացքը աղջկայ դէմքին:

Այդ հայեացքին տակ աղջկայ կուրծքը բան մը խլրտեցաւ, և յանկարծ լալու սոսկալի պահանջ մը դէպի աչքերը վազեց, լանջը ուռեցաւ. ակռաներն ու բռունցքը սեղմած արցունքները զսպել ջանալով՝ կամաց մը սահեցաւ աթոռին վրայ:

Երկուքն ալ լուռ էին:

Մինչև Արշակ կամքի ուժգին թափով մը իր վրայ խռնած զգացումները մէկ կողմ՝ հրելով՝ ինքըզինքը ժողեց ու խօսք բացաւ հնար եղածին չափ իր ձայնին սովորական շեշտերը տալ ձգնելով:

— Իսկ ձեր համալսարան երթալու խնդրով հետաքրքրուելու թոյլ կու տամք արդեօք, օրիորդ. թէ մեր մէջ եղած ամէ՛ն հարց արդէն արխիւը նետուած է անխտիր:

Տղու աչդ տեսակ մը խոնարհուիլը, խօսքը երից սիրած թեմային դառնալը Վերժինի վրայ նորէն ցընցող տպաւորութիւն մը ըրաւ. և զգաց, որ քիչ մը առաջւան վարմունքին վրայ սկսաւ զղջալ ու փափկիլ. սակայն նոյն յամառ շեշտովը պատասխանեց ամփոփ.

— Հետաքրքրուելու շատ քիչ բան կայ: Ինծի համար վճռած խնդիր է. եղբայրս ալ համոզւած է արդէն, որ ըրածս ոչ տղայութիւն է, ոչ քապրիզ: Արդէն գրեց իր ընկեր գերսանացի բժիշկի մը, որ հիմա Հայդելբերգ ընտանիք ունի եղեր, խնդրելով, որ կամ իր կամ իրեն ծանօթ ընտանիքի մը մէջ ինծի ընդունել տայ: Պատասխանի կ'ըստեսեմ. հիմա ինծի համար միևնոյն է. ուր և կամ ինչ պայմանով. միայն անգամ մը ինքըզինքս դուրս նետեմ. հոն ես գիտեմ իմ ընկիւնքս:

Դուրսը լսեցաւ. սանդուղներէն իջնող բժիշկի ծանր ոտնաձայնը:

— Բարե՛ք ձեզի. զիմեց հիւրին՝ սենեակէն ներս մտնելով:

Ձեռնոցները կ'անցընէր:

— Կը տեսնէք, պարոն բժիշկ, չնայելով բոլոր զբաղմունքիս ու ցրւածութեանս՝ նորէն չգիմացայ ու վայրկեան մը հանդիպեցայ ձեզի, որպէս զի դեռ Պոլիս գտնւելուս վրայ նորէն կասկած չունենաք:

Բժիշկը ժպտեցաւ.

— Բայց տեսէք որ չարի պէս ստիպողական գործ ունիմ, և ընդամէնը քանի մը վայրկեան առաջիկայ գնացքին հասնելու համար. ճշմարիտ շատ կը ցաւիմ:

— Ա՛յ, փոյթ չէ. նոյն իսկ աւելի լաւ. ես կ'ընկերանամ ձեզի. ինքս ալ Ստամբուլ իջնելու եմ:

— Ա՛յ, աչդ հիանալի է: Վերժին, մաքուր թաշկինակ մը:

Քոյրը վազեց կատարեց եղբօրը պահանջը:

Ու երեքով ելան սրահ. բժիշկը բացաւ փողոցին դուռը:

— Դէ, օրիորդ, ցոտեութիւն. ըսաւ Սրշակ ձեռքը աղջկան մեկնելով:

Եւ փոքրիկ վարանումէ մը վերջը թեթեւ մը սեղմեց աղջկան իրեն տւած ձեռքը և աչքերը անոր աչքերուն գամած՝ աւելցուց կամաց.

—Բոլոր սրտովս կը ցանկամ ձեզի չաջողութիւն. արդէն գիտէք, որ ձեր դիտաւորութիւնները որչափ մօտիկ են սրտիս, և որչափ վստահ եմ ձեր ընդունակութիւններուն վրայ, ցտեսութիւնս:

Ձեռքը թողուց ու արագ դուրս:

Հազիւ դուռը դոցեցաւ, որ աղջիկը գալթելով գնաց ետ-ետ, շունչը կտրեցաւ, ձեռքերը բարձրացան վեր, ուսը դէմ առաւ պատին, ինկան ձեռքերը դէմքին, և այրող արցունքը կատաղի հեծկըլտուքով դուրս հեղեղեցաւ:

## ԻԱ

Սոսկալի աղմուկ էր Սիրքէճիի կայարանը. արևելեան ճեպընթացը մեկնելու վրայ էր:

Հրմշտուկ, վազվըղոց, պոռալ, ծիծաղ, արցունք:

Կոյտ-կոյտ խումբեր վազոններու պատուհաններուն առջևը կեցած իրենց ճամբորդին վերջին կատակ մը, վերջին ձեռքի սեղմում մը կու տային:

Հնչեց երրորդն ալ:

—Արշակ, ծուլութիւն չընես, հա. ամէն գլխաւոր կայարանէ բացգիրիդ կ'ըստասեմ. մանրամասն. կրկնեց անգամ մըն ալ Մաննիկ՝ աչքերով եղբօրը դէմքը գրկած:

—Վիէննա Լեոնին անպատճառ կը հանդըպիս. ըսէ, որ շուտով ուղարկէ. յանձնարարեց Տիրան:

—Ձգուշ եղիր, տղաս. երկու պատուհաններու մէջ մի՛ կենար. բաց պատուհանի տակ չի քնանաս. պատուիրեց մայրը աչքերը սրբելով:

—Բառարանը չմոռնաս, բառարանը. պոռաց անդիէն ուղարկ եկող ընկերներէն մէկը:

Գնացքը շարժուեցաւ:

—Մնաք բարով, մնաք բարով. բացականչեց Արշակ պատուհանէն կախած, յուզումէն դողացող ձայնով մը, նւազկոս ժպիտ մը շրթունքին:

Մաննիկ գնացքին հետ քայլ մը առաջ վազեց՝ հեղ մըն ալ եղբօրը ձեռքը բռնելու. պաշտօնեան թեկէն քաշեց ու չի թողուց:

—Երթաս բարով:

— Բարի ճանապարհ:

— Բարի ճանապարհ:

Բոլորի ձայնը հիւսեցաւ իրար:

Եւ Արշակ պատուհանի եզրին յենած կը նայէր խումբին, որ առաստաղէն հոսող լամպի լոյսերուն տակ ողողուն, բարակ սիւնի մը քով իրարու սեղմըլած՝ իրեն ձեռքով ու գլխով կ'ընէին:

Ինքն ալ անուժ գլխարկը կը շարժէր մեքենաբար:

Վերջին տեսածը մօրը թաշկինակն էր, ու քրոջը ձեռքը որ օղէ համբոյր մը կ'ուղարկէր:

Ճեպընթացը կայարանի լոյսերէն դուրս սողաց. ու մէջէն խրեցաւ գիշերւան մութին մէջ:

Տղան ընդարմացած կեցած էր անշարժ՝ ճակատը պատուհանի եզրին:

Իր առջեւն ետ կը սահէր երբեմն կարմիր-կանանչ կրկներես լապտեր մը, ցողի պէս բաներ, կամ անգործ երկսր շարքով իրարու քով կեցած պարապ վագոններուն սուերագծերը, որոնց լուսամուտները մութին մէջէն իր վագոնի լոյսերուն տակ կը ցոլցըլային:

Բայց Արշակ ոչինչ չէր տեսներ. միշտ նոյն պատկերն էր իր ուղեղին դիմացը, սև գլխարկին տակէն մօրը ձերմակ մագերն ու արցունքոտ դէմքը, և ձերմակ գլխարկին տակէն քրոջը սև մագերն ու վառուղ աչքերը:

«Բայ պատուհաններու մէջ չկենաս», հնչեց յանկարծ մօրը ձայնը տկանջին:

Արշակ մեքենաբար ետ դարձաւ դէպի դիմացի պատուհանը:

Քուպէին մէջ մինակ էր:

Նետուեցաւ անկիւնը բազմոցին վրայ, գլուխը յենեց թիկունքի բարձերուն. ու ոտքը ոտքին անշարժ մնաց:

Սաստիկ չոզնած էր. ամբողջ օրւան վազվռտուէքը, հոգեկան անհանդարտութիւնը, և մնաս-բարովի յուզումները:

Եւ հիմա այդ բոլորը խառնակ հոսանքով իրար ընդհատելով կ'անցնէին տղու յիշողութեան մէջէն:

Յանկարծ յիշեց նորէն այն հայեանքը. և այն հայեացքին հետ ցորեկւան վերջին մնաս-բարովի տեսարանը Պզտիկեաններուն:

տունը: Միւս յիշողութիւնները սկսան ետ-ետ քաշւիլ. և տղան կարծես աւելի աղէկ պատկերացընելու համար գոցեց աչքերը:

Եւ ահա պայծառ իր դէմն էր այն վայրկեանը:

Տիկիւնը, որ սենեակի դռան կրթընած, բարի ճանապարհ ու յաջողութիւն կը ցանկար և իր կարեկցութիւնը կը յայտնէր տղու մօրը մտաին, վստահացընելով որ շատ աղէկ կը հասկընար անոր այսօրւան հոգեկան վիճակը. «բաշողը գիտէ»:

Բժիշկը արդէն սրահը ելած՝ ժպիտը շրթունքին՝ խորհուրդ կու տար օգտըւիլ ուսանողի տարիներէն. այդ ազատ ու խենթ կեանքէն, որ ալ երբէք ետ չի դառնար. և կը պնդէր, որ անպատճառ գոնէ ձմեռ մը Պարիզ երթայ. ու յամառութեամբ կը յանձնարարէր հիւրանոց մը, որուն անունը արդէն թռեր էր տղու գլխէն:

Մինչ Վերժին ճիշտ իր դէմը՝ և իրեն պէս սեմին վրայ կեցած՝ առանց բառ մը ըսելու ջղուտ ձեռքով դռան կանդին հետ կը խաղար. կուրծքը ուռած, շրթունքները պինդ կծկած, քանի մը դանգուր թափւած ճակտին, որոնց տակէն այն զոյգ մը խելացի սև աչքերը իրեն կը նայէին. յառած, թափանցող, սիրայորդ... հայ, այդ նայւածքը. ո՛չ, այդպէս չի նայիր արխիւը նետւած վայրկեանի զգացումը:

Ամբողջ կէս օր էր անցեր արդէն՝ այդ վայրկեանէն, և այդ կէս օրը յուզումներու ամբողջ կարտան մըն էր եղած. բայց այդ բոլոր աղմուկի ու տակնուվրայութեան մէջ այդ հայեացքը իրմէն չէր բաժնըւեր. ու կը խայթէր, շարունակ կը խայթէր ազատ ակընթարթ մը գտածին պէս. կսկծեցընող, շոյող, կծու, անուշ խայթոց մը. միայն որոշ չէր գիտակցեր ինչն էր իրեն հաճոյք պատճառողը և ինչը ցաւ. դեռ ժամանակ չէր ունեցած իրեն այդպէս թեթեւութիւն ու խտիտ պատճառող զգացումը վերլուծելու:

«Ո՛չ, ո՛չ. այս այսպէս չի վերջանար. և դեռ ոչինչ վերջացած չէ». բացականչեց յանկարծ բարձր, բացաւ աչքերը ու թռաւ ոտքի: Գնացքի երկու կողմէն առատ լոյսեր ետ-ետ կը փախչէին. և դուրսէն բազմութեան, առուծախի խառն ու խուլ աղմուկ մը սլացող վագոնի պատուհանէն ներս կը նետուէր:

Արշակ դուրս նայեցաւ. Սամաթիայի մէջէն կը վազէին:

Ձայները մարեցան. լոյսերն ալ հետզհետէ. և մուխը գրկեց նորէն շրջապատը:

Քանի մը վայրկեան վերջը Մաքր-գիւղի առջեւն անցնելու էին: Տղան կեցաւ նորէն պատուհանին դէմը. և դնացքի հովէն պատուարեւելու համար քովընդի քիչ մը ետ քաշւած՝ դէպի այն կողմը կը նայէր. մինչ գլխուն մէջ մտածումները իրենց նոր ուստայնը կը հիւսէին:

Հիմա տեղ հասնելուն պէս կը նստի ու կը գրէ. ինչ. ոչ. գրել պէտք է. անձամբ, աչք-աչքի: Նոր տարւայ արձակուրդին կ'երթայ Հայդելբերգ. հոն, առանձին ինքն ու ան. ազատ շրջապատող խճճանքներէ. ա, հոն այլ ևս պէտք չեն ունենար իրենց զգացումները զիմակաւորելու. շինծու անտարբերութիւնները կը թափին վար. և... և... Յաջորդ կիսամեակը հաւանօրէն ինքն ալ կ'անցնի Հայդելբերգ. կամ՝ զուցէ աղջիկը կը բերէ Միւնխէն. ու կ'աշխատին ալ միասին, ձեռք-ձեռքի. ինքը անձամբ թիւը առած կը տանի դասախօսութիւններուն, իր հետը, իր քովը, և ուսանողները սքանչացած աչքերով կը դիտեն իրենց ետեւէն սիրուն հայուհին:

«Ա՛յ, ինչ տարօրինակ են այդ արեւելքի աղջիկները. ճիշտ ամբիկուհիներուն պէս. այսչափ հեռունները ելնել զալ՝ ասուած գիտէ ո՞ր պրոֆեսորը լսելու համար»:

Դուրսը՝ վագոնի նեղ միջանցքին մէջ ուժով մը մէկ-երկու դուռ բացեցաւ ու գոցեցաւ:

Արշակ ցընցըւեցաւ, նայեցաւ շուրջը. ու իսկոյն չքացան աչքերուն առջեւն համալսարանի լայն կամարները պահող հաստ սիւները, անոնց տակ խռնած ուսանողները գոյնզգոյն գլխարկներով, անբաժանելի սև-կափարիչ տետրակները թեւերուն տակ. և «գեղեցիկ հայուհին» ալ իր թեւին տակէն:

Վագոնին մէջն էր. միայնակ, իսկ «հայուհին» հոն, իր զիմացը փայլփրկող ճրագներու խումբին մէջ, դէպի ուր ձեւալնութացը կը սլանար:

Նրեակայութենէն իրականին դառնալը սթափեցընող տպաւորութիւն մը ըրաւ տղուն վրայ. և նախորդ վայրկեանի զւարթ վստահութեան վրայէն երկմտութեան ամպը անցաւ:

Այն նայւածքն ալ արդեօք պատրանք մը չէր, որուն վրայ հիմա իր նոր ցոյսերը կը ծլէին:

Գնացքը կը սլանար ծանօթ շէնքերու քովէն:

Արշակ աչքերը իրենց թաղի կողմը նետեց:

«Ա՛, ան հիմա ինծի՛ գուցէ մոռցած է արդէն. ո՛վ գիտէ, նստած անփոյթ մը իր դաշնամուրին առջև, կամ անգլիերէն գիրք մը ձեռքը սեղանին մէկ ծայրը լամպին տակ:»

Լուսաւորւած կայարանը վազեց իր առջևէն:

«Մոռցած. արդեօք...»:

Է՛, եթէ տեսնել կարողանար քանի մը քայլ իրմէ հեռու...

...Ուր կայարանի շէնքէն քիչ մը վեր, լամպերէն հեռու, ցած ծառի մը տակ քաշւած՝ կեցած էր աղջիկ մը մինչև ոտքերը հասնող կրկնոցը վերէն վար կոճկած. գլխուն ձգած բարակ մետաքս շալը ետև էր դացեր ու հովը ազատ կը խաղար քունքերուն թափւած մազերուն հետ: Սակայն աղջիկը ոչինչ չէր զգար իր զողացող անհամբերութեան մէջէն:

Ահա շողացին վարը մութին մէջ զոյգ մը ահագին աչքեր, որոնք կարծես շիտակ իր վրայ կու գային:

Սիրտը սկսաւ տերևի պէս բաբախել:

Ուժգին հով մը փչեց դէմքին, հազիւ գլխուն վրայ քնացած շալը սահեցաւ ուսին:

Ու իրարու ետևէ արագ իր աչքին առջևէն սլացան լուսաւորւած վազոնները:

Եւ անցան. հիմա կըր կարմիր լոյս մը միայն գնացքին ետևէն իրեն կը նայէր, ուրիշ ոչինչ:

«Արշակ, Արշակ» բացականչեց աղջիկը իր կաշկանդումէն սխալուած. և ուժասպառ կրթնեցաւ ծառի բունին:

Կարմիր լոյսը կը հեռանար, կը պտտկրար. կէտ մը դարձաւ ու մարեցաւ:

«Գնաց, հծծեց. Արագ գլխուն քաշեց նորէն բարակ ծածկոցը, և կայարանի քովէն փողոց անցաւ:

Կայարանի մէջ աղմուկ կար, փողոցը տեղ-տեղ երթեկեկ, խա-  
նութի մը առջև առուծախ կ'ընէին, տան մը բաց դռնէն բարձր  
ծիծաղ կը լսէր:

Վերժին տեսակ մը զարմանք զգաց. ինչպէս այդ կեանքը, այդ  
շրջապատը մարդոց հաճոյք, զբաղում ու ծիծաղ տալ կրնար. իրեն  
համար ալ ոչ մէկ հրապոյր չի կար հոտ, և ոչ մէկ իմաստ:

Շուտով, շուտով հոն, ուր մարդ իր ուժերուն տէր դառնալ  
կրնայ. աշխատելու ու զարգացման. հոն, ուր է և «Ան»:

Եւ գլխու ծածկոցին երկու ծայրերը ծնոտին տակ աւելի ու  
աւելի սեղմելով՝ մութին մէջէն տուն կ'ըլտապէր բոլոր ուժովը:

Շուտով, շուտով:

1896 թ. ամառ, Լապցիկ:

Վ Ե Ր Ջ

## ԳԵՏԻ ԱՓԻՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՅԻՅ — Ալէքսանդր Ժատուրեանի

Ապրում էին մի գետի մօտ հզօր առիւծն ու արծիւ  
Եւ այն գետից նոքա երբեմն ջուր խըմում.

Եւ հէնց այդտեղ պատահելով՝ բացին անեղ, թունդ կըռիւ  
Երկու հերոս — Եւ մահացան այդ կռում:

Այդ երկուսն էլ վեհ արքաներ — նոցա տիրած հողերին  
Ձկար ոչ վերջ, չէին յիշում և՛ թիւը...

Սակայն այստեղ նոցա անշունչ, անշարժ ընկած զլիններին  
Սաւառներով՝ այսպէս խօսեց արծիւը. —

«Ս'իթէ նոր չէր, ո՛վ արքաներ, որ դողում էր ձեր անից  
Արար-աշխարհ. դուք իրար դէմ կատաղած՝  
Կռում էիք մի բուռն սև հողի համար... Եւ ձեզնից  
Ահա այժմ ամեն մէկն է հող դառած:

«Երէկ բազմած զահի վերայ, ճակատներիդ թագ, պըսակ,  
Փայլում էիք, ո՛վ արքաներ արքայից.  
Սակայն վաղը հանդէս կը գայ այստեղ քարէ մի կուտակ  
Արքայական ձեր աճիւնից ու ոսկրից:

«Ասէք, ի՞նչու անկուշտ աչքը ձեզ դուրս հանեց ձեր երկրի  
Սահմաններից — մղեց դէպի կռւի դաշտ.

Հօ ապրում ենք ահա այստեղ առանց վէճի ու կռուի  
Մենք երկուսս—առիւծ, արծիւ—և միշտ հաշտ:

Վա մի գետից ջուր ենք խմում: Նա վերցրել է իւր համար  
Խիտ անտառներ, աւազուտներ, քարայրեր.  
Ես ընտրել եմ—աղատութիւն, երկնի անծայր, լայն կամար,  
Անհուն եթեր, անհաս ամպեր ու լեռներ:

1897 թ. Մոսկւա:

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

## ՔԵՐԹԻԱԾՆԵՐ

ՀԱՆՐԻ ՀԱՅՆԻԻ Թարգմանութիւն Աստու՜ Շահէնի

Ի Ն Թ Է Ր Մ Է Յ Յ Օ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հին անտառն է աս կախարդանքներու: Թմբիի ծաղիկներուն անուշ հոտը կը շնչեն հոն. լուսնին սքանչելի շողիւնը սիրտս հեշտանքով կը լեցնէ:

Կերթացի, և, երբ կը յառաջանայի, օդին մէջ աղմուկ մը ելաւ. սոխակն է որ սէրը և սիրոյ տառապանքները կ'երգէ:

Սէրն ու անոր վիշտերը, անոր արցունքներն ու անոր ժպիտները կ'երգէ ան. անքան տխրութեամբ կը յուզւի, անքան զարթօրէն կ'ողբայ, որ մոռցած երազներս կ'արթննան:

Աւելի հեռուն գնացի, և, երբ կը յառաջանայի, առջևս, ցանցառուտի մը մէջ, բարձր տանիքով մեծ դղեակ մը տեսայ:

Փակ էին պատուհանները. և բոլոր շուրջը սուգ ու տխրութիւն դրոշմած էր. կարծես թէ լուռ մահը կը բնակէր այս տխուր պատերուն մէջ:

Դուռին առջևը առիւծի մը մարմնով ու ճիւղներով և կնոջ մը գլուխով ու մէջքով՝ ահարկու և միանգամայն յանկուցիչ տեսքով սփինքս մը կար:

Գեղեցիկ կ'ին մը. իր նալաճքը վայրագ ցանկութիւններ կը գրգռէր. իր կոր շրթունքներուն ժպիտը լեցուն էր քաղցր խոս-  
տումներով:

Սոխակը կ'երգէր անքան զմայլելի: Ձկրցայ զիմադրել, և այս  
խորհրդաւոր բերնին համբոյր մը տալուս պէս, ինքզինքս հմայւած  
ղգացի:

Մարմարիոնէ կերպարանքը կենդանացաւ: Քարը կըսկսէր հա-  
ռաչանքներ արձակել: Լափող ծարաւով մը խմեց ան համբոյրիս  
բոլոր բոցը:

Ծծեց ան կեանքիս գրեթէ վերջին շունչը, և վերջապէս հեշ-  
տանքէն շնչասպառ, սեղմեց և բղքտեց խեղճ սիրտս՝ առիւծի իր  
ճիրաններովը:

Հեշտալի մարտիրոսութիւն. տխուր վայելք. անվերջ տառա-  
պանք և հաճոյքներ: Մինչ այս յափշտակիչ բերնին համբոյրը կը գի-  
նովցնէր իս. ճիրաններուն եղունգները անգութ վէրքեր կը բանա-  
ցին վրաս:

Սոխակը երգեց. «Ո՛վ դուն, գեղեցիկ սփինքս, ո՞վ սէր, ինչո՞ւ  
բոլոր երանութիւններուն այսքան մահացու կսկիծներ կը խառնես:

«Ո՛վ գեղեցիկ սփինքս, ո՞վ սէր, յայտնէ ինծի այս դժխեմ  
առեղծւածը.— Ես արդէն մօտ հազար տարիէ ի վեր անոր վրայ  
կը խորհիմն:

## Ա

Շքեղազարդ մայիս ամսին, երբ բոլոր կոկոնները կը բանային  
իրենց կեղևները, սէրը փթթեցաւ սրտիս մէջ:

Շքեղազարդ մայիս ամսին, երբ բոլոր թռչունները կըսկսէին  
երգել, զօրովսզին բաղձանքներս աղւորիս խոստովանեցայ:

## Բ

Արցունքներէս հոյլ մը պայծառ ծաղիկներ կը ծնի, և հառա-  
չանքներս սոխակներու պար մը կը դառնան:

Ու եթէ դուն իս սիրել ուզես, սիրունիկս, բոլոր այս ծաղիկ-

ները քուկդ են, և պատուհանիդ առջև պիտի հնչէ սոխակնե-  
րուն երգը:

Գ

Վարդեր, շուշաններ, արև, ատենով ասոնք ամենքն ալ հեշ-  
տանքով կը սիրէի. հիմա այլ ևս չեմ սիրեր. քեզ միայն կը սիրեմ,  
աղբիւր ամէն սէրերու, և դուն ինծի համար վարդն ալ ես, շու-  
շանն ալ, աղաւնին ու արևն ալ:

Դ

Երբ աչքերդ կը տեսեմ, ցաւս ու վիշտս կը մոռնամ, և երբ  
բերանդ համբուրեմ, ինքզինքս բոլորովին բուժւած կըզգամ:

Եթէ կուրծքիդ կըլծնիմ, երկնային ուրախութիւն մը իմ վերևս  
կը սաւառնի. սակայն եթէ ինծի «Քեզ կը սիրեմ» ըսես, յանկարծ  
դառնապէս կուլամ:

Ե

Երեսդ դիր երեսիս, որպէս զի մեր արցունքները իրարու  
խառնւին. սիրտդ սրտիս մօտեցուր, որպէս զի միակ բոցով մը  
վառւին:

Ու երբ այս մեծ բոցին մէջ հոսի մեր արցունքներուն հեղեղը,  
և բազուկս ուժով մը քեզ սեղմէ, այն ատեն սիրոյ տենդի մը մէջ  
երջանկութենէս պիտի մեռնիմ:

Զ

Առկէի հոգիս ճերմակ շուշանի մը բաժակին մէջ մխել. ճեր-  
մակ շուշանը այն ատեն սիրելիիս համար երգ մը պիտի հառաչէ:

Երգը պիտի դողայ ու սարսռայ այն համբոյրին պէս որ ատե-  
նով անոր շրթունքները տւին ինծի խորհրդաւոր և անուշ ժա-  
մու մը մէջ:

Է

Վերը, հազարաւոր տարիէ ի վեր, անշարժ կը կենան աստ-  
ղերը և ցաւազին սիրով մը իրարու կը նային:

Շատ ճոխ և շատ դեղեցիկ լեզու մը կը խօսին անոնք. սակայն  
ոչ մէկ լեզւաբան կարող չէ հասկնալ այդ լեզուն:

Ես սորենցայ ան. և բնաւ չպիտի մոռնամ սիրելիս զէմքը  
ինծի քերականութեան տեղ ծառայեց:

## Ը

Երգերու թեկն վրայ՝ քեզ պիտի առնեմ տանիմ մինչև  
Գանգէսի ափերը. հոն զմայլելի տեղ մը գիտեմ ես:

Բուրումնաւէտ պարսէզ մը կը ծաղկի հոն՝ լուսնին հանդարտ  
շողերուն տակ. լուտասի ծաղիկները իրենց պզտիկ քրոջը կը սպասեն:  
Յակինթները կը խնդան ու կը շաղփաղփեն իրարու հետ, և  
աչք կ'ընեն աստղերուն. վարդերը իրարու ականջէ անուշահոտ բա-  
ռեր կը փսփսան:

Երկչոտ և ցատկոտուն վիթերը իրարու կը մօտենան և մոիկ  
կ'ընեն, և, հեռուն, նւիրական դետին հանդիսաւոր ջութերը կը շա-  
ռաչեն:

Հոն պիտի երկնանք արմաւենիներու տակ, որոնց շուքը մեզի  
երկնային երանութեան մը երազները պիտի հոսէ:

## Թ

Լուտասը արեւուն շքեղ լոյսին չի կրնար դիմանալ, և, զխա-  
հակ, երազելով՝ գիշերւան կը սպասէ:

Լուսինը որ անոր սիրունին է, զանիկա իր լոյսովը կ'արթըն-  
ցընէ, և լուտասը տարփանքով իր ծաղկի զէմքը անոր կը բանայ:

Կը նայի, կը կարմրի և կը փայլի, և օդին մէջ անխօս կը կանգ-  
նի. կը հառաչէ, կուլայ և կը սարսռայ սէրէն և սիրոյ ցաւէն:

## Ժ

Սուրբ դետին, Հռենոսի ջութերուն մէջ, իր մեծ զմբէթովը,  
կը խաղայ մեծ, սուրբ Քոլոնիան:

Գմբէթին մէջ ոսկիզօծ կաշիի վրայ նկարւած զէմք մը կայ.  
կեանքիս անապատին վրայ հանդարտ մը ճառաղացթաժ է ան:

Փաղիկներ ու հրեշտակներ կը ծածանին Աստուածածնին վերեւը-  
անոր աչքերը, շրթունքները աչտերը սիրելիս աչքերուն, շրթունք-  
ներուն, աչտերուն կը նմանին:

ԺԱ

Դուռն չես սիրեր իս, դուռն չես սիրեր իս. աս չէ որ կը տըլս-  
րեցնէ իս. կը բաւէ որ կարենամ աչքերուդ նայիլ, Թաղաւորի մը  
պէս գոհ եմ:

Դուռն պիտի առես իս. դուռն կ'առես իս. քու վարդ բերանդ  
աջնպէս ըսաւ ինծի: Վարդ բերանդ համբոյրիս երկնցուր, և պիտի  
մխիթարւիմ:

ԺԲ

Ո՛հ, երգում մի՛ ըներ, ու միայն համբուրէ իս. կիներու եր-  
գումին ես չեմ հաւտար: Խօսքերդ քաղցր են, բայց քեզմէ առած  
համբոյրս աւելի քաղցր է: Քեզ կը վայելեմ, և կը կարծեմ թէ խօսքը  
սին շունչ մըն է:

Ո՛հ, երգւընցիւր, սիրելիս, երգւընցիւր միշտ, մէկ բառովդ  
քեզի կը հաւտամ: Գիրկդ կ'իջնամ և կը կարծեմ թէ շատ երջանիկ  
եմ. կը կարծեմ, սիրելիս, որ յաւիտեան պիտի սիրես իս և յաւի-  
տեանէն ալ աւելի:

ԺԳ

Սիրելիիս աչքերուն վրայ ամենէն աղւոր երգերը գրեցի.  
սիրելիիս պզտիկ բերնին վրայ լուսադոյն եռայանգերը յօրինեցի.  
սիրելիիս աչքերուն վրայ ամենէն շքեղ ոտանաւորի տուները շինեցի:  
Ու եթէ սիրելիս սիրտ մը ունենար, իր սրտին վրայ գեղեցիկ  
հնչեակ մը պիտի գրէի:

ԺԴ

Աշխարհը ապուշ է, աշխարհը կոյր է, և օր օրի աւելի՛ անի-  
մաստ կը դառնայ. քեզի համար կ'ըսէ ան, աղւորիկս, որ լաւ նկա-  
րագիր մը չունիս:

Աշխարհը ապուշ է, աշխարհը կոյր է, և քեզ չպիտի ճանչ-  
նայ միշտ. չի գիտեր ան թէ քու փարումներդ ինչպէս երջանկու-  
թեամբ կը դողացնեն, և որչափ այրող են համբոյրներդ:

## ԺԵ

Սիրելիս, պէտք է որ այսօր ըսես ինծի, մէկն ես դուն այն երևոյթներէն որ, ամառւան հեղձուցիչ օրերուն, բանաստեղծին ուղեղէն կ'ելլեն:

Բայց չէ. այդչափ սիրուն պոետիկ բերան մը, այդքան կախարհող աչքեր, ատանկ աղւոր, ատանկ սիրուն աղջիկ մը բանաստեղծը չի կրնար ստեղծել:

Արքայիկ օձեր <sup>1)</sup> և յարալէզներ, վիշապներ և ճիւղներ, բոլոր առասպելական այլանդակ անասունները կարող է բանաստեղծին երևակայութիւնը ստեղծել:

Բայց դուն և քու չարութիւնդ, շնորհալի դէմքդ և նենգաւոր ու քաղցր նայւածքներդ բանաստեղծը չի կրնար ստեղծել:

## ԺԶ

Փրփրող ալիքներէն դուրս ելլող Աստղիկին նման, սիրելիս իր գեղեցկութեան բոլոր շքեղութեանը մէջ կը փայլի. որովհետեւ այսօր իր հարսնիքին օրն է:

Սիրտս, սիրաս, դուն որ այնչափ համբերող ես, անոր դէմ ո՞ր մի՞ պահեր այս մատնութեանը համար. գիմադրէ ցաւին, դիմադրէ և ներէ, ինչ որ ալ ըրած ըլլայ այն սիրելի յիմարը:

## ԺԷ

Ո՞ր չունիմ քեզի դէմ, և եթէ սիրտս ջախջախի, ցմիշտ կորսնցուցած սիրելիս, ո՞ր չունիմ քեզի դէմ: Հարսանեկան զարդերու մէջ կը փողփողիս, բայց ազամանդներուդ ոչ մէկ ճառագայթը սրտիս մթութեանը մէջ կ'իջնայ:

Երկար ատենէ ի վեր գիտեմ ատ: Շատ չընէր որ քեզ երազիս մէջ տեսայ, ու տեսայ գիշերը որ հոգիդ կը լեցնէ և իժերը որ կը աղակին այդ գիշերւանը մէջ: Տեսայ, սիրելիս, թէ իրաւցընէ դուն որչափ դժբախտ ես:

<sup>1)</sup> Basilic.

## ԺԸ

Այն, զժբախտ ես դուն և ոխ չունիմ քեզի դէմ, սիրելիս, երկուքնիս ալ զժբախտ պիտի լինինք: Մինչև որ մահը խորտակէ մեր սիրտերը, զժբախտ պիտի լինինք մենք:

Լաւ կը տեսնեմ ծաղրը որ կը թրթռայ շրթունքներուդ բոլորտիքը, կը տեսնեմ աչքերուդ ժպիւրն փայլիւնը, կը տեսնեմ գոռոզութիւնդ որ կուրծքդ կ'ուռեցնէ, և սակայն կ'ըսեմ. «Դուն ալ ինծի պէս թշուառ ես»:

Մածուկ տառապանքէ մը շրթունքներդ կը զոզոջնեն, պահաւած արցունք մը աչքերուդ փայլը կը մթնցնէ, գաղտնի վէրք մը գոռոզ կուրծքդ կը կրծէ. սիրելիս, մենք երկուքնիս ալ զժբախտ պիտի ըլլանք:

## ԺԹ

Ուրեմն դուն բոլորովին մոռցած ես որ շատ երկար ատեն սիրադ իմն էր, պզտիկ սիրտդ, քաղցր, այնքան կեղծ և այնքան սիրուն. աշխարհի վրայ սրտէդ աւելի սիրուն և աւելի կեղծ բան մը չի կրնար լինել:

Ուրեմն դուն մոռցած ես սէրն ու վիշտը, որ երկուքն ալ սիրտս կը ճնշեն... Ձգիտեմ թէ վիշտէս աւելի մեծ էր սէրը, բայց գիտեմ թէ երկուքն ալ բաւական մեծ էին:

## Ի

Ու եթէ ծաղիկները, այն բարի պզտիկները, պիտնային թէ սիրտս ինչքան խորունկ վիրաւորւած է, վէրքիս մէջ իրենց բուրմներուն բալասանը պիտի հոսէին:

Ու եթէ սոխալները գիտնային թէ ինչքան տխուր և հիւանդ եմ, ուրախ երգ մը պիտի լսեցնէին՝ ցաւերս մոռցնելու համար:

Ու եթէ վերը, ոսկի աստղերը գիտնային վիշտս, երկինքը պիտի թողէին և պիտի գային ինծի լուսաշող մսիթարութիւն բերելու:

Ո՛չ մէկը ամենուն մէջէն կրնայ ցաւս գիտնալ, ան միայն գիտէ, ան որ սիրտս բզբռեց:

## ԻԱ

Ինչո՞ւ վարդերը այնքան տոգոյն են, ըսէ, սիրելիս, ինչո՞ւ  
 Ինչո՞ւ կանաչ մարգին մէջ մանուշակները այնքան թուումա՞ծ են  
 և ձանձրացա՞ծ:

Ինչո՞ւ արտոյտը օդին մէջ այնքան մեղմաղձիկ ձայնով մը  
 կ'երգէ: Ինչո՞ւ յասմիկի թաւուտներէն մեռելական հոտ մը կ'ելլէ:

Ինչո՞ւ արեւը այնքան թախծագին և այնքան պաղ լոյսով մը  
 կը լուսաւորէ մարգերը: Ինչո՞ւ ամբողջ երկիրը գերեզմանի մը պէս  
 մութ և տխուր է:

Ինչո՞ւ ես ինքս ալ այսքան հիւանդ և այսքան տրտում եմ,  
 սիրելիս, ըսէ: Ո՛հ, ըսէ, սրտիս սիրելին, ինչո՞ւ լքեցիր իս:

## ԻԲ

Ի՞մ վրաս շատ խօսեցան քեզի և շատ ամբաստանութիւններ  
 ըրին. բայց ինչ որ իրաւցընէ կ'ընկճէր հոգիս, չըսին քեզի ան:

Մեծ կերպարանք առին և գլուխնին ծանր ծանր երեքցուցին.  
 սառնանայ կոչեցին իս, և դուռն ամենուն հաւտացիր:

Սակայն ամենէն գէշ բանը չգիտեն. ինչոր ամենէն գէշն էր և  
 ամենէն ապուշը՝ շատ ծածուկ կը պահէի սրտիս մէջ:

## ԻԳ

Թե՛րին կը ծաղկէր, սոխակը կ'երգէր, արեւը շնորհալից կը ժըպ-  
 տէր. դո՛ւն այն ատեն կը համբուրէիր իս և բազուկդ անցած էր  
 շուրջս. այն ատեն յուզւած հուրճքիդ վրայ կը սեղմէիր իս:

Տերևները կը թափէին, ագռսաւը կը կոնչէր, արեւը անշնորհք  
 նայւածքներ կը ձգէր մեր վրայ. այն ատեն ցրտութեամբ իրարու  
 Վնաս բարով կ'ըսէինք. և դուռն ինձի աշխարհի ամենէն քաղա-  
 քավար մեծարանքը կ'ընէիր:

## ԻԴ

Իրար շատ սիրեցինք, և սակայն իրարու երես չըրինք բնաւ:  
 Տղայ եղած ատեննիս, հարս ու փեսայ խաղացած ենք. բայց այն  
 ատեն ոչ ծեծկեցանք և ոչ կռեցանք իրարու հետ: Յետոյ խնդա-  
 ցինք և միասին կատակներ ըրինք. ու առաջւան պէս, քաղցր համ:

բոյրներու տւինք ինքզինքնիս: Վերջը, մեր տղայութեան զբօսանքները յիշելով, դաշտերուն և անտառներուն մէջ պահւորտուք խաղացինք. և այնչափ լաւ պահանգանք որ ալ ևս իրար չպիտի գտնենք:

## ԺԵ

Երկար ատեն դուն ինծի հաւատարիմ մնացիր և հոգ տարիր իմ մասին. դուն մխիթարեցիր իս և օգնեցիր ինծի՝ թշուառութեանս ու սրտնեղութեանս մէջ:

Դուն ուտելիք և խմելիք տւիր ինծի, փոխ դրամ գտար, ճերմակեղէն և անցադիր ճարեցիր ճամբորդութեանս համար:

Սիրելիս, թող Աստուած շատ ատեն տաքէն ու պաղէն պահէք, և թող քեզի չփոխարինէ այն ըարիքովը որ դուն ինծի ըրիր:

## ԻԶ

Եւ մինչդեռ օտար երկիրներ անքան երկար ատեն երազներ տեսնելով և բանդագուշելով՝ կուշանայի, ժամանակը երկար թւեցաւ սիրելիս, և հարսնիքի շրջագգեստ մը շինել տւաւ ան, ու իր փափկիկ բազուկներով փաթթեցան փեսաներու ամենէն յիմարին:

Սիրելիս անքան գեղեցիկ է և անքան զմայլելի, իր շնորհալի պատկերը աչքերուս առջևն է տակաւին. անոր աչքերուն մանիշակները, աչտերուն վարդերը և ճակտին շուշանը կը փայլին և կը ծաղկին ամէն տարի: Կարծել թէ ասանկ սիրունիէ մը կրնամ հեռանալ, յիմարութիւններուն ամենէն մեծ յիմարութիւնն է:

## ԻԷ

Անուշիկ սիրելիս, երբ պառկես մութ գերեզմանիւ մէջ, քովդ պիտի իջնեմ և պիտի սեղմւիմ մօտդ:

Կը համբուրեմ քեզ, կը գրկեմ քեզ, ուժով մը կը սեղմեմ քեզ, դուն համր, դուն պսղ, դուն ճերմկած: Կ'աղաղակիմ, կը տարտում, կը մեռնիմ:

Կէս գիշերը կը հնչէ, մեռելները կ'ելլեն. փողերը՝ զանոնք ուրախութեան և տանջանքի կը կանչեն. իսկ մենք անհանգիստ չպիտի ըլլանք բնաւ, և պառկած ու իրար գրկած պիտի մնանք:

## ԻԸ

Մենաւոր եղեին մը կը կանգնի հիւսիսի չոր լեռան մը վրայ: Կը քնանայ. սառույցն ու ձիւնը սպիտակ վերարկուով մը կը ծածկեն զինքը:

Կ'երազէ ան արմաւենի մը, որ վարը, հեռաւոր Արեւելքին մէջ, մինակ ու լռիկ կը տառապի՝ այրող ժայռի մը զառիվայրին վրայ:

## ԻԹ

Գլուխն ըսաւ. Ախ, ո՛ւր էր թէ գոնէ աթոռակն ըլլայի, ուր կը հանգչին սիրելիիս ոտքերը: Ան վրաս պիտի կոխէր ու ես աըրտունջ մը իսկ չպիտի հանէի:

Սիրտն ըսաւ. Ախ, ո՛ւր էր թէ գոնէ բարձիկն ըլլայի, որուն վրայ կը զարնէ իր ասեղները: Ան պիտի ծակծկէր իս արիւնեւու աւտիճան, ու ես պիտի ուրախանայի վէրքիս համար:

Երգն ըսաւ. Ախ, ո՛ւր էր թէ գոնէ պարապ թուղթի կտորն ըլլայի, որ կը գործածէ ան գանգրաթղթիկներ <sup>1)</sup> շինելու, իր ականջն ի վար պիտի փսփսայի ամէն ինչ որ կ'ապրի և կը շնչէ մէջս:

## Լ

Երբ սիրելիս հեռու էր ինծմէ, այլեւ բնաւ չէի խնդար: Շատ մը խեղճ մարդիկ ջանացին գէշ կատակներ ընել. բայց ես չէի կրնար խնդալ:

Ան կորսնցնելէս ի վեր այլեւ լալու կարողութիւնը չունիմ. սիրտս վիշտէն կը խորտակւի, բայց չեմ կրնար լալ:

## ԼԱ

Իմ մեծ վիշտերովս պզտիկ երգեր կը շինեմ. կը շարժեն անոնք իրենց հնչուն փետուրները և կը թռչին դէպի սիրականիս սիրտը: Ճամբան կը գտնեն սրտին. յետոյ կը դառնան ու կ'ողբան. կ'ողբան ու չեն ըսեր ինչ որ տեսան անոր սրտին մէջ:

<sup>1)</sup> Papillote.

## ԼԲ

Չեմ կրնար մոռնալ, սիրելիս, քանզի բարեկամուհիս, որ ատենով մարմինդ ու հոգիդ իմս էր:

Մարմինդ կ'ուզեմ տակաւին վաչելել, այդ փափուկ և մատաղ մարմինդ. իսկ հոգիդ կրնաս թաղել... Իմ հոգիս բաւական է:

Կ'ուզեմ բաժնիկ հոգիս և կէսը քեզի փչել. յետոյ պիտի փափիմ քեզի և մարմնով ու հոգիով մէկ ամբողջ մը պիտի ըլլանք:

## ԼԳ

Աղւոր հագւած զիւղացիներ կը խաղան— կը խնդան անտառներուն և մարգերուն մէջ. ուրախութեան աղաղակներ կ'արձակեն, ուլերու պէս կը ցատքտեն, գեղեցիկ բնութիւնը կը բարեկեն:

Շլացած աչքերով՝ նոր կանաչին վիպական փթթումը կը դիտեն: Իրենց երկար ականջներով կը լսեն ճնճողներուն գեղգեղանքը:

Մթադոյն վարագոյրով մը կը ծածկեմ սենեակիս պատուհանը. աս՝ օր ցերեկով սիրելի ցնորքներուս այցելութեան տեղը կը բռնէ ինծի համար:

Մեռած սէրս կ'երևնայ ինծի. սուերներու թագաւորութենէն կը դառնայ ան. քովս կը նստի և արցունքներովը սիրտս կը ճմլէ:

## ԼԴ

Մոռցւած ժամանակներու շատ մը պատկերներ կ'ելլեն իրենց գերեզմանէն և ինծի կը յայտնեն թէ ինչպէս երբեմն քովդ կ'ապրէի, սիրելիս:

Յերեկը փողոցները երազելով կը թափառէի. դրացիները զարմացած իս կը դիտէին, անքան տխուր և լուռ էի:

Գիշերը աւելի աղէկ էր. փողոցները ամալի էին. ես ու իմ շուքս միասին լսիկ կը թափառէինք:

Աղմկոտ քայլով կ'անցնէի կամուրջէն. լուսինը կը ծակէր ամպերը և լուրջ երևոյթով մը կը բարեկէր իս:

Անշարժ կը կենայի տանդ առջեւ, և օդը կը դիտէի. կը դիտէի պատուհանդ, ու սիրտս կ'արիւնոտէր:

Գիտեմ որ դուն խիստ շատ անգամ պատուհանէդ նայածք մը ձգեցիր և, լուսնին լուսովը, իս աղէկ կըցար նշմարել՝ հոն, սինի մը պէս կեցած:

## ԼԵ

Երիտասարդ մը կ'ընտրէ. երիտասարդն ալ կը սիրէ ուրիշ աղջիկ մը և անոր հետ կ'ամուսնանայ:

Վիշաէն, աղջիկը ճամբան հանդիպած առաջին ծանծաղամիտին հետ կ'ամուսնանայ. երիտասարդը շատ գէշ կըզգայ ինքզինքը:

Հին պատմութիւն մըն է աս որ միշտ նոր կը մնայ, և որու որ հանդիպի՝ անոր սիրտը կը խորտակէ:

## ԼԶ

Երբ կը լսեմ հնչելը պզտիկ երգին, որ սիրելիս կ'երգէր ատենով, կարծես կուրծքս կը խորտակի՝ կսկիծիս պրկումին տակ:

Մութ բաղձանք մը դէպի անտառներուն բարձրերը կը մղէ իս. հոն անհուն կսկիծս արցունքներով կը լուծւի:

## ԼԵ

Տփղոն և Թափ ալտերով՝ Թագաւորի աղջիկ մը տեսայ՝ երազիս մէջ. կանաչ Թմբիներու տակ նստած ու տարփանքով գրկած էինք իրար:

Ձեմ ուզեր ես հօրդ գահը, չեմ ուզեր ես իր ոսկի գաւազանը, չեմ ուզեր ես մարգարտեայ իր Թագը, քեզ կ'ուզեմ, գեղեցկութեան ծաղիկս:

—Ատ կարելի չէ, պատասխանեց ինծի. գերեզմանի մէջ կը բնակիմ ես, և միայն գիշերները կրնամ դալ քեզի, և կուգամ, որովհետեւ կը սիրեմ քեզս:

## ԼԸ

Ես ու սիրելիս միասին հանգիստ նստած էինք Թեթև նաւակի մը մէջ: Գիշերը հանդարտ էր, և կը նաւարկէինք ջուրի միայադաղ ընդարձակութեանը վրայ:

Ոգիներու խորհրդաւոր կղզին անորոշապէս կը պատկերէր՝

լուսնին պայծառ լոյսովը. հոն զմայլելի ձայներ կ'ելլէին, հոն ամպամած պարեր կը ծփային:

Ձայները հետզհետէ աւելի կը քաղցրանային. պարը կը պտուտաքէր աւելի յափշտակիչ: Սակայն ընդարձակ ծովուն վրայ մենք երկուքնիս անյոյս կը նաւարկէինք:

ԼԹ

Քեզ սիրեցի և քեզ կը սիրեմ տակաւին: Ու աշխարհը պիտի կործանէր, երբ իր աւերակներէն բարձրանալին տակաւին՝ սիրոյս բոցերը:

Խ

Պայծառ առտու մը կը պտըտէի պարտէզին մէջ: Մաղիկները կը փսփային ու կը խօսէին իրարու հետ, բայց ես լռիկ կը քալէի:

Մաղիկները կը փսփային ու կը խօսէին և ինծի կը նայէին կարեկցաբար. «Մի բարկանար մեր քրոջը, զո՛ւն, տխուր և տոգոյն սիրահար»:

ԽԱ

Սէրս իր տխուր շքեղութեանը մէջ կերենայ՝ ամառ գիշեր մը պատմած ցնորական զրոյցի մը պէս:

Կախարդիչ պարտէզի մը մէջ երկու սիրահար մինակ ու լռիկ կը թափառէին: Սոխակները կ'երգէին. լուսինը կը շողար:

Պաշտելի աղւորը արձանի մը պէս հանդարտ կեցաւ անոր առջև: — Եկաւ անապատին հսկան. վախկոտ աղջիկը կը փախչի:

Վերէն վար ճեղքած ասպետը արիւնթաթախ գետին ինկաւ. հսկան կամաց-կամաց իր այրը կը դառնայ: Կատարելապէս սպանւած եմ. իս թաղելու է միայն, և զրոյցը լմնցաւ:

(Շարունակելի)

## ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

### ԱՐԱՄ-ՉԱՐԸԳԻ

Երբ աստուածավախ հաւատացեալի սիրտն է վիրաւոր՝  
Վազում է տաճար, չոքում է մի սուրբ պատկերի առաջ,  
Սրտաբուռն աղօթք մըմնջում լռին տիեզերքի Հօր,  
Սերտ մտերմութեան վկայ բերելով արցունքն ու հառաչ:

Եւ երբ աւարտած աննկնղ հաշտութեան տալիս է համբոյժ,  
Խոնաւ աչերը յուսալի յառած մշտալուռ սրբին,  
Նա հաւատում է, պարզ մանկան նման, թէ արցունքը զուր,  
Գատարկ յառաչը, կամ աղօթքը սին վերքը կը սրբեն:

Ահա և այդպէս, տառապանքի մէջ, անգին նազելիս,  
Երբ նժդեհ հոգիս անդարձ օրերի լուռ շիրմանց վերայ  
Հեռւ է անյոյս, քեզ է կարօտում և խուլ ձայն տալիս...  
Տխուր երգելով արցունք եմ թափում պատկերիդ առաջ:

Ինչպէս միամիտ հաւատացեալին, ինձ էլ է թւում,  
Թէ քո շրթները, որ սուրբ պատկերից ժպտում են ինձ ցուրտ,  
Պիտի տան համբոյժ, սէր պիտի ձայնեն, զոգրոջն երդում,  
Կեանքի կոչելով մեռած օրերը և իմ սէրը սուրբ...

1897 թ. 20 դեկտ. 1, Կալպիդ:

## ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

(գիւղական ցաւերից)

Ա. ԱԳԵԼԵԱՆԻ

### I

Գարնան մի պայծառ օր էր: Բարձրացած արևի ջերմաշունչ ճառագայթները արդէն կենդանութիւն էին ներշնչել N գիւղի լայնատարած ձորին: Ձմեռային գորշ և անկենդան բնութիւնը արդէն սթափւել էր խոր քնից: Մատղաս, նորաբաց բոցները ծփում էին գիւղի հանդ ու հանդաստանում, կանաչ ներկելով բնութեան սփռած ջինջ կտաւը: Եւ կենսաբեր հողմից ու մատղաս տերեւներից առաջացած սօսափիւնը անընդհատ կեանք ու ցնծութիւն էր շնչում...:

Երեկոյեան դէմ էր: Աշակերտներին հետ զբօսատեղից էի վերադառնում: Հասնելով դիւղամիջի հրապարակը, ես սաներիս պտուի թիւցի տուն ցրւելու, խկ ինքս քայլերս ուղղեցի դէպի հսկայամարմին ու դարևոր չինարու տակը, որը իր հաստ ու լայնատարած բազուկները տարածել էր հրապարակի վրա: Այդտեղ ոչոք չկարամենքը վար ու ցանքի էին գնացել: Միայն չինարու տակ՝ նրա բնի շուրջը շարած սալ քարերից մէկի վրա՝ նստած էր Ակոբինց Դաւիթ ապերը, մէջքը ծառին տալով: Նա եօթանասնամեայ մի առողջ և խելացի ծերունի էր: Մէկ էլ հրապարակի հիւսիսային ծայրում գտնուող հսկայաշէն և ամեն տեսակ ապրանքներով լի խանութի լայնատարած մուտքից մի կին և մի տղամարդ էին երևում, որոնք առուտուրի էին եկել:

Մերունին նստած էր տխուր և մտախոհ։ Նրա դէմքը պատած էր թանձր թախիծով, որ առատութեամբ կաթկթում էր նրա վշտասուգ աչերից։ Նրա մի ինչ որ ցաւ տանջում էր նրա միտքն ու հոգին։ Մերունին իր թախծալի հայեացքը իմ քայլերին էր ուղղել։ Ես մօտեցայ նրան։

— Բարի օր, Դաւիթ ապեր։

— Աստծոյ բարին, պատասխանեց նա մեղմանդձոտ ձայնով, և յետոյ իր տխրութիւնը քղարկելու համար թեթեւ ժպիտով հարցրեց.

— Եդ ռւր էիր տարել աշակերտներին։

— Ման ածելու։

— Ի՞նչու, ի՞նչ կայ որ... Քիչ են մեր քէշւանները <sup>1)</sup> չափփօմ։

— Դաւիթ ապեր, աշակերտները կարող են շատ տեղեր տեսած լինել, բայց այդ ամենից ոչ մի օգուտ չտարած լինի իրանց մօքի, իրանց խելքի համար։ Ուրիշ բան է, եթէ նրանք գնում են ուսուցչի հետ. բնութեան մէջ շատ հետաքրքիր, օգտակար ու խրատական երևոյթներ կան, որոնք աշակերտի ուշադրութեան տակից դուրս կը սողային, եթէ չլինէր ուսուցիչը. ուսուցիչը աշակերտի ուշադրութիւնը դարձնում է այդ օգտակար և խրատական երևոյթներին վրա, բացատրում է շատ բան, իսկ այդ ամենը լաւ ազդեցութիւն է գործում երեխայի վրա։

— Հասկանում եմ, վարժապետ, շատ լաւ բան է. էլ ի՞նչ օգուտ կայ դրանում։

— Օգուտներից մէկն էլ նա է, որ աշակերտի մէջ դիտողականութիւնը զարգանում է, այսինքն նա բնութեան և մարդկային կեանքի պարզամիտ և անտարբեր հանդիսատեսը չի մնում, որը համարեա թէ ոչինչ չի տեսնում. այլ նա այդպիսով ընդունակութիւն է ձեռք բերում հետաքրքրութեամբ հետեւելու բնութեան երևոյթներին, կեանքի մէջ գոյութիւն ունեցող իրերի դրութեանց հետ, չափել, կտրել, հասկանալ այդ ամենը, բնութեան բարիքները խելացիութեամբ իր օգտին ծառայեցնել և վերջ ի վերջոյ կեանքի իրերի դրութիւնը այնպէս դասաւորել, որ թէ ինքը և թէ ամենքը գոհ լինեն այդ դրութիւնից, որ կեանքը ներդաշնակ առաջ ընթանայ։

<sup>1)</sup> Արտեր։

—Վարժապետ, շատ ես խրթին խօսում, դժւարութիւնով եմ հասկանում, ամա <sup>1)</sup> էլի մի բան հասկացայ։ Ապրես, որ մեր երեսօց էդպէս մանածելու ես տանում, մեր գիւղացիք շատ շնորհակալ պիտի լինեն քեզանից։ Ի հարկէ, մենք պիտի կարողանանք մեր ձեռքի տակ գտնուող հողից ու ջրից շատ օգուտ ստանալ և պարտաւորեցնենք էնպէս տանել, որ մէջտեղ օգուտը շատ լինի, քան զորժ դրած աշխատանքը։ Ամա մենք ինչպէս ենք անում։ շերամի որդն ենք պահում, սաղ երկու ամիս եզան նման չարչարում ենք, խեղճ տղամարդիկ տերեւ կրելուց, կանաչք էլ որդներին տերեւ տալուց հալից ընկնում են, կաշիները գալիս գլխներովը դուրս է գալիս, ամա ինչ օգուտ են ստանում. ոչինչ. սաղ որդները վերջ ի վերջոյ կամ կոտորւում են և կամ բերած բերքը չնչին է լինում. ինչու, որովհետեւ խաւար ենք։ Էդպէս էլ ամեն բան... Մէկ էլ, վարժապետ, ասում ես մարդիկ իրանց գործերը, իրանց ապրուստը էնպէս պիտի կառավարեն, որ ամեն ինչ կարգին գնաց, կեանքները լաւ անցնի։ Էդ մէկը, վարժապետ, էդ մէկը շատ խելօք ես ասում։ Էդ խրատը մեր երեսանների ականջներին միշտ փչիր, քեզ մատաղ, որ սովորեն, որ իրանց ծնողաց նման իրանք իրանց ոտն ու ձեռքը չկապեն կրակի մէջ ընկնեն... Վէ դու տեսնում ես թէ մեր տանուտէրն ու սուղեաները <sup>2)</sup> ինչպէս են կառավարում էս գիւղը. բան խօսմ չեն շինում, այլ մենակ իրանց անկուշտ փորի համար ամեն բան քանդում են... Մէկ էլ սաղ գիւղացիք չեն հասկանում, թէ ինչպէս պիտի լինի իրանց ապրուստը, ինչպէս պիտի կառավարեն, կամ թէ էսպէս գնալով-դնալով ուր կերթայ։ Դու երեսաններին խրատ տուր, թէ մեր գիւղացիք շատ են փարթամացել, շատ աւելորդ ծախսեր են անում, շատ են շուռլացել, ամա մէջ տեղ աշխատանք, եկամուտ չկայ։ Մեզանում ամեն մարդ իր ոտները իր եօղանի համեմատ չի մեկնում, իսկ վերջը էն է դուրս գալիս, որ սաղ գիւղումս տուէն չկայ, որ պարտք չունենայ։ Ինչո՞ւ ասիր. ինչքան որ աշխատում ես, էնքանի էլ կեր։

—Այո, Դաւիթ ասեր, ընդհատեցի ես, դա մի շատ տխուր երևույթ է, որի դեմ կուեմք շատ դժւար է։

<sup>1)</sup> Բալցո, <sup>2)</sup> Դատաւորներ։

—Ախր էսօր իմ սիրտը շատ նեղ է, վարժապետ, շարունակեց ծերունին այնպէս, որ կարծես իմ ասածը չլսեց,—ինքս.-ինքս, մեղայ Աստծոյ, շատ եմ անիծել մեր գիւղի մարդկանց որ էսքան փարթամացել են, էսքան խարաբ են դարձել, ճանճի պէս իրանք իրանց մեղրի մէջ են գցել ու հիմա միջից չեն կարողանում դուրս գալ... Եդ դուքանը խօմ' Եւսնիւմ ես, տեսնի՞մ ես ինչ տեսակ-տեսակ ապրանքներով է լիքը... Տեսնում ես նրանց, մարդ ու կնիկ եկել են առուտուրի. երկու սնաթից շատ կը լինի, որ էդտեղ են. իսկի դուրս գալու միտք ունե՞ն, ասես իսկի մի մտածում են, թէ ախր էսքան որ առնում ենք, փողը որտեղից ենք տալի՞ւ... Վարժապետ, էսօր էստեղ մենակ նստելուց ու երկար միտք անելուց շատ դարդեր են հաւաքւել զլուխս. քրոջս որդի Վարդանին խօմ' ճանաչում ես. երեկ երեկոյեան եկել է մօտս, թէ ախր դուքանչի Խաչատուրը պարտքի համար էլ չի սպասում. ասում է պարտքիդ տեղ արտերիցդ մինը տուր: Եդ պարտքի մեծ բաժինը խանութի հաշիւ է: Եկել էր մօտս խորհուրդ հարցնում, թէ ախր պա լո՞նչ անի. տղան օտարութիւնում է, հլա <sup>1)</sup> մի էնպիսի աշխատանքի չի, որ կարողանայ փող ղրկել. հողերից եկածն էլ էնքան է, որ տարւայ կերածին հերիք չի անում: Խր խելքի դարդին հիմա մինչև վիզը պարտքի մէջ է խրւել և չի իմանում ինչպէս միջիցը դուրս գալ: Ասում է ջորին ծախսեմ, պարտքիս մի բաժինը կը տամ, իսկ մնացածը էլի կը մնայ: Որ էդպէս է՝ ջորին կը պահեմ. համ ինձ է հարկաւոր, համ էլ քրէհ կը բերի, իսկ արտերիցս մէկը կը տամ թող տանի. լո՞նչ արած. ուրիշ ճար չկայ... Դու տես, վարժապետ, նրա հօր պահած, բեջարած <sup>2)</sup> արտը պիտի դուքանչի Խաչատուրի ձեռքը ընկնի... Ասեմ, այ տղան, էս անգամ արտերիցդ մինը տուցիր, պարտքից պրծար, ամա եթէ էլի շարունակես փարթամ ու աւելորդ ծախսեր անել, էդուց կրկին պարտքի տակ կընկնես և էլի մի արտ էլ պիտի տաս... Եդպիսով սաղ արտերդ ձեռքիցդ դուրս կը գան, իսկ դու կը մնաս չօլումը... Խնչու ախր: Ասեմ, եկել ես մօտս խորհուրդ հարցնեմ. լո՞նչ խորհուրդ տամ քեզ սրանից յետոյ: Բարկացայ վրան, նախատեցի և ասացի. դու գիտես, սրանից յետոյ

<sup>1)</sup> Դեռ. <sup>2)</sup> Մշակած:

ինչ ուզում ես արա... Ախր, վարժապետ, իրանց ստացած եկամտի համեմատ չեն ապրում։ ինչու շատ ծախք անեմ, երբ չունեմ։ Հայ չեմ խմիլ. դա աւելորդ բան չի։ մենք մեր ժամանակին որ չայ չենք խմել՝ պակաս ենք առողջ մնացել։ Ձայը որ մտել է էս գիւղը, ամեն տեսակ ցաւեր ու հոգսեր շատացել են... Ձայ որ չիմեմ, սամաւար էլ չեմ առնիլ, ստաքան, չաջնիկն էլ աւելորդ կը լինի, երկու լամպի տեղ մինը կը բանեցնեմ, հասարակ կը հագնեմ, շաբեղէնից, աբրեշումեղէնից հեռու կը կենամ, մի խօսքով դաւքանից հեռու կը փախչեմ։ Էն ժամանակ ստացածովս կարող եմ եօլա գնալ <sup>3)</sup>։ Դէ որ հողէ հասարակ ամանը դէն ձգեմ դնամ չինի տարեկներ առնեմ, փայտէ գդալը հերիք չհամարեմ, գնամ չանգալ, դանակ ու արծաթաջրած գդալներ առնեմ, էն էլ ոչ թէ նրա համար, որ ինքս բանեցնեմ, այլ որ խալիսին ցոյց տամ, հարեանիցս յետ չմնամ կամ թէ նրանից էլ անցնեմ դոնադ եկած ժամանակ առաջը դուրս բերեմ, իհարկէ արտս էլ ձեռքիցս դուրս կը գաջ, տունս էլ և վերջը սոված կը սասկեմ...

—Դաւիթ ապեր, ինչ արած, դժար է. ժամանակի դէմ կանգնելը հեշտ բան չէ, գիւղացիք ինչ անեն, հող չկայ։

—Գիւղացիք ինչ անեն... Պա հիվ ինչ անի, գոչեց Դաւիթ ապերը զայրոյթով. եկամուտդ քիչ է, փարթամ մի ապրիլ, ունեցածովդ եօլա գնա... Պա հիվ է մեղաւոր. ինչու մեր ժամանակ ապրուստի էսքան դժարութիւն չկար. ախր հիմա ինչ ասես առնում են. մեր ժամանակ չայ շաքարը չկար, չթեղէն չէինք հագնիլ, կտաւըն ու շալը կը գործէին մեր կնանիքը իրանց մանած թելից, չէքմայի <sup>4)</sup>, սապոկների <sup>5)</sup> տեղ տրեխ կը հագնէինք և մենակ կիրակի օրերը քոշեր, Ամա հիմա. հիմա աղջիկ չես տեսնիլ, որ օտին սապոկ չունենայ, գլխին աբրեշումի աղլուխ. մեր ջահիլները մենակ արտ գնալուց են տրեխ հագնում, իսկ աղջիկըքը խոմ չէքմայով են գնում։ Պա էս ամենը հաշիւ չի, պա սա ծանրութիւն չի։ Թելը որ թել է, էն էլ առնում են. մաշինի թել պիտի լինի, ասում են. ինչու. մեր կնանիքը որ իրանց մանած թելն էին բանեցնում, կար անել չէր լինում։ Ձէ, մալինի թել են ուզում... Էզուց էլ մա-

1) Կառավարել, 2) Հասարակ ոտնաման. 3) Կոշիկներ.

չին բերել կը տան... Աւսումնարանում աղջկերանց ձեռագործ էք սովորեցնում. մեր վարժուհուն ասա, որ զիզի պիզի <sup>1)</sup> բաներ սո վորեցնելը դէն դնի... Մի աղջիկ թողն ունեմ, որ տարեկան, հաւատա, տասը մանէթի տեսակ տեսակ թելեր կը բանեցնի, ինչ է անում. բարձի երես, ստոլի երես, հաշիեա, չեմ գիտում էլ ինչ... Դրանք սաղ էլ շաշլուածիւն է. Հագուստի կողմից ինչքան են փարթամացել. առաջ ոչխորի հասարակ մորթու փափախ կը դնէինք գլխներին, ամա հիմա կամ կարողուզ են ուզում կամ բուխարի մորթուց կարած փափախ. առաջ չուխաներս հասարակ ամա պինդ շալից կարել կը տայինք, որ գիւղացուն շատ սաղական էր և ձեռնոտու, մեր կնանիք իրանք կը գործէին. ամա հիմա կարել են տալիս կամ թանկ շալից և կամ մահուդից: Ո՞ր մէկը ասեմ. իհարկէ պարտքի տակ կընկնեն և միշտ կը տնքան... Մեղքը իրանց վիզը, իրանք կը քանդեն, հարուստին խօմ մի փնաս չեն հասցնիլ. ընդհակառակը, հարուստի սնդուկը կը լցնեն և նրա հողերը կը շատացնեն: Տեսնում ես էդ դուքանը. եթէ ճար՝ լինէր, կրակ կը դգէի կամ քանդել կը տայի...

— Համաձայն եմ, Դաւիթ ապեր, որ խանութպանն էլ նպաստում է գիւղի փարթամութեանը:

— Իսկ էն Վահանենց Փիլիպոսը. մէկ ուստան է որ... Ի՛նչեր ասես բերել չի տալիս քաղաքից և կապ տալիս մեր և հարեան գիւղացոց վզին. էլ մատանիներ, էլ... բրասլէտ են ասում ինչ զահրումար է, ականջի օղեր, տեսակ-տեսակ սնածոներ... Եւ առնում են, առնում են առանց միտք անելու թէ կարողանա՞ն և փողը տան.— Ձեն հասկանում, թէ ախր աւելի լաւ է մի փոր հաց ունենամ աղքատ հագնւած, քան թէ զարդարւած, ամա սովածութիւնից ոտներս փռած:

Այդ բոպէին եկեղեցու զանգակները հնչեցին: Դաւիթ ապերը երեսին խաչհանեց, քիչ լուութիւնից յետոյ գլուխը թօթափեց և սրտից մի խոր յառաչ արձակելով, վերկացաւ ժամ գնալու:

— Ձես գալիս ժամ, դարձաւ նա դէպի ինձ. հիմիկան ջահիլները ախր իսկի ժամն էլ չեն ընդունում. սապոկ որ հագնում են,

<sup>1)</sup> Այլ ձևացող:

կարտուղը դնում, առաւօտ իրիկուն չաչ խմում, աւոււմ են էլ եկեղեցին լինչ ենք անում...

—Գնանք, Դաւիթ ապեր, ասացի ես նոյնպէս բարձրանալով տեղիցս, ինչպէս երևում է շատ ես բարկացել դիւղացոց վրա. փնաս չունի. Աստուած ողորմած է, դժար հանգամանքներն են մարդուն հմուտ դարձնում ապրուստի միջոցներ որոնելու մէջ... Բայց ախր դու չասացիր թէ լինչ դառաւ քրոջդ որդու հողը:

—Ի՛նչ պիտի դառնայ, պատասխանեց ծերունին զայրոյթով, դուքանչու հողերի կողքին մի արտ էլ աւելացաւ. լինչ պիտի դառնայ. բոլորի վերջն էլ էդ է...

Այնուհետ մենք դէպի եկեղեցի գնացինք: Ճանապարհը երկուսս էլ լուռ անցանք: Ծերունու գանգատը բորբոքել էր իմ ուղեղն ու զգացմունքները, և ես մտածմունքների աշխարհն էի ընկղմւել:

Եկեղեցում երկար չկարողացայ մնալ. շտապով տուն եկայ և, մտնելով սենեակս, նետուեցի մահճակալիս վրա:

## II

Ծերունու ասածների մէջ ճշմարտութիւն կար: Այն դիւղը, ուր ես ուսուցիչ էի, իսկապէս որ գտնւում էր երկու հակադէմ պայմանների մէջ. մի կողմից նոր ժամանակները պանդխտութեան շնորհիւ յառաջ էին բերել շատ նորանոր պահանջներ, որոնց լիութիւն տալու համար գիւղացին չունէր համապատասխան միջոցներ: Սակայն նա իր այդ պահանջներին լիութիւն էր տալիս պարտքովի:

Այդ դրութեան անխուսափելի և օրինաւոր ծնունդ էր խանութ-պան Խաչատուրը, որը յարմարւելով գիւղի պահանջներին և օգուտելով գիւղացոց թուլութիւնից, իր առուտուրը ընդարձակելու համար քաղաքից բերել էր տալիս ամեն տեսակ իրեր: Գիւղացին ամենայն հեշտութեամբ խանութից իր տունն էր կրում ամեն բան, մանաւանդ որ խանութպանը նիսիա էր բաց թողնում, կարծէք իսկի նա չէր մտածում, որ մի օր այդ ամենը կարող են քաջքայել նրա տունն ու տեղը: Եւ ահա դրա շնորհիւ գիւղում տուն չկար, որ պարտք չունենար: Չնայած ընդհանուր գանգատներին դրա առիթով, այնուամենայնիւ ամենքը միմեանց հետեւելով, միմեանցից յետ չմնալու և կոյր հետեւողութեան շնորհիւ փարթամութեան յետեւից

էին ընկել: Գիւղական համայնական կեանքի բոլոր հանգամանքները գումարւած կազմում էին մի խոշոր աններդաշնակութիւն. մի կողմից ուսումնարանը, որ ղիտութեան լոյսի շողքեր էր տարածում գիւղում և պիտի նստատէր գիւղացոց բարոյական զարգացման, միւս կողմից նորանոր պահանջները, այն կողմը տնտեսական անկման շնորհիւ այդ պահանջներին սեպհական միջոցներով լիութիւն տալու անզօրութիւնը, իսկ այդ բոլորի պարզ հետեանքը քայքայումը, քայքայում թէ տնտեսական և թէ բարոյական: Այդ խոշոր աններդաշնակութեան մէջ խիստ նկատելի էր մանաւանդ գիւղացոց բարոյական անկումը, ուսումնարանը, եկեղեցին, ծերունիների գանգատները, փոքր ի շատէ աղնիւ մարդկանց ազդեցութիւնը ոչինչ չէին կարողանում անել դրա դէմ: Գիւղացիք կորցրել էին ամեն բան. պարզութիւն, ազնւութիւն, խիղճ, բարեկամական և ընկերական կապ, մոռացութեան էին տւել նոյն իսկ եկեղեցին: Ամեն ոք առանձնացել էր իր համար միայն ապրելու, և ապրելու առանց խղճի: Ղուաղութիւնը ամենքի գաւանանքն էր: Ստացել էր գոյութեան կռիւ այն սարսափելի ձեւը, որ կատարւում է կենդանական և բուսական աշխարհում. «ղոշաղները» կլանում էին թոյլերին, իրանց գլուխը բարձր պահում և այդպէս առաջ ընթանում: Սակայն այդ ամենը քօսս չէր ներկայանում ինձ համար, այլ որոշ պայմանների անխուսափելի հետեանքներ: Ես ցանկանում էի ինձ համար պարզել գիւղական կեանքի այդ ընթացքը, որ ներս մտաւ իմ հարեան Մարգարը:

— Բարի իրիկուն, վարժապետ:

— Աստծոյ բարին, համեցիր նստիր:

— Շնորհակալ եմ, վաղ եմ, ամա դէ մի խնդիրք ունեմ քեզ մօտ, պիտի կատարես:

— Խնդրեմ, ի՞նչ բան է:

— Բաւքի <sup>1)</sup> լսած լինես, վարժապետ, որ տղաս նշանւում է Սահակենց Գրիգորի աղջկայ վրա: Վահանենց Փիլիպոսից երկու զարդ էր առել բերել. մի ոսկի մատանի և մի արծաթէ ոսկեջրած բրապէտ <sup>2)</sup> նշանի վրա զնեղու համար. դէ դու զիտես մեր զիւղի

<sup>1)</sup> Գուցէ: <sup>2)</sup> Ապարանջան:

սովորութիւնը: Տղիս խիստ նկատեցի. տսեմ, այ տղան, դէ մատանին բերել ես՝ բերել ես, բրասլէտը ի՞նչ հարկաւոր է. ախր երկուսը միասին տասը, տասնեհինգ մանէթ փող է անում. նշանի վրա քիչ բան կայ. մի շալէ դերիացու, արշինը մի մանէթ, մի արբեշումի երեք մանէթանոց աղլուխ, մի ջուխտ սապոկ, հինգ մանէթ ենք տւել, չորս մանէթ էլ մատանին արժէ. դէ հերիք է էլի: Ասեմ էդ բրասլէտը աւելորդ է, տար յետ տուր. հդքանին հրտեղից պիտի վճարենք. ախր բոլորն էլ պարտքովի է, Խաչատուրի դուքանից: Տղաս, շնորհակալ եմ, ինձ լսեց և բրասլէտը տարաւ յետ տալու: Տանում է, իսկ Փիլիպոսը՝ թէ չեմ վերցնիլ. հինգ օր, ասում է, պահել էք, հիմա բերել ես յետ տալիս. չեմ վերցնիլ որ չեմ վերցնիլ: Տղաս բրասլէտը ձեռքին եկաւ տուն: Նա գնացի-խնդրեցի Փիլիպոսին, որ հդպէս բան չանի, խեղճ ենք, տնաքանդութիւն է. չեղաւ: Սկսեց, թէ լաւ կանէք որ վերցնէք, գեղեցիկ զարդ է, նշանին սազ է գալիս, քաղաքներում դրանից են դնում, հդ հիմա ընդունւած է, առանց դրան նշան չեն տանիլ, ամօթ է, պա ի՞նչ կասեն, էսպէս, էնպէս... Յետոյ՝ թէ մի քիչ գինը կը պակասացնեմ, վերցնւր տար, ամա ես չընդունեցի. ասացի էս դու, էս քո ապրանքը: Ձեղաւ, Փիլիպոսը էլի իր էշը քշեց, վերջը թէ չեմ վերցնիլ որ չեմ վերցնիլ: Ճարս կտրած բրասլէտը ձեռքիս յետ դարձաց և հիմա եկել եմ քեզ խնդրեմ, վարժապետ, որ գնաս հդ փուչ Փիլիպոսին տսես էս բանը չանի. զոռի որ գցի, զալմաղալ դուրս կը գայ, կը խոյտառախենք: Քո խօսքը կը լսի, վարժապետ, բեզանից կ'ամաչի, կը քաշւի:

—Շատ բարի, պատասխանեցի ես, կ'աշխատեմ իմ միջնորդութեամբ յետ տալ բրասլէտը. տուր ինձ:

Նա ստացայ և սեղանիս վրա դրի:

—Հսրեան Մարգար, ասացի ես, անշուշտ դու էլ այն մարդկանցից ես, որոնք գանգաւուում են մեր գիւղի փարթամութեան վրա. ասենք թէ այս բրասլէտը յետ տւինք. բայց ախր հարանացուի նշանի վրա այնքան իրեղէններ էք դրել, չէր կարելի այդ ամենը էժան անել. աբեշումի տեղ շալ, շալի տեղ չիթ, սապոկի տեղ քոշեր կամ չէքմաններ: Ախր այդ ամենը, դու ինքդ ասացիր, որ պարտքովի է: Դուք սկսել էք քաղաքացու նիստ ու կացին հե-

տեւել, բայց քաղաքացու միջոցները չունէք, և ահա ընկել էք երկու կրակի մէջ: Հիմա ձեզ մեղադրենք թէ խանութպանին:

—Մենք ենք մեղաւոր, վարժապետ, մե'նք. սրանից տասը տարի առաջ որ դուքանչին Խաչատուրի հայր Յարութիւն ապերն էր, էսպէս սովորութիւն չկար, և նրա դուքանը մի փոքրիկ ծաղուռ <sup>1)</sup> էր. ինչ էր պահում նա. շաքար, թէյ, մեխ, ջորու նալ, սպիշկա <sup>2)</sup>, նաւթ, էսպէս հարկաւոր բաներ միայն: Երբ որ գիւղացիք էդ դուքանով էլ բաւական չեղան, էն է Յարութիւն ապօր տղան մեծ առուտուր սկսեց. նրա դուքանը քանի գնաց՝ մեծացաւ և հիմա տեսնում ես, ինչ ասես քաղաքից բերել լցրել է ներսը: Դէ որ չառնեն չի բերիլ էլի:

—Զի՞ կարելի, որ նշաններիցդ ամեն ինչ վերցնէք և թողնէք միայն ոսկէ մատանին, այն էլ, եթէ կարելի է, փոխէք արծաթէ մատանու:

—Զէ, պարոն վարժապետ, չեմ կարող. ոչ կնիկս զարու <sup>3)</sup> կ'անի, ոչ տղաս. ինձ սաղ-սաղ կ'ուտեն: Տղաս քաղաքումն է մեծացել, տեսիլ, սովորել է. ասում է նշանածիս համար հլա էլ բան եմ տանելու. շատ զարդեր կ'առնէր, չեմ թողել: Ուզում էր ձեռամաններ էլ դնի նշանի վրա, Խաչատուրի դուքանում էդ էլ կայ (ինչ ասես չկայ), ջուխտը չորս աբասով, չթողեցի. ասեմ ան տղա, արտում քաղ հանելն ու ձեռամանը իրար սաղմում են: Զէ, վարժապետ, չի կարելի, դժար է. գիւղացիք նշանադրութիւնում, հարսանիքում էլ շատ փարթամացել են. ինչ կ'ասեն. խալիսի բամբասանքների ձեռքին կը խայտառակեմ: Դու, վարժապետ, բրասլէտը յետ տուր Փիլիպոսին, մնացածը եօալա կը գնայ. մի լաւութիւն արած կը լինես մեզ:

Նա վեր կացաւ տեղից, հոգսալի եղանակով բարի գիշեր մաղթեց ու հեռացաւ: Ո'րքան վրդովեցուցիչ էին հարեան Մարգարի խօսքերը. մարդը խոստովանւում էր, որ փարթամութիւնը, իբր մի ախտ, սնանկացնելու, քայքայելու է նրա տունը, բայց և այնպէս նա շարունակում էր այդ ախտի գերին մնալ...

<sup>1)</sup> Խոռոչ, <sup>2)</sup> Լուցկի, <sup>3)</sup> Համաձայն:

## III

Հետևեալ օրը երեկոյան դէմ փողոցում հանդիպեցի արծաթեղէն և ոսկեղէն իրեր վաճառող Փիլիպոսին և առաջարկեցի նրան յետ վերցնել բրաւէտը: Նա սկզբում օրօրեց վերցնելու, ասաց թէ մի ուրիշ մուշտարի կար, որը Մարգարի որդու շնորհիւ ձեռքից դուրս է եկել և այլն. բայց երբ լսեց իմ մի քանի նախափոխքն ու յանդիմանութիւնները, ծիծաղելով ասաց.

—Լաւ, տուր, կը վերցնեմ. դէ ի՞նչ արած, քո խաթրի էլ է, վարժապետ, պիտի վերցնեմ:

Ի՞նչ խաթրբազութիւն է, ասացի ես:

Նա ոչինչ չպատասխանեց և բրաւէտը առնելով ծոցը դրաւ: Բաժանելով Փիլիպոսից, քայլերս ուղղեցի դէպ գիւղամէջ: Զինարու տակ այս անգամ նստել էին մի քանի գիւղացիներ, որոնք բանւորական քրքրած հագուստ ունէին հազած: Գիւղացիք զրոյցով էին կացել, երբ ես մօտեցայ նրանց:

—Եսպէս բան չի լինիլ. էս դուքանը, էս դուքանչին, էդ Վահանենց Փիլիպոսը մեր տունը քանդում են, աստոյ սուղեա (դատաւոր) Մկրտիչը, ապրուստներս դժարացրել և կամաց-կամաց մեզ մեր հողերից զրկում...:

—Իհարկէ, իհարկէ, ձայնակցեց սուղեային նստածներից մէկը, կարծիք Սիմօնը, դուքանը որ չլինէր, մենք էլ էսքան սովորութիւններ չէինք ունենալ. մէկը ես. մտնում եմ էնտեղ, աչքս ընկնում է մի բանի վրա, ասում եմ էդ բանը առնեմ, տանս համար լաւ կը լինի. մի ուրիշ բան ես տեսնում, աչքդ էլի կպչում է, հաւանում ես, ասում ես ի՞նչ կը լինի, որ էս էլ ունենամ տանս. հեշտութեամբ առնում ես տանում, որովհետեւ դուքանչին նիսիա է տալիս. ասում է երբ կարող ես փողը տուր: Եղպէսութիւնով քանիքանի բաներ եմ առել տանս համար, որոնք եթէ չլինէին էլ, եօլա կը դնայի, ամա դէ առել եմ, որովհետեւ զսեքանում տեսել եմ: Մի լամպ ունենք, երկու մանէթով եմ առել: Անցած օրին մտնեմ խաչատուրի դուքանը, տեսնեմ նոր տեսակի լամպեր է սաացել. պատից կախելու է. ասում է շատ լաւ լոյս է անում. լոյսի յետելից էլ պղնձէ մի փայլուն տարելիկ նման բան կայ, որ լոյսը յետ է խփում

և սաղ օթախը լուսաւորում: Աչքս իսկոյն կալաւ. ասեմ դէ որ էդպէս է վերցնեմ. մեծ լամպը կը վառենք, երբ որ զոնաղ դաշ տուններս, իսկ էս մէկը — երբ մենք-մենք ենք. համ էլ յարմար է, պատից կախ տուր. ով է դիպչելու որ կոտորի: Վերցրի, ամա առանց դրան էլ եօլա կը գնայինք, իզուր ծախք արեցի որ դուքանում չտեսնէի՝ չէի առնիլ:

— Մենակ հի է, խօսաց փալան կապող Մովսէսը. մի տղացունեմ, որ մի օջին է, օջին. մի օր ոտից տրեխները հանել դէն է գցել, թէ ինձ համար չէքմա պիտի առնես. ես տրխով, ասում է, ուսումնարան չեմ գնալ: Խաչատուրի դուքանում, ասում է շատ կայուն կերպ, ասում է, չէքմայով է զալիս ուսումնարան, ես էլ եմ, ասում է, ուղղում: Անգնել է երեսիս, թէ մինչև կոշիկ չառնես, ուսումնարան չեմ գնալ... Խնչ զալմաղալ, ինչ ծեծ... Վերջը ճարհատած գնացել եմ Խաչատուրից մի ջուխտ չէքմա առել տեւ իրան, որ հալել գնացել է ուսումնարան: Դէ որ երեսան տեսած չլինէր դուքանում կամ ընկերի մօտ, էն է տրխով ուրախ կը լինէր: Էսպէս էլ ուրիշ բաներ: Պա ինչ. էդ դուքանչին մե՛ծ, մե՛ծ ֆուսս է տալիս մեզ:

— Մենակ տղերքը, ասաց տիրացու Առաքելը, աղջկերանց մասին իսկի չէք ասում: հիմա երկու երեք չերիային քիչ են ասում... Անցած շաբաթ մի նշանդէք կար, աղջկանս կանչել էին զոնաղ. ինչ լաց, ինչ հարաչ հրոց, թէ ես շալ աղլուխով նշանդէք չեմ գնալ. էս ինչը իր աղջկայ համար Խաչատուրի դուքանից արեւշու մի աղլուխ է առել, գնա դու էլ մէկը ինձ համար բեր, որ կապեմ գնամ նշանդէք: Մայրն էլ մի կողմից է զահլէս տարել, վերջը գնացել եմ եօթն արասի տեւ մէկը առել: Որ Խաչատուրի դուքանում չլինէր, աղջկիս իր ընկեր աղջկայ գլխին չէր տեսնիլ և ինձանից էլ չէր ուզիլ: Իհարկէ, դուքանչին է մեղաւոր սրանում:

— Շատ լաւ, տիրացու Առաքել, խօսաց միրզա Աղաջանը, ասենք քո աղջիկը իր ընկեր աղջկայ գլխին տեսել է, եկել է ուղեւ, պահէն աղջիկը ինչու է առել:

— Էն էլ երեւի տեսել է, լսել է, որ դուքանում կայ և ուղեւ է կամ թէ հօր քէֆին տեւ է, ասել է բերել՝ աղջկայ սիրտը ուրախացնի:

—Էդ իսկ ես ասում, պատասխանեց միրզա Աղաջանը, ամա ես էլ կասեմ, որ մենք ենք մեղաւորը. ընդունում եմ, որ դուքանչին շատ բան է բերում լցնում էս գիւղը, ամա դրանում մենք ենք մեղաւոր. մենք ուզում ենք, նա էլ բերել է տալիս և բերել տալուց ասում է էս ինչն էլ գրեմ ուղարկեն, գուցէ ծախի, և ծախում է: Էդպիսով նրա դուքանը օրէցօր մեծանում, լայնանում է: Անցած օրերին մտնեմ էնտեղ, տեսնեմ Խաչատուրը նոր ապրանք է ստացել, դարսում է: Աբրեշումի թանգ կտորներ էլ կային զանազան գոյնի, ծաղիկներով: Ասեմ, Խաչատուր. սա ինչի հա բերել. թէ ուզել են, պսակի դերիացու է, Ղազենց Աբրահամի տղան է ուզել իր նշանածի համար: Խնչու, որ դերիացուն շալի կտոր լինէր, եօլա չէր գնալ. մենք ենք փարթամացել. մենք որ չառնենք, էն է դուքանչու բերածը չի ծախիլ, կը մնայ, կը փանայ և նա միւս անգամ էլ զալաթ չի անիլ որ բերի: Դուքանչին ինչ մեղաւոր է. նա տռուտուրական մարդ է, իր օգտին է ման դալիս: Նրա պահողը մենք ենք, նա մեզանով է ապրում, և քանի որ մեր շուայլութիւնն ու փարթամութիւնը շարունակի, էնքան էլ մեր դուքանչին հարստանալու է, էնքան էլ մենք պարտքի մէջ ենք խրւելու և հողից զրկւելու:

—Միրզա Աղաջանը իսկ է ասում, խօսաց զրուցողներից մի ուրիշը, մեղաւորը մենք ենք. քաղաքից եկող տղերքը ինչքան բաներ են բերել լցրել մեր գիւղը թէ հագուստեղէնի և թէ տանամիջի կողմից: Անցած տարի Ոսկանենց Սարգսի տղան էն ինչեր էր բերել իրանց տան համար... Կնիկս գնացել էր մեր երեխից խաբար հարցնի, տեսել էր. տան համար երկու ստոլ <sup>1)</sup> երեսը կանաչ մահուգով ծածկած, երկու գեղեցիկ շամպաններ, ասես ոսկուց շինած, մի երկաթէ կառաւաթ <sup>2)</sup>, օթախի մեջ տեղ կախ տալու մի մեծ լամպ, որ մի քանի գրւանքա նաւթ կը տանի, չանդալ, դանակ, հացի արծաթաջրած գդալներ, էէ... էլ ինչ որ ասես... Ամեն մէկը գալիս բերում է, բերում են իրար նայելով կամ թէ իրարից յետ չմնալու համար: Ախր էս տարի տղաս որ ելել էր, մի քանի տնից զոնաղ էին կանչել. մի օր էլ մի քանի ջահիլների հետ

<sup>1)</sup> Սեղան: <sup>2)</sup> Մահճակալ:

Ոսկանենց Սարգսի տանն էին ղոնաղ կանչւած: Կնտեղից որ եկաւ, ասաց թէ աղերանց կիրակի օր մեզ մօտ եմ հրաւիրել. ասացի լաւ, ամեն պատրաստութիւն կը տեսնենք: Կիրակի օրը երբ կինս ու աղջիկս օջախով էին կացել, տեսնեմ տղաս ունքերը կախ է գցել: Ի՞նչ կայ, ասեմ, սիրտդ ի՞նչու է նեղ, որդի: Յետ դառնաց, թէ պա նեղ չի լինիլ, ինչ կը լինի. Ոսկանենց տան, ասում է, նստել էինք սկամիների<sup>1)</sup> վրա և ստուլի<sup>2)</sup> վրա էինք հաց ուտում, իսկ մեր տանը տափին ծալապատիկ պիտի նստենք, պա ամօթ չի. նամուսը վեր չի առնիլ: Ոչ չանգալ դանտի ունենք, ոչ գլալ, ոչ կարգին ամաններ... Կնայէս բաներ էր ղուրս բերել Սարգսի աղան որ... Որդի, ասեմ, ինչ արած, դէ մենք Ոսկանենց Սարգիսը չենք դառնալ. մենք էլ մեր ունեցածովը կը պատուենք ղոնաղներին. թէ չէ, չի լինիլ, պիտի մի կերպ անենք: Տեսնեմ սիրտը էլի նեղ է: Վերջը վրան բարկանամ, թէ որդի, դէ որ ուզում էիր, ղու էլ էնպիսի բաներ բերէիր, մենք էլ նրանց շարքը կընկնէինք. որ չկայ, պիտի մի սպիտակ սուփրա<sup>3)</sup>, չանդալ, դանակ, արծաթաջրած գլալներ, խոր ու երես տարելիներ, սուսլովիկ<sup>4)</sup> պիտի լինի... Ասում է Խաչատուրի խանութից առնեմ, նոր է բերել տւել, օտարութիւնից, ասում է, ղրանց փողը կուղարկեմ, իսկ միւս անգամ ստուլ, սկամի կը բերեմ: Եւ ղնաց առաւ բերաւ: Ֆերաւ, որովհետեւ ընկերի տանը տեսել էր: Իսկ ղուքանչին բերել էր տւել, որովհետեւ գիտէր, օր առնող լինելու է: Մենք ենք մեղաւորը: Թող խելքները կորցրած մարդիկ ինչ ուղում են խօսան. ի՞նչու պիտի գլուխ դնեմ. կարողութիւն չունիմ, ի՞նչ ամօթ է: Ոսկանենց Սարգսի աղան ունի, անում է, ինչ մեղք, որ ես չունեմ:

— Խօսք չկայ, որ մենք ենք մեղաւոր, խօսաց կրկին միրզա Աղաջանը. իմ հարեան Մանուշարը պա ի՞նչպէս է կառավարում. պա ի՞նչու նա ուշք չի դարձնում էդպէս բաների վրա. ութ գլուխ քիւլֆաթ<sup>5)</sup> ունի. ուրիշը նրա ստացած եկամուտով չէր կարող կառավարել, ամա Մանուշարը կարգին եօլա է գնում և պարոք էլ չունի, որովհետեւ փարթամ ծախքերից իրան միշտ հեռու է պահում և ուշք չի դարձնում ուրիշի բամբասանքներին. գլուխը

1) Աթոռների: 2) Սեղանի: 3) Սփռոց: 4) Սպասաման: 5) Ընտանիք:

Վախ իր խելքին է ականջ դնում, իր եկամտին նայում: Մարդուս իրանից է կախաճ ամեն բան. սուտ է, թէ դուքանչին է մեղաւորը:

Խօսակցութեան միջոցին զրուցողներին մօտեցել էր մի երիտասարդ, որ վաղուց աւարտել էր գիւղի դպրոցը և արհեստ սովորել գիւղում: Նա փականագործ էր, որ եկել էր գիւղում իր արհեստը բանեցնելու: Իր արհեստից բացի, այդ երիտասարդը հետաքրքրւում էր հասարակական խնդիրներով ու զբաղանութեամբ: Մեծ հաճութեամբ ուսուցիչներին մօտ էր գալիս, գրքեր, լրագիր էր ստանում կարդալու և, պէտք է ասած, ինքնակրթութեամբ բաւականին մտաւոր պաշար էր ձեռք բերել: Նա ընդունակ և ազնիւ քնաւորութեան տէր էր:

Երբ միրզա Ազաջանը վերջացրեց իր խօսքը, երիտասարդ արհեստավորը, որ ուշադրութեամբ լսում էր հետաքրքիր խօսակցութիւնը, առաջ անցաւ և անվստահ ու համեստ եղանակով արտասանեց.

— Դուքանչին մեղաւոր է էն բանում, որ մեր գիւղացիք երկու կրակի մէջ են ընկել, այսինքն մի կողմից չ'են կարողանում փարթամ չլինել, իսկ միւս կողմից միջոցներ չկան. բաց նա մեղաւոր է միայն մի չալտնի չափով: Նա չլինէր, մի ուրիշը դուրս կը դար, որովհետեւ մեր գիւղը լաւ առուտուրի տեղ է: Խնչու առաջներում էսպիսի դուքանչի չկար. որովհետեւ առնող չկար. հիմա առնող կայ և դուքանչին եկել է առնողների պահանջները կատարելու: Մարդու պարապմունքը, մարդու արհեստն էլ դա է: Նա մեղք է գործում էն ժամանակ, երբ չափից դուրս է օգտւում էս դրութիւնից և մեր թուլութիւնից, ամեն տեսակ աւելորդ բաներ բերել տալով և մեզ նոր-նոր բաների սովորեցնելով: Մեր գիւղացիք, ինչպէս և ամեն գիւղացիք, շլանում են մի նորութիւն տեսնելուց և աշխատում են դրանից անպատճառ ունենալ, մանաւանդ եթէ դա լինում է զարդարանք կամ տնամիջի իր: Տգիտութեան նշան է դա, որովհետեւ նրանք չեն մտածում, թէ դա իրանց համար որքան հարկաւոր է կամ օգտակար, իսկ օգտակար բանը էդքան հեշտութեամբ չեն ընդունում, էնպէս որ բարեխիղճ դուքանչին էդ տգիտութիւնից չպիտի օգտւի իր շահի համար:

— Ամա մերը օգտւում է, գոչեց սուղեա Մկրտիչը զայրացած, սաղ գիւղը քանդում է:

—Այո, էդ կողմից նա դառապարտելի է. շարունակեց արհեստաւորը. ամա ես կասեմ, որ գիւղացիք էլ չեն մեղաւոր, որ էդ պահանջները ունեն. ժամանակի գործն է դա. եթէ ասենք գիւղացիք դրանում մեղաւոր են, էն ժամանակ պիտի պանդխտութիւն չլինէր, իսկ որ պանդխտութիւն կայ, գիւղացիք ի՞նչ մեղաւոր են: Ընդունենք, որ պանդխտութեան գործում մեղաւոր չեն գիւղացիք, այլ մեղաւոր են նրանում, որ օտարութիւն գնալով, բերում են իրանց հետ քաղաքի նիստ ու կացը: Սակայն նրանք ինչով են մեղաւոր, որ քաղաքի կեանքը նրանց վրա ազդում է, և եթէ այդ աղբեցութեան ենթարկւելը տգիտութիւն անւանենք, ինչով են մեղաւոր գիւղացիք, որ տգէտ են. լուսաւորութիւնը ամեն տեղ և ամեն ժամանակ էրպէս է առաջ գնացել, այսինքն մարդ առաջ արտաքինն է ընդունել և յետոյ ներքինը, էականը, և էդ բնական է: Մեր հարեան գիւղերն էլ մեր ձանապարհովն են գնում և մի օր էլ նրանք են էս օրը ընկնելու: Մեր ցաւը էն է, որ մեր հողը, մեր եկամուտը մեր պահանջների համեմատ չեն, այլ յետ-են մնացել, միասին չեն գնում և ժամանակը մեզ բերել երկու կրակի մէջ է դրել: Ի՞նչ պէս դուրս դաս միջից. ասա թէ լամպի տեղ կաւէ ճրագ վառիր, սիւստակ նաւթի տեղ՝ սև, չի անելու... Ես դրութեան մէջ յայտնի չափով մեղաւոր են և էն մարդիկ, որոնք վարժամութիւն են մտցնում գիւղը, խալխին զարմացնելու համար: Պրանք մի քիչ էլ հանգամանքներին պիտի նայեն և մտածեն ոչ միայն իրանց համար այլ և ուրիշների մասին. ունեւորը չունեւորին մնաս չտալու համար իր պահանջները պիտի զսպէ, եղբայրութիւնը էդ է պահանջում, թէ չէ մեծամասնութիւնը կուլ կը գնայ հարուստներին էնպէս, ինչպէս մանր ձկները մեծերին:

—Ինչ ուզում էք ասացէք, զոչեց սուղեա Մկրտիչը. ամա որ ինձ իրաւունք տան, առաջինը՝ ես դուքանը փակել կը տամ և երկրորդ՝ Վահանենց Փիլիպոսին դուրս կը քշեմ էս գիւղից...

Յրեկոյեան ժամի ժամանակը մօտենում էր: Սուղեա Մկրտիչն ու տիրացու Առաքելը գնացին դէպի եկեղեցի, իսկ մնացածը իրանց հոգսերի յետևից ընկան...

## ՕՏԱՐ ԳԱՐՈՒՆ

Դ. ԴԵՄԻՏՐԻՍԻՆ

Դարձեալ գարուն... յուշերս էլի զարթնելով՝  
 Ինձ դուրս տարան հեռուները շրջելու...  
 Ես ձորն իջաց՝ ուր հովն անոյշ մրմունջով  
 Գետի ափն էր երբեմն իջնում հանգչելու.  
 Սիրած վայրեր... մտամոլոր և օտար՝  
 Շուրջս եմ նայում, նրանք ինձ չեն ճանաչում.  
 Օտար գարունն իր նոր շնչով հեշտարար՝  
 Հանգած սիրուս օրօրանն է գուրգուրում...  
 Աշունքին էր, որ ես նրան կորցրի,  
 Սիրուս հետն էլ գարուն օրը չքացաւ,  
 Այնուհետ ձորն ու պերճ տեսքը ծառերի,—  
 Ողջ այս վայրը՝ սրտիս նման սևացաւ...  
 Այժմ ինչո՞ւ է գարունն անհոգ շնչելով  
 Սիրուս աշնան մեռած վայրը նորոգում,  
 Թող ուռենիս տերեւազուրկ մնալով  
 Տխրէր. էլ չի նա իմ սէրը օրօրում:  
 Չէ՞ որ միայն կեանքիս տաճարն աւերեց՝  
 Սիրուս խորանն այնտեղ միայն թագնւեց.  
 Բայց յուշեր կան, այն մոխրատակ կայծերը,  
 Նրանք են որ բերին ինձ այս վայրերը:  
 Թող այս հովիտն այսուհետ չպաճուճի  
 Ուռիների այս տօնական զարդերով.  
 Թող էլ գետը աշխուժելով չթռչի

Այս նոր-օտար զարնան անհոգ երգերով...  
 Էլ ինչո՞ւ է այս նոր զարուհն հեշտարար.  
 Վնաս էլ չկայ, թող զարուհն էլ չլինի.  
 Սիրտս ակ է, միտքս կնճռոտ ու խաւար,  
 Երգս թունոտ, աչտեղ նա էլ չի երգւի...  
 Իզուր... էլ ինձ լսող չկայ. մանկան պէս՝  
 Հովիտ ու ծառ զարդարւել են կանաչով...  
 Միայն ժայռը,—հին ծանօթս խստատես  
 Ինձ է նայում խոժոռ ու մերկ հայեացքով...

## ՆԱ ԷԼ...

Դ. ԴԵՄԻՐՅԱՆԻ

Նա, ով տանջւել է երկար ու զաղտնի՝  
Վիրաւոր հոգին մենութեան յանձնած,  
Իմ դարդն անպիսի սրտին է յայտնի,—  
Իմ կեանքը, իմ հոգին թոյներով լցւած:

Ժպտում եմ, երբ որ սիրտս ճմլում է,  
Երբ անդառնալի կեանքս ջարդւում է.  
Ես լուռ եմ տանջւում, ինձ չեն մօտենում,  
Ես վիշտս եմ պատմում, ինձ չեն հասկանում...

Եւ նա, որին երբ մարդկանցից խոնջած՝  
Մօտեցալ, որ սիրտս ամռքէ տանջւած,—  
Հէնց նա վերքերիս նոր վերքեր բարդեց,  
Հէնց նա իմ սրտի ողջ տեղին շանթեց...

## ԱՆԱՌԻԿ ՍՐՏԵՐԻ ՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Նա շատ էր սիրում. գիշեր ու ցերեկ տանջւեց նա երկար,  
Տանջւեց նա մենակ, հալումաշ հղաւ սիրտն էլ, հոգին էլ...  
Եւ նրա անսիրտ սիրելին սառն էր իբրեւ մի ժէռ քար,  
Եւ հէգ տանջւողին նա երբէք չուզեց բարեկամ լինել:  
Տանջւողը գնաց. սիրելուց հեռու թափառեց երկար,  
Հիմայ էլ սրա հոգին սկսեց ջերմ սիրով զարթնել...  
Հիմայ էլ առա սիրելին սառն էր իբրեւ մի ժէռ քար,  
Եւ հէգ տանջւողին նա երբէք չուզեց բարեկամ լինել:  
Այսպէս փոխաւփոխ, հեռւից երգեցին իրանց սիրերգը,  
Մինչև որ բախտը նրանց որոշեց մի կարճ հանդիպում.  
Այստեղ միասին երգեցին նրանք սիրոյ ողբերգը,  
Վերջին արցունքով կնքեցին սէրն ու վերջին բաժանում...

## ԷԻՈՒԻՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

Ինքնաբեր ծագում, անճնող ծագում, կամ Արխիգոնիա (archigonie) անունը կարևոր է: Այդ հիպոթէզի մասին ընդարձակ գրականութիւն կայ այսօր: Ոչ միայն զուտ բիօլոգիական, այլ նաև լայն փիլիսոփայական արժէք ունի ինքնաբեր ծագման հարցը: Դժբաղդաբար նա պատկանում է այն հիպոթէզներին շարքին, որոնք թէօրիայի անուն վաստակելով համար կարօտում են դեռ մի հատիկ փաստի:

Նախ էութիւնը որոշենք ճշգրիտ: Պէտք է զանազանել ընդհանուր նշանակութիւնը մասնաւորից: Ընդհանրապէս ծագման այն տեսակը, ուր ամենաատորին կենդանի էակները առաջանում են որոշ պայմաններում ոչ-կազմակերպւած հեղուկի մէջ. այդ հեղուկը պարունակում է լուծւած դրութեամբ կենդանի էակի բաղադրեալ նիւթերը, որոնք ներկայացնում են կամ օրգանական, կամ թէ անօրգանական միաւորումներ: Եթէ ինքնաբեր ծագումը տեղի է ունենում օրգանական հեղուկի մէջ (այսինքն՝ եթէ այդ հեղուկը պարունակում է ածխածինի բարդ միաւորումներ)՝ նա կոչւում է պլազմոգոնիա (plasmogonie). իսկ եթէ նոյն ինքնաբեր ծագումը կատարւում է անօրգանական հեղուկի մէջ (այսինքն՝ եթէ հեղուկը պարունակում է

<sup>1</sup>) Տես Մուրճ 1897 թ. № 2—3, 5, 7—8, 9, 11—12:

քիմիական պարզ էլեմենտների՝ ածխածին, ածխաթթուի, ամմիակի, աղերի և այլն միաւորութեան), այդ դէպքում նրա անունն է Աւտոգոնիա (autogonie): Ուրեմն Աւտոգոնիան և Պլազմոգոնիան ինքնաբեր ծագման կամ Արխիգոնիայի մասնաւոր տեսակներ են: Ընթերցողը հասկացաւ անշուշտ, թէ ինչու այդ տեսակի ծագումը ինքնաբեր (spontané) է կոչուում. երբ ծնող չըկայ, օրգանիզմները ծնունդ են առնում ինքնաբերաբար, շնորհիւ սոսկ նիւթերի կազմակերպող ոյժին:

Ինքնաբեր ծագման հիպոթէզը ամենահին ժամանակներից սկսած ընդունուել և աւանդուել է իսկ դարոցների մէջ: Մանաւանդ հիպոթէզի առաջին տեսակը, պլազմոգոնիա ինչպէս ասում են, մոգա էր դարձած մինչև այս դարի 60-ական թւականները: Արիստոտէլ խորապէս հաւատում էր նրան: Պլազմոգոնիան անժխտելի ֆակտ էր նրա համար (տես Մուրճ, ապրիլ 1897 թ.): Հաւատում էր Պլուտարխը, որի կարծիքով Եգիպտոսի հողը ինքնաբերաբար մէներ էր արտադրում: Նոր ժամանակներում ինքնաբեր ծագման միտքը դաւանում էին Հարւէյ (նա, որ բաց արաւ արեան շրջանաւորեան պաշտօնէքը), Զնայնլով իր նշանաւոր աքսիոմին. «ձուլից դուրս չկայ կեանք, ամեն կենդանի էակ բղխում է ձուլից», Լէօէն. հոկկ, Բիւֆֆոն, ապա և Լամարկ, Պուշէ, Հէկկել և այլն և այլն: Բիւֆֆոն յայտարարում էր, որ կեանքը տեղի ունի նոյն իսկ մանրիկ մոլեկուլի մէջ, մենք նրան չենք նշմարում, որովհետև մենք մոլեկուլը չենք կարող նշմարել: Դա շնչաւորւած նիւթի կամ շնչաւորւած համայն տիեզերքի թէօրիան է, որի պաշտպաններն էին Զորդանո Բրունո, Սպինոզա և շատ ուրիշ, նաև ժամանակակից, բնագէտներ ու փիլիսոփաներ: Հէկկելը աւելի հեռու կերթաց, նրա համար վերջին ատոմն էլ շնչաւորւած է:

Անդլիացի մի քահանայ Նիդհամ անունով առաջին փորձը արաւ գիտականօրէն հաստատելու ինքնաբեր ծագումը: Մսի կտորներ, կամ ուրիշ օրգանական փթած մնացորդների կոյտեր փակելով նախօրօք տաքացրած կճուճների մէջ, նա կարճ ժամանակից յետոյ ստանում էր կենդանի էակներ այդ կճուճներում: Բիւֆֆոն և ուրիշներ պաշտպանում էին Նիդհամին: Բայց վերջինիս դէմ շուտով ասպարէզ եկաւ Իտալիացում մի ուրիշ հոգեւորական, Սպալլանցանի անունով: Սա հերքեց Նիդհամի փորձը պնդելով, որ անհրաժեշտ է

կճուճներն մէջ օդը աւելի շատ տաքացնել, մինչև 100—130°: Ինքը Սպոլլանցանին կրկնեց փորձը այդ վերջին եղանակով և կենդանի էակներ չ'առաջացան: Փորձեր արին մի շարք ուրիշ գիտնականներ, յայտնի կենսաբան Շւան, ապա Հէլմհոլց, Կլոդ-Բերնար, Դուշ և այլն, որոնք բոլորն էլ ինքնաբեր ծագման հակառակորդներ էին և արամադիր էին պաշտպանել Սպոլլանցանին, բայց չէին ըմբռնում գործի բուն զաղտնիքը: Նրանք կզրակացնում էին միայն, որ թարմ օդի մէջ կայ մի անյայտ սկզբունք, մի թագնւած ոյժ (լինի դա մի նուրբ գազ, թէ մի քիմիական անձանօթ բաղադրութիւն), որը մսի վրայ ներգործելով, նրանից կենդանիներ է արտադրում: Իսկ սրանց հակառակորդների համոզմունքով՝ այդ անյայտ ոյժը հէնց մսի մէջ է թագնւած: Երկու կողմն էլ յամառութեամբ իրենց ասածի վրայ էին պնդում:

Պէտք էր բացատրել խորութիւնը, պէտք էր ճիշտ փորձի ճանապարհով երևան հանել թագնւած, «անյայտ ոյժը» և նրա ուրիշները: Եւ ահա 60-ական թւականների սկզբում Ֆրանսիայի գիտական Ակադեմիան յանձնարարում է «ճիշտ ու որոշ փորձերով, հանգամանօրէն աշխատել լոյս ափուել ինքնաբեր ծագման խնդրի վրայ»: Այն ժամանակ հանդէս եկաւ Պաստէօրը, որի նշանաւոր փորձերը ծանօթ են աշխարհին: Նա վերցրեց հում բամբակի մի առանձին տեսակը, որը լուծուում է ալկոհոլի և եթերի մի խառնուրդի մէջ, զետեղեց նրա փոշին ապակեայ փոքրիկ խողովակում և օդ ներմուծեց: Օդի մէջ եղող մանրիկ, միկրոսկոպական փոշիները կպան ու մնացին բամբակի թելերի վրայ: Այնուհետեւ ալկոհոլի ու եթերի խառնուրդի մէջ լուծելով, Պաստէօրը թողեց հանգստանալ 24 ժամ. բոլոր օդային փոշիները իջան յատակի վրայ: Ապա շոգիացրեց հեղուկը և զննելով խոշորացոյցի տակ, նշմարեց յատակին նստած փոշիների վրա մանրիկ, ձուռձէ կազմակերպւած մարմիններ (corpuscules organisés), որոնք չիշեցնում էին բջիջների կորիզը:

Ի՞նչ են դրանք ներկայացնում—ինքս էլ չը գիտեմ, ասում է Պաստէօր. բայց այդ փոքրիկ մարմիններին կարելի է համեմատել ամենապարզ էակների սաղմերի հետ: Նրանք գտնւում են, ուրեմն, ահագին առատութեամբ օդային մթնոլորտում: Անձրեւի ժամանակ ջրային կաթիլները ցած են դլորում նրանց, և այդ պատճառով

անձրևից յետոյ օդը լինում է պարզ ու թափանցիկ: Որքան աւելի էք բարձրանում օդի մէջ, նոյնքան աւելի է քչանում այդ սաղմիկների թիւը:

Բեղմնաւորում են նրանք մինչև 120°, որից անցած՝ դադարում է բեղմնակութիւնը:

Ուրեմն այդ սաղմիկներն են, որ օդից ներմուծելով օրգանական նիւթերի մէջ, ծնունդ են տալիս ինչպէս զորիաներին և ուրիշ պարզ կենդանիներին: Դրանք են, ուրեմն, օդի մէջ եղող այն «անյայտ ոյժը»<sup>1)</sup>:

Ահա այսպէս լուծեց զորդեան հանգուցը:

Հինգ տարի շարունակ նւիրեց այդ հարցին Պաստէօրը և հինգամեայ փորձերից դուրս եկաւ յաղթանակով: Ինքնաբեր ծագումը իբրև թէօրիա, ոչնչացաւ, նա չունի փաստական ոչ մի ապացոյց, զուրկ է գիտական հիմքից բառիս խիստ նշանակութեամբ: Այդպիսով մարդկային մտքի խոշոր մոլորութիւններից մէկն էլ ջրեց:

—Բայց գիտնականներից ոմանք հակաճառեցին: Հէքսլի, Ֆոխտ, Հէկկել և այլն, ժամանակակից ականաւոր բնագէտները լարած ուշադրութեամբ հետևում էին Պաստէօրի և նրա հակառակորդ Պուշէի փորձերին: Եւ մինչդեռ Հէքսլին՝ համոզւած Պաստէօրի տւած արդիւնքներից՝ ինքնաբեր ծագման վարդապետութիւնը խորտակած հրատարակեց (թէպէտ ու այնուամենայնիւ Հէքսլին հնարաւոր է համարում, որ շատ հեռու ապագայում քիմիկոսները կը կարողանան փորձով վճռել ինքնաբեր ծագման հարցը: Տես ի՞ր դասախօսութիւնները—«Մեր գիտելիքները օրգանական կեանքի երևոյթների մասին»),—Ֆոխտը յայտարարեց, որ Պաստէօրի փորձերը կատարելապէս չը համոզեցին իրան, որ երկու կողմումն էլ լիակատար ապացոյց դեռ ևս չը կայ: (Տես Ֆոխտի յառաջաբանը Հէքսլիի վերը չիշած դասախօսութիւնների գերմաներէն թարգմանութեան):

Իսկ Հէկկելը բնաւ կարեւորութիւն չը տուց Պաստէօրի փորձերին, որոնք, նրա կարծիքով, ոչնչից ոչինչ չ'ապացուցին:

Ըստ Ֆոխտի, Հէկկելի և շատ ուրիշների, այսօր, հաւանօրէն,

<sup>1)</sup> G. Pasteur, Sur les corpuscules organisés qui existent dans l'atmosphère 1861.

ազատ բնութեան մէջ կոտորուած է ինքնաբեր ծագումը, գոնէ նրա մի տեսակը՝ պլազմոգոնիան: Բայց այդ ենթադրութիւնը մինչև օրս չարդարացաւ և ոչ մի փաստով: Երբէք բնութեան գրկում չըկարողացան դիտել պլազմոգոնիայի որ և է մի յէսլք:

Մնում է լուծել մի այլ հարց, որը և իրօք ունի մեծ արժէք կեանքի սկզբնաւորութեան տեսակէտից. մնում է հարցնել՝ թէ արդեօք պատմական հեռաւոր անցեալում, երբ երկրագնդիս վրայ դեռ ևս չեն եղել օրգանական (կենդանու, բոյսի) կեանքի հետքերը, արդեօք այն ժամանակ չ'է կատարել որ և է պալմաններում ինքնաբեր ծագումը աւտոգոնիայի ձևով: Բայց այդ հարցն էլ լուծելը վեր է դիտնակալի ուժերի: Գիտութեան ներկայ վիճակում անհնարին է նոյն իսկ ազօտ կերպով պատկերացնել, թէ ինչ կերպարանք է ունեցել երկրի մակերևութը միլիոնաւոր տարիներ առաջ, այն ժամանակներում, երբ ծնունդ են առել առաջին կենդանիները:

Փաստ չըկայ: Եթէ ինքնաբեր ծագման գէթ առաջին տեսակը, պլազմոգոնիան, արդարանար, եթէ Պաստէօրը մահացու հարւած չըտար նրան, այն ժամանակ դեռ դուցէ կարող էինք դրական կերպով ասել, որ պատմութեան խորքերում ևս ինքնաբերաբար ծագել է կեանքը աւտոգոնիայի ճանապարհով: Սակայն, քանի որ Փակտային ապացոյց չըկայ, մարդիկ վարանում են:

Բայց ո՛չ ամենքը: Այդ վարանումը գոյութիւն չունի դարուս մի հսկայ զխանականի համար, որպիսին Հէկկէլն է, ամենաառաջնակարգ զօլոգը, որ կենդանի է այսօր, և ամենամոլեռանդ փաստաբանը ինքնաբեր ծագման: Կենդանաբան և փիլիսոփա միաժամանակ, ցերմ մատերիալիստ և իս Թոլստոյիսներ, աւելի արմատական ու հետեւողական քան Դարւինը, կատաղի ու մոլեգին աստաւածաբանական-կրօնական հարցերում, այդ մոլեգնութեան մէջ նա չի գիջանում՝ նոյն իսկ Թոլստի առաջ: Բնագիտութեան մէջ ընդունում է նա հաւասարապէս ինդուկտիւ և դէդուկտիւ մեթոդները, բայց աւելի խոնարհւում է երկրորդի առաջ. դէդուկտիւ ոգին աւելի է զարգացած նրա մէջ, և նաուսուցանում է իր սիրած մեթոդը, կրկնելով Զոհն Սաիւյարտ Միլլի խօսքերը. «Ինդուկցիան նոր և գալոց ժամանակների գիտական նշանաւոր գործն է»:

Ինդուկցիան իր անհրաժեշտ դերը կատարեց բնագիտութեան

մանկական շրջանում: Իսկ այժմ երբ փորձնական գիտությունը արդեն բաժանականափ առաջ է քայլել, երբ արդեն հասել ենք «ընդհանուր օրենքների», այժմ սկսեց է նախընտրել դեպուկտիվ մեթոդը, որով կատարել են և պիտի կատարեն շատ նշանաւոր գիտեր, և որը անհամեմատ աւելի բեղմնաւոր է:

Եւ այդ մեթոդին յարելով է, որ Ննայի մեծանուն պրոֆեսորը կառուցանում է իր գեղեցիկ ենթադրութիւնների երևակայական շէնքը: Ենթադրութիւնները յաճախ գալթագեղեցուցիչ են և իրենց ծայրայեղութեամբ ապշեցնում են ընթերցողին: Բայց Հէկէլը չի սիրում կանգ առնել ծայրայեղութիւնների առաջ:

Նա առաջ է բերում մի ընդհանուր դրութիւն, դիցուք ոյժի մնայունութեան օրէնքը, կամ պատճառականութիւնը (causalité) տիեզերքում, որոնք լինելով մի-մի ընդհանրացումներ, կազմած ինդուկտիվ ճանապարհով, մի-մի բացարձակ ճշմարտութիւններ են: Նա դնում է մի այդպիսի տիեզերական օրէնք և նրանից դուրս է բերում բոլոր հնարաւոր եզրակացութիւնները. հոգ չէ, թէ այդ եզրակացութիւնները կարող են լինել երբեմն ծայրայեղ ու երազական: Նա չի խարխալում ուրիշների պէս սկսպոլցիզմի, անորոշ ենթադրութիւնների լաբիւրինթոսում, նրա միտքն անաղարտ է, որոշ, և վերին աստիճանի դոգմատիկ, վերջին բառը հասկանալով իր լաւ նշանակութեամբ: Լաւ ըմբռնելով տիեզերական անսխալ օրէնքների էութիւնն ու արժէքը, հիմնականապէս ուսումնասիրելով օրգանական և անօրգանական կեանքը, նրանց փոխադարձ շարակցութիւնը, երկսր տարիների ընթացքում անխոնջ քրքրելով մօնէրների ու կրիատալների աշխարհը, երևակացութեամբ թռչելով դէպի երկրագնդի վաղեմի շրջանները, երբ նրա մակերևույթի վրայ չը կար դեռ ևս ոչ մի շնչաւոր արարած, այլ միայն ջրային անեղբ ովկիանոս..., նա համարձակ ասպարէզ է գալիս և դնում է գիտութեան առաջ ինքնաբեր ծագման պոստուլատը, որը արեւի պէս պարզ է նրա համար: Նա ունի խոշոր հակառակորդներ, որոնց թւում են և իր մեծ ուսուցիչ Իօհաննէս Միլլէր, ամենամեծ բիօլոգը պարուս առաջին կէտի, որի հեղինակութեան առջև ամենայն պատկառանքով խոնարհւում է Հէկէլը. բայց դա չի խանգարում աշակերտին դատաւիտել իր ուսուցչին: Նա ունի հակառակորդ ջանձին

Լիբիդի, 50-ական թվականների ամենահամարաւոր քիմիկոսի՝ որը իր «Քիմիական նամակներում» այնքան կատաղութեամբ շանթեր է արձակում «ինքնաբեր ծագման» կողմնակիցների դէմ: (Ուշադրութեան արժանի է, որ Ֆոխսն էլ Լիբիդի աշակերտն է): Մի փոքր հետեւե՛ք Հէկկէլի գեղեցիկ արգումենտացիային, որ նա զարգացնում է յօգուտ ինքնաբեր ծագման իր ամենախոշոր գիտական փիլիսոփայական զրւածքի մէջ <sup>1)</sup>:

Բայց նախ ծանօթանանք Հէկկէլի «մօնէրի» հետ:

Մոնէրը նրա սեպհական գիտն է, որ արեւ է նա 60-ական թվականներին: Պա է հոչակաւոր նախամարմինը, բուսական և կենդանական աշխարհի արմատը, բիօլոգիական էւոլիւցիայի հեռացման կէտը: Հէկկէլը մի առանձին բաւականութեամբ է խօսում նրա մասին: Նա զնում է նրան օրգանական և անօրգանական, կենդանի և անկենդան աշխարհների մէջ տեղը: Մոնէրը կենդանի է. այսինքն սնում է, աճում է, բեղմնաւորւում է: Բայց նա ոչ օրգան ունի, ոչ ձև ու կերպարանք: Նա օրգանիզմ է առանց օրգանների: Պարզ, միապաղաղ, կատարելապէս հոմոժէն, պրոտոպլազմի մի տձև զանգւած — օհն մոնէրը <sup>2)</sup>: Ուրեմն նա զեռ բջիջից ստոր է. բջիջ դառնում է նա աստիճանաբար, երբ կազմակերպւում է կորիզը և գոյանում է կաշին:

Այսքանը ասելուց յետոյ, անցնենք այժմ կրիստալներին: Հէկկէլը քննում է Կրիստալը, նրա հրաշալի ձևն ու կազմութիւնը:

<sup>1)</sup> Generale Morphoigie. 1868.

<sup>2)</sup> Այդպէս էր կարծում Հէկկէլը: Բայց աւսօր բնագէտները ընդհանրապէս ընդունում են, որ կատարելապէս հոմոժէն (միապաղաղ) պրոտոպլազմա չըկալ, այլ ամեն պրոտոպլազմա հետերօժէն է (heterogène), բաղկացած երկու տեսակ տարրերից՝ սիտոպլազմայից (cytoplasme) և նիւկլէօպլազմայից (nucleoplasme): Վերջինս կազմում է կորիզը: Կան, սակայն, տոորին էականեր, որոնց մէջ ալդ վերջին տարրը (նիւկլէօպլազման) չի կազմակերպւած կորիզի ձևով, այլ շատ թէ քիչ թանձրացած կտորներով ցրւած է սիտոպլազմայի մէջ: Ահա ալդ էակաների համար և պահպանւում է «մոնէր» անունը: 60-ական թվականներում Հէկկէլի խոշորացուցը զեռ շատ անկատար էր, ալդ պատճառով նա չէր ցուց տալիս մօնէրային պրոտոպլազմայի ներքին փոփոխութիւնը, որը տեսանելի է, թէպէտ ոչ պարզ կերպով, աւսօրաւ աւելի կատարելագործւած խոշորացուցով:

Նա է «անօրգանական անհատը»: Նա էլ աճում է, նա էլ ունի իր ծնունդն ու զարգացումը: Նրա մարմինը դեռ ենթարկւած է որոշ դիֆֆերենցիացիայի. կրիստալի ամեն մի առանցքի ուղղութեամբ ջոկ է նիւթի մսկոլներին դասաւորութիւնը, խտութիւնը: Եւ Հէկէլը համեմատում է իրար հետ Կրիստալն ու Մոնէրը:

Աճման հիմնական երևոյթը նոյնն է երկու մարմինների մէջ, արմատական տարբերութիւն չկայ: Երկուսն էլ ձգողութեան (attraction) օրէնքի շնորհիւ քաշում են դէպի իրենք շրջապատող միջավայրից զանազան նիւթեր, և իւրացնելով այդ դրսի նիւթերը, մեծացնում են իրենց մասսան, ծաւալը:

Բաւական չէ այդ, երկուսն էլ, Կրիստալը, թէ Մոնէրը զատում են դրսի նիւթերի մէջ միմիայն այնպիսի բաղադրութիւններ, որոնք անհրաժեշտ են իրենց աճման համար: Օրինակ, երբ մի բարդ հեղուկի մէջ հալւած դրութեամբ գտնւում են զանազան աղեր և երբ սխտւում են շոգիացնել հեղուկը,—ամեն մի ջոկ աղի տեսակը ջոկ ձևի կրիստալ է կազմում, և զոյացած բոլոր կրիստալները զանազանւում են ձևով ու մեծութեամբ:

Մենք չենք ըմբռնում, ասում է Հէկէլ—թէ ինչու է կատարւում այդ երևոյթը և ինչպէս է կատարւում: Իսկ հանելուկ է, կ'ուզէք հրաշք անանիցէք: Սակայն մենք բնաւ չենք տարակուսում, որ զուտ մեքենայական օրէնքներն են ղեկավարում կրիստալների ծնունդն ու ձևը: Իսկ եթէ այդպէս է, միթէ աւելի մեծ հրաշք կը համարւի սկզբնական պարզ, կազմազուրկ մոնէրի ծնունդը անկենդան, կամ անօրգանական հեղուկի մէջ ինքնարարւար (իրօք սինրաժեշտաբար, ճակատագրական օրէնքներով):

Ինչպէս որ կրիստալի ծնունդը չենք ըմբռնում, այնպէս էլ չենք կարող բացատրել մոնէրի ծագումը: Մենք չենք հասկանում, թէ ինչու մի որոշ թիւ ատոմներ ածխածնի, թթւածնի, ազոտի և ջրածնի այս կամ այն կերպ միաւորւելով առաջացնում են կենդանի էակ: Բայց կասկած չկայ, որ այդ դէպքում ևս նոյն մեքենայական օրէնքներն են գործում:

Անշուշտ—չարունակում է Հէկէլ—ամենասկզբնական էակները, որոնք առաջին անգամ կեանք են տարածել երկրագնդի վրայ, նման են եղել այդ անկերպարան, հոմոթէն մոնէրներին,

որոնք շնորհիւ զուս Ֆիզիկո քիմիական ուժերին, նիւթի մոլեկուլային շարժողութեամբ ծնունդ են առել նախնական ծովում (Urmeer), նման այն կրիստալներին, որոնք գոյանում են այսօր իրենց մայր-հեղուկի մէջ: Ծագել է մոնէրը, իբրեւ հետեւանք չորս անհրաժեշտ քիմիական տարրերի որոշ միաւորման, և սկսել է բազմանալ ու տարուբերւել նախնական ծովում:

Նախնական ծով... միլիօնաւոր տարիներ առաջ էր այն. այն ժամանակ այլ էին պայմանները: Ծովի ու մթնոլորտի որպիսութիւնը, անտարալոյս, շատ տարբեր էր այժմեան գրութիւնից: Այնտեղ, սկզբնական մթնոլորտում հսկայական առատութեամբ տարածւած էին, հաւանօրէն, ածխածնի միաւորումներ զազային դրութեամբ <sup>1)</sup>։ Նրկնային մակերևոյթը ամբողջ ծովով պատած՝ շատ միտնման պէտք է լինէր: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ երբ տեմպերատուրը այնչափ իջած էր, որ առաջին անգամ կենսունակ պրոտոպլազմաները կարողանային կազմել—կարելի է ենթադրել, որ նրանք կազմել են ամենուրեք նման եղանակով, չնչին տարբերութեամբ:

Այո, անթիւ, իրարից հազիւ տարբերուող, մոնէրներ կարող են այն անդրանիկ պատմական շրջանում միաժամանակ զոյացած լինել: Եւ միայն փոքր առ փոքր, երբ կեանքի պայմանները սկսել են փոփոխութեան ենթարկւել, երբ երկրի մակերևոյթի բարձրանալն ու իջնելը զանազան կէտերում տեղական տարբերութիւններ է առաջ բերել, այն ժամանակ մոնէրները ևս ենթարկւել են դիֆֆերենցիացիայի. ժայթքել է մի ահուելի կռիւ գոյութեան համար, որը բնաջինջ է արել մոնէրի շատ տեսակները, շատերն էլ ջաղթանակել են ու բազմացրել սերունդը...

Այսպէս է տրամաբանում Հէկկէլը: Վառ երևակայութիւն, մոքի զօրաւոր թռիչքներ... Նա բնաւ չի կոսկածում, ուրեմն, որ երբ և իցէ, անյիշատակ անցեալում մոնէրը ծնունդ է առել ան-

<sup>1)</sup> Այդ հարգամանքը մեծ կարևորութիւն ունի, քանի որ Հէկկէլը վերագրում է կեանքի երևոյթը ածխածնի մի առանձին ընդունակութեան, որով այդ քիմիական տարրը մտնում է ուրիշ տարրերի հետ բազմատեսակ բարդ կոմբինացիաների մէջ: Նոյն է, և ինչպէս է արտապայտում ածխածնի ալդհիդալի ընդունակութիւնը,—դա մի հանելուկ է, որ չենք կարող ըմբռնել:

օրգանական անկենդան նիւթից, որ երբ և իցէ Աւտոգոնիան տեղի է ունեցել և զրանով ծագում է առել կեանքի երևոյթը: Բայց նա չի տատանում ներկայիս համար ևս պնդել նոյն բանը: Իմ անձնական համոզմունքով—ասում է նա—մոնէրները, դոնէ մասամբ, այսօր ևս շարունակ գոյանում են ինքնաբերաբար, աւտոգոնիայի թէ պլազմոգոնիայի ճանապարհով: Իսկ թէ ներկայումս նրանք զարգանում են արդեօք դէպի աւելի բարձր տեսակներ, այդ ինձ յայտնի չէ (Gener, Morphol. հատոր II):

Եւ կը գայ ժամանակ—շարունակում է նա,—երբ քիմիական լաբորատորիայում արեւստական կերպով կը պատրաստեն սպիտակուցային մարմինները (Eiweisskörper), եթէ օրգանական քիմիան առաջադիմէ նոյն հսկայական քայլերով, ինչպէս վերջին տասնեակ տարիներում: Երբ պատրաստ կը լինի արեւստական սպիտակուցը, կարելի կը լինի ստեղծել նրանից կենդանի անհատներ, դիցուք մոնէրներ: Կը կերակրեն մոնէրը արեւստական կերպով, կը բեղմնաւորւի, կը բազմանայ մոնէրը, և այդպիսով աւտոգոնիայի հարցը կը լուծւի փորձով: Այդ կը կարողանան քիմիկոսները ստեղծել զրանցից միաբջիջ, իսկ աւելի ուշ՝ նաեւ բազմաբջիջ կենդանիներ... (Gen. Morph. հատոր I):

Աստուծաբանը խաչթւածի նման վեր-վեր է թռչկոտում այդ տողերի առաջ. Պարագոնքս, ողորմելի ցնդաբանութիւն... Բայց մենակ աստուծաբանը չէ խրոնոզը: Լիբիզը գիտութեան պարծանքներից մէկն է, և նա էլ նոյն կերպ էր վերաբերում: Դիլլետանտ համարելով այն բոլոր գիտնականներին, որոնք փորձում են ամեն բան բնութեան մէջ բացատրել զուտ մեքենայական պատճառներով, բացականչում է նա վրդոված ու խոր համոզւած ձայնով. «Ի՞նչ երբէք չպիտի աջողէք մի նեարդ, կամ մի բջիջ ստեղծել...» (Լիբիզ, «Քիմիական նամակներ»):

Հրաժարելով մատերիալիստ գիտնականներին դիլլետանտ համարելուց, մենք միևնոյն ժամանակ չենք կարող պնդել Լիբիզի ասածի հակառակը: Գուցէ Հէկկէլի մարգարէութիւնները կատարւելու են մի օր, գուցէ քիմիկոսները անորոշ ապագայում աջողելու են կենդանի էակներ ստեղծել, գուցէ և չեն աջողելու, այդ տեսակ հարցերի մէջ ամենից լաւն է ազնոստիկ լինել, ոչինչ չպնդել ոչ թեր և ոչ դէմ:

(Շարունակելի)

## Ռ Ո Ւ Բ Ե Ն Ի Կ Ի Ս

### ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Անմեղ դու մանուկ, ծաղիկ սիրաբոյր,  
Տիրոջ փնջածիդ տալիս են համբոյր,  
Հոտոտում են քեզ ու ասում ջանիկ,—  
Միթէ դորանով ես դու երջանիկ:

Սրբ դրկում եմ քեզ օրօրում կրծքիս,  
Վիշապ է ցրւում... ցնծում է հոգիս,  
Քեզ երգ հիւսելով երգում եմ նանիկ,—  
Արդեօք դորանով ես դու երջանիկ:

Ամբողջ զիշերներ անքուն մնալով,  
Մայրիկդ է հսկում կեանքը մաշելով,  
Լացիդ, նազանքիդ կ'ասէ նա ջանիկ,—  
Միթէ դորանով ես դու երջանիկ:

Արթուն ժամանակդ, իբրև մի արքայ,  
Իրաւունք ունիս ամենքի վերայ,  
Քո մի ժպիտովդ հրճւում է մայրիկ,—  
Այդ իրաւունքովն ես դու երջանիկ:

Անհոգ անցնում են քո մանուկ օրեր,  
Ձեն գործում դեռ քո թաւիշ թաթիկներ,

Ճակատդ ցողում է դեռ քնոյ քրտինք,—  
Այդ հանգիստ կեանքոյն ես դու երջանիկ:

\*  
\* \*

Ձէ, չէ իմ հոգեակ, այդպէս չեն անցնիլ,  
Քո մատաղ օրեր անհոգ ու հանգիստ.  
Վշտի ու հոգու օրը կը բացուի,  
Ձի ժպտալ բաղդը քո երեսին միշտ:

Երբ կըմեծանաս—հասակդ կ'առնես,  
Ճակատդ մի վեհ գործով կը պսակես,  
Երբ նոր սերունդին իբրեւ յիշատակ  
Անձնագորհու թեան կը տաս օրինակ—

...Այն ժամանակը, սիրուն Ռուբենիկ,  
Միայն կ'անւանեմ ես քեզ երջանիկ...

Թիֆլիս 1897 թ.

## ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱԻԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՋԱ-ԷՅՆԱԹԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

Վարելուց լետոյ գալիս է սերմացանութեան հողսը, որի մէջ մեր զիւղացի հողագործները քարքարոտ տեղերում նոյնպէս ահագին վնաս են կրում: Աերմից մի նշանաւոր մասը ընկնելով քարերի վրայ կամ կողերին՝ չեն ծածկուում հողով, հետեապէս չորանալով չեն աճում կամ թռչունների կերակուր են դառնում:

Մեր զիւղացիների մէջ մի կարծիք է կազմել, թէ քարքարոտ տեղը աւելի զովութիւն է պահում և օգնում է բոցի աճելուն: Դա շատ սխալ է և օգուտից վնասն է աւելի: Նախ՝ մենք տեսնում ենք, որ լեռներում բնական և ամենալաւ աճող խոտատեղերը անքար հողերի վրայ են զարգացած. երկրորդ, քարը իր տակին զովութիւն կարող է պահել միմիայն անձրևային տարիներում, իսկ երաշտ տարիներում քարը տաքանալով սաստիկ այրում է իր կողերին ծլածը:

Տեղացի հողագործները մի բան բոլորովին բարձի թողի են արել, այն է՝ հողը վարելուց չետոյ, սերմը ցանկուց առաջ, երբեք ուշ չեն դարձնում նրան փոցխով մանրելու, քրքրելու և հողի երեսը հաւասարելու վրայ, որին հաւասար կերպով կազդէր, թէ արեգակի ջերմութիւնը և թէ ձմրան ցուրտը և որի վրայ սերմն էլ հաւասար կը ցանւէր:

Երբ հողը վարելու շատ խորդ ու բորտ տեղեր են մնում, այն ժամանակ սերմը հաւասար չէ ցաւում, որը անլաջողութեան գլխաւոր պատճառներից մէկն է հողագործութեան մէջ. որովհետեւ մի փոս տեղում ընկնում է զիցուք տասն և հինգ սերմ, իսկ մի ուրիշ՝ դրանից հինգ անգամ աւելի զիք տեղի վրայ մէկ հատ էլ սերմ չի կանգնում:

1) Տես Մուրճ 1397 թ. № 7—8, 10, 11—12:

Ասացինք որ կանոնաւոր չը հերկելը և չը հաւասարացնելը ցանքի առաջնորդութեան գլխաւոր պատճառներէից մէկն է, որովհետեւ նրա վրայ օդի, քրի ներգործութիւնը հաւասար կերպով չի տարածուում. և, ինչպէս նկատուցինք, սերմն էլ հաւասար կերպով չի տարածուում հողի մէջ. ալդ է գլխաւոր պատճառը, որ բոլոր սերմահատիկներն էլ հաւասար սնունդ չեն ստանում, ուստի և տեսնում ենք միեւնոյն տարածութեան վրայ հասկերի մի մասը սաստիկ զարգացած են, իսկ միւս մասը սաստիկ ճնշւած, վտիտ և նւաղ են:

Անկանոն հերկելն է պատճառը, որ մեղանում սովորական ընդունւած քանակութիւնից աւելի սերմ է ցանում գիւղացին. օրինակ՝ աչն տեղերում, ուր հողագործութիւնը կատարելագործւել է, աչնտեղ իւրաքանչիւր դեսեատին հողի վրայ ցանում է 7-8 փութ հացահատիկ, իսկ մեղնում նոյն տարածութեան և նոյն չափութիւն ունեցող հողի վրայ անպատճառ ցանում են 15 փութ ցորեն 2): Կրա պատճառը հերկի անհարթութիւնն է անշուշտ, որովհետեւ դար տեղերից սերմահատիկները գլորւում և թափւում են փոս տեղերը միմեանց վրայ և նկատելի չեն լինում հողագործի աչքերին:

Եթէ իւրաքանչիւր սերմին սնունդ առնելու համար պէտք է, դիցուք, մէկ քառակուսի վերջոյ հողի տարածութիւն, հետեւապէս նոյնքան տարածութիւն հողի վրայ աչնպէս չեն աճի և զարգանալ 5-6 սերմահատիկներ, ինչպէս որ կը զարգանալ մէկ հաւը. Ուրեմն լաւ բերք ստանալու համար պէտք է վարած հողը լաւ խրխրել և երեսը մեծ զուշուութեամբ փոցխով հաւասարել և ապա հաւասար հեռաւորութեամբ ցանել:

Հողը փոցխով լաւ խրխրելու և հաւասարելու համար լեռնոտ տեղերում մեծ արգելք են քարերը, որոնց պէտք է անպատճառ ժողովել և հեռացնել, իսկ գիւղացին ինքնաբերաբար չի ձեռնարկի աչդպիսի ծանր՝ բաւց չափից դուրս օգտակար աշխատութեան, քանի որ նա չունի շօշափելի օրինակ կամ հրամայող. Աւելորդ է ասել, որ աչդպիսի դէպքերում քիչ չէ մեատում տգիտութիւնը, որից առաջանում է անտարբերութիւն և ծուլութիւն:

2) Թէ մի դեսեատին հողի վրայ որքան սերմ է ցանում և որքան բերք է լինում—մեր երկրի զանազան տեղերում տարբեր է. ցանկալի էր որ կարելիին չափ շատ գիւղերից տեղեկութիւններ գալին ալդ մասին, որպէս զի կարելի լինէր դորա համար մի ցուցակ կազմել. ալդ տեղեկութիւնները պէտք է ըզխեն կամ անձնական դիտողութիւններից և փորձից և կամ քաղւեն տեղական հանգամանքներին քաջ ծանօթ անձերի վկայութիւնից, որպիսիներից է և ներկայ լօղաձի հեղինակին՝ Սուրմալուի վերաբերմամբ: Եւ որովհետեւ մեզնում հաշիւները դեսեատինով ու փութով չեն անում գիւղերում, և կշեռքի ու տարածութեան չափերն էլ տարբեր են ալ և ալ գաւառներում, ուստի տեղական անունների հետ անպատճառ պէտք է նաև դեսեատինով, փութով և ֆունտով հաշիւները տալ: Խմբ.

Ալդայիսի ծանրակշիւ խնդիրներում մեր կարծիքով պէտք է օրէնքի ուժով և ստիպմամբ աշխատեցնել գիւղացուն։

Եթէ գիւղացուց լանուռն օրէնքի ամեն բան կարելի է պահանջել, ամեն դործի համար կարելի է նրան աշխատեցնել, ինչու ուրեմն գիւղացուն հէնց իր օգտի համար չի կարելի աշխատեցնել։ Ի՞նչ մեղք կը լինի, եթէ գիւղացուն ստիպմամբ իր անպէտք հողերի վրայ անտառ տնկել տան, դաշտալին ճանապարհներ շինել տան, լճեր շինել տան և այլն։

Ենթադրենք, որ գիւղացին ունենում է 2-3 հազար խուրձ խոտ, 3-4 հազար խուրձ քիւլաչ, որը պէտք է դաշտից կրել տուն և կալատեղը։ Երբ քարերի կամ ճանապարհների բացակայութեան պատճառով սալ չի բանում, ալդա ահագին քանակութեամբ խոտը և քիւլաչը ինչպէս պէտք է կրի։ Նա երկու կամ երեք եղանակով, իւրաքանչիւրին 20-25 խուրձ բարձելով, և մի քան ժամանակի կորուստ և ունենում նա ալդ կերպ վարւելով։ Այն ինչ եթէ նեղութիւն կրելով մի անգամ բացւին սալի համար դաշտալին հասարակ ճանապարհներ, որ մի առանձին դժւարութիւն չունի, ամեն տեղ սալեր կը բանեն և ամեն անգամ 100-150 խուրձ կարելի կը լինի տեղափոխել երկու եղ միայն լծելով։

Այն երկիրներում, ուր հողագործութիւնը կատարելագործւել է, սերմը ցանելու համար մեքենաներ են շինել, որը հաւասար կերպով սերմը ցրում է հողի երեսին (գիւ. մի կողմ թողած շարքացան մեքենաները)։ Իսկ մեղանում ալդ գործողութիւնը ձեռներով է կատարւում, որի պատճառով թէ հաւասար չի ցանւում և թէ աւելորդ սերմ է զնում։ Ալդ մեքենայով հաւասար ցրւելն է պատճառը, որ մէկ դեռատին հողի տարածութեան վրայ 15 փ. սերմի փոխարէն 7-8 փ. սերմ է ցանւում։

Իւրաքանչիւր գիւղացու համար առանձին սերմացան մեքենա ունենալը դժւարութիւն կը լինի փողի կողմից։ Բայց ի նկատի ունենալով իւրաքանչիւր տարի աւելորդ և իղուր կորչող սերմի արժէքը, օգուաւետ կը լինի, եթէ մի քանի գիւղացիներ միանալով՝ սերմի փոքրիկ մեքենաներ առնէին կամ ամբողջ համայնքով մեծ մեքենաներ ձեռք բերէին։

Սերմ ցանելու համար երկրագործը անպատճառ պէտք է գիտենալ, թէ իր իւրաքանչիւր կտոր հողը ինչ սերմ անեցնելու բնորոշակութիւն ունի, կամ իր սերմը որքան ընդունակ է աճելու։ Թէպէտ փորձերով ալդ մասին գիւղացին մի բան գիտէ, բայց երկրորդական խնդիր համարելով անուշադիր է թողնում, ամեն բան Աստուծոց սպասելով։ Ալդ խնդիրը զուտ մասնագիտական լինելով՝ աւելորդ ենք համարում մեր դատողութիւնը մշջ բերել, ալ թողնում ենք մասնագէտ անձանց՝ ալդ խնդիրը ժողովրդի մշջ արծարծելու։

Նրբ հացահատիկները համեմատում են, աչն ժամանակ մեծ հոգս է պատճառում գիւղացուն քաղելը, սրի համար մեր երկրում չունենք հեշտացրած միջոցներ—մեքենաներ, որպէս վարում են լուսաւորւած երկիրներում:

Ցանքերը հասնելուց չետոյ որքան շուտ քաղեն, այնքան աւելի արդիւնք կունենալ գիւղացին. դժբախտաբար արտաքաղը շատ դանդաղ է կատարւում մեր երկրում գործիքների անցարմարութեան պատճառով: Մեղանում հունձը կատարւում է մանդաղով և գերանդիով: Մանգաղով (մաւրանդիով) հնձողը ստիպւած է պուպուզել գետինն և ալդպէս քաղել, որից հնձողի մէջքը և ծնկները ցաւում են: Մանգաղով իւրաքանչիւր բանւոր օրական հազիւ 80 խուրձ քաղի, իսկ երբեմն պատահում են, իբրեւ բացառութիւն, 100-120 խուրձ քաղողներ: Գիրանդին դրանից աւելի չարմար է, որը մեծ է, երկար կոթ ունի և նրանով կանգնած են քաղում: Մէկ գերանդուն երեք բանւոր է հարկաւոր,—հնձող, փոցխով ժողովող և կապող: Նրեք բանւորը գերանդիով կը քաղեն օրական 7-8 հարիւր խուրձ. կթէ երեք հոգու քաղածը միջին թւով հաշւենք օրական 750 խուրձ, ամէն մէկին ընկնում է 250 խուրձ. մինչդեռ մարանդաքաղաքով լինում է միջին թիւով 100 խուրձ. ուրեմն գերանդիով գործը մէկ և կէս անգամ աւելի է կատարւում:

Դժբախտաբար գերանդիով քաղելը մեղանում շատ չէ տարածւած: Դաշտաւին տեղերում գերանդիով քաղում են միայն առուտը (եօնջա), որի մէջ փոքրիկ մարանդին չի շարժւում խտութեան պատճառով, իսկ լեռնաւանդներում գերանդիով միայն խոտերն են քաղում, որի հոլը առհասարակ անքար է լինում:

Մեղնում առհասարակ աշխատող ձեռքերը սակաւ են. հունձն էլ մարանդաքաղի պատճառով ուշանում է. հացաբոլսն էլ, հասնելուց չետոյ, երկար ժամանակ անքաղ մնալով՝ կծղում է արեգակի ջերմութիւնից, որով կորցնում է իր ուժը, լաւ չատկութիւնը. ապա մեծ քանակութեամբ հատիկները թափւում են գետին և կորչում են. երկար ժամանակ էլ բաց դաշտում մնալով՝ առատ կերակուր է դառնում թռչունների համար, սրից գիւղացին ահագին մնաս է կրում լոկ սղիտութիւնից:

Դաշտեցիների համար միանգամայն անստույգ է գերանդին թողած մարանդիով քաղելը, որովհետեւ նրանց արտերում ոչ մի բնական արգելք չկալ, իսկ արհեստական կերպով քաղած թմբերի վրալից էլ գերանդին մեծ չափողութեամբ բարձրանում և իջնում է, որը գիտենք անձնական փորձերով:

Նթէ հնար լինէր պահանջել լեռնցի գիւղացուց, օրէնքի ուժով, որ նա մի չալտնի ժամանակում ժողովէր իր արտերի քարերը, որոնք կոտրում են գերանդին, աչնուհետեւ հեշտ կը լինէր արգելել մեր դարբինների մարանդի շինելը, որով բնականաբար կը տարածէր գերանդու գործածու-

թիւնը, ինչպէս արգելեց աչն սալերի գործածութիւնը, որոն ցանկաները ձաղերով չեն և առանցքի հետ են պտտուում: Մեծ օգնութիւն կը լինէր գիւղացիների համար, եթէ տարածէին հնձող մեքենաներ:

Մեզնում հնձող մեքենաների կարիքը շատ զգալի է աչն պատճառով, որ բանւոր ձեռքերը շատ սակաւ են:

Յանքը քաղելուց շատու գիւղացու համար մի մեծ խնդիր է կալսելը, որը կատարուում է մեղանում ամենանահապետական չկերպով, որի պատճառով մեծ քանակութեամբ հացահատիկներ են փչանում: Քիւլաչը կալսում են ջառջառ և կամ կոչւած գործիքներով, որոնք շատ հասարակ բաներ են: Այդ գործիքները շատ լաւ ծանօթ են մեր գիւղացիներին, իսկ քաղաքացիներին ծանօթ չլինելով՝ հարկ ենք համարում տալ համառօտ տեղեկութիւն:—Ջառջառը բաղկացած է չորս կտոր փալտից, ծալերը միմեանց ամրացրած. երկու կտորը կլոր են, իսկ երկուսը տափակ, Իւրաքանչիւր տափակ կտորի վրայ փորւած են կլոր ծակեր երկու տեղ, որոնց միջից անց են կացրած առանցքներ. առանցքների վրայ ամրացած են երկաթէ լաստեր 40—60 հատ: Իւրաքանչիւր լաստի մի կողմը բարակ է և բիզ, իսկ միւս ծալը տափակ է, լալն և քիչ սոււր: Կլոր փալտերից մէկից կապում են պարան կամ բարակ շղթայ, որի միւս ծալը կապում են եղների կամ ձիերի լծից: Լծած անասուններին քշում են կլոր տեղում՝ գետնին փռած քիւլաչի վրայ աչնքան ժամանակ, մինչև լաստերը մանրում են քիւլաչը չարդ դարձնելով, և հասկերից հատիկները թափւում են գետնի վրայ, որը չարդի հետ խառը լինելով՝ ժողովում են մի կողմ և քամու տալով բաժանում են միմեանցից:

Կլան է մի հասարակ տախտակ  $1\frac{1}{2}$  արշին երկարութեամբ, 9—10 վերջոյ լայնութեամբ և մի վերջոյ հաստութեամբ. մի ծալը համեմատաբար նեղ և փոքր ինչ վեր ցցւած: Տախտակի նեղ ծալի վերին կողմից կապում են պարան կամ շղթայ, որի միւս ծալը կապում են անասունների լծից և պտտում են քիւլաչի վրայ: Ջառջառի հետ պտտեցնում են սովորաբար և մի կամ, որը աւելի լաւ է մանրացնում և տրորում չարդը, որպիսին աւելի են ուտում անասունները:

Այդ երկու գործիքներն էլ անչարմար են և վնասակար: Նախ գրանք քիչ գործ են կատարում. մէկ Ջառջառը մէկ կամի հետ երկու օրում հազիւ 500 խուրձ քիւլաչ մանրի:

Ջառջառով կալսում են գլխաւորապէս դաշտային գիւղերում, իսկ կամով՝ լեռնալին գիւղերում. բայց որովհետև մէկ կամով շատ ուշ է մանրում քիւլաչը, ուստի լծում են 2—3—4 կամ. երբեմն տեսել եմ կալում 12 կամ լծած: Ուրեմն միայն կայսելու համար գիւղացին պէտք է 4—6—8 և երբեմն 24 հատ աւելորդ տաւար պահի ու կերակրի:

Օրինակի համար վեր առնենք գիւղերից մէկը.—Սարմալու գաւառի Ալիղամարլու գիւղը ունենում է տարեկան 80—100 հազար խալար քիւլաշ, որը կալսելու համար պահում է 650 գլուխ աւելորդ տաւար (արջաւ), մինչդեռ մի թիւ արօտատեղ չունի:

Ալղքան տաւարը սլտուելով քիւլաշի վրայ, նախ՝ միշտ արտաթորում են աչնտեղ, որին կալչում են հացահատիկներ և մաքրելու ժամանակ դուրս են թափւում. երկրորդ՝ տաւարը սլտուելով քիւլաշի վրայ, միշտ ուտում է՝ և որքան մենք կարողացել ենք նկատել ու հաշուել՝ մէկ տաւարը ուտում է օրական 12 ֆունտ հատիկ: Գիցուք Ալիղամարլուի գիւղացիները ալղ 100 հազար խալար քիւլաշը կալսում են 2-3 ամիս ժամանակում: Եթէ լոկ տրորելու ժամանակը հաշենք մէկ ամիս, ուրեմն մէկ տաւարը ուտում է 9 փութ, հետեապէս 650 տաւարը միասին ուտում են 5850 փ. հացահատիկ. փութը 60 կոպէկով հաշւած՝ անում է 3510 ռուբլի. ալղքան գումարով գիւղացին իր արքունական հարկը կը կծարէր: Եթէ մի օր մեր գիւղերում տարածէր մեքենաներով կալսելու սովորութիւնը, անշուշտ մեծ թեթիւութիւն կը լինէր մեր գիւղացիների համար, մասնաւոր դաշտեցիների, որոնք մի թիւ անգամ արօտատեղ չունին աւելորդ տաւար կերակրելու համար:

Իւրաքանչիւր կալսող տաւարը կարժենալ առնւաղն 10 ռուբլի, ուրեմն 650 տաւարի դինը միասին կանի 6500 ռ: Ալղ գումարով կարելի կը լինէր ձեռք բերել մէկ մեծ մեքենայ, որը քսան օրում կը կալէր ամբողջ գիւղի քիւլաշը. Գիւղացին շուտ կը վերջացնէր կալսելը և վաւառկած աւելորդ օրերում ուրիշ աշխատանքի կերթար:

Իւրաքանչիւր ալղպիտի փոքր անասուն կերակրելը կարժենալ գիւղացուն առնւաղն 6 ռ: Եթէ կալսելու դժարութիւնը վերանայ, ան ժամանակ գիւղացիք ալղ գումարով կը կերակրէին կաթնատու անասուններ և աւելորդ օգուտ կ'ունենային:

Քիւլաշը մեքենայով կալսելով՝ ալղ ևս կարիք չի լինի «շանալով» էրանելու, որպիսով հատիկներից ոմանք դարձեալ մնում են չարդի մէջ. փորձերով ապացուցւած է, որ հատիկներից առնւաղն 10% միշտ չարդի մէջ է մնում ձեռքով էրանելու չնօրհիւ<sup>1)</sup>:

Ալթմ տենենք թէ գիւղացին որքան կորուստ է ունենում տարեկան, իր կատարած անկանոն երկրագործութիւնից, որին ապացուց վեր առնենք, իբրև օրինակ, դարձեալ Ալիղամարլու գիւղը.—Ալղ գիւղում ցանում են տարեկան միջին թւով 3000 փութ սերմ 204 դեռետախին տարածու-

<sup>1)</sup> Մեր կապիտալիստները երբեմն փորձել են կալսող մեքենաներ բերել, բայց աջողութիւն չեն ունեցել և վնասուել են, որով և հառարակ ժողովուրդը կասկածով է նայում հարստական մեքենաների վրայ: Դրա պատճառն ալն է, որ բերողները իրենք աղէտ լինելով՝ զղուշ չեն վարել և դործ են ունեցել ափերիսաների և կեղծ մասնագէտների հետ:

Թեան վրա, եթէ ալդ գործողութիւնը կատարւի մեքենայով՝ կը ցանւի ոչ թէ 3000 փ. ալ 1500 փ. սերմ, իսկ նոյնքան մնացածն էլ վաստակ կը մնալ, 3000 փ. սերմից ստացւում է տարեկան 26.250 փ. արդիւնք, որից էրանելու քամին տանում է առնադն 10<sup>0</sup>/<sub>6</sub>, աչն է՝ 2.625 փ.

Տեսանք վերեւում, որ կալսելու ժամանակ էլ անասունները ուտում են նոյն գիւղի քիւլաչը կալսելիւ 5.850 փ. Ալդ կորուսաների դումարը միասին կազմում է 9.975 փ. եթէ ոչ աւելի, որը ամեն տարի կորցնում է Ալիզամարուճի ժողովուրդը լոկ իր տգիտութեան և անկանոն երկրագործութեան շնորհիւ <sup>1)</sup>), Դեռ մենք չենք հաշւում աչն քանակութիւնը, որ շարունակ դուրս է թափւում անասունների արտաթարութիւնը մաքրելիս, և ցանքերը ուչ քաղելով թռչունների կերակուր է դառնում կամ չեթելով զետին է թափւում:

Մեքենան էլ ունի մի անլարմարութիւն, որի վրա առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել.—Մեր երկրում անասունները կերակրւում են զլիսաւորապէս չարով, իսկ մեքենան սանրում է հասկերը առանց քիւլաչը մանրելու, կամ եղած մարդակոտոր մեքենաները չարղը կոտորում են սուր սուր ծալերով առանց տրորելու, որը չի կարող ուտել անասունը: Սրա համար կամ պէտք է անասուններին սովորցնել սաղ սաղ քիւլաչ ուտելուն կամ մեքենան չարմարցնել չարղը տրորելու համար: Վերջինի համար արդէն փորձեր եղած են, որը չաջողութիւն է խոստանում, ուրեմն ալդ արդեւքն էլ կարելի է վերացնել, եթէ փոքր ինչ ուշադրութիւն դարձնել կալսող մեքենայի ապարատի վրա:

Այս բոլորից պէտք է եզրակացնել, որ գիւղացու աշխատութեան ձեւերը հետացնելու և տնտեսաբար վարելու համար անհրաժեշտ է երեք տեսակ մեքենաների տարածելը, աչն է՝ սերմ ցանելու, հնձելու և կալսելու մեքենաներ, իսկ եւրոպական գութանները արդէն մուտ են գործել, և հաւանական է, որ կարճ միջոցից լետու տեղական գութանները գործածութիւնից դուրս գան:

Խոչալէս կարող են տարածել ալդ մեքենաները մեր գիւղերում, քանի որ գիւղացիք հասկացողութիւն չունեն ալդ գործիքների մասին, չը կան հառկացող մասնագէտ վարպետներ, չը կան կատարելագործւած գործարաններ, որ մեքենայի մի որ և է մասը փչանալիս կարող լինի տեղումը նորել:

Գիւղացիները տգէտ, ինքնօգնութիւնից զուրկ և աղքատ լինելով՝ չեն կարող ալդպիսի գործիքներ առնել և բանեցնել. հարուստները նոյն-

<sup>1)</sup> Այս հաշւով կարելի է դուրս բերել, թէ որքան է կորչում ամբողջ գաւառներում կամ նահանգներում, որը ահագին դումար է կազմում. կարող էր մնալ ալդ դումարը ժողովրդի մէջ և մեծ ապահովութեան կը լինէր ապագայ սովերի և թանգութիւնների դէմ:

պէս ալդ գործում տգէտ լինելով չեն մտածում գործիքներ բերել և վարձով բանեցնել:

Ալդ գործը առաջ տանելու համար արհրաժեստ է, որ մասնագէտները, հողատէրերը և փողատէրերը միանան:

Քիչ չեն մեզնում մասնագէտներ, որոնք անգործ թափառում են կամ իրենց չվերաբերող գործերի են ձեռնարկում անճարացած: Քիչ չեն նաև փողատէրեր, որոնք իրենց զրամները կամ զանազան բանկերին են պանծնում կամ անօգուտ տուետրում են գործ դնում: Քիչ չեն նաև հողատէրեր, որոնք թէ փող և թէ մասնագիտութիւն չունենալով օգուտ չեն ստանում հողերից և խրաժ են պարտքի մէջ: Նրբ ալդ երեք պաշմանները միանան և միութեան նպատակը լինի գիւղատնտեսութեան զարգացնելը, աչն ժամանակ հետութեամբ գիւղերում կը տարածեն մեքենաները, իսկ տարածողը նշանաւոր օգուտ կունենալ:

Բացի ալդ՝ պէտք է հիմնել գիւղատնտեսական ընկերութիւններ, որոնք միջնորդ դառնան գործարանատէրերի և գիւղացիների մէջ և մասնագէտների աջակցութեամբ մեքենաների պահեստներ բաց անեն կենտրոններում, որով շատ շուտ կը տարածւի մեքենաների գործածութիւնը ժողովրդի մէջ:

Առժամանակ ալդպէս արհեստական միջոցներով տարածելուց չեռույ՛ երբ գիւղացիները կը զգան ալդ մեքենաների օգուտը, իրենք կը գիմեն ալդ միջոցներին առանց ուրիշի օգնութեան:

(Վերջը չաջորդ համարում):

## ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՍՏՐՈՒԿ <sup>1)</sup>

(Կոմս Լ. Տոլստոյ).

ՎԱՍՍԻ, ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

### II

Բաւական չէ անմիջական կեանքով ապ-  
րելը. անհրաժեշտ է, որ մեր անձնական գոյու-  
թեան մէջ զգանք մի օղակ, որ կապում է մեզ  
ինչ. որ աւելի վեհ, աւելի մշտակալ և աւելի հաս-  
տատուն բանի հետ: Այդ զգացմունքն է հաւատի  
բովանդակութիւնը. ձեռքը կարող են փոխել և  
ընդ միշտ փոխում են. բայց երբ հէնց ինքը բո-  
վանդակութիւնն է կորչում, երբ առանձնակի կեան-  
քը թւում է ողորմելի պատահականութիւն, երբ  
վերջապէս ամեն բան չանգում է մի կտոր ցեխի,  
ուր շրջափակում է ողջ լոյս աշխարհը, աչն ժա-  
մանակ քո սեփական կեանքն էլ է կորցնում իր  
գինը և աղօտանում է... (Вл. Короленко, „Съ  
двухъ сторонъ“).

Պատանեկան տարիներից ի վեր Տոլստոյին հանգիստ չէին տա-  
լիս մարդու գոյութեան վերջնական նպատակների և կոչման վերա-  
բերեալ տանջող հարցերը: Դեռ ևս Կոլեա Իրտենկը իր մասին  
ասում է. «Արդէն իմ առաջն էին զրեւծ մարդու կոչման, ապագայ

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1897 թ. № 11—12.

կեանքի և հոգու անմահութեան վերաբերեալ վերացական հարցերը և իմ մանուկ, թոյլ միտքը անփորձութեան ողջ թափով ճգնում էր իր համար պարզել այն հարցերը, որոնց առաջարկելը միայն կազմում է վերին աստիճանը, ուր կարող է հասնել մարդու միտքը և որոնց մարդս վճռել չի կարող» («Մանկութիւն և պատանեկութիւն»)։ Այդ հարցերի վճռելը նրա տրամադրութիւնը շատ անգամ ողբերգական էր դարձնում, որ մի քանի անգամ քիչ էր ֆնացել ինքնասպանութեամբ վերջանար։ Այսպէս՝ 34 տարեկան Ալեինի <sup>1)</sup> մասին իմանում ենք. «Ալեինը, իր երջանիկ ընտանիքատէր և առողջ տեղովը, մի քանի անգամ այնքան մօտ էր ինքնասպանութեան, որ վախենալով ինքն իրան կախելուց՝ թաղցրեց երիզը և հրացանը հետը չէր ման գալիս վախենալով, որ իրան կը սպանի («Աննա Կարենինա»)։ Նոյնը պատահել է Տոլստոյին. այդ մասին տեղեկութիւն կայ նրա «Խոստովանանք» գրքում, ուր մանաւանդ խիստ և վճռապէս դրւած են նրան դբաղեցնող հարցերը։—«Ինչո՞ւ ապրեմ, հարցնում է Տոլստոյը,—ինչո՞ւ ցանկանամ որ և է բան, ինչո՞ւ որ և է բան անեմ։ Ի՞նչ դուրս կը գայ այն բանից, որ այսօր եմ տնում, ինչ պիտի անեմ վաղը, ինչ դուրս կը գայ իմ ամբողջ կեանքից։ Դո՞քա հին, բայց յու՛րա նոր հարցեր են, որովհետեւ ամեն մտածող մարդ շարունակ նորից և նորից այդ հարցերը տալիս է ինքն իրան։ Բայց ինչպէս ամեն զէպքում, այնպէս էլ այստեղ Տոլստոյը ցանկանում է բնութոյն լինել։ Մտածող մարդկանց մեծագոյն մասի համար այդ հարցերի պատասխանը համոզմունքներն ու իդէալներն են, որոնցով ապրում են մարդիկ։ Տոլստոյն աւելին է ուզում. նա ուզում է իմանալ. «Ի՞նչն է իմ (նրա) կեանքի նշանակութիւնը, անկախ պատճառից, ժամանակից և տարածութիւնից։ Գոյութեան ենթակայական (սուբյեկտային) նպատակները՝ իդէալներն ու համոզմունքները այն ժամանակ են միայն կենսական, երբ յենւում են պատճառականութեան վրայ, այսինքն երբ յենւում են տրամաբանութեան, բնութեան և մարդկային ընկերութեան օրէնքների վրայ, երբ նրանք հաշի են առնում անցած և ժամանակակից պատմութիւնը։ Տոլստոյը փնտռում

<sup>1)</sup> Տոլստոյի «Աննա Կարենինա» մեծ վէպի հերոսներից մէկը։

է իր դոյութեան առարկայական (օբյեկտիւ) նպատակը, մի բան՝ որ ամբողջովին բացասում է տրամաբանական մտածութիւնը և ամեն տեսակ օրէնքներ: Վաղուց բոլոր միտքիներին և բնազանցներին դէպի ինքն է ձգում հարցի այս տեսակ զննելը, որովհետեւ նա սանկցիա է տալիս մտածութեան կատարեալ կամայականութեան: Ուստի շատ բնական է, որ Տոլստոյին բաւարարութիւն չտաւ ոչ մի պատասխան, ով և տւած լինէր այդ պատասխանը: Տոլստոյն իր հարցին ուրիշ կերպ այսպիսի բանաձև է տալիս. «ունի՞ արդեօք իմ կեանքը մի իմաստ, եր չօնչանար իմ անխուսափելի, վերահաս մահով», և այն մոքին է յանգում, որ այդ նկատմամբ բոլոր գիտելիքները երկու բեւեռն են վերածւում՝ դրական և բացասական: Բայց երկու բեւեռն էլ նրան բաւականութիւն չեն տալիս, չնայած որ, դրական բեւեռ՝ մտահայեցական գիտութիւնները և իրանց ամենավերին ծալրում՝ բնազանցութիւնը—ընդունում են այդպիսի մի հարց, իսկ բացասական բեւեռ՝ մի շարք դրական գիտելիքներ և նրանց ամենավերջին ծալրում՝ մաթեմատիկան՝ այդպիսի մի հարց չեն ընդունում:

Կանգ չառնենք Տոլստոյի գիտութիւնների ծաղրելի դասակարգութեան վրայ և տեսնենք թէ ինչ պատասխան են տալիս նրան այն ընկերական գիտութիւնները, որոնց նա կոչում է մի շարք կիսագիտելիքներ: Այդ գիտութիւններն ասում են. «ամբողջ մարդկութիւնն ապրում և զարգանում է հոգեկան սկզբունքների, նրան առաջնորդող իդէալների հիման վրայ: Այդ իդէալները արտայայտւում են կրօններով, գիտութիւններով, գեղարւեստներով և պետականութեան ձևերով: Այդ իդէալները աւելի և աւելի բարձրանում են. մարդկութիւնը դիմում է քարձրագոյն բարիքին: Ես—մարդկութեան մի մասն եմ, ուստի իմ կոչումն է մարդկութեան իդէալների գիտակցւելուն և իրականացման նպատակը: Այն բովանդակութիւնը, որ դնում են յառաջադիմութեան այս ընդհանուր բնորոշման մէջ, այն աստիճան բազմազան և շատ յաճախ՝ անհամակրելի է, որ Տոլստոյին առիթ է տալիս մի այսպիսի կծու նշատողութիւն անելու. «Եւ այս պատասխանը գոհացնում էր ինձ իմ թուլամտութեան ժամանակ: Այդ այն ժամանակն էր, երբ ես էլ ունէի իմ քմայքները. ես աշխատում էի

հնարել մի այնպիսի տեսութիւն, որի միջով նայելիս ես կարողանայի իմ քմայքները մարդկութեան օրէնքները համարելու: Արդարամիտ լինելու համար պէտք է նկատել, որ եթէ Տոլստոյը երբ և իցէ կառուցել է մի տեսութիւն, որ արդարացնում է նրա քմայքները, այդ անձնուրաց սիրոյ տեսութիւնն է, որ իսկապէս ոչ մի յառաջադիմական բան չունի իր մէջ, այլ միայն մարդկութեան օրէնք է դարձնում իր ստեղծողի քմայքներն ու պակասութիւնները... Սակայն, դրա մասին՝ յետոյ. առաջ՝ հետեւենք և տեսնենք թէ որտեղ էր փնտռում Տոլստոյը իր հարցի պատասխանը: Երկար դեգերելուց յետոյ նա այս հետեւնեքին հասաւ, որ միակ խելացի պատասխանը նրան յոռետեսներն են տւել՝ Շոպենհաուէրը, Բուդդան և այլն, որոնք այս եզրակացութիւնն էին հանել, թէ կեանքը չարիք է: Տոլստոյի կարծիքով այդ եզրակացութիւնը մի տրամաբանական հետեւնեք միայն կարող է ունենալ—սպանել իրան: Բայց ինչպէս տեսանք առաջ, Տոլստոյը միշտ մտածում էր «սրտի դատողութեամբ», որ նրան բոլորովին այլ բան էր ասում: «Կենսական գիտակցութեան, կենսական զգացմունքի ոյժը ինձ հանեց յուսահատ դրութիւնիցս, ասում է Տոլստոյը, եւ ընդորովին այլ ուղղութիւն տւաւ իմ քանականութեան» (եւ եմ ընդգծել): Այդ ոյժը նրան դէպի այն աղբիւրն ուղղեց, որ միշտ զովացնում էր նրան՝ ուղղեց դէպի «իսկական բանւոր ժողովուրդը», որին սիրում է «տարօրինակ Ֆիզիկական սիրով»: Նա հասկացաւ, որ կեանքի իմաստը փնտռելու պիտի գնալ ոչ թէ այնպիսի մարդկանց մօտ, որոնք կորցրել են այդ իմաստը և դրա համար էլ ցանկանում են իրանց սպանել, ալլ այն միլիոնաւոր ապրած ու ապրող մարդկանց մօտ, որոնք ստեղծում և տանում են իրանց ուսերի վրայ մեր ու իրանց կեանքը: Նա հասկացաւ, որ «ժողովուրդի կեանքի իմաստը» նրա հաւատի մէջն է, մի բան՝ որ ամենքի կեանքի ոյժն է կազմում: Բայց ժողովուրդի կրօնը գոհացում չտւաւ նրան, և նա ստեղծեց իր հաւատը: Տոլստոյի համար այդ հաւատը մի նոր բան չէր: Այդ այն պատասխանի յետագայ զարգացումն էր, որ նա մանուկ օրերից սկսած մինչև ծերութիւն իր վէպիկներում դուրս հանած իրան ազգակից հերոսների բերանով տալիս էր «ինչո՞ւ» հարցին: Նրա բանականութիւնը չէր այդ պատասխանը եզրափակել:

այն զգացմունքը, որ ազատեց նրան ինքնասպանութիւնից, կասկածների և եռանդազին կրօն փնտռելու ծանր վայրկեաններին նրա համար հաւատ ստեղծեց: Ինչպէս Տոլստոյի վէպիկներում զուրս հանած նրան ազգակից հերոսներին և հէնց իրան Տոլստոյին շարունակ միւլնոյն լինչո՞ւ հարցն է տանջում, այնպէս էլ նրանք ընդ միշտ միատեսակ պատասխան են տալիս. բոլորն էլ այն հետեւանքին են յանգում, որ կեանքի միակ բանական իմաստը—*սէր-անճնուրացութիւնն* է: Դժուար չէ համոզել, որ ասածս ճիշտ է. դրա համար հարկաւոր է միայն իրար դէմ դնել մեծ ժամանակամիջոցով բաժանւած նրա երկերը, օրինակ՝ *Մանկութիւն*, *պատանեկութիւն* և *ջահիլութիւնը*, *«Կալաճատերի առաւօտը»*, *«Կողակները»*, *«Աննա Կարենինան»* և *«Մտքերը կեանքի մասին»*, ուր կարելի է հետամուտ լինել նրա կրօնական կամ անձնազոհ սիրոյ տրամադրութեան սկզբնաւորութեան:

Ջահիլ Կոլիա Իրտենեւը ամառները սովորաբար սրահումն էր քնում, որի առաջ փռւած էր այգին: «Երբ լրիւլուսին էր լինում, ասում է նա, ես յաճախ մահճիս մէջ նստած անցէի կացնում ամբողջ գիշերները մինչև լոյս անթարթ նայելով լոյս ու սուերներին, ուշադիր ականջ կախած լռութեան ու ձայներին, ցնորելով զանազան բաների մասին, մանաւանդ բանաստեղծական հեշտալի երջանկութեան մասին... Եւ ահա երեւում էր նա երկար սև հիւսով, ուռուցիկ կրծքով, միշտ վշտոտ ու գեղեցիկ, հոլանի թւերով և հեշտական գրկով: Նա ինձ սիրում էր, նրա սիրոյ մի բոլոր համար ես զոհում էի իմ կեանքը: Բայց լուսինն աւելի և աւելի լուսաշող կանգնում էր երկնքում. լճակի փարթամ փայլը, որ ձայնի նման աւելի և աւելի համաշափ զօրեղանում էր, աւելի պարզ էր դառնում, սուերներն աւելի մթազնում էին, լոյսն աւելի թափանցիկ դառնում. և նայելով ու լսելով այս ամենը, ինչ որ մի բան ասում էր ինձ, որ նա իր հոլանի թւերով ու փարթամ գրկով դեռ ամբողջ երջանկութիւնը չէ, որ նրան սիրելը դեռ ողջ բարին չէ. և որքան շատ էի նայում բարձր ու լրիւ լուսնին, այնքան ճշմարիտ բարին և գեղեցկութիւնը թւում էին ինձ աւելի և աւելի բարձր, աւելի

մաքուր և աւելի մօտիկ նրան՝ ամեն բարի ու գեղեցիկ բանի աղբիւրին, և ինչ որ չգոհացրած բայց յուզիչ ուրախութեան արցունքներ լցուում էին աչքերս: Առ այժմ այստեղ նկատենք զէպի սեռական սիրոյ զգացմունքն ունեցած այն վերաբերմունքի սկիզբը, որ ծերութեան հասակում հարկադրեց Տոլստոյին այդ զգացմունքը համարել «զագրելի» և «խողային»:

Տոլստոյի միւս՝ «Կաւածատէրի առաւօտը» վէպիկի հերոս իշխ. Նեխլիւզովը թողնում է համալսարանն ու բնակութիւն հաստատում գիւղում, որ անձամբ կառավարելով գիւղը բարձրացնի իր գիւղացիների մտային, բարոյական և նիւթական բարեկեցութիւնը: Նեխլիւզովը սովորութիւն էր դարձրել՝ վաղ առաւօտից գործով շրջում էր իր գիւղացիների տները: Մի անգամ այդպէս շրջելուց յետոյ նա տուն է դառնում խորապէս վշտացած, որ գիւղացիները թերահաւատ վերաբերմունք ունին զէպի նրա ծրագիրները:

«Մի՞թէ դատարկ բաներ էին իմ ցնորքները կեանքիս նպատակի և պարտականութիւններիս մասին», հարցնում էր ինքն իրան մտածկոտ: Միւս օրը, առաւօտը վաղ՝ ամենից շուտ վերկացաւ տանը և տանջւելու չափ յուզւած ջահիլութեան ինչ որ թագգրած, չարտապրած թափով, աննպատակ աչդին գնաց, այնտեղից էլ անտառը: Երկար թափառում էր անտառում՝ արբած մայիսեան հրաշալի բնութիւնից, իր զգացածի համար մի արտայայտութիւն փնտռելով ու չգտնելով: Մէկ ջահիլ երեւակացութիւնը նրան ներկայացնում էր կնոջ հեշտացոյց պատկեր, և թւում էր նրան թէ ահա, այս է իր չարտապրած ցանկութիւնը. բայց «վերին զգացմունքն» ասում էր նրան — այդ չէ: Մէկ էլ ջահիլ միտքը թեւակոխելով վերացման բնագաւառները, թւում էր թէ՛ գտնում է լինելութեան օրէնքները. բայց «վերին զգացմունքը» նորից ասում էր որ այդ չէ: Եւ միայն այն ժամանակ, երբ նա արտասանեց՝ սէր, անձնուրացութիւն, ահա ճշմարիտ, պատահմունքից անկախ երջանկութիւնը! Վերին զգացմունքը գոհացած էր և Նեխլիւզովը նոյնպէս արտասուեց և նոյնպիսի հիացքներ զգաց, ինչպէս Կոլեա Խրտենսկը:

«Կողակներ» վէպիկի հերոս Օլենինը մի անգամ որսի գնաց, մտաւ անտառի խորքը, և Կովկասի փարթամ բնութեան տակ օրօ-

դուն, յանկարծ լցեց անսահման երջանկութեան զգացմունքով և սիրով դէպի ամենքը: Այդպէս յանկարծակի էլ նա պատասխան է ստանում իրան այնպէս տանջող ու չարշարող և մարդու կոշմանը վերաբերող հարցին:

Երջանկութիւնը — ահա թէ ինչ է, անսպասելի կերպով խօսեց ինքն իրան. երջանկութիւնը ուրիշի համար ապրելն է: Եւ պարզ է այդ: Մարդուս մէջ երջանկութեան պահանջ կայ զրաժ — ուրեմն նա օրինական է: Եստիկանօրէն գոհացում տալով այդ պահանջին, կարող է պատահել, որ իր համար հարստութիւն, փառք, կեանքի շարմարութիւններ, սէր փնտռելիս՝ հանգամանքներն այնպէս բարդւին, որ մարդ անկարող լինի գոհացում տալ այդ պահանջներին: Հետեւապէս ոչ թէ երջանկութեան պահանջը, այլ այդ ցանկութիւններն են ապօրինի: Ո՛ր ցանկութիւններն են ուրեմն, որոնք կարող են, չնայած արտաքին պայմաններին, գոհացում ստանալ: Որոնք ֆն. սէրը, անձնուրացութիւնը, արտասանեց նա ուրախութիւնից չղփացած:

Նոյն հոգեկան դրութեան մէջ ընկաւ և Լևինը (Աննա Կարինինա). բաց այդ ոգով նա փոքր ինչ աւելի հեռու գնաց: «Մի ժամանակ, գրում է Տոլստոյը, Լևինը, Շոպենհաուէրի զործերը՝ կարդալով, նրա կամքի տեղ դրաւ սէրը, և այդ նոր փիլիսոփայութիւնը, քանի դեռ չէր հեռացել նրանից, մի երկու օր մտիթարում էր Լևինին. բաց այդ փիլիսոփայութիւնը այնպէս էլ խորտակեց, երբ նա յետոյ կեանքի՛ց նայեց նրա վրայ. այդ փիլիսոփայութիւնը նրան երեւաց մարմնաշ, չտաքցնող հագուստ: Լևինը 34 տարեկան էր, երբ Տոլստոյը նրա մասին ասում էր այդ խօսքերը: Նա յետոյ, երբ Լև Նիկոլաեիւն (Տոլստոյ)՝ ինքը հեռացաւ կեանքից և իր համար մի տաք բուն շինեց, նա արդէն ինքն իր կողմից զարգացրեց սիրոյ փիլիսոփայութիւնը: Միայն այժմ նա այդ փիլիսոփայութիւնը այլ ևս «մարմաշ, չտաքցնող հագուստ» չէր համարում: Ընդհակառակը, իր բնազանցութեան «մարմաշ» ուսարկուն գեղեցկապէս վրան նետելով, վսեմութեամբ սկսեց քարոզել, որ իր ուսարկուն միակ տաքցնող հագուստն է որ կայ: Արդէն իր կողմից նա քարոզում է, թէ ճշմարիտ, չաւտոնական բարին, որը չեն կարող խախտել տանջանքն ու մահը, սէրը, անձնուրացութիւնն է, որով.

հետեւ իւրաքանչիւրի՝ անձնական բարիքին ձգտելը ապօրինի է, քանի որ անհրաժեշտօրէն առաջ է բերում չարիք ու կոխ և վերջանում է անձնաւորութեան ոչնչացումով, ուստի և ինչ որ անբընական և անմիտ բան է: Սէրը վճռում է բոլոր հակասութիւնները և ամենաշատ բարիքն է տալիս, նա է դէպի կեանքն եղած միակ բանական վերաբերմունքը և ամեն պատճառների պատճառը, որովհետեւ գոյութիւն ունեցող բոլոր բաները մարդուս երեւում են՝ 1) որպէս նրա բանական պիտակցութեան վերաբերմունք դէպի աշխարհը, 2) որպէս վերաբերմունք նրա կենդանական գիտակցութեան դէպի աշխարհը, 3) որպէս նրա մարմնի նիւթի վերաբերմունք դէպի աշխարհը: Մարդս ոչ միայն բանականութեամբ է տեսնում, որ անձնուրաց սէրն ամենքի համար երջանիկ կեանքի պայման է, այլ և ամբողջ պատմութիւնը նոյնն է ցոյց տալիս. նա մեզ ուսուցանում է, որ մեր աշխարհն այդ օրէնքով է շարժւում, մի բան՝ որ ցոյց է տալիս լաւագոյն մարդկանց օրինակը, որոնք զոհում էին իրանց անձը և նոյնը սովորցնում ուրիշներին:

Ով արդէն ճանաչել է բանականութեան օրէնքը՝ անձնուրաց սէրը, նա չգիտէ մահւան երկիւղի ինչ լինելը. այդ երկիւղը մարդկանց այն պատճառով է բռնում, որ նրանք սարսափում են իրանց նսր կորցնելուց, եւր, որ նրանց էութիւնն է կազմում. ինչպէս մարդկանց, այնպէս էլ կենդանիների էութիւնը նրանց բնաւորութիւնն է, որը ոչ այլ ինչ է. քան սէր դէպի մէկը և ոչ-սէր դէպի միւսը: Բնաւորութիւնն այն առանձին նսն է, որի վրայ՝ ինչպէս առանցքի՝ անցեն կացրած ժամանակի ընթացքում եղած բոլոր յետագայ պիտակցումները. նա գոյութիւն ունի պատճառականութիւնից, տարածութիւնից և ժամանակից դուրս: Մեռնում են մարդիկ, բայց չի մեռնում նրանց բնաւորութիւնը, որի շնորհիւ նրանք ապրում են մեր յուշերի մէջ և մեզ բարձրացնում դէպի յաջորդ, աւելի բարձր աստիճանը: Մարդ այն պատճառով չի մեռնում, որ լսոց ունի կամ որ թոքերն են ցաւում, այլ մեռնում է, որովհետեւ նրա ճշմարիտ կեանքի բարիքն այս աշխարհում այլ ևս չի կարող շատանալ: Եթէ մենք ապրում ենք, կեանք ունինք, պատճառն իսկի այն է, որ մեզ պահում պահպանում ենք, այլ այն՝ որ մեր մէջ կատարւում է կեանքի զործը, որը բոլոր պայմաններն իրան է ստորա-

դասում: Իր կեանքի օրէնքը խախտելն է միայն մահն ու տանջանքները: Ով ապրում է ըստ իր օրէնքի, նրա համար տանջանք ու մահ չկայ: (Մտքեր կեանքի մասին. հատ. XIII, 83):

Կոմս Տոլստոյի այս տախտկալի բնագանցութիւնը շատ կողմից է հետաքրքրական: Նախ հետաքրքրական է այն պատճառով, որ Տոլստոյը նրան իր կրօնն է համարում, որովհետեւ նրա կարծիքով Վերօնը յայտնի վերաբերմունք է, որ դնում է մարդ իր առանձին անձնաւորութեան և անվերջ աշխարհի կամ նրա սկզբի միջև: Իսկ բարոյականութիւնը այն հանապազօրեայ ուղեցոյցն է, որ բըղխում է այդ յարաբերութիւնից<sup>1)</sup>: Բացի այդ, նա կարծում է, որ Վերօնը յայտնութիւնով կարելի է ճանաչել, այսինքն, ո՛ր թէ առանձին մարդու կամ մարդկանց ջանքերով և ուսումնասիրելով կարելի է ձեռք բերել, այլ միայն ըմբռնելով անվերջ բանախանութեան երևումը, որ աստիճանաբար յայտնում է իրան մարդկանց:

Ասածներինքս մենք կարող ենք համոզուել, որ Տոլստոյը իր կրօնին իսկապէս հասաւ յայտնութեան միջոցով, որ նա իսկապէս փորձեց յայտնի վերաբերմունք դնել մարդու և աշխարհիս սկզբի, այսինքն՝ անձնուրաց սիրոյ միջև: Մի քիչ յետոյ մենք կը համոզուենք նաեւ, որ Տոլստոյի բարոյականը իսկ որ ամբողջովին նրա կրօնից է բղխում:

Սիրոյ բնագանցութիւնը հետաքրքրական է և նրա համար, որ ցոլացնում է իր ստեղծողի անձնաւորութիւնը: Այս գրութիւնը մի քանի մեկնութեան կարօտ է: Յայտնի է, որ մարդու հոգու երեք տարրերը՝ խելքը, զգացմունքն ու կամքը կազմում են այն, ինչին մենք բնաւորութիւն ենք ասում: Ինչպէս տեսանք, Տոլստոյը զատեց ու վեր առաւ միայն մի տարրը՝ զգացմունքը, ասէր առ մէկը և ոչ-սէր առ միւսը՝ համարելով բնաւորութիւն: Այս որոշումը նա համարում է ճշմարիտ որոշում, իսկ, նրա կարծիքով, «ճշմարիտ հասկացողութիւն կեանքի մասին իւրաքանչիւրը ներքին փորձից է ստանում, մինչդեռ սուտ հասկացողութիւնը յենւում է իր և միւս արարածների մարմնի արտաքին դիտողութեան վրայ» (Մտքեր կեանքի մասին): Ես շատ անգամ մատնացոյց եղայ Տոլստոյի բնա-

<sup>1)</sup> Բարոյականութիւն և կրօն, հատ. XV:

որով թեան այն առանձնաշատկութեան վրայ, որ նրա բնաւորութեան մէջ զնկաւար դերը միշտ զգացմունքն է խաղացել: Պարզ է, որ ասաջնորդ ունենալով «ճշմարիտ մեթոդը» նա սկզբունքի աստիճանի բարձրացրեց իր բնաւորութեան առանձնաշատկութիւնը: Անձնուրաց սէրը (սիրին զգացմունքը) նա համարեց պատճառների պատճառը, աշխարհի կեանքը, Աստուծոյ, որից՝ ինչպէս կենտրոնից՝ շառաւիղների նման հեռանում ու հաւաքւում են բնութեան և մարդկային կեանքի բոլոր երեւոյթները:

Կոմսի բնազանցութեան ինքնակենսագրական բնաւորութիւնն աւելի ակնյայտնի կը դառնայ, երբ մենք ցոյց տանք այն իրական բովանդակութիւնը, որ Տոլստոյը մանկութիւնից սկսած պնդում է «սէր», «անձնուրացութիւն» հասկացողութեան մէջ:

Կոլեա Իրտենեւը իր դայեակ Նատալիա Սաւիչնայի մասին շատ անգամ է ասում, թէ շնորհ ամբողջ կեանքը սէր և անձնուրացութիւն էր: Յիշենք՝ Իրտենեւի կարծիքով՝ այդ դաշափարական կնոջ կենսագրութիւնը, որ տեսնենք թէ որքան հաւատարիմ է նրա բնորոշումը:

Իրտենեւի տասի կին սպասաւորներից մինն էլ ուրախ, լիք-լիք ու կարմրաթուշ Նատաշկան էր, որ աղախնութիւն էր անում, ու մի հեզ բարքի և ջանասէր աղջիկ էր: Երբ ծնեց Կոլեայի մայրը, հարկաւոր եղաւ մի դայեակ և, այդ պարտականութիւնը դրին Նատաշկայի վրայ, որ այդ պաշտօնում մեծ ջանասիրութիւն ու հաւատարմութիւն ցոյց տաւ: Սակայն Նատաշկան շուտով սիրեց սպասաւոր Ֆոկային և ցանկանում էր նրա հետ ամուսնանալ: Բայց պապը նրա ցանկութիւնը համարեց ապերախտութիւն և աքսորեց նրան հարաւի դաշտային գիւղերից մէկը՝ անասնանոցում ծառայելու: Բայց ոչ ոք չկարողացաւ Նատաշկին տեղը բռնել, ուստի՝ և վեց ամսից յետոյ՝ նրան՝ վերադարձրին՝ և նորից նոյն պաշտօնը յանձնեցին: Վերադառնալուն պէս նա ընկաւ պապի ոտները և երգեց, որ ընդմիշտ մտքից կը հանի իր յիմար ցանկութիւնը: Եւ նա իր խօսքի տէրն եղաւ. հոգով մարմնով իր տէրերին նւիրեց իրան: Միայն այդ ժամանակից սկսած Նատաշկան դառաւ Նատալիա Սաւիչնա: Նրա անձնուրացութիւնը այն տեղը հասաւ, որ երբ նրան քսան տարեայ աշխատանքի համար ազատման թուղթ տւին և

ամեն տարի 300 ո. թույլ կտուցին (ճորտերի այն ժամանակա-  
յամենափոքր պարգևը), նա չարացած ճգոտեց աղստման թուղթը  
և իր տմբող կեանքում առաջին անգամ լուրջ վիրաւորեց իր  
տէրերից, որ նրան առարկայ տեղից բարձրացնում, իրանց հաւա-  
սար մարդ էին անում: Մինչի մահ նստալիս Սաւիշնան, որին  
յանձնել էին և բանալիները, ամեն կերպ հեռու էր մնում տիրոջ  
սպասաւորների հետ բարեկամ դառնալուց, վախենալով որ հետ-  
ները թույլ վարւի և դրանով իր տէրերին վնասի: Մեռնելիս էլ նա  
հսկում ու պահպանում է տիրոջ սնդուկների և մատանների բա-  
նայիները և իր սեփական իրերից ամենաթանկագինները կտակում  
է իր տիրոջ որդիներին:

Նշուէս ուրեմն բանից երևում է, որ կարելի է տիրոջ հաւա-  
տարիւմ շունը լինել, կարելի է անհետացնել տարրական պահանջ-  
ներն ու մարդու արժանաւորութիւնը—և այնուամենայնիւ անձնու-  
րաց սիրոյ իդէալական մարմնացում համարել: Իսկ հիմա՞յ կը տես-  
նենք, որ ճորտատիրութեան ժամանակ աւելի հեշտ էր կեանքի մէջ  
սէր, անձնուրացութիւն մարմնացնող զաղափարական կալածատէր  
լինելը: «Վալաճատէրի առաւօտը» վէպիկում իշխ. Ներսիսեանը  
այդ տիպի մարմնացումն է: Ինչպէս յայտնի է, Լև Տոլստոյի այս  
հերոսը ոչ միայն անկապտելի է պահում ճորտերի վրայ ունեցած  
իր իրաւունքները, այլ նոյն իսկ չի էլ փորձում բարձրինացի  
ծանր լուծըթեթե հարկս դարձնել, որովհետեւ նա համակիր չէ  
այդ ու դրա նման զգայնութեան. նոյնպէս նա լիովին տեսլորդ է  
համարում, չնայած իր գիւղացիների հողի քչութիւնից զանգատ-  
ւելուն, նրանց վարելահողերն ու խոտհարները մեծացնելը: Սակայն  
իշխանը առանց սակաւ ինչ վարանելու ձեռնամերձ է լինում գիւ-  
ղական համայնքի մշակած հնաւանդ հողային կարգերին, գիւղա-  
ցիներին ամեն կերպ բարոգելով քարէ խրճիթների հետ նաև ազա-  
րակային անասնութիւն: Ասենք այդ արգելք չի լինում գաղափա-  
րական կալածատէրին մարդկային ցեղի բարեբարը լինելու. օրի-  
նակ՝ սիրով փող է տալիս կով առնելու. համար այն գիւղացուն, որ  
նոյն իսկ դարման չունի, ուր մնաց որ կով պահի. ինչպէս յարմար  
է դատում, այնպէս էլ աղքատներին փող ու հաց է բաժանում,  
շինութեան փաշտ է թողնում գիւղացիների տղամաղրութեան տակ  
և այլն, և այլն:

Ինչպէս յայտնի է ինքը Տոլստոյն էլ ճորտատէր էր և հարիւրով ճորտ գիւղացիներ ունէր: Ահա թէ ինչ է ասում իր մասին. «Երբ ես ճորտատէր էի և հասկացայ իմ դրութեան անբարոյական լինելը, ես աշխատում էի որքան կարելի է քիչ գործ դնել իմ ճորտատիրական իրաւունքները, այլ ապրել և թողնել մարդկանց որ ապրեն, այնպէս՝ որպէս թէ այդ իրաւունքներն իսկի չկան էլ»:

Հեղինակի այս ասածները համեմատելով այն տեղեկութիւնների հետ, որ 1859 թ. հաւաքել էին խմբագրական մասնաժողովները, «Գիւղացիների հարցը Ռուսաստանում XVIII և XIX դարի աւաջին կիսում» գրքի հեղինակ Վ. Սեմեւսկին ասում է. «Տոլստոյի յայտնի կալւածքում՝ Յասնայա Պոլեանա գիւղում, որ գտնւում է Տուլսայի նահանգի Կրասնոդոնսկից դաւառում, այն ժամանակ 204 գիւղացի տղամարդ կար և 41 հոգի տիրոջ տանը ծառայող (ДВОРОВЫЕ): Գիւղացիները հարկատու էին կալւածատէրին. ամեն համփա վճարում էր 30 ռ. ցանելու յարմար հող, ամեն համփայի ընկնում էր 2,82 դեսետին: Այս թւերն ինքն ըստ ինքեան դես. կատարեալ գաղափար չեն տալիս կոմս Տոլստոյի գիւղացիների դրութեան մասին: Բայց այդ դրութիւնը շատ է պարզում այն ժամանակ, երբ այդ տեղեկութիւնները համեմատում ենք այն տեղեկութիւնների հետ, որ վերաբերում են նոյն գաւառի միւս կալւածատէրերի կալւածների դրութեան (100 հոգուց աւելի ունեցող): Բանից երևում է, որ հողաբաժնի կողմից Տոլստոյի կալւածքը միջակներից է, իսկ առած հարկի մեծութեան կողմից նա բարձր է քան միջին չափը: Այդ գաւառի 25 կալւածներից, որոնք հարկ են տալիս եղել կալւածատէրերին և որոնց տւած հարկի քանակութիւնը մեզ յայտնի է, 17-ի վճարածը քիչ է, այն է՝ 13—15 ռ. համփայից, չորսը (չորսնց մէջ հաշւած և Յասնայա Պոլեանան) վճարում էին 30 ռ. և միայն երկու կալւածք աւելի էին վճարում (33 և 35 ռ.): Զալտի կարծել թէ քիչ հարկին միշտ համապատասխան էր և փոքր հողաբաժին. այդ կալւածներից մէկում, ուր գիւղացիները վճարում էին համփային միայն 13 ռ., ամեն հոգու (նաֆարի) ընկնում էր 3,04 դես. հող, այսինքն. աւելի քան Տոլստոյի գիւղացիներին. մի ուրիշի կալւածում, ուր համփան վճարում էր 14 ռ. 30

4., ամեն հոգուն մինչև անգամ 4,58 դես. հող էր ընկնում: Այսպէս ուրեմն, Տոլստոյի կալածում հարկի չափազանց մեծ լինելը չի կարելի արդարացնել հողարածնի խոշորութեամբ. իսկ գիւղացիներին կարելի էր աւելի հող տալ, որովհետեւ կալածատէրին այնքան էր մնում, որ եթէ բոլոր հողը յատկացնէին գիւղացիներին, ամեն մէկի ունեցածին 3,55 դես. կ'աւելանար:

Կոմս Լ. Ն. Տոլստոյի միւս կալածում, որ գտնւում էր Կուրսկի նահանգի Սուդժանսկի գաւառում և որը միայն նրան չէր պատկանում, այլ և քրոջն ու եղբօրը՝ Ն. և Ս. Ն. Տոլստոյներին, նոյնպէս առանձին ջանքեր չենք նկատում գիւղացիների դրութիւնը լաւացնելու մտքով: Այստեղ գիւղացիները քարշէինայի տակ էին և այն էլ ամեն հոգու 1,26 դես. ցանքի չարմար հող էր ընկնում և 3 սալ չոր խոտ. այդ թւում վարելահող մարդագլխի ընկնում էր ընդամենը 1,09 դես., որ բաւականին քիչ էր այդ գաւառի կալածներում եղած հողաբաժնի քանակութիւնից: Այս իրողութիւնները լիովին հիմնաւոր են դարձնում յարգելի պատմաբանի հետեւեալ նկատողութիւնը. «Որ այդ բոլորն այժմ լինէր, կոմս Տոլստոյը, իր գիւղացիներին մխիթարելու համար, երեւի նրանց կ'առաջարկէր իր «չարիքին չընդդիմանալու» տեսութիւնը, որ նա, որպէս կալածատէր, մարմնացնում էր իր անձնատրութեան մէջ. բայց հաւանօրէն այն ժամանակ դեռ չէր գտել այդ տեսութիւնը. իսկ ճորտատէրի «անբարոյական դրութիւնից» ազատելու ջանքեր դժբախտաբար մենք չենք նկատում: Այս նկատողութիւնը վիճելի է միայն մի կողմից. այդ աչնէ, որ դեռ այն ժամանակ Նատալիա Սաւիչնայի պէս մարդկանց գաղափարացնելով, Տոլստոյը թանձրացնալ ձևով արդէն քարոզում էր չարին չընդդիմանալու տեսութիւնը: Անկասկած է այս մի բանը, որ հէնց ինքն այդ տեսութիւնը իր գոյութեամբ լիովին պարտական է ճորտատիրութեան ժամանակներին, ճորտատիրութեան պրակտիկային: Միայն դրանով կարելի է բացատրել մթապօղ «Մտքեր կեանքի մասին» դրածքի թէկուզ հէնց հետեւեալ կտորը. «Երեխային կերակրող մայրը ուղղակի իրան, իր մարմինը կերակուր է տալիս երեխաներին, որոնք առանց այդ բանի չէին կարող ապրել: Եւ այդ սէր է (անձնութեան թիւն է): Հէնց այդպէս էլ (!) ամեն քանտոր ուրիշների քարիքի հա-

մար իրան, իր մարմինը տալիս է ուրիշին, աշխատանքի մէջ մաշելով նրան եւ հասցնելով իրան մահաւան դուռը (Երկեր, հատ XIII, էջ 30): Զգոելով մի բացարձակ ճշմարտութիւն դնել, Տոլստոյը նոյնացնում է կատարելապէս իրար հակադիր երկու երեւոյթ. գոհացում տալով քնախօսական պահանջին, մայրը իր մարմինը կամովին տալիս է իր որդուն որպէս կերակուր: Որքան մենք գիտենք չկայ մի աշխարհի բնախօսական պահանջ, որից զրգւած բանւորն իր մարմինը, իր աշխատանքի արդիւնքը տար զործատէրին: Եւ եթէ բանւորը ստիպւած է այդ բանն անելու, ատամների կրծտումով է այդ անում եւ միայն այն պատճառով՝ որ այդ են պահանջում աշխատանքի դարերով հաստատուած, աննորմալ հասարակական պայմանները: Ի մի խառնելով իմաստի կողմից աշխարհի հակադիր երեւոյթներ, Տոլստոյը մի անգամ եւ ցոյց տաւ, որ նրա կրօնական սկզբունքը՝ Սէրը, որ զաղափարացնում է տիրոջ օգուտի համար բանւորի ինքնոչնչացումը եւ որը կարողացել է արտայայտել Կոմսի ինքն իրան հակասելու մէջ, ոչ այլ դք է քան Տոլստոյ ուսմիւսարի երկերեակը՝ Տոլստոյ ճորատները: Այդ երկերեակը սարսափելի կնիք է դրել Կոմսի ամբողջ բարոյական պատկերի վրայ: Տոլստոյին յաճախ կնքում են հնացած, մաշւած ու քրքրւած ժողովրդասէր՝ կոչումով, մի հասկացողութիւն, որի մէջ ամեն մէկը իր իմաստն է դնում: Բայց եթէ նոյն իսկ նա ժողովրդասէր է, այդ էլ՝ բոլորովին առանձին մոքով:

Տոլստոյը այն ժողովրդասիրութեան միակ ներկայացուցիչն է, որ զաղափարացնում է բնական տնտեսութիւնն ու ճորտատիրութիւնը: Եւ ճիշտ որ: Ամենքին յայտնի է, որ Տոլստոյը գրամատիրութեան թշնամին է եւ՝ կատաղի թշնամին: Մինչդեռ գրամատիրութեան միւս թշնամիները՝ երկաթուղիները, մեքենաները, դրամը, վարկը եւ այդ տնտեսութեան միւս պարագաները համարում են ժամանակաւոր չարիք, որ պայմանաւորւած է հասարակական ոյժերի յայտնի խմբումով, մի խմբում, որ արհեստի եւ զիտութեան շատաչդիմութիւնը բացառապէս շահագործում է իր օգտին, Տոլստոյը գրամատիրական տնտեսութեան այդ դորձոնները համարում է քաղաքական չարիք:

Յայտնի է որ Տոլստոյը գրամատիրութիւնը քննադատելիս չենւում է ժողովրդի շահերի վրայ: Յանուն այդ շահերի նա լիովին

արդարացի կերպով պնդում է, որ դրամատիքութեան զարգացումը ոչ միայն ժողովրդին երջանկութիւն չի տալիս, այլ և աղքատացնում է նրան:

«Ոչ միայն Ռուսաստանում անկարելի է հարստութիւնը չափել օրավարձի աստիճանով, ասում է Տոլստոյը. այլ և համարձակ կարելի է ասել, որ Ռուսաստանում օրավարձի երեւալը հարստութեան և բարեկեցութեան քչանալու նշան է», որ «ժողովուրդին ամբողջովին, առանց բացառութեան, և իւրաքանչիւր ռուս մարդ անկասկած հարուստ կը համարի հարաւաբնակ գիւղացուն, որ կալում հին հաց ունի դիզած ու իր օրումն օրավարձ չի տեսել, և լիովին աղքատ կը համարի Մոսկւայի շուրջը բնակւող գիւղացուն, որ չթի բլուզ ունի հագին և միշտ բարձր օրավարձ է ստանում» (Երկեր, հատ. IV): Դրամատիքութեան դէմ Տոլստոյը մարտնչում է նաև այն պատճառով, որ նա բարդ աշխատակցութեան <sup>1)</sup> տիպի հանրակեցութեան ձև է, որոշակի արտայայտւած աշխատանքի բաժանումով: Այդտեղ նրան մանաւանդ զայրացնում է աշխատանքի տեխնիկական բաժանումը, որի դէմ, իմ կարծիքով, ոչ մի ասելիք չունի հասարակ աշխատակցութեան այնպիսի կողմնակից, ինչպիսին Նիկ. Միխայլովսկին է: Միխայլովսկին իր «Նամակներ այլ և այլ բաների մասին» գրքում մատնացոյց է լինում պատմական հեռանկարի այն սխալի վրայ, որ անում է Տոլստոյը, ցանկանալով ներկայի մէջ ներս խոթել ասպագայից մի ծւէն: Ինձ էլ է թւում, որ Տոլստոյը պատմական հեռանկարի մի սխալ է դործում. միայն ներկայի մէջ ուղղում է ներս խոթել ոչ թէ ասպագայից, այլ անցեալից մի ծւէն:

Նւ ճիշտ որ. ինչ է ցանկանում Տոլստոյը իր ատած դրամատիքութեան տեղը Հարկաւոր չեն ոչ մեքենաներ, ոչ երկաթուղիներ, ոչ վարկ, ոչ խոշոր արդիւնաբերութիւն, որովհետև այդ բոլորը

<sup>1)</sup> Ընկերակցութիւնը (կոօպերացիա) երկու հիմքի վրայ է լինում՝ հասարակ աշխատակցութիւն, երբ մի քանի մարդ միեւնոյն գործում իրար օգնում են միատեսակ աշխատանք կատարելով, և բարդ աշխատակցութիւն, որ կոչւում է նաև աշխատանքի բաժանում, երբ մի քանի մարդ իրար օգնում են զանազան տեսակ աշխատանք կատարելով՝ մի գործի կատարելը մաս-մաս անելով և ամեն մէկը մի առանձին մաս ընտրելով:

արգելում են, որ «մարդ իր բոլոր մարդկային պահանջներին գոհացում տալ իր սեփական ձեռքի աշխատանքով»: Թէ այն ժամանակ՝ աշխատանքի հասարակական կազմակերպութիւնը ինչ տեսակ կը լինի, Տոլստոյի համար այդ բոլորովին նշանակութիւն չունի: Այն հարցին թէ հարկաւոր է արդեօք կազմակերպել ֆիզիկական աշխատանքը, գիւղում՝ հողի վրա՝ ընկերակցութիւն կազմել, պատասխան տրւեց՝ թէ այդ ընդորոշ հարկաւոր չէ (եսեմ ընդգծել). աշխատաւոր մարդը ինքն իրան, բնականաբար չարում է աշխատաւոր մարդկանց գոյութիւն ունեցող ընկերակցութեան (Տես, «Գիտութիւնների և արւեստների նշանակութեան մասին», հատ. XII):

Ասենք՝ իշխ. Նեկլիւզովի օրինակից մենք տեսնք արդէն, որ կոմսը համայնքը չի համարում ժողովրդի գործառնութիւնների դէմ ամենաբոցժ տեղ և որ, ընդհակառակն, առանձնական ազարակային տնտեսութիւնը (Ֆերմա) նրան աւելի է դուր գալիս, այդ էլ հաւանօրէն այն պատճառով, որ համայնքի մասին ոչ մի բան չի ասւած *Maison rustique* գրքում, որտեղից իշխանը քաղում էր իրան պէտք եկած բոլոր տնտեսական իրէալներն ու տեղեկութիւնները:

Իշխ. Նեկլիւզովի միտքը աւելի ևս հաստատում է կոմս Տոլստոյը հաւատացնելով, որ գիւղացուն հարկաւոր է ուղիղ Յարշին հող, որ ձրի մշակ, «բանւոր» լինելն աւելի լաւ է, քան «տէր» լինելը, որովհետեւ առաջինն իր աշխատանքով ցոյց է տալիս անձնուրաց սէր, իսկ երկրորդը՝ ոչ, որ աւելորդ է բանւորի համար հող ու աշխատանքի գործիներ ունենալը, որովհետեւ տէրը և այն ունի և միւսը, իսկ նա պարտաւոր է տիրոջ համար աշխատել, որ Աստծուն հաճելի դառնայ (Տես, «Խնչքան հող է հարկաւոր գիւղացուն», «Իլիաս», «Տէր և բանւոր» և ուրիշ գրւածները): Բացի դրանից բաւական է, որ օրը չորս մաս լինի բաժանւած. 1) մինչև նախաճաշը, 2) նախաճաշից մինչև ճաշը, 3) ճաշից մինչև նախընթերցը և 4) նախընթերցից մինչև երեկոյ, «այնպէս, որ օրւայ մի մասը, այն է՝ առաջին մասը զնայ ծանր աշխատանքներին, երկրորդը՝ մտային աշխատանքին, երրորդը՝ արհեստային աշխատանքին և չորրորդը՝ մարդկանց հետ շարաբերութիւն ունենալուն: Այն ժամանակ, Տոլստոյի կարծիքով, կ'ունենայ աշխատանքի սուտ բաժանումը և

կը հասնի «Աստուծոյ թագաւորութիւնն աշխարհիս վրայ»: Ի՞նչ տնտեսական իրականութեան են համապատասխան սակայն Տոլստոյի այս իդէալները:

Ամենից առաջ մեր առջև պարզ պատկերանում է բնական տնտեսութիւնը առանց աշխատանքի տեխնիկական խիստ բաժանման, որովհետեւ այդպիսի տնտեսութեան մէջ բանւորն իր բոլոր մարդկային պահանջներին բաւականութիւն է տալիս իր ձեռքի աշխատանքով: Բայց աշխատանքի տեխնիկական բաժանման չլինելու հետ՝ չի ոչնչանում աշխատանքի հասարակական բաժանումը, որովհետեւ «բանւորներին» համար հարկաւոր են «տէրեր», որ առաջինները կարողանան արտաշնչտել անձնուրաց սէրը: Այսպէս ուրեմն, բնական տնտեսութեան հետ, մեր առաջ պարզ պատկերանում է և ճորտատիրական անիրաւութիւնը, ուր իրան զոհելու կարելիութեան և այն էակներին միջև, որոնց նա (բանւորը) սիրում է (!), զոհի համար ոչ մի խոչնդոտ չկայ:

Հաստատելով որ Տոլստոյը (թէ և անգիտակցաբար) գաղափարացնում է ճորտատիրութիւնը, ես ամենեւին չեմ մոռանում, որ Տոլստոյ ռամկավարը գիտակցաբար քարոզում է ճորտական դրութեան անբարոյական լինելը, որովհետեւ այդ բանը ստորացնում է մարդու արժանաւորութիւնը. չեմ մոռանում նաեւ, որ շատ յաճախ Տոլստոյը պնդում է, թէ աշխատանքի արդիւնքները պիտի աշխատողին իրանը լինեն: Բայց նոյն իսկ Տոլստոյ ռամկավարը իր տնտեսական իդէալներով աւելի չի բարձրանում, քան բնական արնտեսութիւնը, ուր կատարելապէս բացակայ է աշխատանքի տեխնիկական բաժանումը:

(Վերջը չաջորդ համարում):

## ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, Յ. — Ժողովրդի ընթերցանութիւնը, արտատպած  
«Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, 1897 թ. տպար. Մ. Ռօտինեանցի,  
66 էջ, գինը 25 կոպէկ:

Փոքր ինչ դիտողութիւն, և ամեն  
մէկը էլը նկատի, որ քաղաքակրթու-  
թեան բարիքները հաւատարապէս  
չեն բաժանուում մի ազգի, մի պե-  
տութեան, ամբողջ մարդկութեան  
մէջ: Հարստութիւնը մի ծալրում  
ունի Ռոտշիլդ, միւս ծալրում հողա-  
ղուրկ բանւոր, գիտութիւնները մի  
կողմից՝ ժամանակի մտաւնը բարձ-  
րութեան հասած մարդիկ, միւս կող-  
մում կատարեալ սղէտներ: Ճիշդ է,  
սկզբունքով ասած՝ ամեն մարդ ի-  
րաւունք ունի լոյսից օգտուելու, լոյ-  
սի մէջ ապրելու, բայց... հէնց այդ  
բայցն է, որ ստիպում է միլիոննե-  
րով մարդկանց խաւարի մէջ խա-  
րափելու: Այս ծալրերն իրանց մանր  
ու խոշոր պատճառներն ունեն, ո-  
րոնց մասին խօսելու տեղը չի: Այդ  
երեւոյթը մեր կեանքի մէջ էլ կա,  
թէ և ոչ ահնչափ աչք ծակող հակա-  
դրութեամբ: Մենք ունինք ահագին  
չափով տգէտ գիւղացիներ և բան-  
ւորներ, որոնք ծնւում են խաւա-  
րում, սնւում խաւարով և խաւարի

մէջ էլ մեռնում են: Այդ դասը զըժ-  
ւարանում է անմիջապէս ինքն իր  
համար լոյս ստեղծել. նրա ունեցած  
լոյսն աչն լոյսը չէ, որ կեանք է  
տալիս անկեանք արարածներին, որ  
գործ ու շարժում է մտքնում թմրած  
մարմնի մէջ, որ առաջ է մղում նրան  
իր շահերը ճանաչելու և բարիքը  
ըմբռնելու կողմը:

Այս նկատմամբ ժողովրդի ըն-  
թերցանութեան գործը ահագին գործ  
է, մեծ քանքերի և խորին ուշադրու-  
թեան արժանի: Մի ժողովրդի գրու-  
թիւնից է կախած մի ազգի վիճակը.  
ժողովուրդը տես՝ ազգը ճանաչի:  
Նա է ազգի հիմքը, խառնադիմու-  
թեան գլխաւոր նեցուկը. նա է միշտ  
թարմ ուժեր ծնում ազգի համար:  
Սոսկալի է աչն տգիտութիւնը, որի  
մէջ ապրում ու մեռնում է մեր ժո-  
ղովուրդը. այտք է ապրած լինէք  
այդ ժողովրդի մէջ, պէտք է չիւած  
լինէք նրա հետ, պէտք է տեսած  
լինէք այդ տգիտութեան արտապա-  
տութիւնները, որ ըմբռնէք սոսկալի

խօսքի իմաստը: Եւ թող ոչ ոք չըռ-  
տալ, որ առանց ալի գասը ճշմարիտ  
լուսով շարժելու և կենդանացնելու  
մենք կարող ենք մի կեսնք ստեղ-  
ծել: Մեր ծանրաշարժ ու թմրած  
կեանքը մեր ժողովրդի թմրած դրու-  
թեան արդիւնքն է: Ի՞նչ պիտի ա-  
նել, քնչ են անում միւս ազգերը,  
որոնք շատ են առաջ վազել մեզա-  
նից:

Օտար երկիրներում, մանաւանդ  
արտասահմանում, տասնեակ տարի-  
ներ է ինչ աշխատում են լուսն ա-  
ւելի լալն խաւերի մատչելի անել:  
Ահադին թուով գրադարաններ են  
բացել և շարունակում են բանալ,  
անհամար գրքեր են տպագրել և  
տպում են, ունեն նոցն իսկ գրադա-  
րանապետների վարժոցների և ժողո-  
վրդական համալսարաններ: Այն  
գրադարաններ հիմնող ընկերութիւն-  
ներ և ընթերցանութեան գործն ու-  
սումնասիրող մարդիկ: Ուսումնասի-  
րում են ընթերցող հասարակու-  
թիւնը, գրադարանների վիճակա-  
գրութիւնը և աղիպիսով սկզբունք-  
ներ մշակում ընթերցանութեան գոր-  
ծը ղեկավարելու համար: Այս շար-  
ժումը հետեողներ ունի և արտա-  
պաշտում է նաև (Խուսառտանում,  
որքան պալմանները նպաստում են,  
ուսումնասիրում են գործը, տպա-  
գրում են գրքեր, հիմնում են գրա-  
դարաններ, ընթերցարաններ, կի-  
րակնօրեալ դպրոցներ, կրկնողական  
դասընթացներ, գրապահաստներ և  
ալլն):

Շատ հակիրճ խօսելով այս ամենի  
մասին, հեղինակն անցնում է ուսու-  
ժողովրդի ընթերցանութեան գոր-

ծին, և նորաւ ունենալով ալն միտ-  
քը, թէ «Առկաւան հալերի հրա-  
տարակչական գործը սերտ կապերով  
ու պալմաններով կապած է լալնա-  
ծաւալ պետութեան կեանքի հետ»:  
Հեղինակի գլխաւոր նպատակն է  
խօսել «ժողովրդի ընթերցանութեան  
նիւթերի և սրանց տարածման մի-  
ջոցներին» մասին: Այլք առաջ ունե-  
նալով վերը բերած հանդամանքը,  
նա գլխաւորապէս ուշադրութիւն է  
դարձնում թէ ալի խնդիրն ինչ գրու-  
թեան մէջ է ուսու կեանքում և,  
օգտելով ուսու ուսումնասիրողների  
տաւած տեղեկութիւններից ու իրո-  
ղութիւններից, վերջն ալս եզրակա-  
ցութիւններն է անում:

Ռուս ժողովուրդը տարիների ըն-  
թացքում աւելի ու աւելի գրագէտ է  
դառնում, բայց իր հոգու ծարաւը  
չագեցնող գրքեր չատ չունի: Թէև  
և թէ եղածը ժողովրդի ձեռն ընկնէր,  
էլի մի բան դուրս կը գար, բայց  
դրան էլ խոչնդոտ է դառնում «հրա-  
տարակչական և գրալմաճառական  
գործի անկերպարան գրութիւնը»:  
Այն գրքերը, որոնց բերանաբաց  
սպասում է վաւառի ընթերցողը,  
մալրաքաղաքներում փթում են դա-  
րակներին վրալ, կամ փթով են  
ծախուում: Այս երևոյթի գլխաւոր  
պատճառը ցրիչներից օգտել չիմա-  
նալն է. գործին հմուտ, գործը սի-  
րող ցրիչը կարող է հրաչքներ անել  
գիրք տարածելու մտքով, եթէ գնող-  
ներին ծախելու հետ հասկացնի և  
դրքի արժէքը: Գրքերից դուրս ժո-  
ղովուրդը վերջերս զգում է նաև պար-  
բերական հրատարակութիւնների պա-  
հանջ, ուրախութեամբ կարդում ու

ստանում է թէ լրագիրներն և թէ մանաւանդ գունատր պատկերներն տուող հրատարակութիւններ. նա ալն լրագիրներն է միայն կարդում, որոնք թեթեւ լեզուով են գրած:

Չնայելով որ ժողովրդի ընթերցանութեան գործը շատ էլ մխիթարական զրութիւն չունի Ռուսաստանում, պետութեան չարուցած դժարութիւններն ու ձևականութիւններն էլ միւս կողմից են գործի ընթացքը դանդաղեցնում: Աչքի է ընկնում մանաւանդ մինիստրութեան հրատարակած ցուցակի անբաւարար զրութիւնը. ահտեղ նշանակած են լինում ժողովրդական գրադարաններում թողարկելի գրքերը <sup>1)</sup>: 1860—1890 թ. լոյս են տեսել 12,000 անուն գիրք, որոնցից միայն 1,600 տեսակն է թույլ տաւած ալդ ցուցակում: Եւ պարզ է. ֆիզիկապէս անկարելի է մի տարում լոյս տեսած գրքերը երկրորդ անգամ քննութեան ենթարկել: Այդ հանգամանքը շատ է փնտրում գործին և ստեղծում է ալն, որ մինիստրութեան ցուցակում չկան «ռուս նշանաւոր գրողներից շատ շատերը. դեռ աւելին, կ'աւելացնենք մեր կողմից, ալդ ցուցակում, ինչպէս ցուց տաւ «Русская Мысль» ամսագիրը երկու տարի առաջ, մոռացել էին զինել նոյն իսկ Սաղմոսը!... Պարբերական հրատարակութիւններից միայն մալրաքաղաքներում լոյս տեսնողներն միջից են ընտրութիւն արել, ալնպէս որ դա-

ւառական թերթը ըստ ալդ ցուցակի չի կարող լինել գաւառական ընթերցարանում! Ալդ ցուցակում առանձին խնամք չի նկատում գրքերի ընտրութեան նկատմամբ թէ որակի և թէ քանակի կողմից: Եւ ինչ խօսք սրանից չետու, որ ցուցակի գրքերը անբաւարար են ընթերցող դասի, մանաւանդ գիւղական դասի համար:

Ռուս ընթերցող հաւարակութիւնը գրքեր ընտրելու համար կալուն տեսակէտներ չունի. պատահական հովերը, օրաւ պահանջը, մասնաւոր ազդեցութիւններն և ալն մեծ դեր են կատարում ալդ գործում: Ընդհանրապէս նկատելի է ալս, որ ինքնուրոյն բեղեմորիստիկան աւելի շատ է կարդացում, քան թարգմանականը (սակաւ բացառութեամբ): Ալս երկու թիւերի պատճառը դժար է մանրամասնօրէն բացատրել: Ընդհանուր գործի վերաբերմամբ հեղինակը մէջ է բերում Ռուսակինի <sup>1)</sup> հետեւեալ եզրակացութիւնը. «Այլստաւորները քիչ են, գրքերը՝ քիչ: Սրանք անհերքելի իրողութիւններ են: Բալց ալստաւորները դեռ ալնքան քիչ չեն, որքան նրանց միութիւնը: Գրքերի, լաւ գրքերի թիւն ալնքան քիչ չէ, որքան նրանց դանդաղ տարածումը ընկերութեան, ժողովրդի մէջ»:

Ռուս ժողովրդի ընթերցանութեան գործում մեծ դեր է խաղում մի ինքնատիպ հիմնարկութիւն, որ

<sup>1)</sup> Որ և է գիրք, նախ քան մինիստրական ցուցակն ընկնելը, երկրորդ անգամ գրաքննութեան է ենթարկում:

<sup>1)</sup> Մանաւորապէս ժողովրդի ընթերցանութեամբ զբաղած ռուս գրող է:

ցանցել է ամբողջ երկիրը. լուբոշնի հրատարակիչներն են զբաղվում իրանց ցրիչներով. Նրանք ուսումնասիրել են ժողովրդի ճաշակի թույլ կողմերը և նրանց վրա էլ հիմնել են իրանց շահաւէտ գործը: Դրանց հրատարակութիւնները հոգևոր և աշխարհիկ նիւթերի մասին են՝ Սաղմոս, Վարք սրբոց, հէքիաթներ, էֆիմէր տխրեր, երգարաններ, վէպեր և այլն. ուշադրութիւն են դարձնում ամենից առաջ մակագրութեան վրա, որ ճշմարտութիւնն է լինի և ուշադրաւ, իսկ բովանդակութիւնը ինչ կ'ուզի լինի: Այդ մարդկանց հրատարակութիւնները ալիք երկու հակադիր ազդեցութիւն է կրում՝ ուսումնական գրականութեան և փողոցային, լատիականութեան ազդեցութեան տակ երկի՝ վերջերս նրանց գրացուցակում մտնում են ուսումնական գրողների երկերից: Այդ մարդկանց կազմութիւնը ցրիչների կազմակերպութեան մէջն է. չուլիսից մինչև Զատիկ վարձում են 120—150 ուսուցիչ ցրիչներ, գրքեր տալիս նրանց, որ տանեն տարածեն. և ուր չեն գնում ալ մարդիկ—Սիբիր, Արխանգելսկի, Կովկաս... Ցրիչները ուշադրութիւն են դարձնում գրքի արտաքինի վրա և մանաւանդ գնին են նախընտրել ինքն ըստ ինքնան հետաքրքրական չէ նրանց համար: Այդ հրատարակիչների հետ մրցելու համար կարծես՝ լուս են տեսնում Посредник-ի հրատարակութիւնները, որոնք բովանդակութեամբ առողջ լինելով, արտաքինով չեն չեն լուբոշնիների գրքերից:

Ժողովրդի ընթերցանութեան

գործում դեր է խաղում և ինտելիգենցիան, բայց դեռ փոքր չափերով աշխատում են ունենալ զեմստաւին ցրիչներ և գրապահաստներ. վերջերս ալ գործը սկսել է կենդանանալ: Ընդհանրապէս ալ գործում գաւառական ինքնավարութեան բարեբար դերը անփոխարինելի է:

Խօսելով հայերիս հրատարակչական գործի մասին, հեղինակը պահետեանքներին է հասնում, որ ալ գործին ձեռնամուխ են եղել առաջ տաճկահայերը: Ուշադրութեան արժանի է. Զ. Հրատարակչ. ընկերութեան գործունէութիւնը, ալ մտքին է լանցում, որ ժողովրդական գրքերը քիչ են և կարծում է որ պիտի շատացնել նրանց թիւը: Ընդհանրապէս ալ եզրակացութեան է գալիս, որ գրքերի զներն իջեցնելուց և լեզուի միօրինակութիւն մտցնելուց զատ, հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել ցրիչների վրա, որովհետեւ ցրելու գործի կազմակերպութիւնից և լաւ ընթացքից է կախած Հրատ. ընկերութեան գործունէութեան արդիւնաւոր. լինելը: Գրքովի զանազան մասերում նա առաջարկում է Հրատ. ընկերութեան, որպէս միակ կարող հիմնարկութեան. գրադարանների վիճակագրութիւններն ուսումնասիրելով և ալ միջոցներով գաղափար կազմել մեր ընթերցող հասարակութեան պահանջների մասին և բաւարարութիւն տալ ալ պահանջներին, թարգմանելու արժանի գրքերի ցուցակ հրատարակել՝ կարճ գրախօսական նկատողութիւններով և ալ:

Վերջին հատուածի վերաբերմամբ հետեւալ նկատողութիւնները կ'ա-

նենք. հեղինակն իբր աղբիւր ունեցել է Կենդրոնական գրավաճառանոցի գրացուցակը և Հրատ. ընկեր. տեղեկագիրը: Թէ առաջին և թէ երկրորդ աղբիւրից նա աչնալէս է օգտուում, որ մենք պիտի նրան հուստանք, առանց կարողանալու անձամբ ստուգել ասածի ճշմարտութիւնը: Օրինակ ասում է, որ Կենդրոնական գրավաճառանոցի ցուցակում նշանակած «գրքերից» մօտաւորապէս 125-ը դեռահասների ընթերցանութեան նիւթ կարող է լինել»։ Բայց թնչ գրքեր են ալդ ասածները, պարզ չէ մեզ համար: Կամ թէ՛ կաղմելով մի աղիւսակ և դասերի բաժանելով Հրատ. ընկ. լոյս ընծալած գրքերը, ցոյց է սալիս, որ, օրինակ, ժողովրդական գրքեր 8 հատ են տպագրել: Բայց որոնք են ալդ գրքերը, չենք կարող իմանալ: Մինչդեռ ալդ կարելի էր անել. հարկաւոր էր միաչն առաջին ցուցակի գրքերի առաջ թւանշաններ դնել, իսկ երկրորդ ցուցակի գրքերը ցոյց տալ իրանց համարներով, և մենք կարող էինք ոչ միաչն անձամբ հաւու լինել հեղինակի ասածներին, ալ և կարող էինք ծանօթանալ նրա զնահատութեան չափի հետ, մի բան՝ որ մեզ համար ալծմ մութն է և կարեւոր է:

Մենք հաւանօրէն առիթ կ'ուսենանք ալս գործի մասին մանրամասն խօսելու, աչն ժամանակ հանգամանօրէն կը նալենք գրքուկի վերջին հատածի վրալ և հեղինակի մի քանի կարծիքները կը վերլուծենք: Մեզ մնում է ողջունել ալս առաջին փորձը և ցանկանալ, որ նա միակը

չմնալ, ալ ունենալ շարունակող: Ահա մի գործ, մի ստալարէլ, որ կարող էր մի թարմ ու եռանդուն ուժ կլանել. ուսումնասիրել ժողովրդի ընթերցանութեան գործը օտար երկիրներում, Ռուսաստանում և մեր երկրում, ցոյց տալ ալդ գործի չալողութեան պալմանները և արգելքները, գաղափար տալ օտար ու մեր ժողովրդի պահանջների մասին ալդ նկատմամբ, միթէ սա ժամանակակից պահանջների ծնունդ չէ, միթէ սա առաջնակարգ կարիք չէ մեզ համար: Եւ միթէ ժամանակը չէ ալս գործը զբաղմունք չինելու, ալս գործի մասին լուրջ մտածելու: Չէ որ «ալս խորհրդաւոր դարում, երբ շողին ու ելեքտրականութիւնը ալեն տեւակ նպատակալմար ու սրընթաց լարաբերութեան մէջ են դնում հեռաւոր երկիրներ, երբ մի կողմից լուսուլ ճառագալթները թալանցում են ցարդ անթալանցիկ համարած մարմինների խորքերը, միւս կողմից մեքենալ են հնարում հողու խորքերը մտնելու, մարդու սիրտը կարդալու, ալ ևս չի կարելի ասիական դանդաղութեալ և պատահականութեամբ գործել» (ժող. ընթերց. էջ 9):

Գործի կարեւորութիւնն էր, որ ստիպեց մեզ երկար կանգ առնել ալս գրքուկի վրալ՝ կրկնելով մի անգամ ասածը և չիչեցնելով մի անգամ կարգացածի մասին:

Խորհուրդ ենք տալիս ալս խնդրով հետաքրքրողներին՝ ձեռք բերել պ. Տէր-Միրաքեանի ալխատասիրութիւնը. ոչ ոք ժամանակը զուր չի կորցնի կարդալով ալս գրքուկը:

Ն. Աղբալեանց

ԱՇԽԱՐԻՄՈՎԱ. «Շառաւո», Թարգմ. սուսերէնից օր. Ն. Փ., Մոսկւա, տպր. Բարխուդարեանի, 1896 թ. 23 էջ, գինն է 5 կոպ.

ՍԼԻՎԵՅՆԻ. «Շապալաւա», Թարգմ. օր. Նունէ Ղուլիջանեանցի, Թիֆլիսի Հ. Հ. Ը. տպր. Շարաձէի, 1896 թ. 36 էջ, գինն է 7 կոպ.

ՍՄԻՐՆՈՎԱ. «Անտառապահը», Թարգմ. սուսերէնից, Թիֆլիս, տպր. Մարտիրոսեանցի, 1896 թ. 69 էջ, գինն է 12 կոպ.

Այս երեք գրքոցն էլ գրած են մանուկներէ համար, նրանց կեանքից են և, բացի մէկից, բարոյակրթիչ տեղեկանքի առնեն. Դեռահասներին վերաբերեալ գրականութեան տեսութիւնը կարելի է դեռ անմշակ համարել: Տակաւին վիճելի է համար. առում նաև, թէ արդեօք զեղարեւտական, թէ բարոյակրթիչ նշանակութիւնը պէտք է աւելի ծանրակշիռ համարել ազգային արտադրութիւնների մէջ: Սակայն քանի զնում աւելի հակում են առաջին ուղղութեան կողմը, մանաւանդ որ, ինչպէս հանճարաւոր բանաստեղծեր ու մանկավարժներ վաղուց հետէ նկատել են, բարոյակրթական ակներև դիտարկութիւնը հակառակ հետեանք է առաջացնում, դժկատակութիւնն պատճառ լինում: Ընտիր վիպագրութիւնը խօսքի միջով է հասկացնում իւր միտքը:

Միւս կողմից՝ շատ աչքի է ընկնում, որ այս կարգի հեղինակները դեռահասների համար գրելով՝ գլխաւոր գործող անձեր աննշան բացառութեամբ մանկական ու պատանեկական հասակից են ընտրում: Բայց ինչո՞ւ. միթէ արողընթաց ու բազմակողմանի զարգացման հոսանքի մէջ

գտնող մանուկը պէտք չի զգում նաև հասակաւորների իղէալական շրջանում երևակաութիւնով գոհելու, նրանց խնդակից ու վշտակից լինելու: Միթէ մանկավարժութիւնը սխալ ուղղութեան է հետևում, որ դեռահասներին ուսուցանելով ազգային ու ընդհանուր պատմութիւն, աւելի բարձր ու բարդ կենսական երևույթներ է ներկայացնում նրանց: Այդ միակողմանի ուղղութիւնը աւելի նկատելի է նորատիպ մանկական գրողների երկերի մէջ, որոնք հետամուտ են եղել ընդհանուր գրականութիւնից դուրս մի ինքնատիպ գրականութիւն կազմելու: Այս ինչպէս երևում է, այս վերջին տեսակի արտագրութիւնները կարողութիւն չունենալով իրանց զիրքը պահպանել, հետզհետէ պիտի վանեն այն շրջանից, որի մէջ առանց պահանջա՞ծ իրաւունքն ունենալու մտել էին. նրանք կը չէզոքանան ու մոռացութեան կը դատապարտւին <sup>1)</sup>:

Խոտանալով, որ առաջիկայում

<sup>1)</sup> Օր. Դերմանիաւում լատիապէս դեռահաս օրիորդների (Backfische) համար կին գրողների մի առանձնալատուկ դասակարգ է առաջացել:

մի խողածով աւելի ընդարձակ գաղափար տամ աչս տեսութիւնների մասին՝ առժամանակ այսքանովս բաւականանամ ու դառնամ վերսկիւած գրքովներին:

Վերսկիւած հալեցակետներին նախելով նրանց բովանդակութիւնը՝ տեսնում ենք, որ բարոյակրթիչ միակողմանի տեսողենցիակն ամենից շատ հետամուտ է «Շառատը», ապա «Անտառապահը», իսկ ամենից վտու՝ «Նապաստակը»։ Սակայն շտապեմ թիւրիմացութեան տեղիք չտալու համար զիտել, որ այս հանդամանքը նրան ոչ թէ չի բարձրացնում միւսների առաջ, այլ նւաստացնում է։ Ուրեմն թնշալէս հաշտեցնել այս վերն առածներին հետ Բանն աչն է, որ քստ իսկ «Նապաստակը» ոչ ալդ նպատակին կարող է ծառայել և ոչ ուրիշ։ Ալդ կենդանին պատահած բանը կռծոտելով կատարեալ պատիժ է դառնում բոլոր տանեցիների զլխին և առանց աչս էլ կամակոր Սարգսին աւելի ևս միջոցներ է տալիս անկարգութեան, նորանոր առիթներ ներկայացնում՝ երես առաժի նաղ ու տուգերն անելու։ Գուցէ հեղինակը դիտաւորութիւն է ունեցել աչս կենդանու մասին բանաստեղծական ձևով զաղափար տալ մանուկներին։ Բալց աչս տեսողենցիան էլ ընդունելի չէր կարող համարել, քանի որ նա միայն սահմանափակ ու միակողմանի գաղափար տւած կարող էր լինել։ Մի ձեռքով երկու ձեռքով բռնելը գրական աչս ձևի արտագրութիւնների մէջ էլ չի լաջողում։ Նապաստակի արկածները աչսպիսի ձևով էլ չեն

նկարագրւած, որ օրինակ հէքեաթի պէս գրաւիչ լինէին։ Թարգմանութիւնը ընդհանրապէս լաջողւած պէտք է համարել։ Նկատելի են մի քանի խորթ ոճեր. «նապաստակը սպասողական դէմք առաւ» (պէտք էր աւանջները սրեց ու սպասողական զիրք բռնեց)։ «Չոգւոց քաչեց» (պէտք էր հանեց, «ախ քաչեց» ասում են), և մի քանի ուրիշներ։

Գալով «Շառատին» նրա մէջ Տիգրանիկի ու Լեոնիկի իրար լաւութիւն անելու ցանկութիւնովը աչսքան չի շեշտում բարոյակրթիչ տեսողենցիան, բալց երբ Լեոնիկը լսում է, որ իւր մալը կարող է հաղից մեռնել, նա իրան կորցնում է, ամէն բան մոռանում է ու «քարացած» մնում։ Նորա մօր հազը «խոր խոցում է» սոյա «սիրաը» և աչս։ Միւս կողմից Տիգրանիկը, որ առաջ աչսպէս գիշեր ցերեկ երազում էր, թէ ինչ միջոցով պէտք է ձեռք ձգել ալդ քուռակը Լեոնիկին զրկելով, ու վերջը տեսնելով, որ իւր ընկերը չկարողացաւ գնել, ինքն է գնում։ Բալց ապա իմանալով, որ Տիգրանիկը Շառատի համար հաւաքած դրամը հիւանդ մօր ապաքինմանն է ծառայեցրել, քուռակին նրան է նւիրում։ Ոչ միայն աչս «երես տւած»ից զժաւար էր սպասել ալդպիսի ոգեկան ուժեղ շարժառիթներ, այլ և մանկական աշխարհից ընդհանրապէս։ Եւ աչս երբ մանուկ ընթերցողը իւր և գործող անձերի մէջ անանցնելի վիճ է տեսնում, կամ կասկած է ընկնում նրա սրտի մէջ և կամ թէ չէ՝ նա կարողացածին հաւատ ընծալելով՝ չուսահատում է։

Լեզուական տեսակետից մի քանի բաներ աչքի են ընկնում: Ունենալ բազմ երբեմն կրաւորակերպ, երբեմն ներգործակերպ վերջաւորութիւններով է գործածւած: «Եթէ հալոս թող իր տալ» նախադասութեան մէջ ստորագծած մասնիկը աւելորդ է: «Տիգրանիկը խփեց սիրունիկն» (արեւտական ձի), պէտք է տրական, որովհետեւ սպանելու մտքով չէ:

«Անտառապահ» համանուն հերոսը փախում է մեծահոգութիւնով ու բարեսրտութիւնով, իսկ մանուկ գործող անձը՝ նախ անմիտ, կործանիչ չարութիւնով, ապա անտառապահի մեծահոգութեան, նրա օրինակելի բարեգործութեան շնորհով՝ զղջում է և փոխանակ նրա ու

նրա հիւանդ, որը սանիկի անբախտութեանը պատճառ լինելով՝ ձիգ է թափում և չաջողւում է նրան աչք բանի առաջն առնել:

Հոգեբանական շարժառիթները լաւ են ընտրւած, սրանց նկարագրութիւնը, հետեանքները հմուտ գրչով են կատարւած. ընթերցողին գրաւում է ալս գրքովը, հասակաւորն էլ բաւականութիւնով կարդում է. Այս վերջին հանգամանքը մանկական զբաւածքի փտահիւլի փորձաքարն է համարւում:

Թարգմանութեան մէջ մի երկուսիսալ ոճեր են նկատուում. մալրենի լեզուի ոգին սակաւն, գերակշիռ է:

Յ. Տ.-Մ.

ВЕСЕЛОВСКИЙ, Юрий, „Стихотворные переводы“, вып. I, Москва, 1898 թ. 76 էջ, գինը 50 կոպեկ:

Թարգմանութիւնները երկու նպատակ ունին. կամ թարգմանիչն ուզում է մալրենի զրականութիւնը հարստացնել, կամ համազդի ընթերցողներին ծանօթացնել օտար գրականութեան հետ: Մենք զեռ ալնքան նոր ենք զարթնել «ասիական թըմութիւնից», զեռ ալնքան մանուկ զրականութեան ու կեանքի տէր ենք, որ զարմանալու բան չկայ, եթէ օտար գրականութիւն հարստացնելու համար ոչինչ չունինք ուրիշներին առաջարկելու: Պարզ է, որ շատ բան տեսած ուսա գրականութեան համար մեր զրականու-

թիւնը միայն հետաքրքրական կարող է լինել: Ահա հէնց մի աղապսի հետաքրքրութիւն է ուզում ստեղծել և եղածին ձգտում է գոհացում տալ իւրիշ վեոելովսկին:

Այդ նպատակը նոր չէ թարգմանչի համար. մի քանի տարի սրանից առաջ Մ. Բերբերեանի ընկերակցութեամբ նա լոս ընծակեց „Армянские беллетристы“ խորագրով մի աշխատութիւն, ուր զետեղած էին մեր հեղինակների երկերից կտորներ: Այդ ձեռնարկութիւնը զբաղաւորաբար անբաղդ վախճան ունեցաւ: Մեր զրախօսելիք գրքովը

մի նոր փորձ է, որ անում է Իւր. Վեհաօրհնի ռուս հասարակութեանը մեր չափածոյ գրականութեան հետ ծանօթացնելու նպատակով: Հարկաւոր է ակտեղ նկատել, որ այս գրքովը ոչ միայն ռուսներին է ծանօթացնելու մեր գրականութեան հետ, այլ և, ամօթ է ասել, մեր հասարակութեան մի ստւար մասին, որովհետեւ աղ ժամը ոչ միայն իր գրականութեամբ չի սնում, այլ և չգիտէ իսկ թէ ինչ ունի, որովհետեւ իր մաշինի լեզուն չգիտէ:

Թարգմանիչը ճիշտ է նկատում լատաճարանում, թէ իր գրքովը անշուշտ չի կարող «լրիւ գաղափար տալ ժամանակակից հալ բանաստեղծութեան մասին» և որ ինքը «ցանկանում է առաջին քայլն անել» և ցոյց տալ, «որ հալ բանաստեղծութիւնն էլ զուտ գեղարեւոտական երկեր ունի»: Այդ նպատակով նա 34 թարգմանութիւն է զրել իր գրքովում հետեւալ բանաստեղծների երկերից՝ Նատուրեան (14 կտոր), Շահ-Աղիզ (8 կտոր), Յ. Յովհաննիսեան (6 կտոր) Լեռնաց (5) և Դուրեան (1 կտոր): Յոս ունենալով, որ նպատակի կողմից այս միանգամայն գովելի ձեռնարկութիւնը ժամանակով «երկրորդ քայլն» էլ կ'ունենալ, տեսնենք ինչպէս է արւած «առաջին քայլը»:

Անկասկած գովելի է թարգմանչի եռանդը, ջանքը և մանաւանդ նպատակը. բայց այս էլ կա, որ մարդիկ շատ համակրելի նպատակներ են ունենում, բայց չեն կարողանում հասնել նրանց. զանազան աննպաստ հանգամանքների շնորհիւ, որոնք մասամբ անձնական են լի-

նում, մասամբ անձից դուրս: Այդպիսի մարդ է այս ղէպքում և Իւր. Վեհաօրհնի: Նրեում է որ և՛ ցանկութիւն կալ և եռանդ, բայց ինչ արած, որ լաջողութիւնը հեռու է փախչում...

Ասած է՝ «լուսնի տակ նոր բան չկայ», բայց ամեն բան նոր է, նաեւ թէ որ կողմից է մարդ նախում: Դարերի մշուշից սկսած մինչև ալսօր ո՞ր բանաստեղծը սէր չի երգել, ո՞վ չի հիւսել բնութեան գեղեցկութիւնը դիտելիս, քանի՞ քերթողներ են հայրենասիրութիւն երգել, բայց նրանցից ամեն մէկը մի տեսակ է զգացել, իր աչքով է նախ երևութիւնների վրայ, ուստի և իր տեսակ երգել: Քանի քանի նկարիչների վրձին է բանել Աստուածամօր սլափերը ստեղծելու համար, բայց և աչնալս ամեն նկարիչ իր հոգին է զրել նրա աչքերում, իր ցանկացած ու երևակայած դիրքն է տւել նրան, իր մտատիպարի նման ստեղծել: Այդ է արեւստագէտների տարբերութեան հիմնական տեղը: Նրանք շատ անգամ ոչ աչնքան իրանց ընտրած նիւթերով են տարբերում, որքան իրանց տեսողութեան անկիւններով: Զգացմունքի խորութեան, ըմբռնելու ուժի, թափանցելու կարողութեան, ճաշակի նրբութեան, զրդումների տարբերութեան աստիճանները հիմք են դառնում բանաստեղծների տարբերութեան: Այսպէս տարբեր բանաստեղծ է Շահ-Աղիզը, տարբեր Յ. Յովհաննիսեանը և Նատուրեանը. և թարգմանչի առաւելութիւնն աչն է, որ ղգալ աչդ տարբերութիւնը և արտաւայտել կարողանալ: Այդ չի

կարողացել անել իւր. վեսելովսկին.  
 նրա թարգմանութիւնների մէջ մենք  
 չենք տեսնում բանաստեղծների  
 ինքնուրոյնութիւնը պահպանած. նա  
 բոլորին մի չափարարի է բերել:  
 Մենք ունինք հայերէնից թարգմա-  
 նութիւններ, բայց չունինք Շահ-  
 Աղիզի, Յ. Յովհաննիսեանի, Ծա-  
 տուրեանի բանաստեղծութիւնների  
 թարգմանութիւնը: Ամեն փոքր ի  
 շատէ ճաշակի տէր մարդ իսկույն  
 կը զգայ այս պակասութիւնը իւր.  
 վեսելովսկու գրքուկը թերթելիս:

Բայց գոնէ հաւատարիմ է թարգ-  
 մանութիւնը մտքի կողմից, կը հարց-  
 նեն մեզ: Յաւելով պէտք է տեսնք,  
 որ այս կողմից էլ շատ են կաղում  
 թարգմանութիւնները: Ահա ձեզ օրի-  
 նակներ.

Въ тиши вдыхалъ я грудью  
 жадной

Цвѣтовъ роскошныхъ ароматъ...

И, освѣженъ росой прохладной,

Дремалъ такъ мирно чудный

садъ...

հաւ բնագիրը. (Հիւսիսափայլ, 1861,

№ 4.)

Ամբոսական ծաղիկներ վառ.

Անուշութիւն էին բուրում,

Եւ երկնքի ցոյ կենարար

Բնութիւնն էր զովայնում:

Բայց վերջին տունը շատ աւելի ան-  
 չաջող է.

И пѣлъ я съ чистою душою

Всѣ пѣсни скромныя свои...

Я пѣлъ о родинѣ порою,

О чувствѣ искренней любви...

բայց անտէք բնագիրը.

Ես անխռով երգում էի,

Իմ երգըս սուրբ և մաքուր էր,

Ազատութիւնն էի երգում,

Հալընէիքի պարծանք ու սէր:

Բաւական է ուշադիր նայել վեր-  
 ջին տան վրայ, որ տեսնէք թէ ինչ  
 տարբերութիւն ունի բնագրից և  
 նոյն իսկ սրբան անհեթեթ բաներ  
 կան առած թարգմանութեան մէջ.  
 Ես երգում էի, ասում է, իմ բոլոր  
 համեստ երգերը... Էդ հօ լուսացաւ!...

Կամ Յ. Յովհաննիսեանի բանա-  
 ստեղծութիւնից՝ <sup>1)</sup>

Когда же ты съ любовью взгля-  
 нешь

Ты будишь свѣтлыя мечты...

Скажи,—меня ты не обманеши

И въ горѣ пожалѣеши ты?...

Բայց բնագրում՝

Դու ալիմ իբրեւ նոր արշալուս

Ինձ նոր բախտ ես գուշակում.

Սիրուն մանուկ, ցաւած հոգում

Արդեօք դու էլ չես իտարում...

Ո՛րտեղից որտեղ:

Թարգմանիչ-բանաստեղծը շատ  
 դժւարութիւններ պիտի տալ-անցկե-  
 նալ՝ չափ, լանդ, բնագրին հաւաստա-  
 րիմ լինել և այլն. ուստի կարելի է  
 թույլ տալ, որ նեղն ընկած ժամա-  
 նակ իր կողմից խօսքեր աւելցնի.  
 Բայց այս դէպքում պիտի դրած խօս-  
 քերը դէմ չլինեն թէ բանաստեղծի  
 և թէ բանաստեղծութեան ոգուն:  
 Մանաւանդ պէտք է աջակցի խօս-  
 քեր վեցի, որոնց համար բանաս-  
 տեղծը կարող է պատասխանատու  
 լինել: Արդպէս չի արել մեր թարգ-  
 մանիչը. օրինակ՝

Ударивъ по струнамъ, повѣ-

дай снова міру

<sup>1)</sup> Բանաստեղծութիւններ, էջ 43:

О грезахъ пламенныхъ, какъ  
въ прежніе года!

Բնագիրը՝

Ոսկի լարերին դու ոգևորած

Զարկիր մատներով, թող դար-  
ձեալ հնչեն: (Բան. Յ.Յ. ի էջ 97).

Մենք չգիտենք թէ երգիչը առաջ  
«բոցոտ անուրջների» մասին էր մեզ  
հետ խօսում. ընդհակառակը, ինչ-  
պէս երևում է, նա առաջ օրհներգում  
էր «գործերը բարւոյ և կարեկցու-  
թեան»:

Կամ նոյն բանաստեղծութեան առա-  
ջին տողը՝

Не оставляй, пѣвецъ, отъивчи-  
вую лиру

բնագիրն ասում է՝

Մի թողնիր, երգիչ, քնարդ կախած.  
Եւ լաւ էլ ասում է: Եթէ քնարը  
արձագանք տալու ընդունակ լինէր,  
էլ ինչ կարիք կար կոչում անելու  
թէ «մի թողնիր, երգիչ, քնարդ կա-  
խած...»

Ծառուբանի «Երգ և մետաղ»  
ոտանաւորից՝

Ты кѣ пѣснѣ любви равнодуш-  
но была,—

բնագրի մէջ՝

Երգչի երգը մերժեցիր.

Պարզ է, որ ալ բան է ասում թարգ-  
մանիչը, ալ բան՝ հեղինակը. երգ և  
մետաղի միջև ընտրութիւն անող  
աղջիկը ալ բնաւորութիւն ունի  
մէկի տողերում, ալ՝ միւսի. երգիչը  
երգ է նւիրել, Ծառուբանի կըշ-  
տամբանքին արժանացած աղջիկը  
մերժել է. աչսինքն ուշադրութիւն  
դարձրել է, բայց աւելի լաւ է հա-  
մարել ոսկին. մինչդեռ թարգմանու-  
թեան մէջ աղջիկը անտարբեր է

երգչի երգի վերաբերմամբ...

Մի վերջին օրինակ էլ.

О, придетъ-ли когда мигъ же-  
лаемый любви?!

Дашь-ли волю ты мнѣ свои  
грезы излить?

И любви поцѣлуй суждело-ли,  
скажи,

Съ этихъ розовыхъ губъ мнѣ  
въ отвѣтъ получить?!

Իսկ Ծառուբանը գրում է.

О, օրհնեալ լինի աչն քաղցրիկ  
րոպէն,

Երբ քեզ բոցավառ պատմեցի իմ  
սէր,

Եւ վարդ-շրթունքիցդ սիրոյս փո-  
խարէն

Ես մի ջերմ համբոյր ստացալ  
նւէր...

Ինչպէս տեսնում էք, բանաստեղծը  
համբոյրն առել պրծել է և օրհնում  
է համբոյր ստանալու րոպէն, իսկ  
թարգմանիչը դեռ երազում է համ-  
բոյրի մասին...

Վիչ շատ լաջողել են մի քանի  
թարգմանութիւններ. աչպէս Ծա-  
ռուբանից՝ «Ներիք է որքան բաղ-  
դը խաբուսիկ» (Բանաստ. էջ 57),  
«Սիրելի հս, նւիրական դու իմ  
քաղցր հալւենիք» (էջ 69), Յ. Յով  
հաննիսեանից՝ «Եւ աչս դարուն  
կ'անցնի շուտով» (Բանաստ. էջ 89).  
Մի աչքի ընկնող պակասութիւն կալ  
աչս ոտանաւորի թարգմանութեան  
մէջ. բանաստեղծն ասում է.

Միաչն սէրը միշտ կը մնալ

Իմ սրտումը կենդանի.

Ոչինչ սիրող սրտի վրալ

Բռնանալու ոչ է չունի:

Իսկ թարգմանիչը՝

Но не умретъ моя любовь!

Ее въ душѣ храню я страстно...

Ее изгнать изъ сердца вновь

Теперь ничто, ничто не властно...

Բանաստեղծն ասում է, որ «սէրը միշտ կը մնա՛ կենդանի» և հասկացւում է, որ միշտ էլ կենդանի է եղել. մինչդեռ թարգմանչի խօսքերից երևում է, որ առաջ սէրը արտաքսւած է եղել, իսկ աչտուհետև ոչինչ չի կարող նորից արտաքսել... Այդպէս «վալ-նաչարի» լաջողած կարելի է համարել և Յ. Յ. -ի «Քանի, քանի կ'ամեցիքեմ» ոտանաւորի թարգմանութիւնը. (էջ 71): Յաջողւած

լինելու կողմից բաղդաւոր են Ծատուրեանի բանաստեղծութիւնները. նրանք աւելի մօտ են բնագրին, նուց իսկ ոգու կողմից:

Այս առաջին փորձը սակայն չը պիտի վնասեցնի թարգմանչին. հարկաւոր է աւելի ջանք գործ դնել, աւելի աշխատել, աւելի մշակել. ընտրած նպատակը աչգպիսի վերաբերմունքի արժանի է...

Գրքովը պատահական հրատարակութիւն է. մաքուր, շնորքով, ղեղեցիկ: Արժէ ձեռք բերել:

Ն. Աղոստեանց

## ՌՈՍՏՈՄ ԵՒ ՍԱԼԻԿԱՆ

Գերբնական ոյժ ունեցող հսկաններ: (Տաճկահայոց ժողովրդական աւանդութիւն). Գրիգոր Բալասեանցի, զինն է 25 կուէկ:

Շատ տխուր մտքեր է չարուցանում այս գիրքը մարդու մէջ: Կարգաւոր աչգ գրւածքը՝ դուք մնում էք կատարեալ ապշութեան մէջ. «Այս սողերը ինձ ծանօթ են, այս բառերը նույնպէս»: Եւ այսպիսի քացականչութիւններ շարունակ, մէկը միւսի վետից, արագ-արագ դուրս են թռչում ձեր բերանից:

Թէ որքան խալտառակ, որքան զգուշ և մտնաւանդ որքան վրդովեցուցիչ է գրական զոդութիւնը, աչգ մասին, կարծում ենք, խօսելն իսկ աւելորդ է: Եւ թէ որպիսի ողորմելի տպաւորութիւն է անում աչգ՝ չենք կարող ասել: Հերիք է միայն զոդութիւն բառը, որ արդէն պարզ լինի զըրւածքի արժանաւորութիւնը, զնահատութեան չափը և քննադատի միանգամայն արդար զարդովքը: Եւ որքան ցաւալի է, որ մի աչգպիսի գործ գնահատոււմ է մամուլի որ և է օրգանի կողմից, որպէս «Լուսալի գրաւական ապագայ գործունէութեան», ինչպէս աչգ կատարւել է Մուրճի մէջ, (տես Մուրճ 1897, № 11-12), որի քննադատը անշուշտ զոհ է եղել մի սոսկալի միստիֆիկացիայի:

«Մուրճի» քննադատը «Ռոստոմ և Սալման»-ի հրապարակ գալը կարծել է թէ միութարական է և ազգադրական տեսակէտից, խօսելով պի

Գր. Խալաթեանի իբր սխալ եղբակացութեան մասին՝ Տաճկահայերի մէջ ալղպիսի մի աւանդութեան գոյութիւնն չունենալու վերաբերմամբ: Քննադատը բացականչում է. «Ահա հրապարակ է գալիս մի 15 տարեկան պատանու (փակագծում ասենք), որ հեղինակը ալժմ կը լինի մօտաւորապէս 28-30 տարեկան, և որ ալդ գրածքը հրատարակել է սրանից մօտ 2 տարի առաջ և գողութիւնը ծածկելու համար է Բալասեանը ալղպէս գրել» «Ռոստոմն և Սալմանը» իբր վստահելի գրաւական գեղեցիկ չուերի»:

Նախ լիչենք, որ ալդ աւանդութիւնը «հալացրած» է պարսկերէնից, ուրեմն ալդ չէ կարող «Տաճկահայոց ժողովրդական աւանդութիւն» լինել: Գործողութեան տեղը կարելի է փոխել, բայց պատմական-աւանդական գործող անձերից պարսիկներին հաջ կամ տաճիկ դարձնել կամ թէ հալին պարսիկ և ալին,—ալդ ուղղակի անմտութիւնն է, ինչ տեսակէտից էլ պատելու լինինք՝ ազգագրական, թէ պատմական:

Եթէ իրօք ալղպէս լինէր՝ էլի ոչինչ. բայց ալդ «ինքնաբերաբար հալացրած աւանդութիւն» կոչւածը մի կատարեալ խառնուրդ է զանազան հատածների, որոնք վերցւած են Վերմոնտից, Գամառ-Քաթիպալից, Վ. Աղաւեանից, Ալ. Մատուրեանից, Գէորգ Աստաճատրեանից, Սրինգից և, հաւանական է, կրկին շատերից, «ըստ կարդին Մեղքիսեղէկի»:

Մենք չենք քննիլ 4 երեսից բաղկացած լառաջարանը, որովհետեւ նա կազմած է միմեանց փառաւորապէս հակառող մտքերից, ալ կ'աշխատենք թուոցիկ կերպով քննութեան առնել ալդ աւանդութիւնը:

Ընթերցողին չը ձանձրացնելու և կատարած գրական փառաւոր դուրսեան մասին նրան կենդանի գաղափար տալու համար մէջ բերենք մի քանի օրինակներ.

Սկսենք հէնց-առաջին գլխի առաջին տողերից.

Բալասեան. Շատ դարեր տուջ մի թագաւոր կար . . . ազնիւ ու արդար (էջ 9):

Ահա նոյն տողերը և «Աղբիւր 1887 թվի №№ 8-9-ի մէջ տպւած Գ. Աստաճատրեանի «Սաչլուս լիճը» անպաճով, բայց գեղեցիկ աւանդութիւնից.

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագաւոր կար . . . ազնիւ ու արդար.

Եւ ալս սկզբի տողերը արդէն ինքնըստինքեան «հալելի և գրաւական» են հեղինակի բարեխղճութեան և ազնւութեան:

Սակաւն շարունակենք.—Նոյն առաջին գլխում.

Բալասեան. Դէմքը դոժան էր եւ շատ ահաւի,

Ինչ հսկայ դիցազն մարդ պէտք է լինէր,

Որ վրան նայէր, լեզին չը ցամփէր.

Ղ. Աղայեանց.— Տգեղ էր դէմքը եւ այնքան դաժան,

Որ զարհուրում էր, ով նայում էր վրան.

(«Տորք Անդեղ. և Հալկ. Գեղ. երգ I»).

Բաւականանանք առաջին գլխից միայն ալսքանով. ահա երկրորդ  
գլխից.— ալստեղ առաջ կը բերենք միայն երկու տող, որովհետեւ բաւա-  
կան տողեր կան հետեւեալ գլուխներում, որպէս կրկնութիւն.

Բալասեան. Որ թէ ուղինար աշխարհ կը քանդէր,

Աշխարհ կը քանդէր, լեռներ կը ճեղքէր.

(Էջ 12).

Գ. Աստուածատրեան.— Աշխարհ կը քանդէր, թէ սիրտը ուզէր, Հաւունի թրով.

(տես «Խաչկալ լիճը»):

Երրորդ գլխում զուք կը հանդիպէք Ֆրդովսու Բահրամ ծերունուն,  
Ս. Քամալեանցի Ծովինարին, կը նկատէք Սէլեադի ոտանաւորներից մի  
քանի տողեր, իսկ հետեւեալ գլուխներում Գամառ-Քաթիպալի «Դև-Մրտսին»  
և ալլն.

Չորրորդ գլխում չէ մուացել մէջ բերելու Լերմոնտովի «Դևից»  
կտորներ.

Բալասեան. Արեւելքի մէջ աչնպէս գեղադէմ

Աղջիկ չէ մտել Սուլթանիդ հարէմ.

Դեռ չէ սնուցել Նդեմ տիրատունկ

Աչնպէս նաղելի «հասակ» մեծաշուք.

Դեռ երկրալին նուրբ, փափկամորթ ձեռքեր

Աչնպէս մետաքսեալ «մազեր» չէ հիւսել. (էջ 15).

Լերմոնտով. Հով շատրւանը Դահի հարէմում

Դեռ չէ զովացրել ալդպիսի հասակ.

Դեռ ոչ մի անգամ երկրալին ձեռքեր

Չեն հիւսել ալդպէս գեղեցիկ մազեր. (Դև, մ. I. զլ. Է):

Շարունակենք: Մի քանի գլուխներում կան կրկնութիւններ վերը բե-  
րած մեր օրինակներից, որոնց և բաց ենք թողնում.

Բալասեան. Մի անգամ Զալը նժուգը հեծաւ,

Երկար թափառեց, սար ու ձոր ընկաւ,

Որ Պարսից հոկալ Սալմանին դանի. (էջ 20):

Գ. Աստուածատրեան. Այս ասաց Զալը, նժուգը հեծաւ,

Զիան մտրակեց, սար ու ձոր ընկաւ,

Գնաց պառելու հոկալ Սալմանին.

(Աղբրւր, 1888 թ. № 11. «Երկու հոկալ», գլ. բ.):

Բալասեան. Ասաց ու հեծաւ մեր արի հոկան.

...Հրաժարման ողջուն ամենքին տըւաւ. (էջ 21):

Գ. Աստու.—Այս ասաց Ջալը, նժուգը հեծաւ,  
Մնաս բարով ասաց իրա աշխարհին. («Ներկու հսկալ»):

Բալասեան. Հատ գնաց թէ քիչ—աւղ Աստուած գիտէ,—  
...Հանգստացաւ մի մեծ ծառի տակ,  
Իջաւ նժուգից չոգնած, վաստակած.  
...Նրբ տեսաւ լանկարծ նա հեռաստանում  
Մի ծուխ թխացեալ՝ աշխարհ էր պատում.  
Իսկոյն աչն կողմը ղիրղի պէս թռաւ,  
Առատ թողի մէջ, սէ, նա թնչ տեսաւ,  
Մի բարձր հսկալ, լեռնաչափ հսկալ.  
...Նա զրած ունէր իր լալն բերանին,  
Որպէս մսղարա, չիբուխ ահագին,  
Ծուխը բարդի բարդ նա դուրս էր փչում. (էջ 22):

Գ. Աստուած. Է՛հ, Աստուած գիտէ,—Հատ գնաց թէ քիչ,  
Յոգնած էր, իջաւ, ծառի տակ նստեց.  
Տեսաւ, որ հեռում, մի ինչ որ տեղից  
Ծուխ է բարձրանում,—ձին աչն կողմ քշեց.  
Տեսաւ, թնչ տեսաւ, սէ, դու չըտեսնես,  
...Տեսաւ մի հսկալ, հսկալ լեռան պէս...  
...Բերանն էր դրել ահագին չիբուխ,  
Չիբխի բերանը—ինչպէս մսղարա,  
Դուրս փչած ծուխը զերթ ամպեր թռլաւ-թռլաւ.  
(Ներկու հսկալ, գլ. Բ.):

Բալասեան. Աւանդ, Հատ խոր են ցաւերս, որդի, (էջ 24):

Գ. Աստուած. Որդի, ցաւերս, աւանդ, Հատ են խոր. (Ներկու հսկալ, գ.)

Բալասեան. Գնա, դէհ, գնա, էլ մի սպասիր  
...Գնա, մի կանգնիր, արդէն Սալմանը  
Ռաշիդ Ռոստոմիդ կանչեց կուռի դաշտ.  
...Գնա, քաջ կացիր, բալց ազնիւ վարւիր,  
Գո ուժը բազկի ցոլց տուր Սալմանին.  
...Դէհ, գնա, գնա, քաջի պէս մեռիր,  
Անպատուած հորդ վրէժը լուծիր, առ. (էջ 25):

Գ. Աստուած. Դէհ, գնա, գնա, էլ մի սպասիր.  
...Գնա, Սալմանը քեզ կուռի կանչեց.  
...Գնա, քաջ կացիր, բալց ազնիւ վարւիր,  
...Գնա, թէ մարդ ես, Սալմանին չաղթիր.  
...Գնա, Ռոստոմ ջան, քաջի պէս կուռիր,  
...Գնա, անպատուած հորդ վրէժը առ. («Ներկու հսկալ»—Գ.)

Քալասեան. Ես Զալը լինեմ, Ռոստոմն իմ որդին,  
 Ինձ մարդ չանդդնի անպատիւ անել,  
 Պարսից Սալմանը, անգուժ Սալմանը,  
 Գերի, չղթալի շան պէս անվաղել...  
 Աչո, Սալմանը, Պարսից Սուլթանը (?)  
 Հօրդ բարեկին ուշք էլ չըդարձրեց. (էջ 26):

Աստուածատ. Բն, զու Զալն ըլես, Ռոստոմ քո որդին,  
 Եւ մարդ անպատեւ քեզ համարձակեց,  
 ..«Աչո, կաչ մի Սալման, որ Ռոստոմի հօր  
 Տաճ բարեկին չըպատասխանեց,  
 Աչ, կաչ Սալման, որ Ռոստոմի հօր  
 Շանն էլ անվաղել կերպով չղթալեց: (Նրկու հսկալ—Գ.):

Քալասեան Հնչր իմ, հնչր, մի լար, ինչո՞ւ ես տխուրմ. (էջ 26):

Գ. Աստուածատ. Հալրիկ, ինձ պատմիր, ինչո՞ւ ես տխուր. (Նրկ. հսկալ.—Գ.):

Քալասեան. Մնաս բարով, հալր, զնու՞մ եմ անս  
 Կրկին լետ բերեմ պատիւդ ընկա՞,  
 Դու ինձ կը տեսնես կամ ազատ չաղթած,  
 Կամ ամենեկին չըվերադարձած... (էջ 26—27):

Գ. Աստուածատ. Հնչր, միայն բարով, անս գնում եմ,  
 Ընկած պատիւըդ պիտի չետ բերեմ,  
 Թէ որ ինձ տեսար՝ չաղթող կը տեսնես,  
 Ապա թէ ոչ՝ ինձ տեսնելու չես. (Նրկու հսկալ—Զ.):

Քալասեան. Սակալն իմ «Ռաշը»՝ շատ իմաստուն է,  
 Եթէ անձկուլթիւն, կարիք ինձ հասնի,  
 Իսկոյն ոտքերով գետին կը քանդի,  
 Սանձը կը կտրի, դէս ու դէն կ'ընկնի. (էջ 27):

Գ. Աստուածատ. Բալց նալիր ձիուս, ճա է իմաստուն,  
 Նրբ հասնի կարիք ինձ կամ նեղուլթիւն,  
 Կ'իմանալ, ոտքով գետին կը դուրի  
 Սանձը կը կտրի, դէս ու դէն կ'ընկնի. (Նրկ. հսկալ—Զ.):

Քալասեան. ...Իմացած կենաս փորձանքի մէջն եմ.  
 Վեր առ իմ գէնքեր դու ալն ժամանակ  
 Զիտ վրա կապիր՝ և ուր որ լինեմ  
 Նա ինձ կը գտնէ դաշտում ընդարձակ (էջ 27):

Գ. Աստուածատ. Իմացիր իսկոյն՝ նեղ տեղն եմ ընկել.  
 Ա՛ռ ալն ժամանակ իմ բոլոր գէնքեր,  
 Կապիր ձիուս վրալ, թող արձակ դաշտում,  
 Կը գալ, ուր լինեմ, կը գտնի իսկոյն. (Նրկու հսկալ—Զ.):

Բաղասեան. «Գնան բարով, որդիս, բայց չըմոռանաս

Մէկ է ճանապարհ, նեղութիւն հաղար. (էջ 27):

Գ. Աստուծատ. Դէհ, մնաս բարով, բայց չըմոռանաս,

Մէկ է ճանապարհ, հաղար նեղութիւն. (Նրկ. հսկալ—ն.)

Բաղասեան. Կանչեց (ձին) պինդ ձայնով Ռոստոմ քաջ հսկան.

Ռաշը խրխնջաց գոմի ախոռից,

...Մօտեցաւ տիրոջ... (էջ 28—29):

Գ. Աստուծատ. Ռոստոմն ախոռից կանչեց իր ձիուն,

Մօտեցաւ նրան ձին խրխնջալով. (Նրկու հսկալ—ն.)

Բաղասեան. Նրանց ճամբի վրայ հանդիպում էին

Հաղար մի տեսակ Զանգիք, Փերիներ,

Քաջ փահլաններ և չար ողիներ,

Եօթը գլխանի օձեր, վիշապներ. (էջ 30):

Գ. Աստուծատ. Շատ չար և բարու ճամբին ռաստ եկան,

Շատ անձանօթ տեղ ողիներ տեսան,

Տեսան նրանք Զիններ, Դներ, Զանգիներ,

Հուրի—փերիներ, Քաջքեր ու Զարեր. (Նրկ. հսկալ—ն.)

Բաղասեան. Խիստ չարձակելով խրկում էր հեռու,

Որը Հնդկաստան, որը Փրանգստան... (էջ 31):

Գ. Աստուծատ. Նորա մէկ կէսը ընկաւ Հնդկաստան,

Մէկը Զինմաչին, մէկը Փրանգստան. (Նրկու հսկալ—ն.):

Բաղասեան. Մի օր նա տեսաւ երկնքի տակով

Փախցնում էր աղջիկ ահագին մի Դն. (էջ 31):

Գ. Աստուծատ. Մի օր նրանք տեսան որ ամպերի մէջ

...Մի թեւաւոր դն փախցնում էր աղջիկ. (Նրկու հսկալ Ը.):

Բաղասեան. Իսկոյն չղթալով կապեց ձեռք ու ոտք,

Ու տարաւ ձգեց զժողիքի մութ խորք. (էջ 32):

Գ. Աստուծատ. Սալմանը տարաւ Վըժանին կապեց,

Մութ զնդանում ամուր չղթալեց. (Նրկ. հսկ.—ԺԱ.):

Բաղասեան. Ո՞րտեղ է ապրում քո հալրը, աղջիկ.

—«Այս ինչ» աշխարհում,—տեղ պատասխան. (էջ 33):

Գ. Աստուծատ. Ո՞վ է քո հալրը, անման խաթուն.

—Հալրս է թագաւոր ալս ինչ աշխարհում. (Նրկ. հսկ.—Թ.):

Բաղասեան. Առաջ ալս թշառ. խեղճ, անբախտ աղջկան

Առանց փորձանքի իր հօրը հասցնենք.

Ապա երկրի ծալք երթանք շտապով

...Պարսից Սալմանը մեզ է քոպատում... (էջ 34):

Գ. Աստուծատ. Դէհ, գնանք, գտնենք սրա հօրը, վըժան,  
Կորած աղջիկը իր տիրոջ դարձնենք.  
Ապա մենք բռնենք կրկին մեր ճանպան,  
Հսկա՛ Սալմանին գնանք պտուտենք: (Նրկ. հսկ.—Թ.).

Դ. Բալասան. Սո՛վ, քաղց ու ծարաւ ցանձն առնելով  
...Մտան...աշխարհը... Բազուք արքայի... (Էջ 37):

Գ. Աստուծատ. Շատ քաղց ու ծարաւ, շատ ցրտեր կերաւ.  
...Աղջկա՛ հօրը նոքա գտան շուտ. (Նրկ. հսկ.):

Դ. Բալասան. Բալց մոռնաց Զալն, առաւ սարերից,  
Զգեց դէպի ծով ժառեր ուղացած,  
Նաւերի ետե Պարսից թշնամեաց,  
...Ամենքն էլ մահու պատիժ ըստացան...  
...Ամենքը ծովում խորասուզեցան (Էջ 19):

Ղ. Աղայեանց. Զալրացաւ Տորքը, գողաց, մոռնաց,  
...Բլրաչափ ժառեր սարերից պոկեց.  
Փախչող նաւերի լետքից չպրտեց.  
Ողջ կորան ալսպէս աւազակները,  
Դէպի անլատակ ծովի խորքերը. (Տորք Անգեղ), Էրգ I. 2.-

Եւ ալլն և ալլն, և ալլն... որքան կամենաք, ումնից ուղեհաք, ան.  
վերջ, անհատնելի... ալսպէս մինչև վերջը, մինչև 52-րդ երեսի կէսը... Ու  
հաղիւ ազատեցի. մենք վերջացրինք, վերջապէս հրապարակ հանեցինք  
սուտն ու կեղծիքը, մանաւանդ և նամանաւանդ խաչտառակ գողութիւնը...

Այդ գրքի՝ հրապարակ գալը մի մեծ ծաղր է հայ գրականութեան  
համար. իսկ Մուրճի մէջ թոյլ տրւած սխալը ալդ գրքի մասին անշուշտ  
պէտք է ուղղել որ և սրանով կատարած ենք համարում:

ՍԵՊՈՒՀ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻՍ <sup>1)</sup> ԳՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ

Ներկա՛ պատասխանովս ցանկանում եմ մի քանի բացատրութիւն-  
ներ տալ և ապացուցանել, որ պ.պ. գրախօսներից մէկի գրածը ակներև  
նպատակով անաչառութիւնից շատ հեռու է: Այս առաջի փորձիս վերա-  
բերմամբ նկատողութիւններ կարդացի մինչև հիմա՛ 1897 թ. «Արձագանքի»  
57, «Արարատի» 5. և «Մուրճի» 6. համարներում:

<sup>1)</sup> Ալբրենարան, առանց ուսուցչի կարդալ սովորելու համար, 94  
պատկերով. յօրինեց Յով. Տէր-Միրաքեանց: Նոր Նախիջևան, տպ. Զամր.  
նեան, 1897, գինն է 35 կ.:

Առաջինի ասածների էական մասն հետևեալն է. «դժար է նրա դասագրքի մէջ գտնել աշխատի, առանձնաշարութիւններ, որոնք ցոյց տալին, թէ աչդ դասագիրքը սովորական աշակերտական դասագրքերից աւելի կը նպաստէ անգրագէտին շուտով կարդալ սովորել: Մինչև անգամ համարձակ կարելի է ստել, որ աչդ փոքրիկ գրքովը բաւական թերակատար է: Պատկերները թէն գունատ են, բայց դադափար տալիս են առարկայի վրայ, միայն անհասկանալի է մնում, թէ ինչու պ. Տէր Միրաքեանցը անհրաժեշտ է համարել շատ հաշիւէն խօսքերի տեղ պատկերները կողքին դնել թուրքերէնը կամ ռուսերէնը»:

Իմ Ալեքեանարանը սովորականներից նրանով է տարբերում, որ նրանք, ենթադրելով ուսուցչի առաջնորդութիւնը՝ առանց պատկերների աշխատի նպատակաւորմար համադրութեան և ալ արտաքուց կարգի միջոցների չեն կարող հնչիւնների գազափարնեքը գատել տալ բառերից: Օտարազգի բառերի զործածութեան բացատրութիւնը լաւաջաբանում կար: Պ. գրախօսը նաև օրինակելի բառերի չարքերից կարող էր տեսնել, թէ ինչ գծաւորութիւնների ենք հանդիպել ալ ընտրութեան ժամանակ, որքան ճիգ ենք թափել խոյս տալ օտարազգի բառերից, նմանահնչիւն վերջերով բառեր որոնելով, ճարահատեալ նոյն իսկ թւական անունների օգնութեանը դիմելով: Եւ որոնել ենք, չէ թէ ալ ու ալն կողմ ընկնելով, ալ գրաբար ու աշխարհաբար բառարանները ծալէ ի ծալք աչքէ անցնելով և ալս կերպ կազմած ցուցակը նորից ու նորից վերաքննելով: Ուրեմն օտարազգի բառերի ընտրութիւնը ցաւօք սրտի զգացած եմ եղել իբրև անխուսափելի չարք: Մի քանի հնչիւնների համար վերալիշեալ միջոցներից էլ զրկւելով՝ վերջերս ալ միջոցների դիմել հարկադրւելի: Հետևաբար պաշտ, չղթալ, կարկին և ալն բառերը նրա համար չենք գրել, որ անգրագէտին անծանօթ լինելով՝ մեծ չփոթութիւն կ'առաջացնէին:

Իսկ պ. Ս. Մ. ի «Մատենախօսութիւնը» («Արարատ») ես ոչ լուրջ և ոչ էլ անաչառ եմ համարում: Ահա աչդ քննադատութեան ծանրակէտը: Մինչդեռ «Արձագանքի» պ. գրախօսը պատկերների մասին ասում է, որ նրանք «զադափար տալիս են առարկայի վրայ», պ. Ս. Մ. աչդ պատկերները բոլորովին անպէտք համարելով՝ դուրս է բերում, որ նրանցով առաջնորդողը փոխանակ «առաւօտ լուսոյ» խօսքերի, մի անմիտ բան պէտք է կարդալ: Եւ գիտէք, ընթերցող, ինչպէս: Նա պատկերները ցոյց է տւել, ինչպէս ասում է, մի «համբակի» և ահա աչդ հրաշալի մարդը ածելի պատկերը մտրակ է անուանել, օջախը՝ եկեղեցի, ֆալտոնը՝ կառք...: Ինչքան բաղդաւոր կլինէինք, եթէ մեր հէնց առաջին պատահող համբալին աղպիսի զուտ գրական բառեր գործածէր! Շնորհակալ եմ, պ. Ս. Մ., աչդ տեղեկութեան համար, բայց ամենին «չտապելու» պէտք չունէիք, քանի որ ես էլ եմ փորձել և ոչ մի անգրագէտից աղպիսի գրական բառերով պատասխաններ չեմ ստա-

ցել: Իսկ ինձ համար արժէք ունեն անգրագէտների բարեկամների հետեւեալ խօսքերը. «Ձեր Ալբրեհտարանը աչտեղ գործածեցինք և շատ լաւ արդիւնք ցոյց տուց, որի համար ես և մի քանի անձինք չնորհակալութիւն ենք լայտնում»:

Եթէ իմ ձեռնարկը լաւաջաքանում դրած գժւարագոյն նպատակին ցանկացած չափով հասնել էլ չկարողանար, միթէ նա առանձին Ղիւրու-թիւններ չպիտի կարողանար տալ հազարաւոր կիսագրագէտներին, որոնք հիմա սեղ սիպտակից ջոկելու կարողութիւն չունենալու համար ախ ու վախ են անում: Բալց Բնչ. որովհետեւ պ. Ս. Մ. ի հիանալի համբակի երեւակալութեանը բոլոր պատկերները խառնաշփոթ բաներ են երևում, ուրեմն Ալբրեհտարանս մինչև անգամ վեաստակար էլ է դուրս գալիս: Պատկերների օրինակների մեծագոյն մասը մասնագէտ մարդ է նկարել <sup>1)</sup> և նրանցից կլիչէներ է հանել լաւագոյն գործարաններից մէկը: Միւսները, որ քննադատութեան չեն կարող դիմանալ, թողել եմ, առաջին տպագրութիւնը շատ չթանգացնելու նպատակով, որովհետեւ փորձել ու տեսել եմ, որ նրանք գաղափար տալիս են: Բացի սրանից միևնոյն հնչիւնի համար 3-5 պատկերներ կան, եթէ մէկը սխալեցնելու էլ լինէր, միւսները թող չէին տալ: Հէնց աղջ նպատակով էլ աներկբալիները սկզբից եմ դրել: Քննադատը բոլոր պատկերների կամ մի մասի թերութիւնները կամ անպէտքութիւնը ցոյց տալով պէտք է բաւականանար, բալց մեր պ. մատենախօսը ցանկացել է արտաքոյ կարգի բան առել. նրա տրամաբանութեամբ «պատկերների շփոթութիւնները առաջ են գալիս ոչ թէ նկարչի անհմտութիւնից, ալ «չօրինողի փոքր ինչ խառնակ հոգեբանական հալեացքներից»): Ուրեմն բանից դուրս է գալիս, որ, եթէ նկարիչը չա՛ն տեղ կատու է նկարել, աչտեղ ես եմ մեղաւոր: Իսկ ես կասեմ, պ. Ս. Մ., որ աչտպիսի գատու-ղութիւնները առաջանում են կրքից մթաղնած հոգիների մէջ և, ի հարկէ, աղղպիսիների «հոգեբանական հալեացքները» ոչ թէ փոքր ինչ, ալ բաւականին «խառնակ» պէտք է լինեն: Շնորհիւ իմ հոգեբանական խառնակ հալեացքների պ. Ս Մ.-ի համբակի աչքերին ձեռքն էլ մատեր է երեւցել. հետեաբար շնորհիւ պարոն մատենախօսի անդուգական հալեացքների՝ պէտք էր ձեռքը տռանց մատերի նկարել, երեսը առանց քթի ու ականջների...»

Պր. Ս. Մ.-ի մատենախօսութեան մէջ ծալրէ ի ծալր կիրքն է խօսում: Նա անա թէ ուրիշ ինչ բաներ է գրել: «Տ. Մ. ի թէօրիւն շատ պարզ է. նա ուղում է պատկերներով հասկացնել տալ աչտ կամ աչտ տառը, իսկ

<sup>1)</sup> Սա իւրաքանչիւր անգամ իւր մանուկներին ցոյց էր աւել նկարածները: Մի քանի բաներ կալին, որ շատ գժւարութիւններ պատճառեցին, մի քանիսն էլ նկարչին անծանօթ առարկաներ լինելով՝ աւելի որոշ գաղափար չկարողացածք նրան տալ:

ապա կարդացնել տալ նոյն համբաւներին իւր անգիր գիտեցածները» (Նրա ստորագծածներն են): Տեսնում էք. պարտնը ինձ նաև «ֆոկուսնիկ» է ուզում դուրս բերել: Բայց ասացէք, խնդրեմ, քանի որ այդ նիւթերից առաջ մինչև 44 էջը դուած բառերի ու նախադասութիւնների գոյութիւնը նա ծածկել է ուղղում, արդեօք ինքը պ. մատենախօսը չէ արժանի այդ անւան: — «Հեղինակը դափնիների ետևից է ընկած» ասում է պ. Ս. Մ.: Դափնիներ ստացել է միայն հալերիս «միակ» մանկավարժը և ինչպէս որ սկսել է, թող շարունակէ վաւելել: Նա չամառութիւն է համարում այս ձեռնարկութիւնը և ալլն և ալլն: Ո՞ր մէկին պատասխանես:

«Մուրճի» պ. գրախօսը Ալբրենարանիս անւան «առանց ուսուցչի» բառերը անհամապատասխան է համարում, քանի որ, ինչպէս չառաջաբանն առաջարկում է, ցուցմունքներ պէտք է անւին: Ժողովրդի մէջ շատերը կան, որ սրան-նրան հարցնելով ինքնաշխատութիւնով կարդալ են սովորում: Այսպիսիներն ասում են «առանց վարժապետի» սովորեցի: Այս մտքով եմ գրել՝ աւելի նպատակաւարժարը չգտնելով: Յառաջաբանի վերաբերմամբ նկատած էր, որ բաւականին պարզ չէ: Նա իսկապէս երկու մաս ունի. մեծագոյնը մանկավարժական տեսութիւնով հետաքրքրողների համար, մի երկու տող հրահանգները անգրագէտի իւրաքանչիւր բարեկամի համար, որի հանդամանքները չեն ներում՝ աւելի միտք զբաղեցնել: Այնու ամենաւնիւ այս ի նկատի կ'ունենամ: Եթէ պատկերները լաւ են նկարած, առանց ցոյց տալու էլ կը ճանաչեն, քանի որ հազիւ լեզու ելնող մանուկէ՝ էլ ամենաւն զիւրութիւնով սրոյնում է սովորական աւարկաները: Ձեռնարկիս պատկերների մասը անչաճող է, ալգալիսիների բացատրելը կարող էր աւելորդ չլինել: Յօդածների կողմից, ճիշտ է, այս Ալբրենարանը հարուստ չէ: Որովհետև բազմաթիւ կլիշէների պատճառով ծախքը շատ զգալի եղաւ, ուստի առաջին սպագորութիւնը աւելի ևս չթանկացնելու նպատակով՝ ընթերցանութեան նիւթեր այնքան դրի, որքան անհրաժեշտ համարեցի միայն կարդալու նախնական վարժութիւնը ձեռք բերելու համար:

Գալով տարածման խնդրին, այս գրքուկը քիչ թէ շատ բարեկամներ դտաւ և, ինչպէս չիչեցի, փորձեր անողներ էլ եղան: Պահանջ զգացողներն իրանք էլ են դիմում ու գնում, երբ ուրիշի ձեռքը տեսնում են: Ձեռնարկս պատրաստ էր տպագրութեան համար, երբ մի Ալբրենարան տեսալ ճակատին «Հին ու փորձած մեթոդով» չանձնարարականով: Նորագոյն թւականը տեսնելով՝ աչդ «աչբալը, բենբենի» վրա՝ զարմացալ, իսկ պ. հրատարակիչն ասեց. «աչի, շատ են պահանջում, մանաւանդ գիւղերից: Բնականաբար ես աւելի խրախուսելով պէտք է մտածէի, որ եթէ մեր ուսումնաժարաւ ժողովուրդը աներեակաչի ճիգեր է թափում աչդ դժաւ-

քաղոքն եղանակով կարդալ սովորելու, միթէ իմ Ալքրքենարանս անհամեմատ աւելի չպիտի զիւրացնէ նորա գործը:

Պատասխաններս ուղարկած էին, որ կարդացի պ. Գ. Վանցեանի գրախօսականը «Արձագանքի» 147 համարում:

Նախ ասեմ, որ Ալքրքենարանիս մեթողը նոր չեմ համարել: «Ապա-ւինելով հոգեբանական ու մանկավարժական ընդհանուր օրէնքներին՝ աշխատեցինք մեր առաջադրեալ մասնաւոր նպատակի համար կանոններ սահմանել» գրելով՝ դիտաւորութիւն չենք ունեցել մի աշխարհի բան հասկացնել: Տեղեկութիւն տալուց չետոյ, թէ իմ նպատակիս ծառաւոր մասնաւոր տեսութիւն կամ ձեռնարկ չեմ գտել, ալք խօսքերն եմ դրել, ի նկատի ունենալով որ մանկավարժութեան պատմութեան մէջ չալտնի միջոցները ես համադրել եմ նպատակիս չարմար եղանակներով:

Պր. Վ. գործադրածս մեթոդական միջոցներն ընդհանրապէս նպատակաւարմար է համարում, միայն թէ օրինակելի բառերի դասաւորութեան մէջ սխառէմի բացակայութիւն է տեսնում: Ո՛չ, համակարգութեան նրանք ենթարկւել են, սակաւն ոչ թէ հնչիւնների կարեւորութեան տեսակէտից: Նախ՝ մինչև 25 էջը (մեծագոյն մասը) դասաւորել եմ ալն տառերը, որոնք առնազն երեքական բառերի մէջ նախադաս են: Բացի սրանից ի նկատի եմ ունեցել ծայնաւորով սկսողներին առաջին տեղերը տալ և սրանց մէջ էլ աջնալիսիններին, որոնց առաջին տառերը առանձին վանկ են կազմում: Աջնալիսիններն պ. Վ. ի նկատողութիւնը մասամբ իրաւացի եմ համարում, որովհետեւ մինչև վերջը հետեւութիւնով չեմ ընթացել: Սակաւն վիճելի եմ համարում ալն կարծիքը, թէ քիչ գործածական տառերը պէտք է վերջերը դնել, չէ՞ որ նրանք կարող էին լատինական չկրկնելով աւելի դիւրաւ մոռացւել: Իսկ գալով ֆէին, որ պ. Վ. կարծիքով կարելի էր մինչև անգամ անտես առնել, հարկ կըգաջէր հարցնել, թէ հապա երբ պէտք է իմանայ անգրագէտը:

Պր. Վ. ուշադրութիւն է դարձրել ձեռնարկիս նաև լեզական կողմին, որ մանաւանդ օրինակելի բառերի համար հիմնական նշանակութիւն ունի: Ընդհատ է, որ և ք զուտ բարբառով չէ կազմած նա, սակաւն համաձայն չեմ, երբ պ. գրախօսն ասում է, թէ նրա մէջ գերակշռողն արեւմտեանն է: «Փնար հալկականից» քաղած առածները, Նազարեանցի անկեղծոտները, ընդարձակ լոգաձը արեւելեան են, աղօթքները գրաբար, իսկ Ժողովրդական երգերը՝ խառն: Այս վերջիններս համար իրաւացի է վերոյիշեալ նկատողութիւնը. իմ հալոյնի Շիրակը աւելի եմ ի նկատի ունեցել, Շիրակում բանահաւաքած «Խամկական մրմունջները» աւելի եմ քաղել: Սակաւն ալս գրքի արագ սպառումը ցոյց է տալիս, որ նորա

քովանդակութիւնը ալլ գաւառներում էլ տարածած ու սիրելի է։ Պր. Վ. ի ալն առաջարկութիւնը, թէ հարկաւոր էր չորս զլխաւոր բարբառներէից մէկով կազմել, որքան կարեւոր, նոյնքան էլ անգործադրելի էր առ ժամանակ նիւթականի պատճառով։

Աւելի կարեւոր է պր. Վ. նկատողութիւնը օրինակելի բառերի վերաբերմամբ։ Այս մասին չառաջաբանում գրւած էր, որ «աշխատեցինք, որքան մեզ հնարաւոր եղաւ, գէթ կովկասեան գաւառներում միակերպ արտաւանդող սկզբնատառերով հալեղէններն ընտրել»։ Անգրագէտների բարեկամներին ուղղածս գիտումը՝ օգնել ինձ ալս ձեռնարկութեան մէջ՝ նաև ալս կէտին էր վերաբերում։ Շատ շնորհակալ կը լինէի, եթէ գաւառաբարբառներին տեղեակ անձեր ալս տեսակէտից ծալրէ ի ծալր վերաստեղծէին ալն օրինակելի հալ ու օտարազգի բառերը, որոնք պատկերների մօտ են դասաւորւած։ Խնդրում ենք ի նկատի ունենալ, թէ իւրաքանչիւր գէպքում որ հնչիւնն է կարեւորը։ Օրինակ՝ հրա ա հնչիւնն է, որ պէտք է ճանաչել, ածլին նպատակաւարմար չէ կարող համարւել, քանի որ, ինչպէս պր. Վ. նկատում է, զարաբաղցին նրան ծիլ է ասում. իսկ երբ ի գիրը պէտք է ճանաչել, հալի կամ հիլի են ասել՝ նշանակութիւն չունի։ Ոչ միայն պր. Վ. ի նկատած բոժոժ բառը, որի վերջադաս ժ էր հարկաւոր, ալ և կաժ, ընկուղ և ալլ ալսպիսի մի քանի բառեր ընտրել եմ, գիտեմալով հանդերձ, որ ամեն գաւառ նոյն անունը չէ տալիս նրանց, որ նոյն իսկ միևնույն գաւառացի մարդն էլ տարբեր կերպով կարող էր անւանել։

Ի գէպս աւելորդ չեմ համարում կրկնել նաև միւս գրախօսներին չառաջաբանումս վիշած ալն հանգամանքը, որ օրինակելի բառերի իւրաքանչիւր խմբակում հիմնական հնչիւններին կից եղածները պէտք է անպատճառ տարբեր լինեն, որ շփոթութիւն չառաջանայ։ Աւ ալս է, որ միւսներից աւելի զգաւարացնում է ընտրութիւնը և հեռուից նայողին զարմացնում ի միջի ալոյց նաև օտարազգի բառեր տեսնելիս։

Վերջացնելով խօսքս՝ մասնաւոր շնորհակալութիւն եմ ցատնում պր. Վանցեանին, որ ինձ զրաղեցնող առարկայի վրալ առանձին սիրով միտք զբաղեցրած լինելով՝ ինձ էլ աւելի խոր ու բաղմակողմանի կերպով մտածելու առիթ ներկայացրեց։

Ն. Նախիջևանի չրջակալ քաղաքներից մէկից մի երիտասարդի տւած տեղեկութիւններից էլ առաջ բերենք հետեւեալը։

«Ե՛ տարեկան մայրս, որ երբեք կարդալ չի սովորել, Ձեր Ագրեհնա՞րանի միջոցաւ ամենակարճ (մի ամիս) ժամանակամիջոցում ճանաչել կրցաւ բոլոր տառերը և կարդալ իրեն խօսակցութեան լեզւին մօտ ծանօթ բառերը։ Զարմանալին ալն է, որ առանց մի առանձին օգնութեան՝ միայն

պատկերներին նախելով՝ կրցաւ ճանաչել բոլոր տառերը և փոքր ի շատէ կարդալ. ես միայն տալիս էի իրեն անծանօթ բառերի մեկնութիւնը... Կարդալու հեշտութիւնը աչնքան զարմացնում էր մօրս, որ նա միշտ կրկնում էր... «սա ի՞նչ խօլաջ ցուցել է կարդալը»։ Մօրս հետ միասին չափում ենք մեր շնորհակալութիւնը Զեզ, որովհետեւ որքան նորան շուտով ու թեթևութեամբ կարդալ սովորեցրեց, աչնքան էլ իմ գործս (մանուկներին մասնաւոր դասեր կամ տալիս) կիսով չափ հեշտացրեց և ժամանակի մեծ խնայողութիւն չառաջացրեց։ 7 տարեկան երեխան 2 շաբթուայ միջոցում կարողացաւ սովորել 40-ի չափ պատկերների անուններ (պէտք է նկատեմ, որ երեխան հաշիւընդհանր կատարելապէս անծանօթ էր) և 10-ի չափ տառեր, աչնչափ, որ կարողանում էր իրեն ծանօթ տառերը ուրիշ գրքերում գտնել»։

Վերջը իմ թղթակիցը ցանկութիւն է չափում, պ. Վանցեանի պէս, որ «նմանօրինակ դասագրքերը կազմած լինէին մի քանի տեսակ բարբառներով»։

Յ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԶՈՒՍՅԻ ԴԱՏԻ ԱՌԻԹՈՎ

Ներկայումս որ դրում ենք այս տողերը, Զոլայի դատը քննում է երդեալների դատարանում, զբաղեցնելով ամբողջ լուսաւոր աշխարհը: Գործի ընթացքի հետ մենք առ այժմ ծանօթ ենք միայն հեռագրական լուրերով, որ և ընթերցողները կ'զտենն լուրերի բաժնում:

Անցեալ անգամ հաղորդելով մեր ընթերցողներին Վրէժնու-հասերհազիի գործի մասին, մենք բաւականացանք միայն իրողութիւնները պատմելով, չնայած որ լրագրութիւնը, իւր կոմենտարներով այդ աղմկալի գործի մասին, արդէն որոշ կերպով բռնում էր այն մարդու կողմը, որը պաշտպանում էր Զոլան, այն է Վրէժնու-սին: Գիտեալով, որ Վրէժնուսի գործի, որպէս շախմատեան մի գործի, հիմքը կազմում են ինչ-որ գաղտնի զոկումէնտներ, որոնք, խրկի օրէնքներով, հրատարակութեան չեն տրուում, մենք զրուշացանք կարծիք յայտնել այն զինւորական դատարանի դէմ, որը դատապարտել էր Վրէժնուսին և որի (դատարանի) կողմն էին Ֆրանսիական զօրքի ամենաբարձր ներկայացուցիչները:

Նոյնը պէտք է անենք նաև այս անգամ, երբ խնդիրը դեռ աւելի էլ մեծ ծաւալ է ստացել և ամբողջ աշխարհը, նաև Ֆրանսիայից դուրս, իւր իրաւունքն է համարել ղաւտաւոր հանդիսանալու Զոլայի և Ֆրանսիական զօրքի բարձր ներկայացուցիչների միջև: Նկատելու արժանի երևոյթ!—Ֆրանսիայից դուրս երկիրները, որոնք քաղաքական բազմաթիւ հաշիւներ ունին Ֆրանսիայի հետ, իրենց մամուլի միջոցով համարեա միաբերան Զոլայի կողմն են, որին շնորհաւորեցին դեռ ևս դատը չսկսած. այդ եռանդի մէջ ընդդէմ Ֆրանսիական զինւորական վարչութեան՝ ոչ-ֆրանսիական քաղա-

քական թերթերը կարծես իրար գերազանցել են ճգնում, մինչդեռ Ֆրանսիայի իրա մէջ հասարակաց կարծիքը գերակշիռ չափով Զոլայի դէմն է:

Այս երևոյթը պիտի բացատրել լոկ նրանով, որ ոչ-Ֆրանսիական թերթերի անագին մեծամասնութիւնը նոյն իսկ միտթարութիւն կը զգար, եթէ պախարակած և հեղինակութիւնից զրկւած տեսնէր Ֆրանսիական պատերազմական բարձր վարչութիւնը. մինչդեռ Ֆրանսիացու համար նորա զօրքը և զօրքի կառավարութիւնը գրեթէ նոյնանում է հայրենիքի գաղափին: Ղատապարտւած Դէյ-Ֆուսին արդարացնելու զօրեղ փորձերի մէջ Ֆրանսիացին տեսաւ իւր հայրենի զօրքի կառավարութեան դէմ մահացու հարւածների փորձեր, որովհետեւ Զոլան ոչ մի ապացոյց չէր բերում զինուորական վարչութեան և զինուորական զատարանի դէմ, այլ միայն խախտել էր կամենում հաւատը զէպի զինուորական վարչութիւնը մի այնպիսի գործում, որի հիմքերը՝ զոկումէնտները՝ այդ նոյն զինուորական վարչութիւնը երկրի պաշտպանութեան գործի համար վտանգաւոր է համարում հրատարակել իշուր ամենքիւ Ամբոլը հաւատում է զինուորական վարչութեան խելացիութեանը՝ վերաբերեալ գաղտնիքներին—Զոլան չի հաւատում,—ահա ամբողջ խնդրի կծիկը: Ոչ-Ֆրանսիացիք, որոնք երբէք չեն կոչւելու Ֆրանսիական զրօշակի տակ կռւելով արիւն թափելու, առանց այլևայլութեան ծափահարեցին Զոլային. իսկ Ֆրանսիացին, որը իրեն չի ջոկում իւր զօրքից, վառւած հայրենիքի սիրոյ սրբազան կրակով—չի թոյլ տալիս այդքան անպայման անվտանգութիւն դէպի իւր երկրի զօրքի ծայրում կանգնածները, երբ մէջտեղում ոչ թէ ապացոյցներ են դեր կատարում, այլ միայն կասկածները: Զոլան, անկասկած, ունի տիեզերահռչակ անուն, բայց միայն տաղանդաւոր վիպասանի անուն. բայց ներկայ դէպքում պէտք էր մէջ տեղ դնել ոչ թէ տաղանդի այլ քաղաքացու անուն ծանրութիւնը. ներելի է կարծել, որ Զոլայի քաղաքացիական առաքինութիւնները մինչ օրս փորձի չեն ենթարկւել, և Ֆրանսիական ազգը պատճառ չի ունեցել Զոլայի անուն հետ կապել քաղաքացիական մի ոյժ, որը հաւասարէր Ֆրանսիական զօրքի ճակատագիրը տնօրինող այնքան զինուորականների հեղինակութեան հետ: Եթէ մի րոպէ թոյլ տանք, որ այսպիսի մի յուզիչ խնդրի մէջ ազգը չէր կարող լոկ հանդիսատեսի դեր կատարել, եթէ թոյլ

տանք և արդարացի համարենք ամբոխի բուռն կողմնակցութիւնը յօգուտ մէկի կամ միւսի,—որքան և որքան միութարական է տեսնել ամբոխի կողմնակցութիւնը ինպատու իւր կառավարութեան օրգաններին, քան եթէ այդպիսի բուռն կողմնակցութիւն լինէր յօգուտ Զոլայի՝ ընդդէմ Ֆրանսիական կառավարութեան, ընդդէմ Ֆրանսիական զօրքի ամբողջ վարչութեան, երբ այդ ամբոխը չունի ձեռքին դրական ապացոյցներ, այլ ստիպւած է ղեկավարել լոկ հաւատով դէպի մէկը կամ միւսը։ Այդ նոյն արտասահմանեան երկիրները ինչ գաղափար պիտի կազմէին Ֆրանսիայի ու նորա ապագայի մասին, եթէ Զոլայի լոկ մեղադրանքների հիման վրայ տապալէր և կառավարութիւն և ամեն ինչ։

Գովում ենք Զոլայի քաջութիւնը, եթէ նա ունի ապացոյցներ, որով նա կը հաստատի իւր մեղադրանքները. եթէ կը հաստատի թէ զինւորական դատարանը Գրէչֆուսին մեղապարտ ճանաչելով և Էստերհազիին անպարտ արձակելով՝ հետեւել է լոկ զինւորական միւստրութեան և զլիսաւոր շտաբի վարչութեան զրդումներին. բայց գովում ենք նաև Ֆրանսիական հասարակական կարծիքը և Պարիզի ժողովուրդը, երբ սա, մինչև ապացոյցները ակներև երևան կ'գան՝ իւր հաւատը շնորհում է իւր կառավարութեան օրգաններին և ոչ Զոլային։ Բոլորովին այլ խնդիր է թէ ամբոխը ինչ կ'զանակով արտայայտեց իւր զայրոյթը Զոլայի դէմ և իւր հաւատը դէպի երկրի զինւորական վարչութիւնը. չսկիզբ է զայրոյթը արտայայտելու ձևերի համար դատապարտել նաև նոցա հիմքը կազմող սրբազան զգացմունքը. և ոչ ոք չի կարող ուրանալ, որ այն հսկայական մեղադրանքների մէջ, որ Զոլան է բարձրացրել—կայ նաև հայրենիքի ապագայի խնդիր։ Եւ եթէ այդպէս է, հապադորանով մի չափ է տրւած կշռելու թէ որքան տևողին է, երբ Ֆրանսիայից դուրս մամուլը այնքան միաբերան ցնծութեան ձայներ է արձակում Զոլայի հասցէին, որը չի կարելի ցոյց չհամարել Ֆրանսիական կառավարութեան<sup>189</sup> դէմ։ Մենք Ֆրանսիան ճանաչում ենք այնքան ազատ և լուսաւոր երկիր, որ կարող ենք հաւատ ունենալ, որ նորա հաստատութիւնների հովանու ներքոյ սուտն ու արդարութիւնը երևան կը գտն նաև անկախ օտար ազդերի ձայների միջամտութեան, ազդերի, որոնցից շատերը դեռ միայն պիտի սովո-

րեն Ծրանսիայից թէ ինչ է օրէնք, ինչ է արդարադատութիւն: Լրագրերը տպեցին թէ Խալիֆայից տասը հազար հոգու ստորագրութեամբ շնորհաւորանք է գնացել Զոլային: Ովքե՞ր են այդ տասը հազար հոգիները, որոնցից ամեն մէկը մի մի սէին պիտի բռնի վաղը՝ սպասելով հրամանին այն կառավարութեան, որը անդամ է Ծրանսիայի դէմ ուղղած եռապետական նիզակակցութեան, և որի ղեկը Բերլինումն է?

Այդ դատապարտելի, պախարակելի ընթացքին միաբուռն հետեւում է նաև մեր խղճուկ ազգի խղճուկ օրագրութիւնը՝ ի դէմս Մշակի և Նոր-Դարի: Հարկաւ՝ հայ ընթերցող հասարակութեան համակրութիւնը և հակակրութիւնը արդարադատութեան գործում: Զոլայի խնդրի վերաբերեալ՝ դրականապէս ոչ մի նշանակութիւն չունին: Հայկական մամուլը ոչ մի ծնշում չի կարող գործել Ֆրանսիական երդեալների դատարանի վրայ, և ոչ էլ հայկական հասարակաց կարծիքը կարող է արժանանալ ուշադրութեան նոյն իսկ Զոլայի կողմնակիցների կողմից Ծրանսիայում: Իսկ ո՞րքա մի՞թէ խնդիրը դորանումն է? Հայ թերթը հրատարակում է հայերի համար, որոնք պէտք է սովորեն մտածել, զգալ եւ գործել: Եւ այդ հայ հասարակութիւնը ինչ խրատ պիտի սովորի յիշեալ թերթերի գրածներից Զոլայի դատի առթիւ? Այն, որ պէտք է՝ դատը չսկսած ու չվերջացած՝ առանց ձեռքներին ապացոյց ունենալով՝ անպաշտան դատապետել մէկին և պախարակել միւսին! Որպիսի՞ թեթեամիտ վերաբերմունք դէպի մի ազատ ու մեծ երկրի կառավարութիւն, օժտւած արդարադատութիւնը ապահովող կատարելագործւած օրգաններով, և մի երկրի դիմաց, ուր հասարակաց կարծիքը ամեն կերպ արտայայտւելու միջոցներ ունի! Միմիայն Զոլայի մեղադրական դրւածքի առիթով, ահա մէկը արդէն իւր վճիռն է կարդում Ծրանսիայի ճակատագրի մասին, միւսը գրում է ամբոխի նշանակութեան մասին, և թերթերից ամեն մէկը աշխատում է շահագործել Զոլայի կողմից բարձրացրած ազմուկը...

Ռուսաց մայրաքաղաքների մամուլն էլ զլուխ է թափ տալիս Ֆրանսիական արդարադատութեան վրայ: Այդ մամուլը մոռանում

է, որ եթէ Ֆրանսիան մի երկիր է, ուր կարող էր Պանամայի սկանդալը ստեղծուիլ, բայց Ֆրանսիան նաև այն երկիրն է, ուր կարող էր այդ սկանդալի դատարանական բազմակողմանի քննութիւնը կատարուիլ, որին զոհ գնացին երկրի քաղաքական և ֆինանսական մեծամեծներէից շատ շատերը: Եւ այժմ, այդ խոշոր դէպքերը մոռացութեան առող մամուլն է, որ Զոլային ներկայացնում է որպէս մէկին, որը իւր երկրում արդարադատութիւն չի գտնում, և արդէն կանխաւ վճիռներ է կարդում թէ Զոլայի ամեն մի մեղադրական խօսքը մի մի մարգարիտ է, նոյն իսկ երբ նորա մեղադրանքներէից ոչ մէկը ապացուցւած չէ!

Ֆրանսիան ունի մեծ անցեալ. պէտք է ցանկանալ որ նրան վիճակւած լինի նաև մեծ ապագայ. և հէնց այդ պատճառով մենք շատ ուրախ ենք, որ նա այնքան ուժեղ է, որ ամբողջ արտասահմանի հասարակաց կարծիքը, որը Զոլայի խնդրի մէջ մենք արհեստական ենք համարում, չի շեղիլ նորան այն ճանապարհից, որ գծել են նորա օրէնքները: Այն ահագին աղմուկը, որ հանել է Զոլայի գործը, իւր մեծ ծաւալի համար պարտական է մի հանգամանքի, այն է որ Ֆրանսիայում կատարող անցքերը ղիւրուլթեամբ դառնում են ուշադրութեան և հետաքրքրութեան առարկայ ամբողջ աշխարհում, մինչդեռ նման և դեռ աւելի խոշոր գործերը որ կատարւում են այլ երկիրներում, չեն դառնում օտար երկիրների ուշադրութիւնը նոյն սաստկութեամբ, և շատ անգամ սովորական ընթերցողներին անյայտ են մնում: Գերմանիայում անցեալ տարի քննուող զաղանի ոստիկանութեան պետ Տաուշի ահագին գործը բոլորովին այլ կերպ աղմկալի կը լինէր, եթէ նա Ֆրանսիայում լինէր: Այդ հանգամանքը բաւական է որ Ֆրանսիան գիտենայ թէ ինչ կշիռ պիտի տայ արտասահմանի աղմուկներին, երբ սոքա ընդունում են միջամտութեան կերպարանք մի այնպիսի գործում, ինչպիսին է Դրէյֆուսի, Էստէրհագիի և Զոլայի գործը, ուր սովորական արդարադատութեան խնդրի հետ՝ նաև երկրի պաշտպանութեան խնդիր է շօշափւած!

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

### Հ. ՍԵՒԵԱՆԻ

#### XVI

Բազմալ խմբի կազմակերպումները:—Ներկայացումներ:—Ժողովրդական ներկայացումներ:—Րէժիսորի խնդիր:—Թիֆլիսի խումբը եւ ներկայացումները:—Պ. Գ. Տէր-Ղաւթեանի 25 ամեայ բեմ. ղործունէութիւնը:—Րէցէնդէնտներ:—Լեզուների խումբի նախնիներ:—Սիրտ» դրամա Յ. Սունդուկեանցի:

Բազմալ հալ դերասանական խումբը կազմւած է հետեւեալ անձերից՝ դերասանուհիներ Տ. Տ. Սիրանուշ, Մելիքեան, Աւետեան, օր. օր. Վարդիթեր, Մարի-Հրանուշ եւ Վարդուհի, Դերասներ պ. պ. Աբէլեան, Պետրոսեան, Աւետեան, Թուրեան, Ալիխանեան, Վրոյր Օհանեան, Յարութիւնեան, Արաքսեան, Ստեփանեան, Մելիք-Յովսէփեան եւ Հակոբզունի: Սցէնարիում է Ե. Ամիրեան, իսկ Յուշարար պ. Թորոսեան:

Անցեալ հոկտեմբերի 15-ից Բազմալ դերասանական խումբը սկսեց իւր ներկայացումները «Հոգեով աղքատներ» դրամայով, հետզհետէ ներկայացրեց «Դօն Գրէգորիօ եւ Մկնիկը», «Կամելիազարդ տիկին», «Պատիւ», «Զօքանչ եւ 200,000», «Փարիզի շրջմոլիկը եւ Բաղդասար աղբար», «Քոյր Թէրէզա», «Արդիւնաւոր պաշտօն եւ պօմպարդուհի պանդօքը», «Դարբնապետ», «Բաղդասար Աղբար եւ Փարիզի շրջմոլիկը», «Երկրորդ երիտասարդութիւն», «Մեծապատիւ Մուրացկաններ եւ Ճարահատեալ դերասան», «Օտարներ», «Ժորժ Դանդէն եւ Էս էլ քի Մօցիլլիութիւն», «Պէպօ», «Անսանձի սանձահարումը», «Զաւակ», «Կրքի բանկում», «Սամէլ», «Խանում», «Ամուսիններ», «Զաւակ», «Տարտիւֆ», «Արտուտ», «Օտարներ», «Պէպօ եւ Օսկան Պետրովիչը դժոխքում», «Ավտայեանի արարքները», «Անմեղ Յանցաւորներ», «Կողոպտած փաստ», «Անպատիւ չեն ծնում» եւ «Իկիչի հարսանիքը»:

Բազմաչ կօմիտէտի գործունէութեան պոսակը կարելի է համարել ժողովրդական—էժանագին ներկայացումների ձեռնարկութիւնը: Բազմաչ պէս հաշաշատ և գործարաններով լի քաղաքի համար անհրաժեշտ է մտաւոր սնունդ, և դա մասամբ կարող է հալթալթել ներկայացումների միջոցով: «Մուրճի» էջերում քանիցս շնչուած է էժանագին ներկայացումների անհրաժեշտութեան մասին, և ալժմ ուրախալի է որ ալդ անխտաճգելի պահանջին բաւարութիւն տալու սկիզբ է դրաժ: Հալ թատրոնի տարիգրութեան մէջ շատ խոր դրոշմաժ պիտի լինի անցեալ նոյնմբեր 15-ը, երբ առաջին անգամ խաղացւեց «Բաղդասար աղբար և Փարիզի շրջմոխիլը» պիէսաները, որոնց չաջորգեցին հետգհետէ «Սամէլ» և «Զաւալ»: Նկատի ունենալով ալդ ներկայացումների աղնիւ նպատակը՝ մեժ խնամքով պէտք է ընտրել ներկայացնելի խաղերը, միւննոյն ժամանակ աւելի էժանացնել տեղերի գինը: Օրինակի համար գալէբէա 15 կ. թանդ է. նոյնպէս և առաջին կարգը 1 ու: Զպէտք է մոռանալ որ մի բալախանցի գործաւոր դիցուք 50 կոպ. տոմսակ դնելիս նոյնքան և աւելի գնալ-գալու վրալ պիտի ժախէ: Միւննոյն ժամանակ ցանկալի էր որ էժանագին ներկայացումներ լինէին և Թիֆլիսում, որտեղ չբաւոր դասակարգի համար մի անմապէլի վալը է թատրոնը:

Մեր ճախորդ չօղաժում շնչուել էինք ուէժխօրական խնդրի մասին, որի կարիքը միշտ զգացել են դերասանական խումբերը և չ'դոյութեան պատճառով ալդ պաշտօնը անւանական կերպով վարել են խումբի զանազան անդամները՝ առանց աղգեցութիւն ունենալու ներկայացումների կատարեալ չաջորութեան վերալ: Բազմի թատր. վարչութիւնը ուէժխօրի չաջող ընտրութիւն էր արել չանձին Տ. Հրաչիալի, որի ճաշակը և ունեցաժ բեմական հմտութիւնը անվիճելի է և սկզբնական դրաժ չորս ներկայացումները (Հոգւով աղքատներ, Գոն Գրէգորիօ, Կամելիաղարդ տիկին, և Զոքանչ) ապացուցեցին որ մի հասկացող և իւր կոչման համապատասխան ուէժխօրի հսկողութեամբ տրւող ներկայացումները անչալի զանազանում են բաղդի բերմունքին չանձնաժ ներկայացումներից: Յարդելի տիկինը չորս ներկայացման համար վարելով իւր պաշտօնը՝ իւր տկարութեան պատճառով հրաժարեցալ՝ մեժ ցաւ պատճառելով ամբողջ խմբին, որը զգացել էր նրա պաշտօնավարութեան բոլոր բարիքը: Անուհետեւ —դարձեալ առ ժամանակալ—մասնաժողովը խմբին կառաւտրիչ նշանակեց պ. Պետրոսեանցին: Ալդ պաշտօնը ալժմ վարում է պ. Աղ. Ալլահվէրդեան: Ռէժիսորի խնդիրը հալ խմբերի միշտ տանջող ցաւն է և մասնաժողովը լրջօրէն պիտի զբաղւի ալդ խնդրով:

Թիֆլիսում մնացող դերասանուհիք Տ. Զաքէլ, Փառանձէմ, օր. օր. Ախաչեան, Խիթարեան, դերասաններ պ. պ. Տէր-Դաւթեան, Աղաչեան և Մամիկոնեան մի քանի թատերասէրների մասնակցութեամբ նույնների սկիզբից սկսած շաբաթական մի ներկայացումն են տալիս: Շատ զգալի է անսամբլի թուլութիւնը՝ որի պատճառով ներկայացումները պէտք եղած տպաւորութիւնը չեն անում: Հետզհետէ ներկայացուցին «Ղարաբաղի աստղադէտը».—«Ապահարդան».—«Երկու գերդաստան».—«Չարագուշակ քալը».—«Անպատիւներ».—«Ճիրաններ».—Պ. Տէր-Դաւթեանի 25 ամեակի առիթով «Պէպօ», «Սկապէնի արարքները» և «Հազար թումնանոց կարապ»։ Ընտանեկան դադոնիք։—«Մեծապատիւ Մուրացկաններ»։—«Մի կնոջ տանջանք»։—«Շղթաներ»։

Անցեալ դեկտեմբերի 17-ին Թիֆլիսում տօնեց պ. Գ. Տէր-Դաւթեանի բնական գործունէութեան 25 ամեակը Աւելորդ չի լինի մի քանի կենսագրական տեղեկութիւններ հաղորդելը: Գէորգ Զաքարեան Տէր-Դաւթեանը ծնւած է Թիֆլիսի Հաւաքար թաղում 1850 թ.: Նախնական կրթութիւնը ստացաւ նոյն թաղի Ս. Մինաս եկեղեցու ծխական դպրոցում, որտեղից դուրս գալով մտաւ Ներսիսեան դպրոցը և շարունակեց մինչև երրորդ դասաւանդ: Առաջին անգամ բեմ դուրս եկաւ 1872 թ. ընկերութեամբ տրուող ներկայացումների մէջ «Հազար թումնանոց կարապ» պիէտում, հեղ. Նիկ. Փոռլինեանի: Այդ ժամանակ ընկերութեան անդամներ էին Ամրիկեան, պ. և Տ. Զմէկեաններ, Միրադեան, Աղիբէյ Մելիքեան, Սարգ. Ղազարեան, Քէթևան Արամեանց, օր. Ֆօն—Բրէններ և ուրիշներ: Այդ խումբը իւր գոյութիւնը ընդհատումներով շարունակելով և զանազան փոփոխութիւնների ենթարկւելով հասաւ մինչև 1879 թ.: Այդ թւականից —որ հաջ թատրոնի Թիֆլիսում վերածնութեան թւականն է—Գ. Տէր-Դաւթեանը դերասանական խմբերի անհրաժեշտ անդամն էր: Նորա աստղը առաջին անգամ փալած է «Քալքի աղաթ» պիէտում (հեղ. Գուստով Քալանթարեանի Նրեանցու), իսկ գլուխ գործոցն է «Պէպօ» պիէտի Գիքօ-ի դերը: Գ. Տէր-Դաւթեանը 26 տարի անընդհատ աշխատելով արժանացաւ իւր քրտինքի վարձատրութեան: Հաստիակութեան բոլոր զատակարգերը մասնակցեցին իւր 25 ամեակի տօնախմբութեանը: Նա իւր տաղանդով և շնորհալի խաղով մալրեցի բեմին կապեց մինչև անգամ Թիֆլիսի աչն դասակարգը՝ որը խորթացած է լեղում և նիստ ու կացուի: Իւր 25 ամեակի առիթով Տէր-Դաւթեան ստացաւ հետեւեալ պսակները՝ Թիֆլիսի Արտիստիկ ընկերութիւնից, վրաց խմբից. պ. Ֆորկատիից, Թիֆլիսի հաջ խմբից, տօնախմբութիւնը կազմակերպող մասնաժողովից և Բաքու հաջ դերասանական խմբից (արծաթեալ). բացի սրանցից պ. Տէր-Դաւթեան ստացաւ շատ ընծաներ, ուղերձներ, և շնորհակալական հեռագրեր: Բազում թատր.

մասնաժողովը պ. Տէր-Գաւթեանի 25 ամեակը չարգելով հրաւիրեց նրան երկու ներկայացման համար. խաղացեց «Պէպօ» և «Ոսկան Պետրովիչը դժոխքում»։ «Սկապէնի արարքները» և «Գոքատը թաթոս»։ Շնորհալի դերասանը ընդունեց շատ չքով և վարձատրեց ընծաներով։

Բազալ ներկայացումների սկսելու հետ, սկսեց նաև ռէցէնզէնտների գործունէութիւնը, որ ինչպէս ուրիշ անգամ առիթ ունեցած ենք ասելու, փոխանակ նպաստելու հասարակութեան ճաշակի զարգանալուն և դերակատարներին օգնելու իրանց չտեսածը տեսնելու—մի ալնպիսի քաջօրի ճանապարհ են բաց անում ընդհանուրի առաջ, որից դուրս գալ անհնարին է. ճիշդ է, ըստ ասածի «ճաշակը չունէ ընկեր», բայց անկարելի է որ ռէցէնզէնտների հասկացողութիւնների և ճաշակների մէջ ալնպիսի անջըրպետ լինի՝ որ մէկի համար լաւ, հիանալի, զերազանց և զածը միւսի համար լինի՝ վատ, անպէտք, անմաշակ։ Այս բոլորի պատճառը ալն է որ բոլորովին պատահական, թատրոնի, բեմի հետ ոչինչ առնչութիւն չունեցողներ ռէցէնզէնտի կոչումն են ստանում և ստանալով ալն՝ աներկիւղ, արձակ համարձակ աստարեզ են դուրս դալիս, մի գրչի հարածով տապալելու ալն՝ որ—շատ լաճախ—արդիւնք է երկար աշխատութիւնների, Բեմի զարգացման համար անհրաժեշտ է որ ռէցէնզիւնները գրեն առանց կանխակալ կարծիքների և ռէցէնզէնտները լինեն ալնպիսի անձինք, որոնք քիչ թէ շատ ծանօթ լինեն բեմին։ Այլապէս բեմը միշտ փնասելու է դրանցից։

Միևնուրեք ժամանակ բացեց բեմի հետ և չրջան լեզուների խառնակութիւն։ Դա հալ բեմի ճակատագիրն է. երբեք պիէսի լեզուները նման չեն միմեանց, և դերասանի առաջին գործն է դերը ստանձնելուց լետու անմիջապէս լեզուն ուղղելու ձեռնարկել, որպէս զի հնար լինի դեր սովորել, ապա թէ ոչ անհնարին է սովորել կամ ըմբռնել ալնպիսի նախադասութիւններ որոնք ամեն լեզւի նման են՝ բացի հայերէնից։ «Վոլերճ» ի էջերում քանի քանի անգամ շեշտել է ալն խնդիրը, և ամեն անգամ էլ անուշադիր թողնուել հապճէպ գործելու պատճառով։ Բեմական պիէսների լեզուն պէտք է որ վերին աստիճանի խնամքով մշակւած լինեն, զուտ հալ ոճերով—առանց խնթնաբանութիւնների—թեթև և սահուն. և քանի որ հալ թատրոնը դերձ է «СКОЛЬКО ЛЕТЪ, СКОЛЬКО ЗИМЪ»-ը «քանի ամառ, քանի ձմեռ» թարգմանող թարգմանիչներից, հետևաբար Բազալ թատր. մասնաժողովի պարտքն է ուշի ուշով հետևել լեզւի խնդրին, քանի որ նա սկզբունք է դրած իրեն—փող չխնայել գործի կատարելութեան հա-

մար: Անհրաժեշտ է դերերը արտագրել տալուց առաջ մի հաջնաք ձգել պիէսների լեզւի անհարթութիւնների վրայ:

Փետրւարի 7-ին վրաց ազնականութեան թատրոնում, յօգուտ Հալոց Հրատարակչական Ընկերութեան տրւեց մի նոր պիես «Սիրտ», զրամա 5 գործողութեամբ, հեղինակութիւն երիտասարդ Յովհ. Սունդուկեանցի (աղ-դակաւն չալտնի զրամատուրգ Գաբր. Սունդուկեանցի): Հասարակութիւնը շատ հետաքրքրւած էր նոր պիեսի բաղդով, բայց տարաբախտաբար երի-տասարդ գրողի ալը առաջին զրաման չաջողութիւն չունեցաւ: Ժամանակի սղութիւնը չի ներում որ Մուրճ-ը ալս անգամ իւր զիտողութիւնները անի ալը պիեսի մասին. ալը կ'անի գալ անգամ. բայց ինչ վերաբերում է ղերակատարներին, պիեսի գլխաւոր դերը կատարող օր. Տ. Սունդուկեանց, որը առաջին անգամն էր բեմ բարձրանում, ապացուցեց որ իւր հօրից նա ժառանգել է ոչ միայն անուն, այլ և տաղանդ: Լաւ առողջանութեան հա-մար հաւանութիւն գտաւ նաև օր. Յ. Մելիքեան, որը, որքան գիտենք, Նոյնպէս առաջին անգամն էր բեմ դուրս գալիս: Ամբողջ անսամբլը, որի մէջ էին նաև օր. Իշխ. Ս. Արղութեան, պ. պ. Ս. Վարդանեան, Յ. Աթա-քէզեան, Ամիրան Մանդինեան և ուրիշներ, չաջող էր:

## ԱԶ ՈՒ ՁԱՒ

Գ.

Գաղթականութեան ցաւը:— Օտար նպատակները:— Գաղթականութիւնը ովկասի մէջ:— Տոնկահային հիւսածափումը եւ կորուստները:— Թէ ինչե՛ր կարելի էր ընել:— Փնտքի ուռկանքը:— Անմաստելի հարուստները:— Բացառութիւններ:— Վերջին ընելիքը:— Օտարներ ենք:

Որչափ ատեն որ շարունակելի ցաւը, մարդ կը փորձէի միշտ դարմանը խորհիլ, թէ եւ ամէն ցաւ անպատճառ դարման մը չունենար, ինչպէս Կովկասի տաճկահալ գաղթականութեան ցաւը անբուժելի ու մահաբեր պիտի լինի դժբախտաբար... Ով որ գէթ քանի մը ժամ գաղթականներուն վիճակը խղճամտօրէն քննելու, անոնց հետ մտերմաբար խօսակցելու և քանի մը բոլորէ անոնց անցած ու ներկալ կեանքին վրայ խորհելու «մեծ բարեհաճութիւնը, կ'ունենալ, պիտի դալ մեր ալս եղբակացութեանը —ահաւելի է հետեանքը» և միտքարական ոչինչ չկալ:

Ո՞վ չի գիտէր թէ ինչ զոխեմ հանգամանքներէ ծնունդ առին թաղթականութեան ճիւղաւոր հոսանքները գլխաւորապէս դէպի Բուլղարիա, Նիքիպոս, Յունաստան և Կովկաս: Վիրաւորներ, արիւննոտածներ էին որ կը ցրէին իրենց դրացի երկիրները: Եւ ուր որ գնացին՝ օտարները բարի դրացիի կարեկցութեամբ՝ վերակապերով և բալասաններով զիրենք դիմաւորեցին ու մտիկ ըրին չուզումի և արգահատանքի սարսուռով անոնց թարմ և կսկծալի վիշտերը: Նրկար շշուկ մը աշխարհի ամէն կողմը հասաւ. «Գաղթականները խնամքի կարօտ են, պէտք է անչապաղ օգնել անոնց»: Ու Գթութեան Քոլերն ու Առաքեալները շուտով հետզհետէ եկան Անդրկալէն, Ամերիկալէն, Գերմանիալէն և ուրիշ քանի մը երկիրներէ. և Նպաստին հետ համակրանքի և սիրտանքի կաղդուրող խօսքեր ալ կը բերէին իրենց ազգակիցներու կողմէն: Կարիքները շատ մեծ էին և շատ բազմատեսակ. բայց արտաշնչաւած կարեկցութիւնն ալ աչքան խորունկ էր և օգնելու ինքնաջօծար պատրաստականութիւնը՝ շատ զօրեղ: Նպաստները, օրինակ՝ Բուլղարիայի մէջ, իրարու ետեւէ հասան միշտ, ամիսներ ամբողջ: Ամէն պիտուք կը հոգացէր, ուտելիք, կահ-կարասիներ, մինչև

սենեակի վարձք և դեղի գինը: Միսիոնարուհիներէ մէկ քանին մօտէն ճանչնալու պատենութիւն ունեցաւ. գարմանքով տեսաւ թէ ինչքան ժրաջանութիւն և տաք կարեկցութիւն կար իրենց մօտ. ամէն մարդ քրոջ գթոտ խօսքեր կը լսէր անոնցմէ: Երբեմն ժամերով կը հսկէին անոնք հիւանդներու մօտ, ու բժշկի և մօր քնքշութեամբ խնամք կը տանէին՝ ալդ պանդուխտ և ամէն բանէ զրկած հիւանդներուն: Օրիորդ Ֆրայզըր կանադացի միսիոնարուհին, որ նախորդ տարի Վառնալի նպաստի գործին գլուխը կեցած էր, կը լանդիմանէր բոլոր անոնք որ ողորմութեան ձևով գթութիւն կազմեցին. իրենց տւածը, ինչպէս կը կրկնէր միշտ ինք, նպաստ էր եւ ո՛չ ողորմութիւն. նպաստ ազգի մը որ ցաւակից է մեր վշտին և համակրանք կը տածէ դէպի մեր ազգը:

Անգլիկայի կամ գերման միսիոնարներն ու միսիոնարուհիները չեկան Կովկաս. մտածելով ապահովապէս թէ ալտեղ բնիկները հնարաւորութիւն ունէին իրենց թշուառ ազգակիցներուն վիճակը մասամբ ամօքելու համար, մանաւանդ որ կառավարութիւնը բարեհաճած է հանգանակութիւն մը թուլատրել ի նպաստ տաճկահալ գաղթականութեան:

\*  
\* \*

Զէ թէ նպաստ ալ ողորմութիւն է որ կը խնդրէ Կովկասի մէջ հալ գաղթականը, և ողորմութեամբ է միայն որ կը լուսաւ ապրել:

Ամէն ինչ թողած, ամէն կողմէ հալածական, բռնը քանդած թըռչուններու պէս, գաղթական հալը կուգաւ Ռուսիա անուշ լուսերով իր «եղբայրներուն» մօտ ապաստան մը փնտռելու: Շատ երկար ու խճուտ էր ճամբան, ուրկից քալեց, բալց քիչ մը ժամանակ իր ականջին ոգևորութեան և կարեկցութեան բառեր փսփսացին. բարի նշան էր ատ. սակաւն ալսօր «ապաստանը» իր սուր, իր վիրաւորող փողերը կը ցցէ՝ սարսափած և հալածական թռչուններուն:

Գթբախտութիւններու և կսկիծներու տպաւորութիւնը ցնցող բալց միանգամայն շատ ալ վաղանցուկ եղաւ. վիշտերն ու աղէտքներն ալ իրենց թարմութեանը մէջ միայն հետաքրքրական են եղեր, և ալ ևս չկա՛ն կարեկցութիւն հոն՝ ուր վիշտը իր թարմ հրապուրը կորսնցուցած է...

Գաղթականները, անճրկած, գութ, կարեկցութիւն կ'աղերսեն. ինդրանքի խօսքերը երբեմն արցունքներով կը խեղդւին, խորունկ և երկար հառաչանքներ թարգմանը կը լինին իրենց խոցոտւած, իրենց աւերակ սրտին. բալց զուր տեղը, սառնութիւնը չի հալիլ իրենց արցունքներովը: Շատերը, որոնք կրնան աշխատիլ, գործ կը խնդրեն, որ և է գործ, ինչ ալ լինի, ամենաաղճար, ամենաաղտոտ, հոգ չէ. բալց մերժում: Պատասխանի տեղ կեղծ միամտութեամբ մը՝ խուսափողական կամ մանաւանդ վանողական հարցումներ կ'ուղղւին դիմում ընողներուն—«Իսերէն իմանում

եա): Շատ լաւ գիտնալով որ տաճկաստանցի հալը ռսերէն չի կրնար գիտցած լինել. «ափսոս, եթէ ռսերէն գիտենալիր, գործ կը լինէր քեզ համար», ու երթաւ-բարովը կըսեն: Նոյնպէս ռսերէն գիտցողներուն ալ տարբեր պատասխաններ կ'տան չարդելի խազէլինները. «չաւ, նկատի կ'ունենանք ձեզ, և եթէ ձեզ չարմար գործ լինի, տեղեկութիւն կը տանք»: օրեր կանցնին, ամիսներ կը բոլորին և «չարմար գործը» չի ներկայանար երբէք, որովհետև գիմովին խնդիրքը արդէն շատոնց մոռցւած է:

Եւ տաճկահալը կը հիասթափւի:

\*  
\* \*

Կը հիասթափւի և շատ կը զարմանալ աչսօր գաղթական հալը, տեսնելով իր շուրջը բոլոր աչն անձերը, որ ամէն հնարաւորութիւն ունէին օգնելու իրեն, և թթւած դէմքով արհամարհոտ պատասխաններ կուտան՝ ծաղրելով իր անձն ու իր վիշտը: Եւ կ'ունենալ ան զղջում մը, դառն, կսկծեցնող, աւամայ՝ իր արած սխալ քալլին համար, որովհետև ան հիմա ստիպւած է շատ բան մոռնալ եւ ուրանալ իր փալվալած գաղափարներէն, ու արժանապատուութիւնը ուրիշներու քմահաճութիւններուն խաղալիկ դարձնել, համակերպելով հանգամանքներուն: Կեանքի ամէն բարիքներով չզրկացած արենակիցներու մօտ իրենց աչս «համակերպումը» և կրկնակի տառապանքը շատ աւելի կը վշտացնէր, եթէ զօրեղ ուժի մը առջև համակերպելու պարտաւորւած լինէին: Սակայն սնոնք անշողջողջ մնացին ճնշիչ ուժին առջև, սպանիչ հանգամանքներու և մահաբոլոր մթնոլորտի մը մէջ. կտրծք տւին ամենէն զմեզակ ձախողութիւններուն՝ իրենց սկզբունքներուն ներկանութիւնը անեղծ կարենալ պահելու համար, նման աչն զինւորներուն որ անհամար գնդակներով կը ծածկւին, բազց կրկին կը պահեն իրենց պրկւած մասներուն մէջ ազգին չաղթական գրօշակը:

Ինչեր էին տաճկահալին պահանջները.— ունենալ տիրողական իրաւունք և ապահովութիւն իր անձին. իր ինչքէն զրկեցաւ, կեանքերու անթիւ կորուստներ ունեցաւ և միայն իր պատիւը կրցաւ անվթար պահել: Ողջ մնացողները ալ չէին կրնար անվրդով ապրել աչն հողին վրայ, ուր մահը բոնած էր, և ցիրուցան եղան՝ օտարներու բարեսրտութեանը ապաւինելով: Կը կարծէին անոնք թէ հեռու տեղեր ապրող իրենց ազգակիցները պիտի հասկնան իրենց վիշտը և պիտի օգնեն իրենց: Յոյսերու աստղերը, որ Բէթլէմի ջգիսատներուն նման առաջնորդեցին զիրենք, կը մարին, պատրանքի վարագոյրը կը պատուէր, և ահա տաճկահալը կը տեսնէ կծու զաւռնութեամբ մը որ ինք իր տառապանքին հետ մինակ է. ուրիշները զինքը չհասկնալ կը կեղծեն:

Ու իր պատիւը որ մաքուր պահելու հպարտութիւնն ունէր մինչև այսօր, իր պատիւը ազտոտ քուրջ կ'ուզէն ընել իր «եղբայրները»: Մտէք

գաղթականներուն մէջ, մտերմօրէն խօսակցեցէք իրենց հետ, և տեսէք թէ ինչեր պիտի ըսեն ձեզի, ինչքան սրտի վէրքեր պիտի պարզեն ձեր առջև, և ձեզմէ խորհուրդ պիտի խնդրեն, ինչ ընել, Բագուցիները իրենց դէմը ելլող գաղթականին աղքատանոցի ճամբան կը ցուցնեն. նոյն բանը կընէ նաև Մարդասիրական ընկերութիւնը, որ չգիտեմ թէ ինչքան կ'արդացնէ իր անունը, աղքատանոցը դնացէք, աջտեղ հաց կուտան: Իրան է թէ աղքատանոցի մէջ ապաստանած են հարիւրի չափ գաղթականներ և անոնցմէ շատերը աջտեղ կը ճաշեն, աղջիկներ մետաքսեղէն հիւսածներու ձեռագործով կը զբաղին. բայց բոլոր ասոնք, անձուկ չըջանակի մը մէջ, կարող չեն գէթ մասնակի դոհացում տալ գաղթականներու կարօտութիւններուն: Մուրճի նախորդ թիւին մէջ ըսած էինք—միայն թշուառները անոնք չեն որ «աղքատանոցի» չըջափակին մէջ անցնող ժամերն ու օրերը կը համբռնեն: Փանիներ կան, որ դէս ու դէն, քարւանսարաւններու և հին տուններու անկիւնները անգործ և չուսափառ, կը սպասեն որ և է գործի, որ և է լաջողութեան, որ միշտ կ'ուշանան: Ասոնք աջնպիսիներ են, որոնց քով շատ զօրեղ է արժանապատուութեան զգացումը և որոնք աւելի կը նախընտրեն միւսնէլ անօթի քան խնդրել անոնցմէ որ աղնօրէն տալ չեն գիտեր, որ գութ չունին, և որոնք ամէն բան ծաղրելու վարժւած են, նոյն խակ թշուառներուն վիշտն ու արցունքները:

„Vouloir c'est pouvoir“, կամենալը կարենալ է: Շատ բան կարելի էր և կարելի է ընդ պատուաւոր կերպով սպրելու հնարաւորութիւն տալով գաղթականներուն, գէթ ժամանակի մը համար: Փանի մը հարուստ միանալով կրնային կիներու համար հաղուստեղէններ կարելու, ձեռագործներով զբաղելու, բրդեղէն հիւսածներ գործելու և լացարարանի աշխատանոցներ հիմնել. նոյնպէս տղամարդոց ալ մէջմէկ չարմար գործեր դրնել: Քաւյ ալս բարեգործութիւնները շատ համեստ են. փառքի ուռկանը մեծ որսեր միայն կը փնտռէ: Փանք ու անուն, անա ալս առանցքը որուն վրա կը թաւալին միշտ ու միշտ մեր բարեբարներուն բարեգործութիւնները:

\*  
\* \*

Վարձեմ աւելի չարմար է բարեգործութիւն բառին տեղ ուրիշ անուն մը գտնել. որովհետեւ բարիքը դեր չունի իրենց գործերուն մէջ. պատշաճաւոր բնութեամբ փնտռենք, ուրիշներու մասին մտածել, կարօտներուն բարեկամ լինել, բախտէն հաւածաւորներուն, գոլութեան կռիւէն ձգմաւորներուն նկատմամբ գութ և բարեացակամութիւն ունենալը՝ վիճարական ցնորքներ են իրենց համար: Մշտապէս զիջելու անլադ տենչը՝ մարած է իրենց մէջ ուրիշ ամեն մարդկային զգացում. անհուն հաճութեամբ և պէտք մըն է կարծես թանձրացնել օրէ օր փողին դէպերը՝ կասսային մէջ, ինչպէս նաև իրենց պարարտ մարմինը ճարպի խաւերով: Ոսկին փալլը կը բաւ է փա-

բատեղու ահն խաւարը որ բացարձակ կը տիրապետէ իրենց մտքին մէջ, և իրենց առջև կը բացւին ամէն դուռ, որոնցմէ ներս արգելւած է ուրիշ շատերուն մուտքը, հոգ չէ թէ արժանիքի, հոգեկան գեղեցիկ ձեւերով տէր եղած լինին անոնք: Բոլոր մարդոց մէջ իրենք միայն ունին կախարդական բանալին, ինչպէս հէքեաթներու մէջ, ամէն փակւած դուռ բանալու համար իրենց ջիղերը կարծրացած են, իրենց երակները կ'երթան հանգուցել սրտի մը, որ, ոսկի զրահի մը տակ, միսին զգալնութիւնը կորսնցուցած է:

Եւ անմատչելի ալ են անոնք: Թող գաղթական հալ մը օրինաւոր խնդիրքով մը դիմում ընէ մեր մէկ նշանաւոր հարուստին. ծառաւորներու ջոկատ մը ճամբան կը կտրեն. «Ինչ է. ում ես ուզում տեսնել, դու ով ես. ինչ պէտք է ասես», և իմանալէ չեսող թէ խնդիրք ունիս՝ կոպտութեամբ փողոցի դուռը կը ցուցնեն, լալտնելով որ իրանց պատւիրած է ոչ ոքից խնդիրք և նամակ չընդունել. ամէն խօսք և պնդում դուր տեղն է: Հրամաւած է իրենց խնդրագիր չընդունել, հրամաւած է նոյնպէս անքաղաքավարի լինել՝ արժանապատուութիւն վիրաւորող ամէն հարցում ընելով և ծաղրելով. հրամաւած է իրենց վռնդել. ինչ սքանչելի հրամաններ, և իրենց ծառաւորութիւնը աղքատ լաջող կատարելուն համար ինչքան առատ վարձատրութիւն կը ստանան արդեօք: Բայց տարբեր կերպով պատւիրած կը լինի իրենց ընդունել գործառնութիւններու համար եկողները, անտարակնա...

Բացառութիւններ կան ի հարկէ. ճիւղաղալին բան պիտի լինէր, եթէ բոլոր հարուստները իրենց զգալու կարողութիւնը կորսնցուցած լինէին. բայց գոթախոտարար ալդ բացառութիւնները աննշան են: Կ'իմանանք որ պարոն Առ. Մատուրեան, պարոն Համբ. Մելիքեան և ուրիշ քանի մը անձեր իրենք իսկ կ'խօսակցին գաղթականներուն հետ և պատասխան կը տան անոնց: Միտիթարական է բացառութիւններու հանդիպելը ալս պարագաներու մէջ, ինչպէս ամառաւ տօթին, մրկող անապատին վրա՝ կանաչ ծառերու հովանի գտնելը:

Որոնք սակալն բարեգործութիւնը պարտականութիւն մը կը համարին, և կուտան ահնքան ցնծալին զոհունակութիւն մը զգալով, որքան ստացողը կունենալ<sup>1)</sup>. Ինչո՞ւ ով որ դրամէն կը նպաստաւորուի՝ կծծի, զձուձ և փառասէր կըլլալ ընդհանրապէս, ով գիտէ...

\*  
\* \*

Ո՞վ գիտէ թէ ալս լուսահապեցնող անտարբերութեան դէմ ինչ պիտի վճռէ ընել գաղթական հալը վերջ ի վերջոյ. Նապաստակին սուսկը ինչքան ճիշտ կը լարմարի իրեն, նապաստակ մը չունեիքն կը հալածի և կը դիմէ ալ և ալ կենդանիներու՝ պաշտպանութիւն խնդրելով, բարեկամու-

կան խօսքեր ընողներ շատ կը լինին, բայց օգնող՝ ոչ ոք. շունները կը վա-  
ճողին բռնել չեաող անպաշտպան ճապաստակը:

Տաճկահայ գաղթականն արցունքներու մէջէն կ'ընդնշմարէ երկիր մը,  
որ իրն էր, ուր դեռ իրեն կը սպասեն իր ազգականները, որը սակալն  
մոխիրներու մէջ է դեռ: Աչքը կը սեւեռէ ալն ճամբուն, ուրկից եկած է.  
կը փափաղի դառնալ իր հալոյնիքը, որչափ կարելի է շուտ. հոն, իրաւ է  
որ վիճակի փոփոխութիւն չկայ. հանգամանքները նոյնն են և տրտունջ-  
ները կը շարունակին, բայց ոչինչ. կարգ մը հարցաքննութիւններու պի-  
տի ենթարկելի՝ իր տեսածներուն, լսածներուն և ըրածներուն մասին, և  
իբրև ապաշխարանք օրերով պիտի բանտարկւի թերևս. բայց հոգ չէ, ալդ  
ամենը ալ ևս չեն կրնար նոր վիշտեր պատճառել. որովհետև ինք ամբողջ  
մարմնով, ամբողջ հոգիով թաթիւած է վշտի և տրտմութեան մէջ. իր  
միամիտ պարծենկոտութեանը համար արդէն չափազանց շատ պատժեցաւ.  
Թէ եղբայրներ ունի Կովկասի մէջ, որոնք անդամներ են մեծ ընտանիքի  
մը որուն կը պատկանի ինքն ալ. և դառն չուսախաբութիւնն չեաող Պլա-  
տոն Արկատիէվիչի <sup>2)</sup> զարթնող գիտակցութիւնն է որ պիտի ունենայ:

«Մենք իրարու համար օտարներ ենք»:

Բագու, 22 դեկտ. 1898

ՄՈՏԱ

<sup>1)</sup> Քանի որ ալստեղ փախստականների առկիթով բարեգործների ա-  
նուններ են տրուում, առաջին գծի վրայ պէտք է չիշատակել տիկին Հալ-  
կանուշ Մարտիրոսեանցին, որի անձնական մասնակցութիւնը փախստա-  
կաններին դրամով և բարոյապէս սփռելուն՝ թէև ոչ հանրածանօթ, բայց  
մեղ թւում է եղակի է ամբողջ ոռոտահալոց մէջ: (Համեմատէք ալդ առկիթով  
Մուրճ 1897, էջ 1279): Խ/բ.

<sup>2)</sup> «Օտարներ»:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ՆՈՐ ԲՆԺԱՆՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՆԵՐԿԱՅ ԲԱԺԱՆՈՐԴՈՒՆ  
Թիւնը, որով Մուրճը մանում է իւր տասնամեայ տարեշրջանը, ներկայացնում է մի առանձին կարեւորութիւն ամսագրի ապագայի համար: Հրաւիրում ենք բոլոր նոցա, որոնց մէջ Մուրճի ցայժմեան գործունէութիւնը համակրութեան զգացումներ է արթնացրել, բոլոր նոցա, որոնց համար Մուրճը անվիճելի գրաւականներ է ներկայացրել յառաջգիմական անյողգողչ ուղղութեան և շիտակ ընթացքի, և որոնք կամենում են մեզ հետ միանալ Մուրճի ընթացքը աւելի ու աւելի արգասաւոր դարձնելու ժամանակակից հայկական մտքի համար,— որ դոքա օգնեն մեզ Մուրճը տարածելու գործի մէջ, որ միակ հաստատուն միջոցն է ամսագիրը ամեն պատահարներից ազատ պահելու համար: Ոչ մի խոչնդոտ անցեալում զօրութիւն չի ունեցել խախտելու մեր հաւատը դէպի Մուրճի ապագան, մի հաւատ, որը աւելի ու աւելի ամրացրել են մեր մէջ տարիները, չնայած մեր շարունակ կրած դեֆիցիտներին: Աւելի քան երբ և իցէ Մուրճը այժմ շրջապատւած է յուսալի աշխատակիցներով, որի կազմը կրում է Մուրճի բոլոր անցած տարիների հետքերը, սկսած առաջին տարւանից մինչև այս վերջինը:

Այս յոյսերով ու հաւատով մենք հրաժեշտ տւինք անցած տարւան և այդ յոյսերով այժմ ոտք ենք կոխում տասներորդ տարւայ շէմքը:

ՄՈՒՐՃԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ սորանով լաւանում է իւր շնորհակալութիւնը այն ամեն անձերին, որոնք Մուրճի նոր տարեշրջանի առթիւ իրենց շնորհաւորութիւններն են չափանել անձամբ, ալցետումներով, նամակներով և հեռագրերով:

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԻ ՀԱՄԱՐ ՊԻՆ. Աւետիս Դաւթեան, ուղարկել է մեղ 50 ռուբլի նւէր՝ որը պիտի ծառայի Մուրճի դեֆիցիտներին ցուցած պարտքերը հանգցնելու գործին:

Այս նւէրը առաջին դէպքն է՝ որ լինում է չիշեալ նպատակի համար:

Քանի որ հասարակութեան մէջ, որպէս ցածախ դէպք է եղել անձամբ համոզւելու, սխալ գաղափարներ են տիրում Մուրճի պարտքերի մասին (սխալ գաղափարներ, որոնց տարածելուն իւրովսման նպատակ է տեղական մի տարածւած օրաթերթ, ակնլայտնի չար դիտաւորութիւններով), ուստի մենք օգտւում ենք առաջին անգամ եղած նւէրից՝ Մուրճի դեֆիցիտներին և պարտքերի մասին ընթերցող հասարակութեան ճշտագոյն թւեր հաղորդելու համար: Անցած ինը տարիներում Մուրճը ունեցել է միայն շուրջ 21.000 ռուբլի. դարանից մասնաւոր հասոյթներով ծածկւել է շուրջ 15.500 ռ., որով մնում է պարտք շուրջ 5.500 ռուբլի:

ՄՈՒՐՃԻ ԸՆԹԵՐՑՈՂ ՈՉ-ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ: Նոր չեն մեր բաժանորդներին չատերի գանգատները, թէ իրենց օրինակները ձեռքից ձեռք անցնելով՝ շատ անգամ կորչում են և ստիպւած դիմում են խմբագրութեանս նոյն խի վճարով նորից ուղարկելու կտրած համարները: Նոր չէ մեզ համար այս համոզմունքը, որ Մուրճի ընթերցող չըջանը շատ մեծ է: Արդարեւ ամսագիրը իւր դէմ ունի այս աննպատակ հանգամանքը, որ ամուսն է ընթացքում մի օրինակը կարող է շատ ձեռքերից անցնել: Բայց բարոյական պարտք ենք դնում Մուրճի ընթերցողներին վրա՝ աչդ հանգամանքից չօգտւել չափ ու սահմանից դուրս և միաժամանակ մտածել Մուրճի խմբագրութեան վրայ, որը առանց նիւթական պաշտպանութեան իւր ընթերցողների կողմից՝ չի կարող իւր ծանր պարտականութիւնները կատարել: Հրաւիրում ենք աչդ պիտիներին բաժանորդ գրել Մուրճին, հաւատացած լինելով, որ ամեն մի նոր բաժանորդ՝ հասարակութեան մէջ կ'աւելցնի մի քանի նոր ընթերցողներ:

«ՎԵՐԺԻՆ» ՎԼՊԸ» մեր երկրասարդ աշխատակից պ. Շանթի, վերջանում է Մուրճի ներկաչ համարի մէջ: Այս վէպով, մեր կարծիքով, Շանթը մի դրական քաջ առաջ է անում՝ համեմատութեամբ «Գուրսեցիներ» վէպի հետ: Մինչ մի ամիս վէպը լոյս է տեսնելու նաեւ առանձին գրքով:

«ԽՈՐՏԱԿԻԱՍ ԿԵԱՆՔԸ», վէպ պ. Մանուէլեանի, չարունակելու է տպւել Մուրճի գալ համարից:

ՀԱՅՆԷԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ, թարգմանութեամբ մեր աշխատակից պ. Ասոմ Շահէնի (մեր ընթերցողներին ցաւով չախտի խաչ-Պապեան

կեղծ անունով), սկսում է տպագրել ներկաչ համարից: Ի դէպ նկատենք, որ հռչակաւոր գերման բանաստեղծի ծննդեան հարիւր-ամեակին էր անցեալ ղեկտեմբերին (ծն. Գիւստիւրֆուտ Նոր տոմարով 13 դեկտեմբ. 1797, վախճանած Պարիզում 17 փետր. 1856. Պարիզում ապրում էր նա սկսած 1830 թւականից): Հաջնէի բանաստեղծութիւնները չափնի են բոլոր նոր գրական լեզուներով: Այդ բանաստեղծի ոտանաւորները մերթ օդալին են և դրացիող, մերթ ծաղրող, մերթ չուսահատութեան ծաղրն հասնող: Այդ թեթեւ, կարծես եթերալին ձևի տակ թաքնւած է սկեպտիցիզմ. իրոնիան ծածկում է իւր տակ մռալ չուսահատութիւնը, երբեմն մահաւն տենչը. ապա նորից երևան է դալիս կենսութախտութիւնը, և պոէտը աշխարհքի առաջ ղեկում է իւր զգացումները հրաշագեղ երգերի մէջ, անման կերպով երգելով բնութիւնն ու սէրը:

Հաջնէի երգերից տմանք չափնի են Մուրճի հին ընթերցողներին զխաւորապէս պ. Զաւադ բէկ Բալուղեանի թարգմանութեամբ:

Պր. Ատոմ Շահէնի ներկաչ թարգմանութիւնը կատարւած է աչն ֆրանսերէնից, որը կարող է թէ թարգմանութիւն և թէ միանգամայն բնագիր համարել, որովհետեւ այդ ֆրանսերէն թարգմանութիւնը կատարել է ինքը Հաջնէն, երբեմն գործակցութեամբ ֆրանսերէնին հմուտ ստիլիստների (տես Poèmes et Légendes, par Henri Heine, լատաշաբանով Հաջնէի 1855 թւականից): Եւ այդ ֆրանսերէն թարգմանութիւնը ոտանաւոր չէ ինչպէս է գերմաներէն բնագրում, այլ արձակ, ինչպէս հաջերէն ներկաչ թարգմանութիւնն է:

ՄԻ ԳՐԱՆ. ՕՍՈՒԹԱՆ ԱՌԹԻԻ. Մուրճի ներկաչ համարում տպւում է «Սեպուհ» ստորագրութեամբ մի չօգւած պ. Բալասեանցի «Խոստում ու Սալման» բանահիւտութեան մասին, որին «Մուրճ» 1897 թ. 11-12 մեր աշխատակից պ. Յ. Տէր-Միրաքեան մի գրախօսական էր նւիրել: Պարտք ենք համարում չափնել, որ «Սեպուհ» ստորագրութեամբ չօգւածի մէջ առաջ բերած ցիտասանների ճշտութեան համար պատասխանատուութիւնը իւր վրայ է վերցրել պ. Արշակ Մեհրաբեան:

ՄՈՒՐՃ ՆԻՒՐՈՂՆԵՐ. (Շարունակութիւն. սկիզբը տես Մուրճ 1897, № 11-12). 5. Ռիգայի պոլիտեխնիկումի ուսանողներ վ. Առուչեան և Կ. Սարգսեան—Լադոգերի գնդի հաղիւորներին (խմբ. ընտրութեամբ).—6. պ. Ալէքսանդր Մելիք-Աղաբեան—Ռեշտի հայոց դրաւարանին.—7. պ. Արսէն Ռոմանեան Ասրիբեկեան—Ուզունթալա գիւղի համալնքին (խմբ. ընտրութեամբ). պ. Աւետիս Դաթեան—մի օրինակ—Ազուլիսի արհեստաւորներին ս. Բաղդ. Թումեանցի հացեղով (խմբ. ընտրութ.):

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ գեկտ. 30-ին ժամանեց Թիֆլիս, երկաթուղու երեկոցեան զնացքով, սալոն վագոնի մէջ, հետն ունենալով զաւազանակիր Կորիւն վարդապետին: Ընդառաջ էին գնացել մինչև թեմի սահմանը Դելիջան՝ Թիֆլիսի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը, մինչև Աղստաֆա կայարանը Գանձակի լաշորդ Բաղրատ վարդ. Գէորգ-Թաւաքալեանը քահանաներով, իսկ Թիֆլիսից Հալոց Բարեգ. Ընկ. խորհրդի և ընդհանուր ժողովների նախագահներ՝ Ալ. Անանեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, խորհրդի անդամ Ալ. Մելիք-Աղարեան, պատմագիր Ալ. Նրիցեան, զրամատէր. Աւ. Ղուկասեան և մի քանի ալ անձեր: Թիֆլիսում Վեհը իջաւ առաջնորդարանում: Յաջորդ օրը, 31 դեկտ. Նորին Սրբութիւնը, ուղեկցութեամբ իւր քարտուղար և զաւագանակիր վարդապետի և թեմի առաջնորդի, երկու քահանաների և թարգման պ. Փ. Վարդանեանի, ալցելեց երկրի կառավարչապետ իշխ. Գոլիցինին, որը իւր ամուսնու հետ ընդառաջեց մինչև ընդունելութեան մեծ դահլիճի դուռը: Թարգման էր աւագ-ցենզոր պ. Ալ. Քիշմիշեան. տեսակցութիւնը տևեց 20 րոպէ: Ապա Վեհը ալցելեց կառավարչապետի օգնական դեներալ-լէյտենանտ Ֆրեզէին: Մի և կէս ժամից չէտոյ իշխ. Գոլիցին և նորա օգնականը գնացին Վեհարան փոխալցի: Յունւարի 1-ին ներկայացաւ Վեհին Թիֆլիսի հայ հոգևորականութիւնը, զուլս ունենալով թեմի առաջնորդին: Նոր տարուայ համար շնորհաւորական ալցեստոմներ ուղարկեցին կառավարչապետն ու իւր ղեկավանը, Ֆինանսական մինիստրի ներկայացուցիչ և կառավարչապետի խորհրդի անդամ Սուլթան-Կրեմ-Գիրէչ և ալ պաշտօնական անձեր, որպէս նաեւ բաղմաթիւ անձեր ամեն դասակարգերից: Յունւար 2 Վեհը ալցելեց Վրաստանի էքզարխ Վլադիմիր արքեպիսկոպոսին. ուղղափառ քահանայից դասը ղիմաւորեց Վեհին էքզարխի պալատի զարբասի մօտ, երկու վարդապետ սանդուխքի վրայ, ինքը էքզարխը դահլիճի դռան մօտ, ուր Հայրապետի թեմն առնելով՝ իրար հետ համբուրեցան. ընդունելութիւնը տևեց քառորդ ժամ: Ապա կաթողիկոսը ալցելեց Ալէքսանդր Նեացու ուղղափառ նորակառուց տաճարը, ուր մեծ շուքով ընդունեց քահանայից դասի կողմից. կաթողիկոսը ասաց՝ «Մաղթում եմ որ ալս տաճարի սպասաւորները գործունէութիւնը նույնչափ փառաւոր լինի, որչափ փառահեղ է տաճարը»։ Նոյն օրը ժամ 2-ին էքզարխը փոխալցի գնաց Ն. Օծութեան: Այդ օրը ալցի եղաւ Վեհի մօտ Կովկասեան շրջանի հոգաբարձու զաղտնի խորհրդական Եանովսկի: Երեկոցեան ժամ 5-ին ալի եկաւ պարսից ընդհանուր հիւպատոս դեներալ ադիւտանտ Սարտիփ-Մուրտուղխան-Մուքթաս-Իւլ-Միւլք՝ տեսակցութիւնը երկար տևեց և առանց թարգմանի եղաւ: Երեկոցեան Վեհը

ընդունեց Ս. Ստեփանոս մեծաստանի կոչերին, որոնք ներկայացան իշխանունի Արղութեան մալրապետի առաջնորդութեամբ, և կուրերին խնամող ընկերութեան երկսեռ զպրոցի կուր հալ մանուկներին, որոնք ներկայացան իրենց կրօնուսուց հալը Աբուլեանցի առաջնորդութեամբ։— Յուն. 3-ին վեհին ալցելեց Ն. Կ. Բ. Մեծ իշխան Նիկիայի Միխայլովիչ, որ գրեմադէրների զօրարածնի հրամանատարն է. Մեծ իշխանը միայն նախորդ օրու երկուեան էր Թիֆլիս եկել. վեհի մօտ մնաց 10 րոպէ և հրաժեշտ տալով խնդրեց որ Ն. Օծութիւնը նեղութիւն չկրի՝ փոխալցելութեան գալու. քանի որ ինքը միկնելու է քաղաքից. թարգմանն էր թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը։ Նոյն օրը վեհը չքախմբով փոխալցի գնաց պարսից ընդհ. հիւպատոսին, թարգման ունենալով պ. Փ. Վարդանեանցին, ապա կովկասեան յրջանի հոգաբարձու Սեանովսկուն, որը ապա նորից եկաւ վեհին ալցելելու, բաց Ն. Օծութիւնը լոգնած լինելով՝ չկարողացաւ ունկնդրութիւն շնորհել. Յուն. 4-ին ալցի եկաւ կովկ. կառավարչապետի խորհրդի անդամ գաղտնի խորհրդական Պրիբիլ.— Յուն. 6 ին վեհ. Կաթողիկոսը ներկայ էր Զորհնէքի հանդէսին վանքի մօտ եկեղեցում (պատարադիչ՝ թեմի առաջնորդը) և ապա հետեւեց թափօրին դէպի Գուրի աջ ափին շինած Յորդանանը, հետն ունենալով Նրուսադէմի պատրիարքի ներկայացուցիչ Կ. Պոլսի հալոց պատրիարքարանում Գէորգ Մ. Վ. Նրիցեանին, գաւաղանակիր Կորիւն և Ս. Սարգիս եկեղեցու վանահալը Աւրեծեան վարդապետներին. առաջն տանում էր կաթողիկոսական քօղը. ժողովուրդը անհաղին էր. միւսը ջուրը թափեց վահալառը. եղան սովորականից շատ գետն ընկնողներ. վահարանը վերադառնալով՝ վեհը գտաւ ներկայ ամեն դասակարգերից ներկայացուցիչներ, որոնց Հալրապետը խօսք խօսեց, ուր ի միջի ալոց ասաց.— «Կը հաւատամ որ ինձ ալ քիչ մը կը սիրէք և կը լարդէք. իսկ ես աւելի կը հրճւիմ մեր ժողովրդի պարզասրտութիւնից», ցաւ լալտեց որ վանքի եկեղեցին փախրիկ է և զանգատեց պատարադի երկարութեան վրայ, ասելով «օրհնեալ Նքալեան լոգնեցրուց զիս»։ Ապա հասարակութեանը նախաճաշ տուեց թեմի առաջնորդի կողմից. և ալք միջոցին վեհը իւր առանձնասենեակից մի քանի անգամ դահլիճ եկաւ, և մի անգամ խօսեց հալ շինականների մասին ու առաջարկեց կենաց բոլոր հալ շինականների կենացը, վահալառը ալք օրը բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ էր տուցել։— Յուն. 7-ին վահալառը հրաւիրած էր ճաշի կառավարչապետ իշխ. Գոլիցինի մօտ. հրաւիրւած էին՝ թեմի առաջնորդը, գեներալ Ֆրեգէ, կառավարչապետի զիւանառան գիրեկտոր Միցկիւիչ, Պրիբիլ, Էջմիածնի սինոդի պրո-

կուրոր կանչելի, նահանգապէս Բըկով, Երևանի նահանգապետ կոմս Տիգրանաուզէն. Կաթողիկոսի թարգմանն էր աւագ ցենզոր պ. Ալ. Քիշմիշեան. ճաշին մասնակից էր կառավարչապետի ամուսինը, ճաշը տևեց 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ:—Յուն. 8-ին Վեհը ալցելեց նահանգապետ Բըկովին: Նոյն օրը վեհին ներկայացաւ Ներս. դպրոցի հոգաբարձութիւնը, ուր ի միջի ալցոց Կաթողիկոսը հաւանութիւն տւեց դպրոցի համար նոր շինութիւն կառուցանելու առաջարկին:

Յուն. 10-ին Կաթողիկոսը ալցելեց Ներսիսեան դպրանոցը, որը զարդարած էր դրօշակներով, բազի դռնից մինչև երկրորդ փարկի զանլիճի դուռը կարմիր մահուգ էր փռած. բազի մուտքի մօտ Վեհին զիմաւորեց տեսուչ պ. Բալաղեան: Վեհին ուղեկցում էին թեմի առաջնորդը, Երուսաղէմի վարդապետ Գէորգ Սրիցեանը և դաւադա. նակիր Կորիւն վարդապետը: Գահլիճումն էին դպրոցի բարձր դաստան աշակերտները, երգեցիկ խումբը, որը, պ. Նքմալեանի ղեկավարութեամբ, երգեց մի քանի հոգևոր և աղբակն երգեր: Հոգաբարձութիւնը ներկայացրեց դպրանոցի ապագաւ շէնքի պլանը, իսկ տեսուչը կարդաց մի համառօտ տեղեկագիր դպրոցի մասին: Կաթողիկոսը չորհորեց աշակերտներին որ յոքա ճետագայում վերադառնան իրենց ծննդավայրերը և իրենց հալրական պարագմունքները: Ապա Վեհը գնաց տեսնելու դպրանոցի նոր շինութեան համար աչքի առած երկու տեղերը:—Յունւարի 14-ին Վեհափառի անւանակոչութեան նախատօնէքին Կաթողիկոսը ամպհովանու տակ իջաւ եկեղեցի քաղաքի ամբողջ հոգևորականութեան ուղեկցութեամբ: Նոյն հանդէսով Կաթ-սը իջաւ եկեղեցի նաև 15-ին, անւանակոչութեան օրը. պատարագէն էր Երուսաղէմի միաբան Գէորգ Ծ. Վ. Սրիցեանը, որը նաև քարոզ խօսեց: Պատարագից չետոյ վեհարանում ներկայացան Ն. Օծութեան բազմաթիւ պատւաւոր անձեր, բարձր պաշտօնեաներ և վերջը՝ կառավարչապետ իշխան Գոլիցին:

Յունւարի 8-ին Վեհափառը ճաշի էր հրաւիրել իւր մօտ իշխ. Գոլիցինին և նորա ամուսնուն. հրաւիրւած էին նաև դէն. լէւտ. Ֆրեդէ, գէն. Ամիլախարի. Թիֆլիսի կոմենդանտ Ռէչտեր, Կովկ. չրջանի հոգաբարձու Լյանովսկի, նահանգապետ Բըկով, Երևանի նահանգապետ կոմս Տիգրանաուզէն, կառավարչապետի զիւանապետ Սիցկելի, աղնաւանների պարագլխի օգնական դէն. Սադրնով, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակաւար իւաննիկօ, նորընտիր քաղաքագլուխ Գ. Նւանդուկան, Թիֆլիսի թեմակալ Գ. արքեպ. Սուրենեան, Ծ. Վ. Սրիցեան (Երուսաղէմից), աւագ ցենզոր Քիշմիշեան, Հ. Բար. Ընկ. նախագահ Անանեան. իշխ. Նիկ. Արղութեան, Գ. Սոնդուկեան, Առ. Մատուրեան, Աւ. Ղուկասեան. Կոնս. Ալիխանեան, Գրիգ. Աղեկխանեան:

Յունու. 25-ին Վհհ. Հաղթապետը եղաւ կառավարչապետ իշխ. Գոլիցինի մօտ, սրբ. առաջնորդի ուղեկցութեամբ. և ընդունեց կառավարչապետ իշխանից միաջնակ. թարգմանն էր աւագ ցենզոր պ. Ալ. Բիչմիշեան: Խօսակցութիւնը տեւց երկու ժամից աւելի:

Փետրու. 2-ին Կաթողիկոսը աւցելեց մուգէլը, ուր բացատրութիւններ տալիս էր պ. Ալ. Նրիցեան:

Վհհ. Կաթողիկոսը, բացի պաշտօնական ընդունելութիւններից և աւցելութիւններից, բարեհաճած է լինել թէլի՝ իշխ. Բհնբուհեանի, Աւ. Ղուկասեանի, Ալ. Մանթաչեանի. ալ և Ռէչտէր եղբայրների մօտ:

Փետրուարի 5-ին Ն. Օծութիւնը, երկաթուղու երեկոցեան գնացքով ուղեորեց Բաքու, ուղեկցութեամբ Թիֆլիսի թեմակալ առաջնորդի, գաւազանակիր վարդապետի, Գէորգ Ծ. Վ. Նրիցեանի և Բաքուի պատգամաւորների:

ԻՇԽԱՆ ԳՈՒԼԻՅԻՆ, Կովկասի կառավարչապետը, փետրուարի առաջին շաբաթը ուղեորեց Պետերբուրգ, մասնակցելու համար Կովկասեան մի շարք կարևոր խնդիրների քննութեան: Կառավարչապետի հետ գնաց նաև իւր կանցելարիալի դիրեկտոր Միցկևիչ:

ԱՐԲՈՒԹԻԻՆ չնորհեց Վհհ. Կաթողիկոսը Սինդի նախանդամ Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանցին:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԻՆԻՍՏՐ, Հանդուցեալ մինիստր Կոմս Գեւեանովի տեղ կրթական մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ է նշանակւած հանգ. Դեկեանովի օգնական դադոնի խորհրդական Անիշկով:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ, ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐ, Ռուսիայի պատերազմական մինիստր դէներալ-ադելտանտ Վաննովսկու տեղ նոր տարւանից նշանակւած է պատերազմական մինիստրութեան կառավարիչ գեներալ-լէյտենանտ Կուրոպատկին, որը ցաւթմ Անդրկասպեան երկրի կառավարիչն էր: Նա մասնակցել է Սամարկանդի արշաւանքին 1868-ին, Ալթրեիալում Քրանսիացոց արշաւանքին, ապա Կոկանդի արշաւանքին, Սկրուբի հրամանատարութեան ներքոյ, 1876-77-ին գլուխ էր Կաշգարիա ուղարկւած զեապանութեան և դաշնադիր կապեց Սազուպ բէլի հետ. ապա մասնակցեց ռուս-տաճկական պատերազմում Բալկանեան թերակղզում Լովչիի մօտ եղած կռիւն և Պլենալի վրալ եղած չարձակմանը. Բալկանեան լեռները անցնելու ժամանակ ծանրվէրք ստացաւ. ապա նշանակեց գլխաւոր շտաբի ասիական բաժնի կառավարիչ և ընդհանուր շտաբի կատգեմիալում գինւորական ստատիստիկալի պրոֆեսոր. 1890-ից Անդրկասպեան երկրի կառավարիչ էր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼ:

Բիրական, շաբաթաթերթ (Պուլիս): Այդ թերթի արտօնատէր Հ.

Ստեփան Խ. Իւթիւճեան ալժմ լանձնել է թերթի տնօրէնութիւնը պ. Սմբատ Դաւթեանին, խմբագրութիւնը՝ պ. Դ. Անդրէասեանին: Մենք ստաղել ենք թերթի առաջին համարները, որոնք գրական, հասարակական և գիտական բովանդակութիւն ունին և ընդհանրապէս լաւ տպագրութիւն են գործում: (Տարեկան գինը 12 ֆրանկ կամ 5 ռ.):

«Արծազանք» լրագիրը (Թիֆլիս) իւր ալս տարւայ № 5-ից լետոյ (16 լուռ.) կառավարութեան կարգադրութեամբ դադարեցրած է ութ ամսով: Լոյս տեսաւ թերթի № 6, կիսատ, ուր չալտարարած է թէ պիտի վերսկսի սեպտեմբերի 18-ին:

«Մշակ» լրագիրը, որը մինչ ալժմ հրատարակւում էր շաբաթը երեք անգամ, ղեկավարներին չալտարարեց թէ խնդիրք է տեւել ամենօրեայ դառնալու. լուռնարին չալտարեց թէ պիտի հրատարակւի շաբաթը վեց անգամ. փետրւարին չալտարարեց թէ պիտի լոյս տեսնի շաբաթը 5 անգամ:

«Ա.ՐԱՔԱ», գրական և ղեկարւետական պատկերազարդ հանգէսի 1894—1895 թւականի երկրորդ գիրքը, որի հրատարակութիւնը ընդհատւած էր, ալժմ լոյս է տեսել: Դա մի չքեղ հատուկ է, որի գեղարւետական մասը շատ ծախ է: Տպւած նիւթերն էլ, որոնց մի մասը թէև հինցած, բազմաբովանդակ են: «Արաքս»-ի խմբագրութիւնը բաց է արել 1898-ի բաժանորդագրութիւնը (2 գիրքը 3 ռ., հասցէ՝ С.-Петербургъ. Симеону Гуламырянцъ).

ԼԵՊՍՏՈՒՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Տաճկաստանի և առաւելապէս հալկական խնդրին նւիրած հրատարակութիւնների մէջ առանձին կերպով պէտք է լիշատակել դ-ր Յովհաննէս Լեպսիուս գերմանացու հրատարակութիւնները, և զորա մէջ մանաւանդ «Քրիստոնէական Արևելք»-ը („Der christliche Orient“), որը անցեալ տարի լոյս էր տեսնում ամսական տեսարներով, պատկերազարդ: Մուրճի խմբագրութիւնը ունի ալժ ամսագրի բոլոր 12 համարները, որոնց բովանդակութեան հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին: Ալժ հրատարակութիւնը ալժմ դադարեցրած է, և դորա տեղը պիտի բռնի «Քրիստոսի աշխարհը» (Das Reich Christi), որը առաջ էլ գոյութիւն ունէր, բայց ալժմ բովանդակութիւնը հարստացած է և պատկերազարդ է: Ալժ թերթի առաջին համարում, որ ստացւած է Մուրճի խմբագրութեան մէջ, կան պատկերներ գերմանական միսիաների մի քանի որբանոցների Ուրֆուլում և ալժ տեղերում: Մենք խոստանում ենք Մուրճի ընթերցողներին հաղորդել նաև ալժ թերթի մեզ համար կարևոր նիւթերը:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՆԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ:

Հայոց որբանոցները: Մենք իւր ժամանակին հաղորդեցինք, որ

Կ. Պոլսի պատրիարքարանում Ս. Պատրիարքի նախագահութեամբ կազմւած է «Որբոց և Կարօտելոց Խնամակալութիւն»։ Վերջինս թէն նկատւած է որպէս Կեդրոնական վարչութեան մի ճիւղը, բայց ունի իւր չատուկ սնտուկը, ուր ամիտուում են ալդ զործի համար եղած բոլոր նւէրները. սնտուկը գտնուում է Պատրիարքի պահպանութեան ներքոյ և նորա ձեռքով են հոգացւում ծախքերը։ Ահա թէ ցայժմ ինչ է կատարուել ալդ Խնամակալութեան ձեռքով։

1. Կ. Պոլիս։ Բերւած են Կ. Պոլսի Ս. Փրկչի Որբանոցը 158 որբեր՝ Խարբերդից, Նըխիաւից, Սիսից, Փիլիսէից, Դիարբեքիւրից, Ալնթապից, Ակնից, Բալուից, Մալաթիայից, Հիւսնիւ-Մանսուրէից և Բաղէշից։ Դորանից առաջ նոյն Որբանոցում կային 240-ի չափ որբեր, որով բոլոր որբերի թիւը ալդ Որբանոցում եղաւ 398։ Սոցանից 20-ը լանձնւեցին Կ. Պոլսի ազգայինների Խնամքին և մի ընկերութեան ձեռքով բացւած որբանոցը զետեղեցին. 40-ը լանձնւեցին Իզմիրի հայոց երկու ընկերութիւնների որբանոցներին. 20-ը ղրկեցին Արմաշի Դպրեւանքը. 2-ը ղրկեցին Պերպերեան գիշերօթիկ վարժարանը (մի պարոնի ծախքով), 1 աղջիկ տրւեց Իզմիրի աղջկանց որբանոցը, 76-ը զետեղեցին Կ. Պոլսի ազգային հիւանդանոցի Ս. Յակոբալ որբանոցը, ուր նոցա թիւը պիտի հասցնւի 100-ի։ Կորա համար հիւանդանոցի սնդուկին Պատրիարքարանը ապահովեցրել է 80 ոսկի։

2. Խարբերդում հաստատուել է որբանոց Ս. Վեորդ վանքում, որին պատրիարքարանը ապահովեցրել է 15 ոսկի ամսական և 80 ոսկի էլ միանւագ. որբանոցին չատկացւեցին վանքի հասույթները, իսկ տեղացի մի քանի անձերի օժանդակութեամբ հոգացւեց 200 ոսկի ծախքը շինութեան համար, Որբերի թիւը 30։

3. Վարազայ վանքի որբանոցին չատկացրած է Կեդրոնական սնդուկից ամսական 10 ոսկի։

4. Նեխիայի Ս. Սարգիս վանքի որբանոցը ստանում է Կենդր. սնդուկից 15 ոսկի ամսական թոշակ և մի գումար էլ եկեղեցու հասույթներից։ Որբերի թիւը 40։

5. Կարինի (Էրզերում) Կարմիր վանքի որբանոցին չատկացրած է ամսական 5 ոսկի, Որբերի թիւը 21։

6. Մարաշում վարժարանի շէնքը պիտի վերածւի որբանոցի. իսկ զարոցը փոխադրւած է ալ տեղ։ Շինութիւնը որբանոցին չարմարցնելու ծախքերը հալթալթում են տեղացի հաւերը, Կենտր. սնդուկը, շնորհիւ Ժամհարեանի նւիրաբերութեան, (տես ներքեւ) «Նւէրներ և կտակներ» լօգւածը) ապահովեցրել է ալդ որբանոցին ամսական 30 ոսկի, երեք տարով։

7. Բաղէշում Խնդրակատարի վանքի որբանոցին տրւում է Կենտր. սնդուկից ամսական 10 ոսկի նպաստ. վիճակի վանքերի բոլոր հառաջները չատկացրած են որբանոցին: Որբերի թիւն է առաջում 24:

8. Մուշ. Ս. Առաքելոց վանքի որբանոցը պիտի բացւած լինի ներկայ տարւած լուծւ. 1-ից. Կենդրոնից տրւում է ամսական 15 ոսկի. չատկացրած են նորան նաև Ս. Յովհաննու և Մանաւանուց հառաջները:

9 և 10. Հրահանդներ են տրւած որբանոցներ բացանելու Դիարբերքում և Արապկիրում: Առաջինի նախնական ծախքերի համար զրկւած է 40 ոսկի և որբանոցի երեք ամսականները. իսկ Արաքկիրի որբանոցին չատկացւած է 15 ոսկի, որի մի մասը լանձն է առել հալթալթելու Ռոդոստո՛ի ժողովուրդը:

Այս բոլոր որբանոցների հսկողութիւնն ու մատակարարութիւնը չանձնւած է իւրաքանչիւր տեղի հոգաբարձութեան, բաղկացած ամեն մէկը մի քահանայից և երկու աշխարհականներից, նախագահութեամբ տեղական առաջնորդի կամ անդապահի. ամեն վեց ամիսը մէկ պէտք է տեղեկագիր ուղարկեն Պատրիարքարանը: Բացի Կ. Պոլսի հիւանդանոցի որբանոցին, բոլոր մնացածներին տրւում է ամսական կենտր. սնդուկից ամսական 150 ոսկի, որի մի մասը (58 ոսկին) բարեսէր անձեր են իրենց վրա վերցրել որոշ ժամանակի համար:

Մենք վերը լիշատակեցինք ալն որբանոցները միայն, որոնք Կենտր. սնդուկից նպաստներ են ստանում: Բացի կան և ուրիշներ, որոնք կառավարւում են միմիայն տեղական ուժերով. դռքա են.

11. Կեսարիայի Ս. Կարապետի վանքի որբանոցը, ուր խնամւում են 36 որբեր. քաջալերութեան համար կենդրոնական սնդուկից զրկւած է միանւագ 50 ոսկի:

12. Զմիւռնիայի Ներսէսեան ընկերութեան որբանոցը, ուր խնամւում են 35 որբեր, զանազան զաւառներից բերւած:

13. Զմիւռնիայի Տիկնանց հոգատար Որբախնամ ընկերութեան որբանոցը (հաստատւած 1893-ին), ուր խնամւում են 36 որբ աղջիկներ, զաւառներից բերւած:

14. Գաղաթիայի Ս. Աստուածածնայ վանքի որբանոցը. 13 որբեր, զաւառներից բերւած:

15. Ագրիանապոլիսի որբանոցը, ուր մի որբախնամ ընկերութեան հոգատարութեամբ խնամւում են Պատրիարքարանի կողմից զրկւած 20 որբեր:

— Պատրիարքարանը Բաղէշի կարօտեալներին զրկեց 5 հակադիստներ, և նոյն նպատակով էլ Վան զրկեց 5 հակադիստներ:

### ՅՕԳՈՒՏ ՏԱՃԿԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ:

Թիֆլիսի կանանց կոմիտեն (նախագահ՝ Նահանգապետի ամուսինը) նոր ստացել է—Ռուսակիյա վէդոմոստի լրագրի խմբագրութիւնից (Մոսկւա) 101 ռ., տ. վ. 2. Թամամշեանից 15 ռ., տ. Ե. Մ. Սմիրնովաից տաք հագուստներ 12 տղալի և աղջկալ համար, տ. Ե. Մ. Թամամշեանից 100 ռ., Հայոց Բարեգործական ընկերութիւնից Կովկասում 200 ռ., իբր օժանդակութիւն հիւանդանոցի, Թիֆլիսի ժողովարանից 21 ռ. 10 կ.

ՆԻԷՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ: Այրի տիկին Եղիսաբէթ Բարխուդարեանց, յօգուտ տառապեալ արհեստաւորների, չանձնեց 300 ռ. Թիֆլ. արհեստաւորաց լարչութեանը, ի լիշատակ իւր հանգ. ամուսին Սողոմոնի:

—Կարապետ Խուպէսիրեան (վախճանւած Եգիպտոսում անցեալ դեկտեմբերին) թողել է կտակ, որի մանրամասնութիւնները մեղ չալտնի չեն. ծանօթանալուց՝ կը հաղորդենք:

—Պօղոս Կարապետեան (վախճանւած Եգիպտոսում անցեալ դեկտեմբերին) կտակով թողել է երկու գետին, որոնց տարեկան եկամուտը՝ 120 ոսկի՝ բաժանել է աչս կերպ. հարիւրին 45-ը իւր ծննդավայր Արաբկիրի դպրոցին, հարիւրին 30 ը Կալիրէի (Եգիպտոսի մայրաքաղաքի) հայոց վարժարանին, 100-ին 25-ը Նորուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին: (Հանգուցեալը, ծանօթ քիլեբճի անունով, երկար տարիներ եղած է Եգիպտոսի վախճանւած խեղիւ (փոխար.քալի) Աբբաս փաշալի մառանապետը, մօտ կէս դար առաջ):

—Իսահակ Ժամբարեան (հայրը եղբ. Ժամբարեանների, վախճանւած Շուշի, անցեալ դեկտեմբերին) որը սահմանած էր Մարաշի Մանկանոցին (որբանոցին) ի նպաստ տարեկան 360 ոսկի, չատկացրել է նաև երեք տարւաջ համար 240-ական ոսկի ուրիշ գաւառների մանկանոցների համար. ալլալիսով ընդհանուր նւիրաբերութիւնը կազմում է երեք տարւաջ համար 1.800 ոսկի, որ դրւած է Կ. Պոլսի Պատրիարքի տրամադրութեան ներքոյ:

—Ստեփան Խիթարեան (ալլապէս Ստ. Դմիտրիւիչ Խիթրով, աստրախանցի, ուսած Թիֆլիսի կլասիկական գիմնազում, ապա իբր Կովկասեան թոշակաւոր՝ Մոսկւայի համալսարանում, իրաւաբան, մտած պետական ծառայութեան մէջ, ամբողջ ծառայութիւնը անցկացրած իբր անդամ մաքսատան Հին-Նախիջևանում, ապա իբր կառավարիչ մաքսատան Ալէքսանդրապոլում, Կարսում, Նորից Հին-Նախիջևանում ու Ջուլֆում, մինչև 1889 թ., ապա թողած ծառայութիւնը ստանալով 1.200 ռ. կենսաթոշակ. ամենքին, նաև կառավարութեանը չալտնի որպէս վերին աստիճանի օրինապահ, խստապահանջ և անկաշառ. անձ. ունեցած կարողութիւնը գոյացել է աջն

տուգ սնքներից, որոնց մեծ մասը հասնում է մաքսային զեղծումներ դաժողին), տնային կտակով, կազմած 1892 թ. թողել է շուրջ 30.000 ռ., և մօտ 7—800 ռ. տան իրեղէններ, կտակակատար նշանակելով Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը, հետեւեալ հրահանգով. 6000 ռ. տալ իւր մի ազգականուհուն միանալով, մի ալ ազգականուհուն, մինչև սորա մահը, տարեկան 240 ռ. մնացածից 1) Հալոց Բարեգ. Ընկերութեան 1000 ռ. միանալով. 2) 300 ռուբլի պահել, տարեկան տոկոսները 100—120 ռուբլի ուղարկելու համար Մոսկուայի համալսարանի վարչութեանը, իբրև ուսման վարձ որ և է չքաւոր հալ ուսանողի, համալսարանի վարչութեան ընտրութեամբ. 3) 700 ռ. չատկացնել իւր թաղմանը և երկու քարերի՝ իւր և եղբոր գերեզմանների վրայ. 4) մնացած բոլոր գումարի (ուրեմն շուրջ 22.000 ռուբլու) տոկոսներով դպրոցի հոգաբարձութիւնը պիտի պահի դպրանոցում մի կամ երկու որդեգիր հանգուցեալի անւան, և եթէ սոքա կը կամենան Ռուսիայի որ և է բարձրագոյն դպրոցում ուսումը շարունակել՝ հոգաբարձութիւնը պիտի դորա ծախքերը իւր թողած գումարի տոկոսներից հալթհալթէ. ուսումը աւարտելուց չետոյ տալով նաև առաջին կարգ ու սարքի համար անհրաժեշտ գումարը. 5) տան իրեղէնների վաճառումից ստացած գումարը (մօտ 7—800 ռ.) բաժանել աղքատներին:

—Նիկողայ Եգորովիչ Զուբալով (Թիֆլիսի չալտնի դրամատէր, վախճանւած Նիցցայում, կաթոլիկ, անգլաակ), մի կտակով, որ տնային կերպով կազմել է նա 1895 թ., թողել է Թիֆլիս քաղաքին մի տուն Թիֆլիսում (Արսենալինալա փողոցում) և մօտ 400.000 ռ. դրամ կամ արժեթղթեր, պարտաւորեցնելով քաղաքին աչն տան մէջ պահել աղքատ քրիստոնեաներ, որոնցից  $\frac{1}{3}$  կաթոլիկներ,  $\frac{1}{3}$  ուղղափառներ և  $\frac{1}{3}$  հալ-լուսաւորչականներ: Եթէ քաղաքը չկամենալու լինի կտակը ընդունել, ապա կտակակատարը պիտի լինի Թիֆլիսի կաթոլիկաց Ս. Աստուածածին եկեղեցու աւագ-քահանայն: Հանգուցեալը, բացի ալի կարգադրութիւնից, կտակով բաժին է թողել իւր եղբոր օգտին, ալ և Թիֆլիսի կաթոլիկաց երկու եկեղեցիների օգտին:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը տասնեակ տարի առաջ 100.000 ռուբլու ֆոնդ էր կազմել ապագայում հիմնելիք համալսարանի համար Թիֆլիսում: Ալի ֆոնդը ալժամ վճուած է չատկացնել պոլիտեխնիկումին, եթէ Թիֆլիսում հաստատուի. չինութեան համար էլ քաղաքը որոշել է տալ 200 զեսեատին հող և ամեն տարի էլ 30.000 ռուբլի օժանդակութիւն:

Մամանաւոր անձերից նւէր տուել են առաջիմ մի վրացի, իշխան Էրիստով, 1000 ռ. վաղաժամ և ոչ արդարացի ցանկութիւն չալտնի-

յով որ պոլիտեխնիկումը կոչւի Հերակլը II թագաւորի անունով «Հերակլեան».

Թիֆլիսի «Քաղաքալին վարկի ընկերութեան» վարչութիւնը որոշել է ընդհանուր ժողովին առաջարկել նւիրաբերել 50,000 ռ.

«Թիֆլիսի առեւտրական բանկը» որոշել է ակցիոնեւորների ժողովին առաջարկել նւիրաբերել 50.000 ռ.

ԷԶՄԻԱԾԻՆՈ ՊԷՏՔ Է ՀԱՇԻԻ ՏԱՅ ԱԶԳԻՆ: Մեր ժամանակում, 19-րդ դարի վերջում, հաշ մամուլի մէջ դեռ եւ հնարաւոր է համարուում պրինցիպիական խնդիր գնել, թէ արդեօք Էջմիածինը պէտք է հաշիւ տալ ազգին թէ ոչ, Էջմիածինը ինքը հետեւում է աւանդութեան, եւ հրապարակական հաշիւ չի ներկայացնում ազգին. իսկ մամուլի մէջ էլ դեռ ձախեր են լուում, թէ հաշիւ տալու «պարտաւորութիւն» չունի Էջմիածը: Այդպէս է դատում «Նոր-Վարդ»: Իբր թէ վաւեր հաշիւ է պարտական Աթոզիկոսին, իսկ Սինոդի հաշիւներն էլ ամեն ամիս վերատուգում են եւ որ ալդ ամենը «կատարում է պրոկուրորի անմիջական մասնակցութեամբ, ընդունած եւ սահմանած է կարգերով»: Եւ չետո՞՛ «Այդպիսի (հրապարակալին) մի հաշիւ տալու պարտաւորած մարմին գոյութիւն չունի Էջմիածնում»:

Որքան վտանգաւոր եւ վեասակար մտքեր են դրաւ! Էլ ինչ մի առանձին մարմին պիտի գոյութիւն ունենալ Էջմիածնում, որը օրէնքով պարտաւորած լինէր հրապարակալին հաշիւ տալու, քանի որ հաշեւտութիւնը ամբողջ աշխարհքում ճանաչւած է իբր հիմնական պալման ամեն մի հասարակական գործի գոյութեան եւ մանաւանդ կառավարչութեան: Հաւատարմաւոր եկեղեցին ունի գուքեր, անշարժ եւ շարժական, եւ ամեն մի գուք տալիս է եկամուտ ու պահանջում է ծախք: Եւ մենք կամենում ենք խմանալ, թէ որոնք են այդ գուքերը ինչ եկամուտ են տալիս նոքա ամեն տարի, ինչ ծախքեր են լինում նոցա վրալ ու ինչ տնտեսական սխառմեհերով են նոքա կառավարւում: Այն հաստատութիւնը, որը, մեր ժամանակում, չի կամենում ըմբռնել ալդ հարցերին պարբերաբար պատասխանելու ծախքաւոր անհրաժեշտութիւնը, նա արժանի էլ չէ հասարակական վստահութեան: Այդ հարցերի պատասխանները չալտնի են լինում Վեհ. կաթողիկոսին, սինոդին, կառավարութեան պրոկուրորին. հետեալէս միայն ազգն է, որից ուղում էք թապցնել ալդ հաշիւները? Յանուն որ չարդիւի սկզբունքի? Ինչ է շահում Եկեղեցին ալդ հաշիւները չներկայացնելով ազգին: Եւ ինչպէս էք կամենում որ ալս կամ ալս անձը կամ մամուլը իւր զիտողութիւններն անի կալածական կառավարութեան ալս ու ալս խնդրի մասին, երբ դուք կը ծածկէք ազգից եղած ինքնատարը, մուտքը եւ ծախքը եւ կառավարելու եղա-

նակները, և ևս այդ ինչ գաղտնապահութիւն է վերջապէս («Նոր-Գար») ի լողիկալով, օրինակ, Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը իւր հաշիւը պարտական է Վաթողիկոսին և ոչ հասարակութեանը. նոյնը և Գէորգեան ճեմարանը, և այլն. բայց տեսէք որ ամեն տարի դոցա հաշիւները կարդացուած են ի լուր ամենքի. Ամաչեցէք վերջապէս, տեսնելով որ բոլոր պետութիւնները իրենց մուտքն ու ծախքը հրաշակում են ի լուր ամենքի, և ոչ միայն սահմանադրական երկիրներում, այլ և ալիպիսի երկիրներում, ինչպիսին է Ռուսիան, որի պետական ելմտացուցը ոչ ոքից գաղտնի չի պահուած: Այո, ճիշդ է և շատ ճիշդ, որ Պարսկաստանը, Աւղանիստանը, Բելուջիստանը, Մարոկկոյն ձեր եղանակներին են հետևում. կեցցէք և դուք նոցա հետ!

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Այս վերնադրի տակ մենք կ'ուզէինք հրատարակել լիակատար տեղեկութիւններ բարձրագոյն դպրոցներում ուսանող հայերի մասին: Այդ տեղեկութիւնները կ'կամենալինք որ ստացւած լինեն չատուկ թղթակիցներից՝ չատկապէս Մուրճում հրատարակելու համար: Երբ այդ տեղեկութիւնները մաս-մաս ստացւած և մաս-մաս տպագրւած կ'լինեն ամսագրիս («Լուրերի») բաժնում, ապա դոցա ամփոփումները մենք կ'կազմենք ու կը տպագրենք ամսագրի չօղւածների շարքում: Այդ առիթով հարկ ենք համարում չալտնել հետեւեալը. Արտասահմանի հաչ ուսանողութիւնը անցեալ տարի գլուխ բերեց տարիներ առաջ արժարժւած մի գեղեցիկ միտք — ամեն տարի ունենալ հաչ ուսանողական համաժողովներ, անցեալ տարի կապացաւ առաջին համաժողովը Հալիլբերգում, ուր որոշեց չաջորդ տարին ժողովել մի այլ քաղաք: Արդ, համաժողովը պէտք է ընտրւած լինի մի բլւրօ, որպէս այդ սովորական է բոլոր պարբերական համաժողովների համար: Այդ բլւրօն անկասկած պիտի ունենալ մի ցուցակ բոլոր անդամների. բայց որովհետև ոչ ամեն ուսանող պարտաւոր է համաժողովների անդամ լինել, ուստի նորա ցուցակները բնականաբար կ'լինեն կիսակատար: Բայց հաչ ուսանողական համաժողովների առարկաներից մէկը հէնց պիտի լինի հետեւել արտասահմանի հաչ ուսանողական շարժումներին, և ամեն տարի մի զեկուցում պատրաստել այդ մասին: Իսկ այդ չի կարելի առանց մի լիակատար ցուցակի բոլոր հաչ ուսանողների արտասահմանում, ուր կ'նշանակւեն նաև այլ կարևոր ստատիստիկական տեղեկութիւններ ուսանողների մասին: Այսպիսով բլւրօն պիտի չանձնել լիակատար ցուցակներ կազմելը ամեն տարւաչ համար: Եւ այդպիսով մենք կ'ունենանք այն, ինչ որ պահանջուած է: Առանց ալիպիսի լիակատար ցուցակների չի կարելի հետեւել ուսանողական շարժումներին, մինչդեռ

այդ վերջինը մի կարևոր նիւթ պիտի լինի հասարակական խորհրդադաժութեան համար—մամուլի համար:

Նոյնը վերաբերում է և Ռուսիայի բարձրագոյն դպրոցներին հալ ուսանողներին, այս զանազանութեամբ միացն, որ Ռուսիայում համալսարանական կանոնադրութիւնը թող չի տալիս համաժողովներ ունենալ, հետեապէս տեղեկացուցներ կազմելը պիտի իրենց վրալ առնէին երեք ամենակարևոր կենդրոնների ուսանողութիւնները, որոնք են Պետերբուրգինը, Մոսկւայինը և Սարկովինը, որոնք կարող կ'լինէին հաւաքել տեղեկութիւններ նաև բոլոր միւս բարձրագոյն դպրոցների հալ ուսանողների մասին ու ամեն ուսումնական տարւալ վերջը հրատարակութեան տալ նոցա:

Ամեն ալդպիտի տեղեկացուց պէտք է իւր վերնագրում ունենայ բարձրագոյն դպրոցի անունը և նորա բոլոր ուսանողների ընդհանուր թիւը (բոլոր ազգերից), և ապա պիտի պարունակէ առեւազն ալս ոււրրիկները. 1, հալ ուսանողի ազգանունը, 2, անունը, 3, որտեղացի, 4, որ միջնակարգ դպրոցից, 5, մասնագիտութիւնը, 6, որ երրոյ տարին է ուսանող, 7, աւարտող է թէ ոչ, 8, ինչ միջոցներով է ուսանում (ծնողների, սեփական կարողութեան, թէ ալ միջոցներով):

Եթէ ուսանողութիւնները ալս առաջարկի համար իրենց համաձայնութիւնը կը տան—ապա պէտք է նաև համաձայնութեան դան որ պատասխանելիք հարցերը միակերպ լինեն ամենուրեք:

#### ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ:

Մինիսէն (Գերմանական կալսութիւն, Բաւարիայի մալրաքաղաք): 15 (3) Յունւար: Տեղեկութիւն ուսանող Ս. Զառաֆեանի: Ալդ քաղաքում ալս տարի կան եօթ (7) հալ ուսանողներ, որոնցից մէկը համալսարանում, Սեղբոսեան Լևոն (Պոլսեցի, Կալսնի գրականութեան մէջ Շանթ յանունով). ուսանում է զրականութիւն. 5-ը բազմարեւոտեան դպրոցում (պոլիտեխնիկում) ուսանում են մեքենալագործութիւն—գոքա են՝ Ունանեանց Տիգրան (Բաքւից), Մեկիքեան Լևոն (Բաքւից), Կարակոզեան Յովհաննէս (Բաքւից), Զառաֆեան Սիմէօն (Բաքւից), Յարութիւնեան (անունը? Թիֆլիսից). մէկը Նկարչական ակադեմիայում՝ Եղիազարեանց Լազար (որտեղացի?):

ԹՈՒՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ արտասահմանում: Մեր նոյն թղթակիցը հաղորդում է թէ ալս տարի Մինիսէն են եկել Կովկասից երկու թուրք չուշեցիք. մէկը Զ. Վեդիրով ուսանում է քիմիա, միւսը Վեկիբէկով շեռանորդութեան մէջ է:

#### ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Թիֆլիս: Թիֆլիսի խորհրդարանից ձայների առաւելութեամբ

քաղաքագլուխ ընտրած Գէորգ Եւանգուլեանը հաստատուեց ալդ պաշտօնի մէջ ներքին գործոց մինիստրութեան կողմից: Նախ քան ալդ պաշտօնում հաստատուելը՝ մինիստրութեան պահանջի համեմատ՝ պ. Եւանգուլեան հրաժարական տուեց երդեալ հաւատարմատարի (վկալած փաստաբանի) կոչումից, որովհետեւ, օրէնքով, ալդ երկու պաշտօնները միաժամանակ վարելը թույլ չի տրուում:

Պրն. Եւանգուլեանի ընտրութեան հաստատուելը միախառնական երևութ պիտի համարել մեր քաղաքային ինքնավարութեան կեանքի համար, որովհետեւ ընտրողական սկզբունքը կարող է կհնդանի մնալ միմիայն երբ յարգում է նորա սզատ և օրինապատշաճ արտապատշաճութիւնը. բայց չալանի է որ աչս անգամ խորհրդարանի ութ անդամ — և զոյցա առջնում Բաբեան, Քալանթար — ջանքեր չխնայեցին բարձր իշխանութեանը զարմանալի «կլեառւզնիկալին» դիտողութիւններ առաջ դնել (տես Մուրճ 1897 № 11-12, էջ 1673-1674), որոնք ալմ, ինչպէս երևում է պ. Եւանգուլեանին հաստատուելու իրողութիւնից, արժանապէս գնահատել են թէ նահանգական ատեանի և թէ մինիստրութեան կողմից: Մինիստրական հաստատութիւնը նամանաւանդ գնահատելի է, որ խորհրդարանում Եւանգուլեանի դէմ կատարւած անարժան խաղերը բացարձակ կերպով խրախուսել են Վելիկո՛ւի «կաւկաղ» լրագրում, որը մեծ չօյսեր էր դրել թէ ալդ անհին «բողոքներին» և թէ մանաւանդ աչն «չալտնութիւններին» վրայ, որ արել էր «Մշակ» լրագիրը Եւանգուլեանի մասին:

Մինք ուրախ ենք, որ աչն օգուտները, որ սպասում էր «կաւկաղ» լրագիրը «Մշակին» չալտնութիւններից (տես ալդ խոստովանութիւնը «կաւկաղ»-ի 3 փետրարի համարում), չիրագործւեցին և որ աչս ամեն խարդաւանքները իրենց նպատակին չհատան: Տեղական ինքնավարութիւնը զրեթէ միակ միախառնական բանն է մեր երկրում, և կամենալ սուտ ու հնարովի բողոքներով, «զանոս»-ների կերպարանք ունեցող չալտնութիւններով վտանգել աչս ու աչն քաղաքացւոյն — դա՛ պէտք է չառաջադէմ մամուլի մէջ միմիայն զգուշացնել:

ՅՈՐԴՈՐ ՍՄԲ. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՇՈՎԵՐՏՆԵՐԻՅ, խմբագրութիւնս ստացել է հետեւալ գրութիւնը Մուրճում հրատարակելու համար.

«Մեծարգոյ պարոն խմբագիր.

«Խոնարհաբար խնդրում ենք Ձեր սլաւելի ամսագրի առաջիկայ հաժարներից մէկում տեղ տալ մեր հետեւալ տողերին:

«Մոսկւայի Լազարեան ձեմարանի հալոց լեզւի ուսուցիչ՝ չալտնի բանաստեղծ Սմբատ Շահազիզեանը 1897 թ. օգոստոսի 2-ին թողեց իր պաշտօնը, ծառայելով ամբողջ 35 տարի: Մոսկւայում գտնուող նորա նախկին աշակերտներս՝ ինկատի ունենալով մեր

Թանգադին դաստիարակի երկարատև ու արդաստուր մանկավարժական գործունեությունը մալրենի լեզվի դասաւանդութեան մէջ՝ վճռեցինք ի նշան մեր ջերմ սիրոյ և երախտագիտական զգացմունքների հրատարակել առանձին «ժողովածու»։ Նւիրած նորա սիրելի անւան, և հիմնել նորա ծննդավայրում՝ Աշտարակում, զրադարան։

«ժողովածուի բովանդակութիւնը լինելու է՝ ինքնուրոյն գրութիւններ (լիլոգութիւններ ճեմարանական կեանքից, հանրամատչելի զրեւծներ և այլն) և թարգմանական լոգածների լատինի հեղինակներից (ի միջի ալլոց վերաբերեալ հալոց պատմութեան ու լեզուն)։

«Արդ՝ ի ներքոյ ստորագրեալ նախկին աշակերտներս պատիւ ունինք ի զիմաց մեր ընկերների հրաւեր կարդալու Սմբատ Շահադիդեանի, Նախկին սաներին՝ աջակցել մեզ կիշեալ դէտաւորութիւնը իրագործելու, հասուցանելով մեզ թէ իրանց զբաւոր աշխատութիւնները, և թէ դրամական նպաստ։

«Ցանկացողները մասնակցել ալլ ժողովածուին թող բարեհաճեն լալտնել մինչև մարտի 15-ը իրանց լոգածների խորագիրները հետեւալ հասցէով՝ Москва, Арбатъ, Годеинскій пер. д. Типеникова кв. № 24. Герасиму Власовичу Власянцъ.

«Քաջալուս եւք, որ մեր համեստ նպատակը արձագանք կ'գտնէ մեր սիրելի ուսուցչի նախկին աշակերտների սրտերում։

«Մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են դիմել վերոլիշեալ հասցէով։

«Ընդունեցէք մեր չարգանաց հաւատարմը։

«Ի զիմաց Ս. Շահադիդեանի նախկին աշակերտների՝

Բժիշկ Կ. Վլասեանց. Բժիշկ Ս. Շահ-Նազարեանց. Ուսանողներ՝

Յ. Թադէոսեանց Ա. Ներսեսեանց. Ս. Քախանակեանց. Ա. Մխիթարեանց»։

ՀԵՐԱԿԼ II ՄԱՀԻՍՆ 100 ԱՄԵԱԿԻ։ Նախկին վրաց թագաւորութեան նախալերջին թագաւոր Հերակլ II-ի մահւան տարեդարձը լրացաւ ներկալ լունւարի 11-ին։ Ալլ առիթով Թիֆլիսի վրաց Սիւնի մալր եկեղեցում հոգեհանգիստ կատարեց. ներկալ էր մանաւանդ վրացիներից ահագին բազմութիւն, ալլ և երկրի կառավարչապետ իշխ. Գոլիցին և ալլ բարձր պալատեաներ։

Հերակլ II թաղած է Մծխիթ զիւղի վանքում, ուր նորա գերեզմանի վրալ հոգեհանգիստ է կատարելու փետրւարին։

Հերակլ II լալտնի է որպէս իւր ժամանակի ասպետ-թաղաւոր. նորա մասին մեր ընթերցողները կարող են կարդալ Մուրճում 1895 թ. № 9-10 «Աղա՛Մահմադ խանը և Թիֆլիսի աւերումը»։ և № 11-ում «Վրաստանի անցեալը» խորագրով լոգածում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ:

Թաւրիզ (Մուրճի Կատուկ թղթակցից, 4-ն չունար):

—Աչստեղ լուր է պտտում, թէ Վան երեք հալ պիտի կախաղան հանեն, որոնցից երկուսն են՝ Փարամազեան և Փանոն Մարութեան, իսկ երրորդի անունը անգալտ է:

—Շահից հեռագիր կալ Ամիր Նիզամին (Թաւրիզի ընդհանուր նահանդապետ) թէ իբր նորից հալ «ղաչաղներ» են երեսցել սահմադլիսին և որ շուտափութ քննիչներ ուղարկեն տաճիկ կառավարութեան ցոյց տւած տեղերը: Քննիչները արդէն ուղարկւած են: Հետեանքի մասին կը գրեմ:

—Դեկտ. 19 ին Լիւաւալի տղայոց դպրոցում դասախօսեց ըժ. Կ. Փաշաեան «Ոճրագործութեան և մահւան դատապարտութեան» մասին:

Դասախօսութեանը ներկայ էին մի քանի տասնեակ ունկնդիրներ, որոնց մէջ չկար ոչ մի կին: Ապա երգեցողութիւն եղաւ պ. Ռ. Մովսիսեանի ղեկավարութեամբ:

—Դեկտ. 31-ին Թաւրիզի Հալուհ. Բարեգ. Ընկերութեան նախաձեռնութեամբ Լիւաւա թաղի «Թամարեան» օրիորդաց դպրոցի թատերական սրահում տեղի ունեցաւ մանկական երեկոյթ և տօնածառ: Պիտի սկսէր ժամ 5 ին, բայց սկսեց 7-ին, շնորհիւ ուշացող աղաների, որոնց ներկայութիւնը չգիտենք ինչու՝ անհրաժեշտ է համարուում այստեղ: Տօնածառը դրաւել էր շատ երեխայք որոնց զարծուիւնը՝ պարիւ-երդելը՝ սակաջն շատ կարճ տեց, Տօնածառից վտուլ կատարեց վիճակախաղ: Հանդէսը վերջացաւ 11-ին:

Նոյն երեկոյ կար տօնածառ և երեկոյթ Բերդաթաղի Արամեան դպրոցի թատերական սրահում:

—Յուն. 2-ին երեկոյեան «Լօարանական ընկերութեան» ժողովն էր: Նիստը սկսեց ընկերութեան վարչութեան անդամների ընտրութիւնով, որոնց թիւը հինգ է. ընտրեցին երեքը արական, երկուսը իգական սեռից. նախագահ ձաջների առաւելութեամբ ընտրեց միսիոնարների տեսուչ միստր Բրէշէր:

Ապա դասախօսութիւն արաւ միսիոնարների դպրոցի ուսուցիչ պ. Ս. Մելիք-Սալեադեան «մօզուլեան» մասին որ տեց 1 1/2 ժամ: Նոյն օրը նշանակեց առաջիկայ ժողովի նիւթը—XIX դարի ֆլլատոֆալութիւնը—որ պիտի կարդալ միսիոնարների դպրոցի մի ալ ուսուցիչ պ. Միրզա Մելիք-Սաեադեան:

ԵՍԽԽՈՏԱԳՈՐԾՆԵՐԻ ԺՈՂՈՎ: Յունեարի կէսին Կովկ. Գիւղատնտ. ընկերութեան դահլիճում կապացան ժողովներ, կազմած ընկերութեան անդամներից և ծխախոտագործների ու գործարանատէրերի ներկայա-

ցուցիչները, ժողովը ունեցաւ մի քանի նիստեր, ամենակարեւոր խնդիրը աչն էր, թէ ինչ պիտի անել ծխախոտագործ զիւղացիների օգտին, որոնք վարկ չունենալով, ամբողջապէս կախաւոր են ծխախոտը գնող վաճառականներից: Քննեցին երկու առաջարկներ, որոնցից մէկն էր՝ պետական պահեստներ բաց անել թիֆլիսում և ծխախոտի մշակութեան գաւառներում. իսկ ալ առաջարկն էր՝ կազմակերպել պահեստներ ընկերական հիմունքի վրայ: Երկար վիճաբանութիւնից չետոյ առաջինը մերժեց (ալդ առաջարկը ժողովում պաշտպանում էր մանաւանդ մասնագիտովի անդամ Ալ. Քալանթար, և Սաֆարեան գործարանի ներկայացուցիչ պ. Յ. Ստեփանեանց, իսկ մենք դէմ էինք ալդ առաջարկին), և ընդունեց երկրորդ առաջարկը: Կանոնադրութիւն մշակելը լանձուեց ընկերութեան անկամ պ. Ա. Նատրոսեան և պ. Յ. Ստեփանեանցին: Կանոնադրութեան հիմքը պիտի կազմէ զիւղատնտեսական ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւնը:

**ՌՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ.** Թիֆլիսում հիմնւել է ռուս գաղթականներին օգնող ընկերութեան ճիւղ, որի կանոնադրութիւնը լունւ. 5-ին հաստատուել է ներքին գործոց մինիստրութիւնը:

**ԱՆԳԼԻԱՅՈՑ ԱՐՇԱԽԱՆՔԸ ԱՖՐԻԿԻՆԵՐԻ ԴԵՄ** (հիւսիս. Հնդկաստան) որոշ վախճանի չհառաւ: Աֆրիկները, որոնք անգլիացոց զօրքերի առջև աներևութանանում էին և լանկարծակի լարձակումներ դործում, չընկճեցին, թէև կորցրին իրենց ամառաւ թնակարանները: Ալդ պատերազմի մէջ անգլիացիք ունեցան մի զօրք՝ բաղկացած 65.000 հոգուց: Զօրքի գեներալիսիմ սըր Ուիլիամ Լոքհարտ (Lockhart) լաւտարարեց որ գարնան արշաւանքը կը վերսկսւի: Չնաչած ալդ անաջողութեան՝ Անգլիայում մամուլ և հասարակութիւնը հանգիստ պահեցին իրենց՝ լիապէս հաւատալով զինուորական կառավարութեան:

**ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.** Եւրոպական արևելեան քաղաքականութեան ծանրութիւնը թիւրքիայից փոխադրւել է Չինաստան աչն օրից, երբ Գերմանիան իւր ձեռքը գցեց Կիաո-Չաու նաւահանգիստը: Ալդ դէպքից չետոյ Ռուսիան ձգտում ցոյց տւեց իւր ձեռքը գցել Պորտ-Արտուր նաւահանգիստը, Անգլիան՝ Համիլտոն նաւահանգիստը: Ֆրանսիան զօրեղացրեց իւր նաւալին ուժերը Չինաստանի ջրերում, Եապոնիան զօրեղացրեց իւր պահանջները Չինաստանից՝ պատերազմական տուգանքի վճարման մասին, իսկ Չինաստանը ստիպւած եղաւ աչս ամեն դէպքերի դիմաց արտաքին մեծ փոխառութեան դիմել: Մօտաւոր ամիսներում, որպէս պէտք է սպասել, կարեւոր դէպքեր պիտի տեղի ունենան Չինաստանում:

ԳՐԷՅՖՈՒՍ-ԷՍՏԵՐԶԱԶԻ ՆԻ ԶՈԼԱ. (Տես ալս աղմկալի գործի սկիզբը Մուրճ 1897 թ. № 11—12): Գնդապետ Էստերհազիին դատի ենթարկեցին զինուորական դատարանում, որը դորան արդարացիաց, Գլխաւոր ամբաստանութիւնը նորա զէմ ալն նամակն էր (բորղըրօ), որի հիման վրայ երեք տարի առաջ Գրէյֆուսին դատապարտել էին. զոնկ էին որ ալդ նամակի գրութիւնը նման է Էստերհազիի գրելու ձևին, միալն թէ երեք տարուց զէս Էստերհազին մի քանի տառեր գրում էր ալ կերպ: Ամբաստանողները պնդում էին, որ ալդ մի քանի տառերը ալ կերպ գրելու մէջ լանցանքը թաղցնելու զիտաւորութիւն կար: Երբ դատարանի նախագահը հարցրեց Էստերհազիին ալդ երեւոյթի մասին, նա պատասխանեց, թէ ալդ ապացուցանում է միալն, որ իւր թշնամիները իւր ձեռագրութիւնը իրենից աւելի լաւ են ուսումնասիրել, բայց որ դա ապացուց չէ թէ լանցաւոր նամակը իւր գրածն է: Ամբաստանողը (դատապարտւած Գրէյֆուսի եղբայր Մատթէոս Գրէյֆուս) հաւանական դարձնելու համար թէ դաւաճանը Էստերհազին է եղել, առաջ էր բերում Էստերհազիի նիւթական քալքալած գրութիւնը և իւր գրութիւնից վեր ծախքերը, շնորհիւ սիրուհուն: Էստերհազին դորան պատասխանեց թէ դա ապացուց չէ դաւաճանութեան հալրենիքին: Բացի ալդ և ալ մեղադրանքների հերքելը՝ Էստերհազիի օգտին էր խօսում ալն հանգամանքը, որ նա իւր ծառայութեան պալմաններով չէր կարող տեղեակ լինել պատերազմական միջնատրութեան մէջ պահող գաղտնի թղթերին, պլաններին և ալն (մինչդեռ Գրէյֆուսը պատերազմական միջնատրութեան մէջ ծառայող էր):

Էստերհազիի դատը զինուորական դատարանում տեւեց մի քանի նիստ, որոնք հրապարակալին էին, բացի մէկից, որը գոնփակ էր, որովհետեւ ալդ նիստում քննութիւնը վերաբերում էր ալնպիսի խնդիրների, որոնք չօշափում էին զինուորական գաղտնիքներ: Ալդ նիստին ներկալ եղան միմիալն վկալ կանչաւծները.

Զինուորական դատարանը արդարացիաց Էստերհազի'ին դեկտ. 31-ին (հին տոմար):

Ահա ալստեղից է որ սկսւում է Էմիլ Զոլալի գործը: Զոլան— ժամանակալից հուշակաւոր ռոմանիստը, զեռ առաջ էլ պնդում էր թէ Գրէյֆուսը անմեղ տեղն է դատապարտւած և որ մեղաւորը Էստերհազի'ն է: Ալծմ, երբ վերջինս անպարտ ալծակեց, Էմիլ Զոլան իւր անւան ամբողջ ծանրութեամբ ասպարէզ իջաւ: Նա գրեց և հրատարակեց մի բաց նամակ (լուսւար 2, հին տոմար)՝ ուղղած հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր'ին, ուր Գրէյֆուսի դատապարտութիւնը դարլս մեծ լանցագործութիւնը անւանելով, պնդում էր

թէ Էստերհազի'ի զործը անաչառութեամբ չքննեց և որ Էստերհազի'ին անպարտ արձակելու համար գործադրուել են զօրեղ ազդեցութիւններ: Զուան բողոքեց աչն բանի դէմ, որ Էստերհազի'ի գործը քննեց ոչ կատարելապէս հրապարակական կերպով (նիստերից մէկը, որպէս տեսանք, դռնփակ էր): Զուան մեղադրում էր ֆրանսիական զօրքի ամենաբարձր զեւերալներին, դիւանոր շտաբի պետ Բուադէօֆր'ին, ներկալ պատերազմական մինիստր Բիլիօ'ին, Նախկին մինիստր զեւերալ Մերսիէ'ին, զինւորական դատարանի անդամներին, զհներալ Դոնդ'ին, Պատի զը Կլամ'ին, չանցաւոր նամակը քննած էքսպերտներին և շատ ուրիշներին և պահանջում էր որ Էստերհազի'ն լանձնել երդեալներին դատարանին: Զօրքի ամենաբարձր ծաւրերը չօշափած տեսնելով, ժողովրդի մէջ սկսեց մի մեծ շուռում, որի մէջ խառն էր նաև համալսարանական ուսանողութիւնը: Պարիզի փողոցներում ժողովրդական ցուցիւր տեղի ունեցան Զուալի դէմ: «Մահ հրէաներին, թքել Զուալի վրալ, կեցցէ զօրքը» աղաղակով: Յուզումը տարածուեց նաև ալ տեղեր, մանաւանդ Մարսէլ և Ալժիր: Ժիրիա, ուր նույն բղաւոցներով ամբոխը լարձակումներ գործեց հրէական խանութների վրալ, Շնորհիւ կառավարութեան ջանքերին, զօրքի միջոցով կարգը պերականդեւց:

Այս դէպքերի ժամանակ, Զուալի նամակի առիթով հարցապնդում եղաւ պատգամաւորների ժողովում, ուր ժողովը, 312 ձայնով՝ ընդդէմ 122 ի, վստահութեան քւէ տեց կառավարութեան: Իսկ Սենատում, Շերեր-Կեսանէր, որը ցալժմ փոխնախագահներից մէկն էր և որը (տես Մուրճ 1897, № 11—12) Գրէէֆուսի զործը վերաքննելու պահանջն անողներիցն է և սկզբում զլիսաւոր մեղադրողն էր Էստերհազի'ի, նոր բնարութիւններին չը վերընտրեւ: ալ ևս փոխնախագահ (նա ստացաւ 80 ձայն ընդդէմ 159 ի):

Էստերհազի'ի պրոցիսի մէջ մեծ բաւց չպարզած դեր է կատարում գնդապետ Պիկար, որին իբր թէ տեսել են պատերազմական մինիստրութեան պահարաններից մէկի թղթերը քրքրելիս: Նորա ցուցմունքները կատարեցին դռնփակ նիստում:

Էմիլ Զուա իւր նամակում առ Նախագահ Ֆոր, պահանջում էր որ իւր մեղադրանքները հաստատելու համար իրեն լանձնեն երդւածալների դատարանին: Յուն. 9 (շին տօմար) մինիստրների խորհուրդը վճռեց Զուալին դատի ենթարկել միմիայն զինւորական դատարանի անդամներին անաւանարկած լինելու համար: Զուան մի նոր նամակով «Aurore» (Արշալուս) լրագրի մէջ, ուղղած զինւորական մինիստր Բիլիօ'ին, լալտնեց, թէ զինւորական մինիստրը զուր է ճգնում սահմանափակել խնդիրը՝ իւր մեղադրանքների միջից ընտ-

րելով միմիայն այն որ վերաբերում է զինւորական դատարանին. ինքը, Ձուան, կը ներկայանալ երգեալների դատարանը և կը շօշափի խնդիրը իւր ամբողջ ծաւալով:

Մինչդեռ Ֆրանսիայում մեծ ցուցեր եղան Ձուայի դէմ, արտա-  
սահմանում համակրութիւնները Ձուայի կողմն էին. մի քանի հա-  
մալսարանների ուսանողութիւններ, նշանաւոր գրողներ, որոնց մէջ  
նաև նորեկացի Բեռնան, զանազան ընկերութիւններ Ձուային հա-  
մակրութեան ցուցիւր արին, ուղերձներ ուղարկեցին. արտասահմանի  
լրագրերի մեծագոյն մասը բացարձակօրէն բռնեց Ձուայի կողմը, և ալին:

Ձուայի դատը արդէն սկսած է, բայց դեռ ևս չի վերջացել:  
Վատաւորութեան զլխաւոր մոմէնտները մենք կ'հաղորդենք զալ  
անգամ: Երգեալների դատարանը կոչւած է դատելու Ձուային այն  
մեղադրանքների համար, որ նա հրատարակել է Էստերհազիին ար-  
դարացնող զինւորական դատարանի անդամների դէմ: Ձուայի փաս-  
տաբան Լաբորի աշխատում է գործը ընդարձակել, իսկ դատարանը  
ընդհատում է նորան ամեն անգամ, երբ նորա հարցմունքները, որ  
նա ուղղում է վկաներին, լիչեալ սահմանից անցնում են: Վկայ  
կոչւած զինւորականները բաւականանում են ամենակարճ պատաս-  
խաններով, շատ շատերը հրաժարւում են պատասխանել կամ չեն  
ներկայանում դատարան: Վատաւարութեան ընթացքում միակ բանը,  
որ մի որոշ չափով պարզել է, ալդ այն է, որ կա և մի ալ զաղտնի  
մնացած գործ, որը լալտնի է եղել Էստերհազիին արդարացնող զին-  
ւորական դատարանին, բայց չալտնի չէր ընդհանրութեանը:

ԿՐԵՏԷ. Ռուսաց կառավարութիւնը առաջարկել է Սուլթանին Կրետէի  
ընդհանուր նահանգապետ նշանակել Յունաց թագաժառանգ իշխան  
Գէօրգիին, բայց Սուլթանը ալդ առաջարկը չի ընդունել, որպէս  
նաև հակառակել են Գերմանիան և Աւստրիան:

#### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

(Ուր թւական չկայ — ներկայ տարւանն է)

- 1) ԼԵՐՄՈՆՏՈՎ, Թարգմ. Սիմ. Հովունանի. — Հաջի Աբրէք, — Հրատարա-  
կութիւն Գրատէրի. Բաքու, տպարան Ա. Ղաղարեանի. 1897 թ.  
5 կոպէկ:
- 2) ՍԱՀԱԿԵԱՆ, Սահակ քչ. — Ուսուցումն քրիստոնէական կրօնի. Թիֆլ.,  
տպարան Մն. Մարաիրոսեանի, 1 ռ. 50 կոպէկ:
- 3) ԱԻԵՏԻՔԵԱՆ, Ստ. Բանանցեցի. — Ղեկավարներ («կապ բռնողը» և «Մեր  
Տէրը» պատմածքներ). Արտատպ. «Լուսա» հանդէսից, 1897. Թիֆլ.,  
տպ. Շարաձէ, գինը 20 կոպէկ:
- 4) ՆՈՅՆԸ, — Սամխարնի. — 1897. Թիֆլիս, տպ. Շարաձէ. 10 կոպ.:

- 5) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՐՈՆԱՒՈՐ, աշխատասիրութեամբ Մեսրոբ վարդ. Տէր-Մովսէսեանի.—Նկարագրութիւն հոգեորական վարուց Յովատարիու որդւոյ թագաւորին Հնդկաց:—Վաղարշապատ, տպարան Մալք Աթոռոյ Ս. Էջմիածնի: Գինն է 70 կոպէկ:
- 6) ՄԱՆՈՒԿԵԱՆ, Վահան (Կ. Տ.).—Կաղանդէք.—Վառնա, տպ. Արեւ-ւելեան, 30 սանտիմ,
- 7) ՉՄՇԿԵԱՆ, Մակար.—Պատկերազարդ-լիակատար Տարեցուց 1898 թ. (11-րդ տարի): Թիֆլիս, տպ. Ռոտինեանի, 1897 թ., 30 Կ.
- 8) ՆՈՅՆԸ.—Ծոցի Օրացուց 1898 թ. (11-րդ տարի). գինն է 20 կոպէկ:
- 9) ՆՈՅՆԸ.—Պատի «Երածան» Օրացուց 1898 թ., 50 կոպէկ:
- 10) ЕРИЦОВЪ, А. Д.—Патріархъ всѣхъ армянъ Нерсесъ V, Князь Михаилъ Семеновичъ и Княгиня Елизавета Ксаверіевна Воронцовы въ ихъ частной перепискѣ. Съ приложеніями и съ фототипіями 1, Патріарха Нерсеса, 2, кн. М. С. Воронцова и 3, Е. К. Воронцовой--Тифлисъ, тип. М. Мартиросянца, 1898.
- 11) ЮЗБАШЕВЪ, А. Т.—Бакинскій справочный календарь на 1898. Изданіе типографіи „Ароръ“. Баку, тип. Ароръ, 1897.—75 Կ.
- 12) МАКЪ-КОЛЬ. Султанъ и Державы. переводъ съ англійскаго. (Փառակազմ, պ. Առաքել Մատուրեանից): Ս. Пет-րգъ, тип. Стасюлевича, 1897. (351 էջ).

#### ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ.

Ֆիլիպէ (Բուլղարիա): Օրիորդ Հուլիանէ Սարգսեան: Պատւիրած նամակը ստացանք, բայց մէջը չգտանք բաժնեգին 8 ռուբլին: Սա առաջին դէպքը չէ, որ պատւիրած (заказное, recommandée) նամակներով փող են ուղարկում, և միայն սակաւ է պատահում, որ ճանապարհին չհանեն փողը ծրածի միջից: Դրամը պէտք է ուղարկել ոչ թէ լոկ պատւիրած ծրարի, այլ շղրամական (денежное) կամ պոստալին փոխգրով, կամ բանկի չէքով. իսկ երբ ապահով էլ տեղ է հասնում պատւիրած նամակը և պոստատանը իմանում են թէ մէջը փող կա, ծրարը հասցէատիրոջ մօտ բաց են անում և մէջը եղած փողի մի քառորդը չարքունիս են գրաւում: Նիւէ կամենում էք Մուրճը ստանալ, պէտք է բաժնեգինը նորից բաց պոստալին կանոնների համաձայն ուղարկէք:

Երևանգէն: Պր. Տէր-Գասպարեան: Պատւիրած նամակով Ձեր ուղարկած բաժնեգինը մենք չենք ստացել: Կարդացէք լիբրի պատասխանը:

Նիւ-Եօրք: Պր. Ազատեան: Ձեր ուղարկած 52 ռուբլուց 10-ը վերցրել ենք Մուրճի համար, 15-ը չանձնել ենք Աղբիւր-Տարազի խմբագրութեան, 5 ռ. Արձագանքին, 3 ռ. Լուսալի հրատարակչին, 4 ռ. Ա. Ներիցեանին, որի «Կովկասի Հալք» գրքի երկու հատորը

ղրկւեց Ձեզ (պոստածախս 66 կոպէկ): Մնացածով պէտք է Ձեզ զրկենք Ձեր ուղած գրքերից նոցա, որոնք կան ծախու:

Մեղստոն (Անգլիա): Պր. Արտոնց: Ձեզնից ստացել ենք 20 չիլլինգ, որի համար Պրիդոնովի բանկային կոնտորում տւին 17 ռ. 77 կոպէկ: Այդ հաշւից գրքեր ցալժմ ուղարկւել է Ձեզ 10 ռ. 44 կ.: Մնում է մեզ մօտ 7 ռ. 33 կ., որով պիտի զրկւեն Ձեր ուղած այլ գրքերը:

Ուստր (Հւսիս. Ամերիկա): Ձեր բոլոր նամակները ստացել ենք. ստացել ենք նաև բաժնեգիրն: Ուղարկեցինք Ձեզ Մուրճ № 6-ից մինչև № 10 ապահովագրած, իսկ № 11—12 առանձին. Ձեր զրկած բաժնեգնով կ'ուղարկենք ամսագիրը մինչև այս տարւալ № 5-ը:

Պետերբուրգ: Պր. Ս. Գուլամիրեանց: Ձեզ ուղարկւեց 2 օրինակ «Արաքսի» համար վեց ռուբլի՝ պոստի փոխգրով, որ հանդէսը ուղարկէք ցոյց տրւած հասցէներով:

Մոկուս: Ուսանող:—Անբարոյացած թերթի ինսինուացիաները, զրպարտութիւնները, սուտերը, անաւանարկութիւնները իրենց ամեն ձևերով, որոնք տարին տասներկու ամիս տեղացել են Մուրճի հասցէին, Ձեզ, ինչպէս երևում է, չէ վրդովել և Ձեզնից զալրուի խօսք չի խլել: Բայց ալժմ հարկ էք համարել տրամաբանօրէն ցոյց տալ թէ որքան վնասակար է, երբ մի օրաթերթ մի ալ օրաթերթի թուքին թուքով է պատասխանում: Մուրճի համար տպելու նիւթ չէ ձեր գրութիւնը:

Ռուսմուր: Երիտ. Ընթերց. Ընկերութեան: Ստացանք ձեզնից Օտտոմանեան բանկի չէքը 100 Փրանկի, որի համար մենք երեւի կը ստանանք 37 ռ., որ և կ'բաժանենք ձեր չիշած խմբագրութիւններին միջև:

Պարիզ: Բժ. Գ. Սարգսեան: Ստացանք չօղածը: Առանձին նամակ կ'դրենք: Յօդածների չարքը չամենայն դէպս կ'սկսենք տպագրել գալ համարից:

Երլին: Պրն. Վանցեան: Ձեր գրութիւնը «Եկմալեանի ներդաշնակ Պատարագի երգեցողութեանց առթիւ» ոտացանք. կ'տպագրւի գալ համարում:

Ժընև: Պրն. Յովհաննիսեան: Ամբողջապէս տպելը չկարողացանք. մնացածը կ'տպւի գալ համարում: Անցեալ տարիների համարներից մէկը սխալ էք նշանակել, որովհետև 1895 № 3-4-ում դուք չօղած չունիք. իսկ 1897 № 7—8 ուղարկեցինք:

Յերելզա: Պր. Յ. Մուրադեանց: Ձեր «Սև ծովի ափերին» կ'տպւի գալ համարից: «Երկու ոգի»-ն կ'տպւի:

ԲԱՅԻԱԾ Է 1898 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XVI ԱՂԲԻԻՐ XVI

IX ՏԱՐԱԶ IX

Միամսեալ պատկերադարդ հանդէս  
մանուկներէ, ծնողներէ և դաստիարակներէ համար:

Պատկերադարդ շաբաթներթ  
ընտանեկան ընթերցանութեան համար:

Կը հրատարակեն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԲԻԻՐԸ լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 №№:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ. տարեկան 48—50 №№:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանկավայ, Զրոյց, Հէքիւծ, Հանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն, Դիտութիւն եւ արեւստ. Նոր լուրեր: Այլ եւ այլք: Զարմալիք: Մանկական, Ֆրեթէլեան, շախմատի եւ այլ խաղեր, Ռեքուսներ, Քաղաքական խընդիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Լրդեր նոտաներով:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերիւալ յօդածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ, Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Առաջիկայ 1898 թ. կը տպագրեն Տարագում ի միջի ալոյց Էմիլ Զօլայի նշանաւոր ՊԱՐԻԶ վէպը, որ գեռ լոյս չտեսած ալնքան մեծ աղմուկ է հանել աշխարհիս բոլոր գրական աշխարհում և միաժամանակ բնագրի հետ տպագրում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի ալ կը տպագրեն մի շարք վէպեր և պօէմաներ, որոնց թուումն է և՛ ՍԵՒ ՔԱՂԱՔ շատ մեծ վէպ, Բագայ բուրժուադիայի, գործարանական եւ Բալխանի գործաւորների կեանքից:

Բ. ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ, վէպ Կ. Պոլսի սուլթանների կեանքից: Քաղաքական և ներքին աշխարհ: Տաճկաստանի, ազգային ռահմանադրութիւն: Ննիւէրներ, վէզիրներ, չոկեորականութիւն և ժողովուրդ:

ԱՂԲԻԻՐԻ մէջ կը տպագրեն ԼԷՅՆ ԿԱՅՍՐ հրահանգիչ դաստիարակիչ մանկական վէպը և մի շարք պատմական պօէմաներ: Բնագիտական բաժինը Աղբիւրի 3/4-ական մասը կը կազմէ:

Մանուկ հասակին ընթերցանելու հեքիաթներն ու զրույցները ընտրուում են շատ մեծ խնամքով:

Մանկավարժական խորհուրդներ դաստիարակների և ծնողների համար կը տպագրուեն առանձին թերթերով, եթէ բաժանորդների թիւը 1000-ից անցնի:

Առաջիկայ **1898 թ.** ԱՂԲԻՐԻ **ՊՐԷՄԻԱՆ** մի շատ շքեղ **ԱԼԲՈՄ** է, Աղբիւրից չորս անգամ մեծ գիրքով, 24 գոյնըգոյն բուն գեղարեստական նկարներով, որի նմանը մինչև այսօր չենք ընծայաբերիլ մեր բաժանորդներին:

ՏԱՐԱՋԻ պրէմիան—**ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** մի մեծադիր խրոմօ-օլէօգրաֆ է, սքանչելի պատկեր, պատրաստուած Եւրոպայի ամենանշանաւոր գործարանում: փառայեղ զարդ հայի դահլիճին:

ԱՂԲԻՐ-ՏԱՐԱՋ<sup>2</sup> հանդէսները ունին աշխատակիցներ Պետերբուրգում, Մոսկայում, Պարիզում, Վիէնայո մ, Վենետիկում, Լոնդոնում, Բերլինում, Ժընևում, Կ. Պոլսում, Հնդկաստանում, Սիբիրում, Ամերիկայում, Երուսաղէմում, Էջմիածնում, Հռոմում, Բոլղարիայում եւ Կովկասի բոլոր քաղաքներում:

Անցնող 1897 թ. աղ բոլոր երկիրներից տպագրուել են խորհուրդներ և Տարաջում ու պատկերներ աղ հանդէսների համար բացառապէս պատրաստուած են Եւրոպայում:

ԱՂԲԻՐԻ տարեկան գինը **3** ռուբլի ԱԼԲՈՄ պրէմիայով չորս ռուբ. (արտասահման 5 ռ. կամ 12 ֆր.): ՏԱՐԱՋԻ տարեկան գինը **6** ռուբլի, ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ պրէմիայով եօթը ռ. (արտասահման 10 ռ. կամ 30 ֆր.):

Պրէմիաները կ'ուղարկեն բաժանորդներին Աղբիւր և Տարաջի լուծարի ՊՆՊ-ի հետ:

Իւրաքանչիւր պրէմիան առանձին արժէ 3 ռ.: Աղբիւր-Տարաջ միևնոյն հասցեով գրող բաժանորդը, երկու պրէմիաների հանապարհածախս պէտք է վճարի միայն մէկ ռուբլի:

Պրէմիաները ստանում են տարեկան բաժանորդագինը լիովին վճարելուց յետոյ:

Հայերէն՝ **Тифлис. Редакция иллюст. журн. „Агбуръ-Таразъ“** կամ **Tiflis (Caucase) Rédaction des journaux „Agbur“ et „Taraz“.**

Խմբագիր-հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ**

Открыта подписка на 1898 годъ  
на ежедневную политич. и литературную газету

## „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(пятнадцатый годъ изданія)

Въ 1898 г. „Новое Обозрѣніе“ будетъ выходить въ Тифлисъ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ большихъ столичныхъ газетъ.

Въ истекающемъ году, въ газетѣ, кромѣ мѣстныхъ силъ, участвовали также К. С. Баранцевичъ, И. К. Вересоевъ, В. К. (Петербург. корресп.), Л-овичъ (Лондон. корресп.), Д. Н. Маминъ-Сибирякъ, М. А. Протопоповъ, акад. Тархановъ. В. Е. Чехихинъ, А. С. Хах-овъ и др.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. *За границу*: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р (Подписка принимается не иначе какъ считая съ перваго числа любого мѣсяца). Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., пол-года—4 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются **ВЪ ТИФЛИСѢ**: въ конторѣ газеты, Бястинская ул., № 8.

Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію „Новаго Обозрѣнія“.

Лица, подписавшіяся на годовое изданіе „Новаго Обозрѣнія“ 1898 г. въ настоящее время, будутъ бесплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

# „ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

(XXI ГОДЪ ИЗДАНІЯ).

Газета ежедневная, литературная, общественная и политическая.

**Подписная цѣна.** (для городскихъ): 12 мѣс.—5 руб., 6 мѣс.—3 р., 3 мѣс.—1 р. 75 к., 1 мѣс.—75 к.; (для иногородныхъ): 12 мѣс.—7 руб., 6 мѣс.—3 р. 50 коп., 3 мѣс.—2 р. 1 мѣс.—1 руб.

**Подписка** принимается исключительно: „Тифлисъ, Головинскій просп., № 3.

**Объявленія:** для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита: на первой страницѣ 10 коп., на послѣднихъ—5 коп: за объявленія *въ предѣлахъ Закавказья:* на первой страницѣ 16 коп., на послѣднихъ 8 коп.

## „ՄՈՒՐՉ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

|                                          |           |
|------------------------------------------|-----------|
| «ՄՈՒՐՉ» 1889 թ. անկազմ . . . . .         | 4 ռ. — 40 |
| «ՄՈՒՐՉ» 1890 թ. անկազմ . . . . .         | 5 » — »   |
| «ՄՈՒՐՉ» 1891 թ. անկազմ . . . . .         | 10 » — »  |
| «ՄՈՒՐՉ» 1892 թ. անկազմ . . . . .         | 9 » — »   |
| «ՄՈՒՐՉ» 1893 թ. անկազմ . . . . .         | 10 » — »  |
| «ՄՈՒՐՉ» 1894 թ. անկազմ . . . . .         | 7 » — »   |
| «ՄՈՒՐՉ» 1895 թ. անկազմ . . . . .         | 8 » — »   |
| «ՄՈՒՐՉ» 1896 թ. անկազմ . . . . .         | 10 ռ. — » |
| «ՄՈՒՐՉ» 1897 թ. անկազմ . . . . .         | 10 ռ. — » |
| ԲՈՂՈՐ Զ ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ . . . . . | 65 » — »  |
| » » » » կազմով 14 հատոր . . . . .        | 80 ռ. — » |

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհածախքի համար ուղարկուում է մի-մի ռուբլի-ամեն տարւոյ համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Լոյս տեսաւ եւ փաճառուով է

## „ՆՈՐ ՓՈՐՉ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻ


ԱՌԱՋԻՆ ԳԻՐԲԸ


ՀԵՏԵՒԵՆԸ ԲՈՎԱՆԳՆՈՒԹԵԼՄԻ

1) Առաջարանի փոխարէն:—2) Ա. Աղեղեան ճար չկայ (ուսուցչի յիշատակարանից):—3) Յովհաննէս Շահնազարեան Անմեղ զոհեր (կանայք Գ. Զուրարի գրած քննարկով):—4) Ա. Լազարեանց Զեռագիր (վէպիկ ժակ Նորմանից):—5) Յովհ. Գնունի Ինչ է կտակել իր ազգին Ա. Պուշկինը (քննական տեսութիւն):—6) Արտաշէս Մարդ Թէ անասուն (Մարսել Պրեւո'ի „Lettres de Femmes“-ը): 7) Օր. Կատարինէ Ներսէսեանց Խղճացէք (վէպիկ—Մարսել Պրեւո'ից):—8) Ստ. Գրիգորեան Մի ուղղութիւն Գեղարեւոտական կրթիկայի մէջ (Ի. Իւանովից):—9) Մելիք Իւ. Տուրգենեւի Արձակ բանաստեղծութիւնները պ. Ալ. Մատուրեանի Թարգմանութեամբ:—10) Խմբագրութեան կողմից:—11) Յայտարարութիւններ: Իւրաքանչիւր օրինակի գինն է ամենայն տեղ 75 կոպէկ:

Հասցէ՝ Москва, Больш. Дмитровка, д. Живаго, кв. № 2.

Ивану Шахъ-Назарянъ.





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ,

Ա. Մ Ս Ա. Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ս Կ Ս Ի Ա Ծ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 ռուբլի, կամ 30 ֆրանկ:  
ԴԻՄԵՆ՝ Քիթլիս, Սերգիևսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքներից՝  
Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Արտատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue  
„MOURTCH“. և կամ հեռուստալսմանով:  
ԲԱԳԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Ֆրիդոն Մարգարյանին մօտ (գրասենյակ Ե. և Հ. Մելիքյաններին):